





## Առաջնորդների հնարավորությունների սահմանափակումները. էլիտաները և հասարակությունները Լեռնային Ղարաբաղի շուրջ խաղաղության հաստատման գործընթացում

1994 թվականին կնքված զինադադարից ի վեր հայ-ադրբեջանական հակամարտությունը հայտնվել է փակուղում: Միջազգային հանրության աջակցությամբ ընթացող խաղաղության հաստատման գործընթացը հիմնված է հայ և ադրբեջանցի ղեկավարների միջև ընթացող փակ բանակցությունների վրա, որոնց շրջանակներում քննարկվել են մի շարք առաջարկներ, սակայն չի կայացվել և ոչ մի նշանակալի համաձայնություն: Իրենց հասարակություններին հնարավոր փոխզիջումներին նախապատրաստելու փոխարեն` տարածաշրջանի ղեկավարները փորձում էին բարձրացնել իրենց իսկ վարկանիշները երկրի ներսում` առաջ քաշելով կոշտ դիրքորոշումներ: Տարածքային ամբողջականության և ազգային ինքնորոշման միմյանց հակասող սկզբունքներին նրանց «զրո հանրագումար» ենթադրող մոտեցումները հավասարապես հավանական են դարձնում ինչպես բռնությունների վերսկսումը, այնպես էլ հակամարտության խաղաղ կարգավորումը:

Երկու հասարակություններում էլ բացակայում է կառուցողական լուծումներ առաջադրելու կամ ընդհանուր եզրեր գտնելու համար նպաստավոր միջավայրը: *Մինչդեռ «Առաջնորդների հնարավորությունների սահմանափակումները. էլիտաները և հասարակությունները Լեռնային Ղարաբաղի շուրջ խաղաղության հաստատման* գործընթացում» թողարկումը վեր է հանում համաձայնության հասնելու ճանապարհին առկա խոչընդոտները: Մասնավորապես, այստեղ վերլուծվում է բանակցային սեղանի շուրջ համաձայնության հասնելու հավանականության և դրա համար անհրաժեշտ փոխզիջումների հանդեպ համընդհանուր դիմադրության միջև առկա անջրպետը կամրջելու հիմնական մարտահրավերը:

Ի վիճակի է արդյո՞ք առավել ընդգրկուն և բազմեզր մոտեցումը կանխել բևեռացման զարգացումը և կողմերի համար ընդունելի լուծում գտնելու առավել լայն հնարավորություն ընձեռել այն պայմաններում, երբ ներկա գործընթացի հանդեպ առկա է համընդհանուր անվստահության մթնոլորտ:

«Ակորդի» սույն համարում ներառված են հակամարտության կողմերը ներկայացնող հեղինակների հոդվածները, որոնք պարունակում են խաղաղ կարգավորման գործընթացի վերաբերյալ միմյանցից տարբերվող տեսակետներ և հակամարտության հետևանքների վերլուծություն: Համարում քննության առարկա են դառնում քաղաքացիական հասարակության և լրատվամիջոցների դերը, պատերազմական և խաղաղ ժամանակաշրջանների տնտեսությունները և ժողովրդավարության հաստատման գործընթացի հանդիման կանգնող ապագա մարտահրավերները: Համարում զետեղված են որոշ համաձայնագրեր, ինչպես նաև հատվածներ կարևորություն ներկայացնող մի քանի փաստաթղթերից, ներկայացվում են առանցքային դերակատարների համառոտ կենսագրությունները և խաղաղության հաստատման գործընթացի ժամանակագրությունը:

### «Հաշտության պաշարներ» կազմակերպությունը և «Ակորդ» հանդեսը

«Հաշտության պաշարներ» կազմակերպությունը (ՀՊ) աջակցում է նրանց, ովքեր ջանքեր են գործադրում բռնությունը կանխելու, արդարության հաստատմանը նպաստելու և հակամարտությունները վերափոխելու ուղղությամբ:

ՀՊ-ի «Ակորդ» ծրագրի նպատակն է օժանդակել խաղաղության հաստատման գործընթացներին և տեղեկատվություն տրամադրել դրանց վերաբերյալ` որպես հակամարտության և խաղաղարարության մասին եզակի մի աղբյուր: Սերտորեն համագործակցելով տեղական կազմակերպությունների հետ` մենք վավերագրում ենք խաղաղության հաստատման գործընթացը, լայնացնում ընկալումները և առաջարկում դասեր քաղել խաղաղ կարգավորման անցյալի համանման փորձից:

***«Ակորդի նյութերը արժեքավոր աղբյուր և պատրաստի տեղեկատու են հանդիսանում խաղաղությանը ծառայողներիս համար, ովքեր աշխարհի իրենց անկյուններում խաղաղության հաստատման և զարգացման նորարարական ուղիներ են փնտրում»:***

Ռենե Վ. Սարմիենտո,
Խաղաղ կարգավորման հարցերով
նախագահի խորհրդական, Ֆիլիպիններ

***«Ինձ համար այս հանդեսը հսկայական նշանակություն ունի: Այն էմպիրիկ հետազոտությունների համար հրաշալի տեղեկատվական աղբյուր է»:***

Հանս Յ. Գիսման,
Խաղաղության ուսումնասիրությունների և անվտանգության
քաղաքականության ինստիտուտ, Համբուրգի համալսարան

«Ակորդ» հանդեսի բոլոր համարներին կարող եք ծանոթանալ
«Հաշտության պաշարներ» կազմակերպության կայքից` http://www.c-r.org

ISSN 1365-0742

Accord 17

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթաց

Հաշտության պաշարներ

Թողարկում 17 | 2006

Հաշտության պաշարներ

# Accord

Միջազգային անդրադարձ խաղաղության հաստատման նախաձեռնություններին



# Առաջնորդների հնարավորությունների սահմանափակումները.

## էլիտաները և հասարակությունները Լեռնային Ղարաբաղի շուրջ խաղաղության հաստատման գործընթացում

Թողարկման խմբագիր | Լորենս Բրոերս

# Accord

## Առաջնորդների հնարավորությունների սահմանափակումները.

### էլիտաները և հասարակությունները Լեռնային Ղարաբաղի շուրջ խաղաղության հաստատման գործընթացում

**Թողարկման խմբագիր՝ Լորենս Բրոերս**

**Հաշտության ռեսուրսներ**

Լոնդոն 2005

# Խոսք երախտիքի


«Ակորդ» հանդեսի խմբագիր՝ Սելիա ՄաքՔիոն
Թողարկման խմբագիր՝ Լորենս Բրոերս
«Ակորդ» հանդեսի խմբագիր/հետազոտող՝ Աարոն Գրիֆիթս
«Ակորդ» հանդեսի հանրային կապերի համակարգող՝ Սարա Ուիլըր
«Ակորդ» հանդեսի իրացման համակարգող՝ Գայ Բըրթըն
Կովկասյան ծրագրի համաղեկավար՝ Ջոնաթան Քոեն
Տնօրեն՝ Էնդի Քարլ

Սույն թողարկումն իրականացվել է «Հաշտության պաշարներ» կազմակերպության «Կովկաս» և «Ակորդ» ծրագրերի համագործակցությամբ:

«Հաշտության պաշարներ» կազմակերպությունն իր երախտիքի խոսքն է ուղղում հանդեսում տեղ գտած նյութերի հեղինակներին, գրախոսներին, լուսանկարիչներին, թարգմանիչներին և բոլոր նրանց, ովքեր իրենց ներդրումն ունեցան խորհրդատվության և վերլուծությունների իրականացման և սույն հրատարակությունն իրականություն դարձնելու գործում, մասնավորապես՝ Ալի Աբասովին, Արզու Աբդուլայևային, Վելի Ալիբեկովին, Զարդուշտ Ալիզադեին, Օքսանա Անտոնենկոյին, Մարգարիտա Ախվլեդիանիին, Գեղամ Բաղդասարյանին, Լաուրա Բաղդասարյանին, Ֆիլ Շամփեյնին, Ռեյչլ Քլոգին, Ելենա Կուկին, Բիավնա Դեյվին, Թոմաս դե Վաալին, Սաբին Ֆրեյզերին, Թուրալ Գանջալիևին, Անդրանիկ Գասպարյանին, Սալբի Ղազարյանին, Մարկ Գրիգորյանին, Վաֆա Գուլուզադեին, Հիքմեթ Հաջիզադեին, Ավազ Հասանովին, Դավիթ Հովհաննիսյանին, Թաբիբ Հուսեյնովին, Արմինե Իշխանյանին, Ալեքսանդր Իսկանդարյանին, Ֆամիլ Իսմաիլովին, Լորենս Ջեքսոնին, Ֆոլկեր Յակոբիին, Ջանա Ջավախիշվիլիին, Ուոլտեր Կաուֆմանին, Քերիմ Քերիմլիին, Հարություն Խաչատրյանին, Սեյմուր Խալիլովին, Շվան Քիմերլիին, Փոլ Լորենսին, Ժիրայր Լիպարիտյանին, Ալյոշա Մանվելյանին, Էլմար Մամեդյարովին, Ռուբեն Մանգասարյանին, Աննա Մատվեևային, Մասիս Մայիլյանին, Ռոնա Միլերին, Ռասիմ Մուսաբեյովին, Թոֆիկ Մուսաևին, Էլդար Նամազովին, Բորիս Նավասարդյանին, Ջենի Նորթընին, Կարինե Օհանյանին, Կարեն Օհանջանյանին, Քրեյգ Օլիֆանտին, Վարդան Օսկանյանին, Դավիթ Պետրոսյանին, Ռեքսան Ռասմուսենին, Շահին Ռզաևին, Դենիս Սամուտին, Էմիլ Սանամյանին, Ռոնալդ Սունիին, Հրաչ Չիլինգիրյանին, Գևորգ Տեր-Գաբրիելյանին, Արփի Վարդանյանին, Զարեմա Վելիխանովային, Զիգֆրիդ Վեբերին, Արիֆ Յունուսովին, Պաատա Զաքարեիշվիլիին, Թոֆիկ Զուլֆուգարովին, Արմինե Անտոնյանին, Քրիստինա Սարգսյանին:

Հանդեսի սույն համարը հրատարակվել է Միացյալ Թագավորության Միջազգային զարգացման նախարարության (DFID), Շվեյցարիայի արտաքին գործերի դաշնային դեպարտամենտի, Շվեդիայի միջազգային զարգացման և համագործակցության գործակալության (SIDA) և Ռուսաստանին և ԱՊՀ-երկրներին ուղղված ֆինանսական աջակցության շրջանակներում Միացյալ Թագավորության Հակամարտությունների կանխարգելման համաշխարհային հիմնադրամի կողմից Կոնսորցիումի նախաձեռնությանը տրամադրված դրամաշնորհի հաշվին:

Թողարկման թարգմանությունը հայերեն և ադրբեջաներեն լեզուներով իրականացվել է Շվեյցարիայի Արտաքին գործերի դաշնային նախարարության հովանավորությամբ:

Մեր երախտիքի խոսքն ենք ուղղում Նախարարին հատուկ այս հրատարակությանը նվիրած նախաբանի համար, (բնօրինակը՝ անգլերեն):

Մեր երախտիքի խոսքն ենք ուղղում նաև «Մարդկային զարգացման միջազգային կենտրոն» հասարակական կազմակերպությանը հանդեսի հայերեն թարգմանության և հրատարակման աշխատանքներին աջակցելու համար:

Թողարկման հայերեն և ադրբեջաներեն թարգմանությունների համար ողջ պատասխանատվությունը կրում է ՀՊ-ն:


---


Հրատարակիչ.
**Conciliation Resources**
**173 Upper Street**
**London N1 1RG**
**United Kingdom**



**Հեռախոս.** **+44 (0)20-7359 7728**
**Ֆաքս.** **+44 (0)20-7359 4081**
**Էլ-փոստ.** **accord@c-r.org**
**Կայք.** **http://www.c-r.org**


---


© Հաշտության պաշարներ 2005

«Հաշտության պաշարներ» կազմակերպությունը թույլ է տալիս վերահրատարակել և օգտագործել տվյալ նյութերը կրթական նպատակներով: Թողարկման մեջ հրատարակված նյութերն օգտագործելու դեպքում խնդրվում է հղում կատարել աղբյուրին և տեղեկացնել «Հաշտության պաշարներ» կազմակերպությանը:


***Շապիկին՝ թեյարանի ավերակներ Աղդամում***


Միացյալ Թագավորությունում բարեգործական կազմակերպության գրանցման համարը՝ 1055436

# Բովանդակություն


**Հապավումներ** 4

**Ադրբեջանի և Հայաստանի քարտեզը** 5

**Քաղաքական բառացանկ** 6

**Հայերեն հրատարակչության նախաբան** / Միշել Քալմի-Ռեյ 9

**Նախաբան** / Լորենս Բրոերս 10

**Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը: արմատները, զարգացումը և թյուրընկալումները** / Թոմաս դե Վաալ 14

*Տեսակետներ Լեռնային Ղարաբաղի շուրջ խաղաղության հաստատման գործընթացի մասին*

**Վերաինտեգրման և համագործակցության միջոցով դեպի խաղաղության հաստատում Ադրբեջանի Հանրապետության Լեռնային Ղարաբաղի Մարզում** / Էլմար Մամեդյարով 20

**Հին և նոր պետություններ. փոխվող հարացույցերը /պարադիգմաները/ և Լեռնային Ղարաբաղում խաղաղության հասնելու բարդ ճանապարհը** / Վարդան Օսկանյան 22

**Ղարաբաղի հայի տեսակետ** / Գեղամ Բաղդասարյան 24

**Ղարաբաղի ադրբեջանցու տեսակետ** / Թաբիբ Հուսեյնով 27

**Անձնական պատմություններ** 30

*Խաղաղ կարգավորման պաշտոնական գործընթացը*

**ԵԱՀԿ-ի դերը. միջազգային միջնորդական ջանքեր** / Ֆոլկեր Յակոբի 32

**Այդ անորսալի «ճիշտ բանաձևը»` «ճիշտ պահին». խաղաղության հաստատման պաշտոնական գործընթացի պատմական վերլուծություն** / Ժիրայր Լիպարիտյան 36

**Խոչընդոտներ կարգավորման ճանապարհին. ադրբեջանական տեսակետ** / Թոֆիկ Զուլֆուգարով 40

**Եզակի փորձ. հրադադարի ինքնակարգավորվող գիծ** / Օկսանա Անտոնենկո 44

**Խաղաղության հաստատման վերջին հնարավորությու՞ն** / Սաբինա Ֆրեյզեր 46

*Քաղաքացիական հասարակությունը և խաղաղարար գործընթացը*

**Կամուրջ անջրպետների վրայով. քաղաքացիական հասարակության խաղաղաշինական նախաձեռնությունները** / Ավազ Հասանով և Արմինե Իշխանյան 48

**Ազատության և տաբուի միջև. Ղարաբաղյան հակամարտության լուսաբանումը լրատվամիջոցներում** / Մարկ Գրիգորյան և Շահին Ռզաև 52

*Հետպատերազմյան դինամիկա և հասարակությունների ձևափոխումներ*

**«Ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրավիճակի հետևանքները հայկական և ադրբեջանական հասարակություններում** / Լաուրա Բաղդասարյան և Արիֆ Յունուսով 56

**Փակուղային իրավիճակի գինը. Լեռնային Ղարաբաղի հակամարտության տնտեսական կողմը** / Ֆիլ Շամփեյն 60

**Ղարաբաղյան հակամարտությունը և ժողովրդավարացումն Ադրբեջանում** / Ռասիմ Մուսաբայով 64

**Նոր կառույցներ հին հիմքերի վրա. պետությունների ներուժը խաղաղ կարգավորման համար** / Հրաչ Չիլինգիրյան 68

**Չճանաչման և ժողովրդավարացման քաղաքականություն** / Լորենս Բրոերս 72

**Առանցքային փաստաթղթեր և համաձայնագրեր** 76

**Տեղեկագրական և կենսագրական համառոտ տվյալներ** 88

**Ժամանակագրություն** 97

**«Հաշտության պաշարներ» կազմակերպության և «Ակորդ» հանդեսի մասին** 105

**Լրացուցիչ ընթերցանության համար** 106




| | |
|---|---|
| **ԱԱԱԿ** | Ադրբեջանի ազգային անկախության կուսակցություն |
| **ԱդԺԿ** | Ադրբեջանի ժողովրդավարական կուսակցություն |
| **ԱԵԺԻ** | Արևելյան Եվրոպայի ժողովրդավարության ինստիտուտ |
| **ԱԺԿ** | Արցախի ժողովրդավարական կուսակցություն |
| **ԱԺՃ** | Ադրբեջանի ժողովրդական ճակատ |
| **ԱԼԾ** | Ադրբեջանի լրատվական ծառայություն |
| **ԱՀՊՆԸ** | Ադրբեջանի Հանրապետության պետական նավթային ընկերություն |
| **ԱՀՊՆՀ** | Ադրբեջանի Հանրապետության պետական նավթային հիմնադրամ |
| **ԱՇՄԸ** | Ադրբեջանական շահագործող միջազգային ընկերություն |
| **ԱՋԳ** | Ազերի-Չրաղ-Գյունաշլի (Ադրբեջանի մերձափնյա նավթահանքեր) |
| **ԱՊՀ** | Անկախ պետությունների համագործակցություն |
| **ԱՍԱԼԱ** | Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ |
| **ԲԹԷ** | Բաքու-Թբիլիսի-Էրզրում (գազամուղ) |
| **ԲԹՋ** | Բաքու-Թբիլիսի-Ջեյհան (նավթամուղ) |
| **ԲՄՊԽ** | Բարձր մակարդակի պլանավորման խումբ |
| **ԲՓ** | Բրիթիշ փեթրոլեում |
| **ԳՈՆԳՕ** | «Կառավարության կողմից հիմնադրված» ոչ կառավարական կազմակերպություն |
| **ԳՐԻՆԳՕ** | Փախստականների և ներքին տեղահանվածների հարցերով ՀԿ-ների կովկասյան ցանց |
| **ԵԱԿ** | «Ենի նոր Ադրբեջան» կուսակցություն |
| **ԵԱՀԽ** | Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդաժողով |
| **ԵԱՀԿ** | Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն |
| **ԵԽԽՎ** | Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով |
| **ԵՄ** | Եվրոպական Միություն |
| **ԼԻՆՔՍ** | Հակամարտությունների և պետականաշինության Լոնդոնի տեղեկատվական ցանց |
| **ԼՂ** | Լեռնային Ղարաբաղ |
| **ԼՂԻՄ** | Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ |
| **ԼՂՀ** | Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն |
| **ԽՈՒ** | Խաղաղապահ ուժեր |
| **ԽՍՀ** | Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն |
| **ԽՍՀՄ** | Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն |
| **ԿՕԾ** | Կաթոլիկ օգնության ծառայություն |
| **ՀԺԿ** | Հայաստանի ժողովրդական կուսակցություն |
| **ՀԿ** | Հասարակական կազմակերպություն |
| **ՀՀԿ** | Հայաստանի հանրապետական կուսակցություն |
| **ՀՀՇ** | Հայոց համազգային շարժում |
| **ՀՅԴ** | Հայ հեղափոխական դաշնակցություն |
| **ՀՔԱ** | Հելսինկյան քաղաքացիական ասամբլեա |
| **ՂԱԿ** | Ղարաբաղի ազատագրման կազմակերպություն |
| **ՄԱ** | Միջազգային ալերտ |
| **ՄԱԿ** | Միավորված ազգերի կազմակերպություն |
| **ՄԽ** | Մինսկի խումբ |
| **ՄՈԿԿ** | Միջազգային ոչ կառավարական կազմակերպություն |
| **ՆԱՏՕ** | Հյուսիս-ատլանտյան դաշինք |
| **ՆՏԱ** | Ներքին տեղահանված անձ |
| **ՇԳ** | Շփման գիծ |
| **ՊԱԿ** | Պետական անվտանգության կոմիտե |
| **ՌԴ** | Ռուսաստանի Դաշնություն |
| **ՍԾՏՀ** | Սևծովյան տնտեսական համագործակցություն (կազմակերպություն) |
| **ՎԶԵԲ** | Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ |
| **ՎՈՒՈՒԱՄ** | Վրաստան, Ուկրաինա, Ուզբեկստան, Ադրբեջան և Մոլդովա |
| **ՕՄՈՆ** | Ոստիկանության հատուկ նշանակության ջոկատ |

# Ադրբեջանի և Հայաստանի քարտեզը




*Ծանուցում. հանդեսում հիշատակվող աշխարհագրական-քաղաքական միավորները, դրանց անվանումները ներկայացվում են զուտ ծանոթացման նպատակով: Քարտեզը չի արտահայտում «Հաշտության պաշարների» պաշտոնական կարծիքը կամ դիրքորոշումը ներկայացված որևէ երկրի կամ տարածքի իրավական կարգավիճակի և սահմանների վերաբերյալ:*

### Հիմնական վիճահարույց տեղանունները

Հայկական պաշտոնական աղբյուրները Լեռնային Ղարաբաղի նախկին ինքնավար մարզի սահմաններից դուրս գրավված տարածքներում գտնվող վայրերի անվանումների հայկական տարբերակներ չեն օգտագործում: Սույն հրատարակության մեջ մենք հնարավորինս օգտագործել ենք հակամարտության ծագման ժամանակ կիրառվող անվանումները: Օրինակ, մենք օգտագործել ենք «Ստեփանակերտ» տարբերակը, այլ ոչ թե «Խանքենդի» և «Շուշա»՝ «Շուշի»-ի փոխարեն:

| ***Ադրբեջանական*** | ***Հայկական*** |
|---|---|
| Խանքենդի | Ստեփանակերտ |
| Շուշա | Շուշի |
| Աղդերե | Մարտակերտ |
| Խոջավենդ | Մարտունի |
| Գերանբոյ | Շահումյան |
| Խանլար | Գետաշեն |
| Լաչին (քաղաք) | Բերձոր |
| Լաչին (շրջան) | Քաշաթաղ |
| Քելբաջար | Քարվաճառ |
| Ղուբաթլի | Քաշունիք |
| Զանգելան | Կովսական |
| Ջեբրայիլ | Ջաբրայիլ |

Ցանկացած նյութ, որն անդրադառնում է չճանաչված քաղաքական կազմավորումներին, բախվում է բավարար միջազգային իրավական ճանաչում չունեցող ինստիտուտներն ու քաղաքական պաշտոնները ներկայացնելու հետ կապված խոչընդոտների: Որոշ հեղինակներ, որպես նման խոչընդոտների հաղթահարման միջոց ընտրում են չակերտները. օրինակ, «հանրապետություն» կամ «նախագահ»: Այս հրատարակության մեջ մենք որոշեցինք չօգտագործել այս մոտեցումը՝ նյութը չծանրաբեռնելու նպատակով: Մենք նման կազմավորումների կամ պաշտոնների մասին ասում ենք չճանաչված կամ *դե ֆակտո*:



# Քաղաքական բառացանկ

**Վարչական ռեսուրսներ.** ռեսուրսներ, որոնցից ընտրությունների ընթացքում օգտվում են պաշտոնավարող թեկնածուները՝ օգտագործելով պետական ծառայության համակարգի կադրերի, ֆինանսական միջոցների հանդեպ վերահսկողության և դրանց տեղաբաշխման լիազորությունները, ինչպես նաև պետական լրատվամիջոցների նկատմամբ ունեցած ազդեցությունը: Հետխորհրդային հանրապետություններից շատերի կառավարությունները զգալիորեն օգտվում են տվյալ ռեսուրսներից ընտրական գործընթացներում ընդդիմադիր խմբերի մրցունակությունը նվազագույնի հասցնելու նպատակով:

**Ազերի.** գոյություն չունի հստակ տարբերակում այս եզրույթի տերմինի և սրան հարակից «ադրբեջանցի» բառի միջև: Սույն հրատարակության մեջ «ազերի» բառն օգտագործվել է էթնիկ ազերի բնակչության մասին խոսելիս, իսկ «ադրբեջանցի» եզրույթը՝ Ադրբեջանի Հանրապետության պետական կառույցների և քաղաքացիների՝ առանց որոշակիացնելու էթնիկ պատկանելությունը :

**Դե ֆակտո / դե յուրե պետություններ.** *դե ֆակտո* պետությունը վարչաքաղաքական միավորի տեսակ է, որը, որպես կանոն, առաջանում է անջատողական կոնֆլիկտի արդյունքում և բնութագրվում է ներքին ինքնիշխանության բազմաթիվ շոշափելի հատկանիշներով (օրինակ, տարածքի վերահսկում, բնակչությանը կառավարման և այլ ծառայություններ մատուցելու կարողություն, լեգիտիմություն), որը, սակայն, իրավական տեսանկյունից հանդիսանում է այն մետրոպոլիայի կամ *դե յուրե* պետության մաս, որից անջատվել է: Դե յուրե պետությունն ունի արտաքին ինքնիշխանություն, այսինքն, ճանաչում և այլ ինքնիշխան պետությունների հետ հարաբերությունների մեջ մտնելու իրավունք: Համարվում է, որ այն նաև ներքին ինքնիշխանության հատկանիշների կրող է:

**Էթնոֆեդերալիզմ.** տե՛ս տիտղոսակիր ազգ:

**Առաջին քարտուղար.** Խորհրդային Միության հանրապետական և համամիութենական մակարդակներում Կոմունիստական կուսակցության բարձրագույն գործադիր պաշտոն: Հանրապետական մակարդակում, սովորաբար, այս պաշտոնը զբաղեցնում էր տիտղոսակիր ազգի ներկայացուցիչը, իսկ երկրորդ քարտուղարի պաշտոնը՝ սլավոնացի:

**Ժամանակավոր կարգավիճակ.** այս հասկացությունը առնչվում է հակամարտության լուծման փուլային մոտեցման հետ: Ժամանակավոր կարգավիճակն այն միջազգայնորեն ընդունելի կարգավիճակն է, որը կստանար Ղարաբաղը (շարունակելով գոյություն ունենալ իր ներկա ձևի մեջ) առաջին փուլի համաձայնությունն ընդունելուց հետո՝ մինչև նրա «վերջնական կարգավիճակը» կհստակեցվեր երկրորդ փուլում կայացված համաձայնության արդյունքում:

**Միջազգային կառավարում.** այս հասկացությունը, որը ծագել է նախկին Հարավսլավիայում հակամարտությունների լուծմանն ուղղված ջանքերի արդյունքում, որոշ քննարկումների ընթացքում առաջ քաշվեց որպես տեղահանված ադրբեջանցիներին Շուշի քաղաք վերադարձնելու խնդրի լուծման տարբերակ: Ըստ այդմ ենթադրվում էր, որ Շուշիում պետք է հաստատվեր միջազգային կառավարում, որը վերադարձող ազերի բնակչությանը կտրամադրեր անվտանգության անհրաժեշտ երաշխիքներ: Վերադարձի բավարար մակարդակ ապահովելուց հետո քաղաքը կծառայեր որպես հենակետ, որտեղից կիրականացվեր բնակիչների վերադարձ դեպի հարակից բնակավայրեր: Որոշ հայ մեկնաբաններ մերժում են այս մոտեցումը՝ համարելով, որ դա նշանակում է Լեռնային Ղարաբաղի ինքնիշխանության զիջում:

**Մետրոպոլ պետություն.** պետություն, որի վարչական սահմաններում նախկինում գտնվող մի տարածք անջատվել և ձգտում է անկախության: «Մետրոպոլ» եզրույթի օգտագործումն, այնուամենայնիվ, չի նշանակում, որ նման պետությունը բնույթով անհրաժեշտաբար «կայսերապաշտական» է կամ «գաղութարար»:

**Լեռնային Ղարաբաղ.** լայնորեն օգտագործվող տարբերակ, որն անգլերենում կիրառվում է չճանաչված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության փոխարեն:

**Մերձավոր արտասահման.** ռուսերեն "ближнее зарубежье" բառակապակցության թարգմանությունից ծագած եզրույթ, որն արտահայտում է Ռուսաստանի հարաբերությունները նախկին խորհրդային հանրապետությունների՝ այժմյան անկախ պետությունների հետ:

**Նոմենկլատուրա (ռուս.).** նոմենկլատուրան Խորհրդային Միության էլիտայի ոչ ֆորմալ խումբ էր, որն, ըստ էության, իշխող խավն էր, քանի որ բոլոր կարևոր քաղաքական պաշտոններում նշանակվում էին այդ խմբի անդամները: Անդամակցությունը նո-

***Նկարում՝ ավերված կամուրջ Հայաստանի Ադրբեջանի և Վրաստանի սահմանագծին գտնվող Սադախլու շուկայում***



*Աղբյուրը՝ Ռուբեն Մանգասարյան/Պատկեր*



մենկլատուրային ենթադրում էր նախ և առաջ նվիրվածություն խորհրդային վարչակարգին, քաղաքական դավանողականություն և մի շարք նյութական արտոնություններ և օգուտներ:

**Օբլաստ (ռուս.).** մարզ:

**Օբշչինա (ռուս.).** բառացիորեն նշանակում է «համայնք»: Հաճախ օգտագործվում է հետխորհրդային պետություններում ոչ տիտղոսակիր (տե՛ս *տիտղոսակիր ազգ*) փոքրամասնություններին անդրադառնալիս: Ղարաբաղյան հակամարտության համատեքստում այս տերմինն ադրբեջանական աղբյուրների կողմից օգտագործվում է Ղարաբաղի հայ բնակչությանը ներկայացնելու համար, իսկ հայկական աղբյուրների կողմից՝ Ղարաբաղի ադրբեջանցի բնակչությանը: Երկու դեպքում էլ ի նկատի է ունեցվում, որ այս տերմինով բնութագրվող բնակչությունը տիտղոսակիր չէ և հետևաբար արժանի չէ տարածքային ինքնավարության: Ինքնին հասկանալի, ո՛չ Ղարաբաղի հայերը և ո՛չ էլ Ղարաբաղի ադրբեջանցիները սեփական կողմի հանդեպ այս եզրույթը չեն օգտագործում :

**Գրավյալ տարածքներ.** այս եզրույթն օգտագործվում է երկու իմաստով: Նեղ իմաստով այն վերաբերում է Լեռնային Ղարաբաղի շուրջը գտնվող այն տարածքներին, որոնք հայկական ուժերը գրավել են 1993-94 թվականներին: Սրանք ադրբեջանական Քելբաջարի, Զանգելանի, Ջեբրայիլի, Ղուբաթլիի և Լաչինի՝ ամբողջությամբ գրավված շրջաններն են, Աղդամի շրջանի մի մասը (ըստ անկախ փորձագետների՝ 77%-ը, իսկ ըստ Ղարաբաղի իշխանությունների՝ 35%-ը) և Ֆիզուլու շրջանի մի մասը (25-ից 33%-ը): Լայն իմաստով այս կարող է ներառել Լեռնային Ղարաբաղը և վերոհիշյալ տարածքները միասին:

**Փաթեթային մոտեցում.** Լեռնային Ղարաբաղի հարցում խաղաղ համաձայնության հասնելու եղանակներից մեկը, որը քննարկվում էր 1990-ների վերջում՝ ի հակադրություն փուլային մոտեցման: «Փաթեթը» ենթադրում է բոլոր առկախ հարցերի, ներառյալ՝ առանցքային հանդիսացող կարգավիճակի խնդրի միաժամանակյա լուծում:

**Պերեստրոյկա (ռուս.)** բառացիորեն նշանակում է վերակառուցում: Պերեստրոյկա ասելով հանրությունն ի նկատի է ունենում Միխայիլ Գորբաչովի կողմից Խորհրդային Միությունում 1985 թվականին սկսած քաղաքական բարեփոխումների գործընթացը:

**Պոլիտբյուրո.** քաղաքական խորհուրդը քաղխորհուրդ. Խորհրդային Միության Կոմունիստական կուսակցության ղեկավար մարմինն էր:

**Փուլային մոտեցում.** Լեռնային Ղարաբաղի հարցում խաղաղ համաձայնության հասնելու եղանակներից մեկը, որը քննարկվում էր 1990-ների վերջում՝ ի հակադրություն փաթեթային մոտեցման: Փուլային մոտեցումը ենթադրում է կարգավորման փուլային գործընթաց, մասնավորապես, զինված հակամարտության հետևանքով առաջացած խնդիրների կարգավորում (նախևառաջ՝ գրավված տարածքների խնդրի) այնուհետև՝ կարգավիճակի շուրջ առանցքային խնդրի լուծում:

**Գերագույն խորհուրդ.** Խորհրդային Միությունում և խորհրդային ազգային հանրապետություններում ձևավորվող բարձրագույն ներկայացուցչական մարմին:

**Տիտղոսակիր ազգ.** Խորհրդային Միության ազգային քաղաքականության անկյունաքարը: Ազգությանը, որի անվամբ կոչվում էր տվյալ տարածքը, ստանում էր արտոնյալ կարգավիճակ, ինչը «էթնոֆեդերալիզմ» կոչվող համակարգի որոշիչ հատկանիշներից էր: Տիտղոսակիր ազգի կարգավիճակ շնորհելու նպատակը տվյալ տարածքի սահմաններում բնիկ համարվող ազգին այդ տարածքին «ամրակցելն» էր: Դրա շնորհիվ ինստիտուցիոնալացվում էր խմբի սեփականատիրական զգացումը տվյալ տարածքների նկատմամբ և լեգիտիմացվում էր ինքնակառավարման (եթե ոչ հենց ինքնավարության) բարձր աստիճանը: Այլ (ոչ տիտղոսային) էթնիկ խմբերը ժամանակի ընթացքում հայտնվում էին լուսանցքային կարգավիճակում, և նրանց սկսում էին վերաբերվել որպես ներգաղթածների՝ անկախ այդ տարածքում բնակություն հաստատելու նրանց պատմությունից: Եզակի բացառություն էին կազմում այն դեպքերը, երբ մեկ էթնիկ խումբը հանդես էր գալիս որպես տիտղոսակիր ազգ մեկից ավելի տարածքներում, ինչպես հայերի դեպքում էր՝ Հայաստանում և ԼՂԻՄ-ում:

**Երազի.** Ադրբեջանում օգտագործվող ոչ պաշտոնական, իսկ ոմանց համար նվաստացուցիչ եզրույթ, որով կոչում են հայաստանյան ծագում ունեցող ադրբեջանցիներն: Այն նշանակում է «երևանցի ադրբեջանցի»: Երազիներն իրենցից մի կուռ քաղաքական կլան են ներկայացնում և նախիջևանյան կլանի հետ միասին նշանակալի ազդեցություն են պահպանում հետխորհրդային Ադրբեջանի ներքին քաղաքականության վրա:

# Հայերեն հրատարակչության նախաբան

## Շվեյցարիայի Արտաքին գործերի դաշնային նախարար Միշլեն Քալմի-Ռեյ

««Առաջնորդների հնարավորությունների սահմանափակումները. էլիտաները և հասարակությունները Լեռնային Ղարաբաղի շուրջ խաղաղության հաստատման գործընթացում» հրատարակությունը «Հաշտության պաշարներ» կազմակերպության կողմից իրականացված երկարատև, եռանդուն և վճռական աշխատանքի արդյունքն է: Հանդեսի առանձնահատկությունն, ըստ իս, կայանում է դրանում առկա՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության մասին բազմակարծության և հիմնախնդրի կարգավորմանն ուղղված առաջարկների կառուցողական բնույթի մեջ: Նման համակցումը թույլ է տալիս, որ խոսքը ներկայացվի անմիջական կերպով, որի շնորհիվ, հուսով եմ, հայերն ու ադրբեջանցիները հնարավորություն կստանան ծավալել արդյունավետ և հիմնավորված բանավեճ, իսկ ապագայում այն վերափոխել հակամարտության կողմերի միջև կառուցողական երկխոսության:

Իմ հայրենիքը՝ Շվեյցարիան, ազգերի և ժողովուրդների միջև երկխոսության հաստատման սկզբունքի ջատագովն է, քանզի մենք համարում ենք, որ երկխոսությունը հակամարտությունների կարգավորման միակ ողջամիտ միջոցն է: Վստահ եմ, Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծումը հնարավոր է գտնել հայ և ադրբեջանցի հասարակությունների միջև մտքերի եռանդուն փոխանակման և նրանց ներկայացուցիչների միջև անկեղծ և կանոնակարգված բանավեճի վրա հիմնված խաղաղ կարգավորման գործընթացի շրջանակներում:

Ավելին, ինչպես հանդեսի հեղինակներն են շեշտում, նախապաշարմունքները և հակառակ կողմի, նրա պատմության և պատասխանատվությունների մասին կանխակալ ընկալումները վճռորոշ դերակատարում ունեցան Լեռնային Ղարաբաղի հակամարտության ծագման և սրացման գործում: Այստեղ ներկայացված տեսակետներն ու կարծիքները կարող են օգնել երկու կողմերին վեր կանգնել այդ ընկալումներից և ավելի խորությամբ ըմբռնել հակառակ ճամբարում տիրող իրականությունները, օրինակ՝ տառապանքը, որ պատճառում է օրրանից տեղահանված լինելը, հետապնդման երկյուղը և հակամարտության կարգավորման գոհացուցիչ հեռանկարի բացակայությունը:

Դրանք պետք է նաև հաշտեցման պայմանների և փոխզիջումների մանրամասների շուրջ քննարկումների ծավալման խթան հանդիսանան: Ես գիտակցում եմ, որ շատերը փոխզիջման գնալու պատրաստակամությունը դիտում են որպես թուլության արտահայտություն կամ նույնիսկ հրաժարում այն նպատակից, որին իրենք ի սկզբանե հետամուտ են եղել: Այնուամենայնիվ, Հարավային Կովկասի համար հնարավոր միակ ապագան խաղաղության հաղթանակն է: Սրան հասնելու համար հայերն ու ադրբեջանցիները ստիպված են անցնել փոխզիջումների ճանապարհով, որպեսզի ձեռք բերեն մի լուծում, որն ընդունելի լինի բոլոր կողմերի համար:

Կցանկանայի ընդգծել, որ ԵԱՀԿ և Մինսկի խմբի գործունեությունն էական նշանակություն ունի խաղաղության հաստատման գործընթացում առաջընթաց գրանցելու տեսանկյունից: Սա մի դժվարին առաջադրանք է և միանշանակորեն ներառելու է չարդարացված հույսեր: Մինչդեռ համոզված եմ, որ սա է բանակցությունների այն շրջանակը, որտեղ կարելի է հասնել այնպիսի համաձայնության, որը վերջ կդնի Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը և քաղաքացիական հասարակությունների ներսում և դրանց միջև երկխոսության շնորհիվ կարժանանա շահագրգիռ կողմերի հավանությանը:

Հուսով եմ, որ ներկայացված հոդվածներին քննադատաբար կմոտենաք: Մաղթում եմ նաև արդյունավետ քննարկումներ:

***Նկարում՝ գերիների փոխանակման բանակցություններ հայ և ադրբեջանցի մարտիկների միջև Լեռնային Ղարաբաղում***

*Աղբյուրը՝ ՏԱՍՍ/Սովֆոտո*

# Նախաբան

## Լորենս Բրոերս

**Լորենս Բրոերսն իր *«Էթնիկ հակամարտությունը և բռնությունը Վրաստանում»* թեմայով դոկտորական թեզը պաշտպանել է Լոնդոնում գտնվող Արևելքի և Աֆրիկայի ուսումնասիրությունների բարձրագույն դպրոցում (SOAS): Նա մասնակցել է հասարակական կազմակերպությունների կողմից իրականացված բազմաթիվ ծրագրերի և Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի քաղաքացիական հասարակության ինստիտուտների ակտիվիստների հետ մի շարք սեմինար-երկխոսությունների:**

1994 թվականի հրադադարից ի վեր, Լեռնային Ղարաբաղի հարցով հայ-ադրբեջանական հակամարտությունն ավելի քան մեկ տասնամյակ գտնվում է «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրավիճակում: Այս հակամարտությունը հանդիսանում է Հայաստանի և Ադրբեջանի քաղաքական զարգացման հիմնական արգելքը և Հարավային Կովկասի ամբողջ տարածաշրջանի զարգացման և վերջինիս համաշխարհային հանրությանն ինտեգրման առանցքային խոչընդոտը: Սա մեկն է այն սակավաթիվ հակամարտություններից, որն ընթանում է նախկին Խորհրդային Միության դաշնային միավորների միջև և լայն իմաստով կոնֆլիկտ է ժողովուրդների ինքնորոշման և պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքների միջև: Այդ սկզբունքների վրա, որոնք ավելի շուտ ընկալվում են իրենց բացարձակ իմաստներով, քան թե միջազգային փորձառության մեջ ավելի մեծ տարածում գտած հարաբերական իմաստներով, հղումներ կատարելը շարունակում է գերիշխել հակամարտության կողմերի հայտարարություններում: Մինչ Հայաստանը և Լեռնային Ղարաբաղի հայերը առաջ են մղում նախկինում Խորհրդային Ադրբեջանի կազմում ինքնավար այս միավորի ինքնորոշման իրավունքը, Ադրբեջանը պնդում է խորհրդային հանրապետության սահմաններում իր տարածքային ամբողջականության պահպանման վրա՝ որպես հատուցում Ղարաբաղի հայերին առաջարկելով ոչ հստակ սահմանված ինքնավարություն:

1991-94 թվականների պատերազմի հետևանքները՝ հայկական ռազմական ուժերի վճռական հաղթանակը, ինչի արդյունքում հայերը վերահսկողության տակ վերցրին Լեռնային Ղարաբաղը, իսկ հետագայում գրավեցին հարակից յոթ շրջանները, էլ ավելի են բարդացնում ըստ էության տարածքային վեճ հանդիսացող այս հակամարտությունը: Զավթած տարածքների շարունակական պահպանումը կամ դրանց վերադարձը այն հիմնական հաղթաթղթերն են, որոնք օգտագործվում են հայկական կողմից Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի առաջնահերթ սահմանումը որպես այլ հարցերի շուրջ երկխոսության կայացման նախապայման դարձնելու փորձերում: Ըստ այդմ, մինչ այժմ հնարավոր չի եղել տարանջատել զինված հակամարտության հետևանքների շուրջ բանակցությունները հակամարտության հիմքում ընկած էական հարցերի քննարկումներից:

Լճացման տասը տարիների ընթացքում հակամարտության նկատմամբ միջազգային հետաքրքրությունը նվազել է խաղաղության հաստատման գործընթացում առաջընթացի պակասով պայմանավորված հիասթափության և երկրագնդի այլ թեժ կետերում առաջացած խնդիրներին առավել հրատապ արձագանքելու անհրաժեշտության հետևանքով : «Ակորդ» շարքի այս թողարկման խնդիրն է կրկին ուշադրության կենտրոն վերադարձնել ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացը և վերլուծել դրա փակուղու մեջ հայտնվելու պատճառները: Թողարկման առաջին մասում ներկայացված է հակամարտության պատմությունը. վերջինիս վերաբերյալ կողմերի հակադիր տեսակետները ներկայացված են իրենց սեփական բառերով, ներառված է նաև խաղաղության հաստատման գործընթացի պատմության փաստագրությունը: Այնուամենայնիվ, ճակատամարտի դաշտից և բանակցային սեղանից զատ, հակամարտության արդյունքում թե՛ Հայաստանի և թե՛ Ադրբեջանի հասարակությունները արմատական ձևափոխություններ են կրել: Այստեղ կարելի է նշել Ադրբեջանից հայերի, և Հայաստանից ադրբեջանցիների փոխադարձ վտարումները (հետևաբար՝ երկու հանրապետությունների կողմից իրենց էթնիկ բազմազանության նշանակալի կորուստը), հասարակությունների և քաղաքական մշակույթների ռազմականացումը, դրանից բխող ժողովրդավարական իմպուլսների թուլացումը, շրջափակումների ու ներդրումների անկման հետևանքով տնտեսական զարգացման աճի դանդաղումը, որոնք իրենց հերթին խորացրին վարչահրամայականից շուկայական տնտեսության անցման գործընթացի արդեն իսկ ցավոտ ընթացքը: Թողարկման երկրորդ մասում տեղ գտած հոդվածներն անդրադառնում են վերոհիշյալ նշանակալի փոփոխություններին, որոնք պետք է հաշվի առնվեն խաղաղության հաստատման ցանկացած գործընթացի շրջանակներում, եթե դրա նպատակը երկարաժամկետ խաղաղություն հաստատելն է:

## Եզրույթների սահմանում

Խնդիրներից առաջինը, որին բախվում ես ղարաբաղյան հակամարտությունն ուսումնասիրելիս, այն է, որ դրա կողմերն ու արտաքին դիտորդները տարբեր կերպ են ընկալում հակամարտությունը և հետևաբար՝ սահմանում դրա կառուցվածքը: Դե Վաալի՝ սույն հրատարակությունը բացող հոդվածն անմիջապես ցրում է տարածված մտայնությունն այն մասին, թե հակամարտությունը կարող է ներկայացվել որպես էթնիկ կամ կրոնական անհամատեղելիության կամ այսպես կոչված «քաղաքակրթական» տարբերությունների խնդիր: Ինչպես ցույց է տալիս Դե Վաալը, նման մոտեցումներով հնարավոր չէ բացատրել ո՛չ հայերի և ադրբեջանցիների խաղաղ գոյակցության երկար պատմությունը և ո՛չ էլ նրանց միջև ժամանակ առ ժամանակ բռնկվող բռնությունների ընդհատվող բնույթը:



Մյուս հոդվածները խորությամբ անդրադառնում են հակամարտության հանդեպ կողմերի հակառակ տեսակետներին և այն հարցերին, թե ինչպես են դրանք արտացոլվում հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացի անհրաժեշտ կառուցվածքի մասին առկա միմյանց հակասող մոտեցումներում: Հայաստանի և Ադրբեջանի արտաքին գործերի նախարարներ Վարդան Օսկանյանի և Էլմար Մամեդյարովի հոդվածները ներկայացնում են հակամարտող պետությունների պաշտոնական տեսակետները: Ըստ ադրբեջանական պաշտոնական դիրքորոշման՝ հակամարտությունը սահմանվում է որպես երկկողմ միջպետական հակամարտություն Ադրբեջանի և Հայաստանի միջև, մի մոտեցում, որը հիմնվում է հայկական իրեդենտիզմի՝ վերադարձականության ընկալման, տարածքային ընդլայնման հայկական նկրտումների և Ադրբեջանի տարածքների բռնազավթման փաստի վրա: Այս մոտեցման շրջանակներում Ադրբեջանը տարբերություն չի դնում Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հայերի միջև, իսկ Ղարաբաղի *դե ֆակտո* իշխանությունների հետ ուղղակի բանակցությունները մերժվում են, քանի որ դրանք ընկալվում են որպես փորձ՝ լեգիտիմացնելու ինքնավար պետականություն ունենալու պահանջը: Պաշտոնական հայկական տեսակետը սահմանում է հակամարտությունը որպես եռակողմ գործընթաց, որտեղ հակամարտող կողմերը Լեռնային Ղարաբաղը և Ադրբեջանն են, մինչդեռ Հայաստանը հանդես է գալիս երկրորդական դերում՝ ընդամենը որպես շահագրգիռ կողմ և Ղարաբաղի հայերի անվտանգության երաշխավոր: Ժխտելով մեղադրանքները վերադարձականության մեջ՝ հայկական կողմը հակամարտությունը տեղավորում է ինքնորոշման և ապագաղութացման հասկացությունների առավել լայն շրջանակում՝ դրանք կապելով Խորհրդային Միության փլուզման ողջ գործընթացի հետ: Լեռնային Ղարաբաղի հայերը պաշտպանում են այս դիրքորոշումը և հետևողականորեն լոբբիստական ջանքեր գործադրում՝ խաղաղության հաստատման գործընթացում որպես բացահայտորեն ճանաչված կողմ ընդգրկվելու ուղղությամբ:

Նույն գլխում ներկայացվող Բաղդասարյանի և Հուսեյնովի հեղինակած հոդվածը ցույց է տալիս, որ Լեռնային Ղարաբաղի հայ և ադրբեջանցի ժողովուրդների կողմից առաջադրված պահանջների սահմանումներում շարունակվում է հիմնական եզրույթների հակասական գործածությունը: Ելնելով կոլեկտիվ ինքնության տարբեր տարակարգումներին հատուկ իրավունքների մակարդակների հիերարխիկ ընկալումներից, որ բնորոշ էին խորհրդային կարգերին՝ թե՛ Ղարաբաղի հայերը, թե՛ Ղարաբաղի ադրբեջանցիները մերժում են «փոքրամասնություն» կամ «համայնք» (ռուս. "община") եզրույթների կիրառումն իրենց նկատմամբ և պնդում, որ Ղարաբաղն իրենց հայրենիքն է:

Կողմնակի դիտորդների տեսանկյունից խորհրդային ժառանգության կենսունակությունն առնվազն երկու ազդեցություն է ունենում: Առաջինը, որ միայն եզրույթների չափից ավելի զգուշորեն օգտագործման դեպքում է հնարավոր խուսափել այս կամ այն կողմի նկատմամբ կողմնակալ վերաբերմունքի մեջ մեղադրվելուց: Ղարաբաղյան հակամարտությանը վերաբերող բառապաշարի բարդությունը և այս կամ այն եզրույթի օգտագործման հնարավոր ծուղակները ցուցադրելու համար «Ակորդ»-ի այս թողարկման մեջ ներառվել է քաղաքական բառացանկ, որում մանրամասնորեն ներկայացված են հիմնական եզրույթների մրցակցող սահմանումները: Երկրորդ ազդեցությունը խորհրդային համակարգում դաշնային հարաբերությունների խեղաթյուրված փորձի հետևանքով «ինքնավարություն» հասկացության լիակատար վարկաբեկումն է: Հարավային Կովկասում անջատողական պայքար մղող փոքրամասնություններն ինքնավարություն տրամադրելու մասին խոստումների հանդեպ ցուցաբերում են նույնպիսի անլուրջ վերաբերմունք, ինչպիսի վերաբերմունք ցուցաբերում են հենց իրենք՝ նման խոստումներ տվող մեծամասնությունների առաջնորդները: Նրանք, ովքեր ինքնավարության տրամադրումն առաջարկում են որպես տարածաշրջանի հակամարտությունների լուծման եղանակ, պարտավոր են հաշվի առնել այս իրողությունը, եթե ցանկանում են, որ իրենց առաջարկությունները լուրջ ընդունվեն:

## Խաղաղության հաստատման «ընդգրկուն» գործընթաց

Գտնվելով Եվրոպայի, Ասիայի և Մերձավոր Արևելքի աշխարհաքաղաքական ազդեցության գոտիների սահմանագծի վրա՝ ղարաբաղյան հակամարտությունը կողմնակի դիտորդին ապշեցնում է բազմաթիվ դերակատարների ընդգրկմամբ: Հակամարտությունը ժամանակագրության առումով մասամբ համընկավ և խոր ազդեցություն ունեցավ Հարավային Կովկասում աշխարհաքաղաքական նոր միջավայրի ձևավորման վրա, որտեղ պատմականորեն ընթացել և այսօր էլ շարունակվում է տարածաշրջանն իրենց ազդեցության գոտում պահելու գերտերությունների մրցակցությունը: Իրականում, միջազգային միջնորդների միմյանց հետ մրցակցող օրակարգերն ու միակողմանի նախաձեռնություններն են հաճախ խաղաղության հաստատման գործընթացում առաջընթացի պակասի հիմնական բացատրությունը: Միջնորդական առաքելությամբ հանդես գալու առաջին փորձերը ձեռնարկվեցին Ռուսաստանի, Ղազախստանի և Իրանի կողմից: 1992 թվականից ի վեր ղարաբաղյան հակամարտությունը շատերի համոզմամբ դարձավ «սառը պատերազմի» աշխարհաքաղաքականությանը փոխարինելու եկած «Նոր աշխարհակարգի» կենսունակության և

դրա կառավարման նպատակով ստեղծված ինստիտուտների կարողությունների ստուգման հիմնական փորձաքարը: Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդաժողովի, որն այնուհետև վերանվանվեց Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության ԵԱՀԿ , հովանու ներքո ստեղծված «Մինսկի խմբին» ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում միջնորդի դերում հանդես գալու լիազորություններ տրվեցին:

Սկզբնական փուլում ակտիվ պատերազմական գործողությունների պատճառով տեղում դոփող՝ ԵԱՀԿ-ի հովանու ներքո սկսված գործընթացն այնուհետև ուղղվեց կողմերի միջև հակամարտության կարգավորման բովանդակության և մեթոդաբանության հարցերի շուրջ համաձայնության կայացմանը: Այնուամենայնիվ, ինչպես նշում է Յակոբին իր հոդվածում, գործընթացը չարդարացրեց գերտերությունների հույսերն ու ակնկալիքները՝ կապված ընդլայնված համագործակցության հետ: Զուլֆուգարովի և Օսկանյանի հոդվածներն իրենց հերթին վկայությունն են այն բանի, որ հակամարտության կողմերն անհանգստություն ունեն, որ խաղաղության հաստատման արդյունքում հակառակորդը կհայտնվի նոր՝ տարածաշրջանային գերիշխանություն ունեցող դերում: Նշված հոդվածներում ուշադրության է արժանանում խաղաղության հաստատման գործընթացներին հատուկ խնդրահարույց հարցը՝ հակամարտության մեջ գտնվող երկրների համար այլ պետությունների կողմից վարվող գործընթացներին ներհատուկ լարվածությունը, երբ դրանցում ներգրավված են նաև ոչ պետական կազմակերպություններ: Գուլշեն Լեռնային Ղարաբաղի *դե ֆակտո* իշխանությունն իրենից ոչ պետական կազմակերպության մի յուրօրինակ տեսակ է ներկայացնում, որը լավ կազմակերպված է և ունի կուռ կառուցվածք, սակայն, ինչպես Լիպարիտյանն է պնդում, պարզվում է, որ անհիմն են միջազգային միջնորդության այն հիմնարար ենթադրությունները, թե փոքրամասնությունները կհրաժարվեն անկախության իրենց ձգտումներից հանուն կայունության, տնտեսական բարեկեցության և փոքրամասնությունների իրավունքների մասին խոստումների: Եվ ինչպես Զուլֆուգարովն է նշում, նմանապես չիրականացան Ադրբեջանի այն հույսերը, թե տարածքային ամբողջականության սկզբունքի գերակայությունը վեր դասող որևէ կառույց կմիջնորդի հօգուտ իրենց:

Սակայն հիասթափության այս զգացումը չպետք է շղարշի այն մտայնությունը, որ խաղաղության հաստատման գործընթացի ներկա կառուցվածքը բևեռացնում է հենց այն համայնքները, որոնք մեծապես կարող են շահել կամ կորցնել այդ գործընթացից՝ Ղարաբաղի հայերին և Ղարաբաղից տեղահանված ադրբեջանցիներին: Հաղորդակցության հաստատումն այս երկու համայնքների միջև, որոնք խնդրի կարգավորման դեպքում, ի վերջո, պարտավոր են խաղաղ գոյակցել, պետք է դառնա ապագա խաղաղարար ջանքերի անքակտելի մասը. գործոն, որ 2005 թվականի հունիսին ընդունվեց Ադրբեջանի արտաքին գործերի նախարարության կողմից:

Տարածաշրջանում անվերապահորեն գերիշխող դիրք ունեցողի բացակայությամբ է պայմանավորված ղարաբաղյան հակամարտության յուրահատկություններից ևս մեկը: Հրադադարի ռեժիմի ինքնակարգավորվող բնույթը իր հոդվածի վերլուծության առարկան է դարձրել Անտոնենկոն: Հրադադարի հարաբերական կայունությունը հուշում է, որ ո՛չ Հայաստանը և ո՛չ էլ Ադրբեջանը մինչ օրս հակված չեն եղել վերսկսելու բռնությունը: Այնուամենայնիվ, ինչպես զգուշացնում է Ֆրեյզերն իր հոդվածում, հրադադարի ռեժիմի հաճախակի դարձող խախտումները, աճող ռազմական ծախսերը և փոխադարձ «հրեշականացումը» կարող են հասցնել մի կետի, երբ բռնության դիմելը կդառնա անխուսափելի:

## Մասնակցության բնութագրիչները. էլիտաներ և հասարակություններ

Հայաստանի և Ադրբեջանի հասարակությունների որոշ հատվածների պատրաստակամությունը՝ մեղադրելու գործընթացի արտաքին մասնակիցներին հակամարտության կարգավորման ճանապարհին առաջընթացի պակասի հարցում, ստիպում է խոսել գործընթացի նկատմամբ սեփականության և հասարակությունների մասնակցության չափի մասին: Ինչպես վկայում են սույն թողարկման մեջ ընդգրկված մի շարք հոդվածները, հակառակ կողմի հետ ուղղակի շփումների մեջ ներգրավված են եղել երկու երկրների կառավարող քաղաքական շրջանակների ամենավերին օղակները միայն. նախագահները, նրանց օգնականները, արտաքին գործերի նախարարները: Խորհրդային հասարակարգից ժառանգված էլիտարության, գաղտնիության և կենտրոնաձիգության ազդեցության տակ խաղաղարար գործընթացների նկատմամբ Հայաստանում և Ադրբեջանում ձևավորվել են հետխորհրդային մոտեցումներ, որոնց շրջանակներում իշխող վարչախմբերը խաղաղության հաստատման գործընթացի կառավարման և դրա բովանդակության վերաբերյալ տեղեկատվության նկատմամբ խիստ մենաշնորհ են պահպանում: Հակամարտության շուրջ բանավեճի շրջանակի ընդլայնմանն ուղղված քաղաքացիական ինքնուրույն նախաձեռնությունները և, մասնավորապես, հակամարտության մասին հասարակությանը ողջամտության սահմաններում տեղեկացնելու փորձերը, ընդունվում են կասկածամտությամբ, կամ որ ավելի վատ է, արժանանում են «թշնամուն անձնատուր լինելու» մեղադրանքների: Խաղաղության հաստատման գործընթացի էլիտարությունը արգելափակում է լայն հասարակության ընդգրկման հնարավորությունը և հանդիսանում է հայ և ադրբեջանցի առաջնորդների կողմից տեղական լսարանների համար կիրառվող ձևակերպումների և բանակցային սեղանի շուրջ նրանց մոտեցումների միջև գոյություն ունեցող հսկայական ճեղքվածքի պատճառը: Հաջորդող հոդվածաշարն անդրադառնում է էլիտաների ու հասարակությունների միջև փոխհարաբերություններին և հասարակության տարբեր շերտերի վրա հակամարտության ազդեցությանը:

Խաղաղության հաստատման գործընթացի կառավարման մենաշնորհը և հակառակ կողմի հետ շփումների նկատմամբ խիստ վերահսկողությունը լրջորեն սահմանափակել են քաղաքացիական հասարակության մասնակցության հնարավորությունը: Ինչպես Իշխանյանն ու Հասանովն են բացահայտում իրենց հոդվածում, ժամանակի ընթացքում քաղաքացիական նախաձեռնությունների քանակը նվազել է, իսկ մասնակցության սահմաններն ընդլայնելու քաղաքացիական հասարակության կարողությունը՝ սահմանափակվել: Ադրբեջանում քաղաքացիական հասարակությունը խոցելի է դարձել մի ռեժիմի պայմաններում, որը վայելում է նավթային եկամուտներով պայմանավորված զգալի անկախություն: Հայաստանում քաղաքացիական հասարակությունը, Ղարաբաղի հարցից առավել, առաջնահերթությունը տալիս է այլ խնդիրների, ինչը վկայում է այն մասին, որ քաղաքացիական հասարակության օրակարգը միշտ չէ, որ համընկնում են այն ակնկալիքների հետ, որ կողմնակի մասնակիցներն ունեն նրանցից՝ որպես հաշտության պահանջատերերի:

Ռզաևը և Գրիգորյանը անդրադառնում են հակամարտության լուսաբանման գործում լրատվամիջոցների դերին և հանգում ինչ-որ իմաստով հոռետեսական մի եզրակացության, որ եթե պատերազմը հնարավորություն ընձեռեց լրագրողներին ավելի անկախանալու, հետպատերազմյան լճացումը հանգեցրեց նրան, որ լրատվամիջոցները թե՛ Հայաստանում և թե՛ Ադրբեջանում ավելի ու ավելի հակվեցին դեպի պաշտոնական տեսակետները՝ վերարտադրելով ռազմատենչությունն ու ընկրկելով հնարավոր զիջումների թեմայի վրա դրված տաբուների հանդեպ: Բաղդասարյանն ու Յունուսովն իրենց հոդվածում անդրադառնում են հայաստանյան և ադրբեջանական հասարակությունների կրած խոշոր սոցիալական ձևափոխումներին և տեղի ունեցած փոփոխություններին վերաբերմունքի մեջ: Իրենց եզրակացության մեջ նրանք վստահաբար պնդում են, որ հարևան, թեկուզև միմյանցից մեկուսացված հասարակություններում գոյություն ունի զուգահեռ գործընթացների պարադոքս: Վերջապես, Շամփեյնը վերլուծում է ներկա լճացման տնտեսական ծախքերը և տնտեսական զարգացման հեռանկարների դրական ազդեցությունը խաղաղության հաստատման գործընթացի վրա:

Բոլոր հոդվածները՝ որպես մեկ ամբողջություն, միանշանակորեն պնդում են, որ հասարակությունները, ընդհանուր առմամբ, հետզհետե հեռանում են հաշտությունից և շարժվում ինքնությունների՝ որպես հաղթող (Հայաստան) և զոհ (Ադրբեջան), ներքին հաստատման ուղղությամբ: Պատերազմից ի վեր ձևավորված փոխադարձաբար բացառող ինքնությունները լուրջ խոչընդոտ են երկխոսության քաղաքականության համար, իսկ կողմերի հայտարարություններում դրանք հանդես են գալիս որպես միմյանց հայելային արտապատկերը: Այս ինքնությունների հիմքում ընկած են պատմական արդարության մասին ազգային գաղափարախոսության հետ սերտորեն միաձուլված մրցակցող ընկալումները: Օրինակ, մինչ որոշ հայկական աղբյուրներ ձգտում են հայ-ադրբեջանական հակամարտությունը տեղավորել «թուրքերի» ձեռքով իրականացված եղեռնի առավել լայն համատեքստի շրջանակներում, Ադրբեջանի պաշտոնական աղբյուրները փախստականների և ներքին տեղահանվածների խնդիրը ներկայացնում են բացառապես որպես ադրբեջանական հիմնախնդիր: Ավելին, գոյություն ունի այդ «խորհրդանշական մենաշնորհների» փոխադարձման կամ մրցակցության խնդիր, ինչի մասին են վկայում ադրբեջանական փորձերը՝ ղարաբաղյան հակամարտությունը ներկայացնելու որպես հայերի կողմից կազմակերպված «եղեռն»: Կողմերից յուրաքանչյուրը հակված է առանձնացնելու և կենտրոնացնելու ուշադրությունը բռնության դրսևորման ամենածայրահեղ դեպքերի վրա (ադրբեջանցիների համար՝ Խոջալուի արյունահեղությունը, հայերի համար՝ Սումգայիթի և Բաքվի ջարդերը), որոնք բնութագրական չեն երկու ժողովուրդների համար, սակայն մնացել են հիշողությունների մեջ որպես այդպիսին: Համակեցության և համագործակցության մասին պատմություններն այս գործընթացում կորսվում են. հակամարտության զարգացմանը զուգընթաց՝ երկու համայնքներն էլ «սկսում են մտաբերել» միմյանց հանդեպ պատմության խորքում թաքնված թշնամանքը, թշնամանք, որն այժմ ինստիտուցիոնալացվում է պաշտոնական ձևակերպումներում և վերարտադրվում է լրատվամիջոցների կողմից: Ունենալով զարգացման զուգահեռ վեկտորներ՝ Հայաստանի և Ադրբեջանի պատմությունները չեն հատվում:

## Ժողովրդավարացումը և խաղաղություն հաստատելու կարողությունը

Եթե 90-ական թվականների վրա իրենց կնիքը թողեցին ազգամիջյան հակամարտությունները՝ ձևավորելով անկախ պետականության վերականգնման գործընթացի եզրագծերը, ապա ներկա տասնամյակի վրա իր հետքն է թողնում պետականության ձևի սահմանման շուրջ մղվող պետություն-հասարակություն պայքարը: Վերջին տարիների ընթացքում թե՛ Հայաստանի, թե՛ Ադրբեջանի իշխող վարչակազմերն ականատես են լինում ժողովրդավարացման գործընթացի ընթացքի և խորության վերաբերյալ հասարակական դժգոհության դրսևորումների: Չվայելելով հասարակության լայն շերտերի աջակցությունը և մասամբ այդ պատճառով խրախուսելով հասարակության համատարած ռազմականացման մշակույթի արմատավորումը՝ քաղաքական վերնախավերն ցանկացած խաղաղ կարգավորման համար անհրաժեշտ փոխզիջումների գնալու փոքր հնարավորություն են թողել իրենց համար: Եղել են դեպքեր, երբ բանակցությունների սեղանի շուրջ ձեռք բերված նախնական համաձայնությունն ի դերև է եղել, երբ ներկայացվել է սեփական հասարակությանը: Ինչպես Մուսաբայովն ու Չիլինգիրյանն են պնդում իրենց հոդվածներում, թե՛ Հայաստանի և թե՛ Ադրբեջանի կառավարությունները փորձել են օգտվել «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» փակուղուց՝ ներքին քաղաքական շահաբաժիններ ստանալու, այլ ոչ թե այդ վիճակից դուրս գալու համար նախադրյալներ ստեղծելու նպատակով: Հոդվածաշարի վերջում, Բրոերսն անդրադառնում է չճանաչված լինելու ազդեցությանը անմիջապես Լեռնային Ղարաբաղի քաղաքական զարգացման և ժողովրդավարացման գործընթացի վրա: Ամփոփելով նշենք, որ այնուամենայնիվ ողջ տարածաշրջանի կտրվածքով պետություն-հասարակություն փոխհարաբերությունների  բարելավման արդյունքում ակնկալվող ժողովրդավարացման շահաբաժիններն են միայն, որ ի վիճակի են ի վերջո խաղաղ կարգավորման գործընթացի ներկա փակուղային վիճակը հաղթահարելու համար անհրաժեշտ միջոցներ ապահովել:

Հետզհետե անխուսափելի է դառնում այն, որ խաղաղ կարգավորմանն ուղղված ապագա որևէ քայլ անհրաժեշտաբար պետք է ներառի մասնակցության ընդլայնում և խորացում, հետևաբար նաև՝ խաղաղության հաստատման գործընթացի հանդեպ սեփականության զգացման ձևավորում: Սա հնարավոր է միայն այն դեպքում, երբ վարչակազմերը հասարակական լայն աջակցություն են վայելում և ստիպված չեն, որպես իրենց իշխանության լեգիտիմության հաստատման լակմուսի թուղթ, կոշտ դիրքորոշում որդեգրել Ղարաբաղի հարցի շուրջ: Վերոհիշյալի իրագործումը ենթադրում է պետության և հասարակության միջև համագործակցության շրջանակներում հասարակական մասնակցության առավել լայն դաշտի ապահովում, նաև՝ երկխոսության քաղաքականության ներդրում և զարգացում ինչպես հասարակությունների ներսում, այնպես էլ դրանց միջև: Սկզբնավորումից ի վեր, ղարաբաղյան հակամարտության ձևափոխվելու ունակությունը դրսևորվել է բազմաթիվ անգամներ: Ապագայի առանցքային հարցը կայանում է նրանում, թե Հայաստանի և Ադրբեջանի քաղաքական էլիտաներն ու լայն հասարակությունն ինչպես կարձագանքեն հակամարտության կարգավորման տեսանկյունից քաղաքական գործընթացի ձևափոխման երկարաժամկետ մարտահրավերին:

*Նկարում՝ ցույց Երևանում*

*Աղբյուրը՝ Ռուբեն Մանգասարյան/Պատկեր*

# Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը

## արմատները, զարգացումը և թյուրընկալումները

**Թոմաս դե Վաալ**

Բոլոր հակամարտություններն էլ ունեն իրենց նախապատմությունը: Սակայն ոչ բոլորն ունեն այնպիսի հստակ մեկնարկ, որպիսին ուներ ղարաբաղյան հակամարտությունը: Կողմերի հիմնական դիրքորոշումները, այն է՝ Ղարաբաղի հայերի որոշումը Հայաստանի օգնությամբ անջատվել Ադրբեջանից և Ադրբեջանի՝ այն թույլ չտալու վճռականությունը, որդեգրվեցին 1988 թվականի փետրվարին, և հենց այդ ժամանակ էլ, ինչպես խաղաղ երկնքում ճայթած ամպրոպ, սկիզբ առան հանկարծահաս խռովությունները՝ ցույցերի, գործադուլների, քաղաքական վեճերի, փախստականների ալիքների և ջարդերի տեսքով: Այն, որ լայնամասշտաբ ռազմական գործողությունները հայերի և ադրբեջանցիների միջև սկիզբ առան միայն 1991 թվականին, ավելի շուտ զենք ու զինամթերքի պակասի, քան ռազմական գործողություններ ծավալելու մտադրություն չունենալու արդյունք էր:

1988 թվականի փետրվարյան իրադարձությունները դրամատիկ, անակնկալ և ընդհանուր առմամբ անկանխատեսելի էին Եվրոպայի համար, որտեղ հասցրել էին մոռանալ ազգայնականության՝ որպես քաղաքական հզոր ուժի գոյության մասին: Այս իմաստով, հանդիսանալով ազգային հողի վրա առաջին լուրջ թնջուկը ուշ կոմունիստական դարաշրջանում, ղարաբաղյան հակամարտությունը կարող է համարվել այս կարգի հակամարտություններից ամենաանսպասելին և միաժամանակ ամենականխորոշվածը: Հարավսլավիայում կամ Խորհրդային Միությունում բռնկված այլ հակամարտությունների շարքում ղարաբաղյան հակամարտությունն ավելի քան անխուսափելի էր, քանի որ դրա պատճառներն ընկած էին ուշ կոմունիստական ժամանակաշրջանում կողմերի փոխհարաբերությունների «ներքին կառուցվածքում»: Պատմության իրարամերժ մեկնաբանում, վիճելի տարածքային սահմաններ, անկայուն անվտանգության համակարգ և երկու կողմերի միջև երկխոսության բացակայություն՝ ահա այն չորս բաղկացուցիչ տարրերը, որոնք, անհանգստությունների սկսվելուն պես, Հայաստանի և Ադրբեջանի միջև հարաբերությունների խաթարման պատճառ հանդիսացան: Այնուհարդերձ, խնդիրն այնքան նոր և այնքան խորն էր, որ չգտնվեց և մինչև այժմ էլ չի գտնվում այն կարգավորելու որևէ մեխանիզմ:

## Պատում Ղարաբաղի մասին. ինքնություն և պատկանելություն

Պատմության իրարամերժ մեկնաբանումները տարածվեցին երկու հասարակությունների բոլոր շերտերում: Դեռ նախքան ռազմական գործողությունների մեկնարկը, մտավորականների կողմից մշակվեցին մանրակրկիտ փաստարկներ, որոնք ձևավորեցին հիմնավորումների այն ազգային համակարգերը, որոնցով այնուհետև հիմնավորվում էին ռազմի դաշտում տեղի ունեցող իրադարձությունները: Կողմերի դիրքորոշումներն առաջին անգամ ի հայտ եկան 1960-ականներին Նիկիտա Խրուշչովի նախաձեռնած հետստալինյան «հալոցքի» ժամանակ, երբ պայմաններ ստեղծվեցին պետության կողմից թույլատրված կամ «ուղղափառ» ազգայնականության գոյության համար: Սակայն պարզվեց, որ դրանք վերահսկելը չափազանց բարդ խնդիր է, հատկապես, երբ ավելի ուշ շրջանում գրող-հրապարակախոսներ Զիա Բունյաթովի և Զորի

**Թոմաս դե Վաալը**
**Լոնդոնի Պատերազմի և խաղաղության լուսաբանման ինստիտուտի (IWPR) կովկասյան ծրագրերի խմբագիրն է: Նա լայնորեն լուսաբանել է Հարավային Կովկասի և Ռուսաստանի քաղաքական իրադարձությունները և հեղինակել *«Սև այգի. Հայաստանը և Ադրբեջանը խաղաղության և պատերազմի միջև»* գիրքը:**



Բալայանի կողմից շրջանառության մեջ դրվեցին պատմության տրամագծորեն հակառակ տարբերակներ:

Երբ 1988 թվականին հակամարտությունը ջրի երես դուրս ելավ, երկու կողմում էլ հայտնվեցին հարաբերությունները խզելուն պատրաստ պամֆլետիստների և քարոզիչների խմբեր, որոնք սկսեցին տարբեր վերնագրերով աշխատություններ լույս ընծայել, ինչպես օրինակ` «Ղարաբաղ. ողբերգության մեղավորը քաջ հայտնի է» գրքույկը: Ցավալիորեն, այս առումով քիչ բան է փոխվել: Գաղափարական այս մարտերը մինչ օրս էլ շարունակվում են ինտերնետի միջոցով նեղ լսարանի շրջանակներում, այնինչ երկու երկրներում անցկացվող հասարակական կարծիքի հարցումները վկայում են, որ հարցվողների ճնշող մեծամասնությունն անհնար է համարում խաղաղության որևէ համաձայնագրի շրջանակներում Ղարաբաղի հանձնումը մյուս կողմին: Երկու կողմերի համար էլ սովորություն է դարձել հավատալ, որ լինել առանց Լեռնային Ղարաբաղի նշանակում է ունենալ թերի ազգային ինքնություն, թերաճ կամ վիրավոր պետականություն: Սա իր հերթին սաստկացնում է անապահովության զգացումը, որ առաջանում է այն վտանգների հանդեպ, որ ներկայացնում են մյուս կողմն ու նրա դաշնակիցները:

Թյուր կլինի այս վախերը վերագրել սոսկ երևակայությանը. ի վերջո թե՛ Հայաստանի և թե՛ Ադրբեջանի նորագույն պատմությունը պարունակում է աղետների և զրկանքների բազմաթիվ օրինակներ, որոնք էլ լուրջ մտավախությունների հիմք են հանդիսանում: Երկու պետությունների դեպքում էլ փախստականների գերակշռող մասն ապրում է հայրենիքից դուրս` պատերազմի, տեղահանումների և մեծ տերությունների միջև կայացած համաձայնագրերի արդյունքում: 1828 թվականին կնքված Թուրքմենչայի պայմանագրով Ադրբեջանը բաժանվեց երկու` ռուսական և իրանական մասերի, իսկ 1915-1921 թվականներին գերտերությունների վարած քաղաքականության հետևանքով Հայաստանի տարածքը խիստ կրճատվեց: 1915 թվականին Անատոլիայում իրագործված հայերի զանգվածային սպանությունները իրենց մասշտաբներով ստվերում են ժամանակակից պատմության ընթացքում տարածաշրջանում իրականացված այլ բռնությունները: Սակայն քսաներորդ դարի սկզբներից ի վեր քիչ չեն տառապել նաև ադրբեջանցիները` հաճախ հայերի ձեռքից: Հենց այս դրվագներն են, որտեղ ադրբեջանցիներն ու հայերը տուժել են միմյանց (ոչ ռուսների, վրացիների կամ այլոց) ձեռքից, որ գտնվում են արդի ազգայնական պատմագրության ուշադրության կիզակետում:

## Ղարաբաղյան հակամարտության այժմեական բնույթը

Հայ-ադրբեջանական առաջին լուրջ ընդհարումները գրանցվել են տասնիններորդ դարի վերջին: Հայերը և ադրբեջանցիներն այն երկու հիմնական ազգային խմբերն էին, որոնք միախառն բնակվում էին Ռուսական, Օսմանյան և Պարսկական կայսրությունների միջև ընկած` հարյուրավոր կիլոմետրերով ձգվող տարածքում: Հայերը, որոնք մեծապես կենտրոնացած էին քաղաքային բնակավայրերում, որպես առավել հաջողակ առևտրական դաս` սովորաբար սոցիալական և տնտեսական տեսանկյուններից առավել բարձր դիրք էին զբաղեցնում: Տասնիններորդ դարի վերջին ազգայնական տրամադրությունների ի հայտ գալու և ռուս-օսմանյան հակամարտության սրվելու հետ զուգընթաց` հայերը դարձան Օսմանյան կայսրության ամենառազմատենչ և միաժամանակ ամենախոցելի համայնքը: Եվ եթե ընդամենը մի քա-

նի սերունդ առաջ հիմնականում շիա ադրբեջանցիները և առավելապես սուննի թուրքերը բավականաչափ ընդհանրություններ չունեին, ապա, շահերի ընդհանրությամբ պայմանավորված, նրանց կապերն հետզհետե ավելի ու ավելի էին սերտանում և հայերի կողմից սկսում էին ընկալվել որպես մեկ ամբողջություն: Սրա արդյունքում հայերի շրջանում ձևավորվեց ընդհանրական մի տեսակետ, թե ադրբեջանցիները նույնպես «թուրք» են և, հետևաբար, կիսում են 1915 թվականի ցեղասպանության պատասխանատվությունը:

1917-20 թվականների հայ-ադրբեջանական զինված հակամարտությունը սահմաններ գծելու և կենսունակ պետություն ստեղծելու անկանոն մի փորձ էր. արյունոտ մի գործընթաց, որ համակել էր Արևելյան Եվրոպայի մնացյալ հատվածը և Բալկանները: Դա նաև ուրիշի ձեռքերով մղվող պատերազմ էր. նախորդ դարի կեսից ի վեր Ռուսաստանի ու Թուրքիայի միջև շարունակվող տարածքային տևական հակամարտություն, որի ընթացքում նրանցից յուրաքանչյուրն, իբրև իր տեղական դաշնակից, համապատասխանաբար, օգտագործում էր հայերին և ադրբեջանցիներին:

Ղարաբաղի դժբախտությունն է, որ այն միշտ հայտնվել է «արանքում»: Աշխարհագրական առումով այն գտնվում է երկու երկրների միջև ձգվող լեռնային ջրբաժանի ադրբեջանական կողմում: Ժողովրդագրական առումով այն ունեցել է խառը ազգային պատկանելությամբ բնակչություն, ընդ որում՝ դարեր շարունակ հայերն ակնհայտորեն գերակշռել են լեռնային հատվածներում, իսկ ադրբեջանցիները՝ հարթավայրերում, ինչպես նաև Շուշա քաղաքում (կամ Շուշի, ինչպես այն անվանում են հայերը): Մշակութային առումով Ղարաբաղը երկու կողմերի համար էլ հսկայական կարևորություն ունի: Հայերի համար Ղարաբաղի մշակութային կարևորությունը դրա տարածքով մեկ սփռված տասնյակ հայկական եկեղեցիներն են, միջնադարում մելիք-իշխանների կողմից հիմնադրված տեղական ինքնակառավարման համակարգը և ղարաբաղցի հայերի ռազմական համբավը: Ադրբեջանցիների համար Ղարաբաղը զուգորդվում է տասնութերորդ դարի խոշոր քաղաքներից մեկի՝ Շուշայի շուրջը սփռված խանության հետ, նաև ադրբեջանական մշակութային ծաղկման շրջանի հետ՝ ի դեմս այնպիսի կոմպոզիտորների ու բանաստեղծների, ինչպիսիք էին Վագիֆը, Նաթևանը և Ուզեիր Հաջիբեկովը: Կարճ ասած, Ղարաբաղը ինչպես և Էլզասը, Ֆլանդրիան կամ Քաշմիրը, մշակութապես հարուստ սահմանային գոտի է, և ինչպես վերջիններս, դատապարտված է ռազմական թատերաբեմ լինելու:

1920-21 թվականներին այս հակամարտության միակ լուծումը կարող էր դառնալ կա՛մ կողմերից մեկի ռազմական հաղթանակը, ինչպես տեղի ունեցավ Անատոլիայում, Զանգեզուրում և Նախիջևանում, կա՛մ կայսերապետական որևէ ուժի կողմից պարտադրված նոր կառուցվածքը: Այն բանից հետո, երբ Բրիտանիային չհաջողվեց պարտադրել խնդրի կարգավորման իր տարբերակը, կայսերական դատավորի դերում հայտնվեցին բոլշևիկները, որոնք 11-րդ կարմիր բանակի ուժերով 1921 թվականի մայիսին գրավեց Ղարաբաղը: 1921 թվականի հուլիսի 5-ին բոլշևիկյան կովկասյան կոմիտեն՝ Կովբյուրոն, Ստալինի ղեկավարությամբ որոշում կայացրեց Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին հանձնելու մասին: 1923 թվականի հուլիսին Ադրբեջանի կազմում ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը (ԼՂԻՄ), որի սահմաններում հայերը գերակշիռ մեծամասնություն էին կազմում՝ ընդհանուր բնակչության 94 տոկոսը:

Նման կառուցվածքի պայմաններում ԼՂԻՄ-ը դարձավ խորհրդային այն երկու ինքնավար մարզերից մեկը, որոնք գտնվելով միութենական մի հանրապետության կազմում, սերտորեն կապված էին միութենական մեկ այլ հանրապետության հետ (մյուսը մեծամասնություն կազմող ռուս բնակչությամբ Ղրիմն էր, որը թեպետ նույնպես անկայուն կառույց էր, սակայն, ինչպես ցույց տվեց փորձը, նվազ խնդրահարույց): Նման կարգավորման հակասականությունը երբևէ բացեիբաց չքննարկվեց, մինչդեռ դրա ազգային մեկնաբանումները տրամագծորեն հակառակ բնույթ էին կրում. հայերի մեծամասնությունը երբևէ չընդունեց 1921 թվականի որոշումը, որի դեմ անգամ բողոքի ցույցեր անցկացվեցին 1945, 1965 և 1977 թվականներին: 1988 թվականի փետրվարի 20-ին ԼՂԻՄ շրջանային խորհուրդը քվեարկեց հօգուտ մի որոշման, որով խնդրում էր Խորհրդային կառավարությանը՝ թույլ տալ Ղարաբաղին դուրս գալ Խորհրդային Ադրբեջանի կազմից և միանալ Խորհրդային Հայաստանին: Ինչպես և կարելի էր ակնկալել, առաջադրված հարցը կատարյալ զարմանքով ընդունվեց ադրբեջանցիների կողմից. նրանց համար Լեռնային Ղարաբաղի՝ իրենց հանրապետության մաս լինելը ապացուցման կարիք չունեցող մի փաստ էր, որը հաստատվում էր ինչպես ամենօրյա լրատվությամբ, այնպես էլ Ղարաբաղի հանդեպ Ադրբեջանի ժառանգության իրավունքը փաստող գիտական գրականությամբ:

Այստեղ անհրաժեշտ է ուշադրությունը սևեռել մի կարևոր հանգամանքի վրա. տարածաշրջանի «ճարտարապետության» տակ թաքնված այդ ներքին հակասությունները չնչին ազդեցություն էին ունենում Ղարաբաղում բնակվող մարդկանց առօրյա կյանքի վրա: Ինչպես կվկայի հայերի և ադրբեջանցիների մեծամասնությունը, նրանք ավանդաբար ավելի սերտ առևտրական կապեր են ունեցել միմյանց հետ, քան նրանցից յուրաքանչյուրը՝ վրացիների հետ: առն ամուսնությունների ցուցանիշը ևս բարձր էր: Խորհրդային ժամանակաշրջանի ղարաբաղցիները՝ թե՛ հայերը և թե՛ ադրբեջանցիները հավասար չափով խոսում էին երկու լեզուներով, լավ հարաբերությունների մեջ էին իրենց հարևանների հետ և քիչ ուշադրություն էին դարձնում Երևանում և Բաքվում գտնվող մտավորականների կողմից առաջ քաշվող ազգայնական պատումներին:

Հետևաբար, տարրական սխալ կլինի ղարաբաղյան հակամարտությունը դիտարկել որպես «դարավոր ատելության» դրսևորում կամ կրոնական հակամարտություն: Մշակութային, առևտրական և ամուսնական հարաբերությունները մինչ այժմ էլ շարունակում են կապել հայերին և ադրբեջանցիներին միմյանց հետ Մոսկվայում, Վրաստանում և Իրանում, ասել կուզի՝ ղարաբաղյան հակամարտության գոտուց դուրս գտնվող ցանկացած վայրում:

## Անվտանգության երկընտրանքներ

Այսպիսով ի՞նչն այս սովորական հարևաններին դրդեց հակամարտության: Անվտանգության և վստահության զգացումի կտրուկ անկման մեջ կարելի է մեղադրել խորհրդային պետության ոչ ճկուն համակարգին, որն ի վիճակի չեղավ գլուխ հանել Լեռնային Ղարաբաղի խնդրի հիմքում ընկած քաղաքական հակասություններից: Մեծապես կենտրոնաձիգ սույն համակարգն ի վիճակի էր անվտանգություն ապահովել վախի միջոցով, մինչդեռ երկու համայնքների միջև ծագած հակամարտությունը փոխհամաձայնությամբ լուծելու և ոչ մի միջոց չուներ:

Խորհրդային Միությունը ստեղծել էր տարածքային միավորներ՝ ըստ ազգային պատկանելության, սակայն չէր նախատեսել հնարավորություն հասարակության մեջ հորիզոնական քաղաքացիական կապերի ձևավորման համար, այսինքն՝ ազգային կամ կուսակցական պատկանելությամբ չբնորոշվող կազմակերպություններին հնարավորություն չէր ընձեռնված մասնակցելու պետության հասարակական կամ քաղաքական կյանքին: 1988 թվականից սկսած կոմունիստական գաղափարախոսությունը դադարեց հասարակական կյանքն ուղղորդող և առաջնորդող սկզբունք լինել, ուստի, երբ ճգնաժամը սկսվեց, խիստ տրամաբանական էր, որ թե՛ հայերը, թե՛ ադրբեջանցիները հավատարիմ գտնվեցին իրենց ազգային արմատներին ու հայրենիքին, այլ ոչ թե «եղբայրության» և «աշխատավորների համերաշխության» մասին կարգախոսներին: Նրանց համար հետաքրքրություն չէր ներկայացնում փոխադարձաբար ընդունելի տարբերակի որոնման նպատակով երկխոսության մեջ ներքաշվելը, անգամ եթե նման ցանկություն ունեին: Ղարաբաղի հայերը չէին էլ մտածում իրենց խնդիրը Բաքվի միջոցով առաջ տանելու մասին, իսկ Բաքվի առաջնորդները մտադիր չէին հրավիրել նրանց այնտեղ. խնդիրը փոխհամաձայնությամբ կարգավորելու կողմնակիցներից մեկը՝ Ղարաբաղի հայ Վալերի Գրիգորյանը, որ Ստեփանակերտի պատվիրակության կազմում 1991 թվականին մեկնել էր Բաքու, սպանվեց վերադարձի ճանապարհին: Փոխարենը երկու կողմերն էլ պատվիրակություններ էին ուղարկում Մոսկվա և հեռաձայնում Կրեմլ՝ Կոմունիստական կուսակցության պաշտոնյաներին համոզելու նպատակով: Երկու կողմերն էլ վստահ էին, որ այս հակամարտության մեջ Մոսկվան պիտի հանդես գա դատավորի դերում և կողմերից մեկը պիտի հաղթող ճանաչվի:

Այսպիսով շարքային քաղաքացիները շուտով կորցրեցին կապերն իրենց հարևանների ու ընկերների հետ: Իսկ երբ արդեն քաղաքական դիմակայությունը սկսված էր, Շուշայի և Ստեփանակերտի բնակիչները ստիպված էին վերահաստատել իրենց ինքնությունը կա՛մ որպես հայ, կա՛մ որպես ադրբեջանցի. ինքնության վերահաստատման մի քայլ, որ խառն ամուսնությունների դեպքում կատարվում էր գիտակցված ընտրության եղանակով: «Ոտքերով քվեարկելուց» և հայրենիքը մեկընդմիշտ լքելուց բացի, նրանց համար ընտրության այլ տարբերակ չէր մնում: Ուշագրավ է, որ Բաքվի քաղաքացիական բարձր գիտակցությամբ օժտված ադրբեջանահայ համայնքը հնարավորին չափ երկար դիմադրեց քաղաքական լարվածությանն ու ճնշումներին և կազմալուծվեց միայն 1990 թվականին:

Ոմանք հակված էին հարաբերությունների այս սրումը պայմանավորել տնտեսական խնդիրներով. իբրև թե այս հակամարտությունը պայքար է սահմանափակ ռեսուրսների համար: Այս տեսակետը, սակայն, քննադատության չի դիմանում: Ղարաբաղում լարվածություն կար շատ ավելի վաղ, քան խորհրդային տնտեսության ճգնաժամը 1980-ականներին, և մարզն էլ ավելի աղքատ չէր, քան Խորհրդային Միության շատ այլ շրջաններ. մարզի տնտեսական ցուցանիշների մակարդակը համարժեք էր Ադրբեջանի միջին տնտեսական ցուցանիշների մակարդակին և միայն չնչին չափով էր զիջում հարևան Հայաստանի ցուցանիշներին: Գորբաչովի կողմից տրված խոստումը «փոքր վերածնունդ» իրականացնելու մասին և Արկադի Վոլսկու ջանքերով Մոսկվայից եկող ներդրումների մեծ ներհոսքը 1988-1989 թվականներին, բավարար չեղան համոզելու Ղարաբաղի հայերին, որ իրենց համար շահավետ է Ադրբեջանի կազմում մնալը:

## Հակամարտությունից դեպի բռնություն

1988 թվականի սկզբների իրադարձությունների զարգացման գլխապտույտ արագությունը, իրավիճակի խոցելիության աստիճանի ցուցանիշն էր: Նախ՝ ադրբեջանցիների մի մեծ խումբ լքեց հարավային Հայաստանը՝ դժգոհություն արտահայտելով հայերի կողմից դրսևորված խիստ ագրեսիվության նկատմամբ (ավելի փոքր մի խումբ մեկնել էր մի քանի ամիս առաջ): Այնուհետև Լեռնային Ղարաբաղի շրջանային խորհուրդը կայացրեց իր աննախադեպ որոշումը: Սրան հետևեցին երթերը Ստեփանակերտում և Բաքվում, իսկ այնուհետև՝ հետպատերազմյան Խորհրդային Միությունում երբևէ տեղի ունեցած ամենամեծ հանրահավաքները Երևանում: Այդ ընթացքում Խորհրդային Միությունն ականատես եղավ նաև աշխատավորների առաջին համընդհանուր գործադուլին՝ Լեռնային Ղարաբաղում:

Հակադրման քաղաքականության և բաց հակամարտության միջև հավասարակշռությունը հօգուտ վերջինի շեղվեց 1988 թվականի փետրվարի 28-29-ին՝ Սումգայիթում իրականացված ջարդերից հետո: Ջարդերը հետևանք էին բաղադրիչների պայթյունավտանգ խառնուրդի՝ ընկճված և աղտոտված քաղաք՝ խառն էթնիկ բնակչությամբ, Հայաստանը լքած ադրբեջանցիների անսպասելի ներհոսք դեպի Սումգայիթ, քաղաքային իշխանություններ, որոնք կամ շփոթված էին, կամ բացակայում էին, մոսկովյան պաշտոնատարների լռություն, լուրեր, թե Ղարաբաղում երկու ադրբեջանցի է սպանվել և զայրացած հանրահավաքների շարք: Այս ամենը վերածվեց քաղաքի հայկական թաղամասում կազմակերպված վայրագ ջարդերի, որոնք ավարտվեցին միայն Խորհրդային բանակի ուշացած զինված միջամտության արդյունքում: Պաշտոնական տվյալների համաձայն (գրեթե հաստատապես վստահելի, քանի որ համընկնում են զոհերի ցուցակների հետ) զոհվել էին 26 հայեր և 6 ադրբեջանցիներ: Ըստ էության, Սումգայիթը Ղարաբաղի շուրջ վեճը վերածեց ղարաբաղյան հակամարտության, և միայն զենքի բացակայությունն էր զսպում լայնածավալ պատերազմի սանձազերծումը:

## Կառավարման ճգնաժամ

Թեպետ սումգաիթյան ջարդերի՝ որպես գաղտնի համաձայնության արդյունքի մասին բազմաթիվ տեսություններ կան, սակայն վկայությունների գերակշիռ մասն ապացուցում է, որ դա զանգվածային բռնության տարերային պոռթկում էր, որն ի վիճակի չեղան կանխել խորհրդային իշխանությունները և բնավ ոչ այն պատճառով, որ հրահրվել կամ առավել ևս նախաձեռնվել էր իրենց իսկ կողմից: Հակամարտության բռնկման գործում Մոսկվայի անփառունակ դերը դեռ հիմք չի տալիս ենթադրելու ինչպես այժմ էլ Կովկասում շատերը հակված են կարծելու , որ 1988 թվականին սկիզբ առած վեճը կենտրոնական իշխանությունների ձեռքի գործն էր, մինչ շարքային հայերի ու ադրբեջանցիների մեծամասնությանը վերապահված էր կողքից դիտողի դերը: Այն թվականների՝ Քաղբյուրոյի գոյություն ունեցող բոլոր փաստաթղթերի վերլուծությունը ցույց է տալիս, որ Խորհրդային Միության կենտրոնական ապարատը շփոթված էր և անկարող՝ դիմակայելու այդ անսպասելի ու անծանոթ մարտահրավերին: Գորբաչովը հանկարծ հայտնվեց տհաճ իրավիճակում, քանի որ Հայաստանի և Ադրբեջանի տե-



դական կոմունիստական կուսակցությունները հրաժարվեցին կատարել նրա հրահանգները: Ինչպես հաճախ էր պատահում այդ ժամանակաշրջանում, Գորբաչովը Սումգայիթում 1988 թվականի փետրվարի 29-ին տեղի ունեցած դեպքերի քննարկմանը նվիրված Քաղբյուրոյի նիստի ընթացքում դուրս եկավ հավասարակշռությունից՝ հարձակվելով ինչպես Բաքվի, այնպես էլ Երևանի կուսակցական առաջնորդների վրա. «Մենք տեղեկությունների կարիք ունենք, իսկ դրանք անմատչելի են. երկու կողմերն էլ թաքցնում են դրանք: Բոլորիդ մասն էլ խառն է այս ամենում»:

Հետ հայացք նետելով 1988 թվականի դեպքերին՝ ակնհայտ է դառնում, որ Գորբաչովն այս ահագնացող հակամարտությունը զսպելու միայն երկու մարտավարություն կարող էր բանեցնել: Ի պատիվ իրեն, նա չդիմեց առաջինին՝ զանգվածային ռեպրեսիաների մեթոդին: Հայաստանի և Ադրբեջանի քաղաքական ակտիվիստների մասսայական ձերբակալություններն անշուշտ մի առ ժամանակ կսաստեին խորհրդային երկու հանրապետությունների բնակչության կրքերը, սակայն քաղաքական առումով դրա գինը Գորբաչովի համար շատ մեծ կլիներ, իսկ խռովությունները պարզապես կհետաձգվեին: Երկրորդ տարբերակը, որը ենթադրում էր համաձայնության ձեռքբերմանն ուղղված ժողովրդավարական բանավեճի ծավալում տարածաշրջան կատարված այցելե-լությունների, կողմերի հետ բանակցությունների, հակամարտության հիմնախնդիրներն ուսումնասիրելու նպատակով անկախ հանձնաժողովներ հիմնելու և փոխադարձ ընդունելի լուծում գտնելու ուղղությամբ ջանքեր ներդնելու միջոցով, այն ժամանակի համար, անգամ խորհրդային ամենաազատական առաջնորդ ունենալու դեպքում, անհավանական էր: 1988 թվականի Խորհրդային Կովկասում նման կարգի որևէ նախաձեռնություն պարզապես աներևակայելի էր: Ավելորդ չի նշել, որ մինչ օրս շարունակելով քննադատել Գորբաչովին ղարաբաղյան վեճի շրջանակներում ունեցած դերակատարման համար, հայերն ու ադրբեջանցիները նրան մեղադրում են ոչ այն բանում, որ չկարողացավ արդար միջնորդի դեր ստանձնել, այլ, որ չկարողացավ, օգտագործելով Կրեմլի իշխանությունը, Ղարաբաղը հանձնել իր միակ օրինական տիրոջը՝ հենց իրենց:

Փաստերը ցույց են տալիս, որ Մոսկվան 1988 թվականին արդեն կորցրեց լիակատար վերահսկողությունը Հայաստանի և Ադրբեջանի նկատմամբ: 1988 թվականի մայիսին Գորբաչովը փոխեց և՛ Երևանի, և՛ Բաքվի կոմունիստական կուսակցությունների ղեկավարներին, սակայն անմիջապես պարզվեց, որ նրանց փոխարինողները Ղարաբաղի հարցի շուրջ էլ ավելի կարծր դիրքորոշում ունեն: Խորհրդային երկու հանրապետություններն էլ ձեռնամուխ եղան պետականաստեղծման, ազգայնական նոր խորհրդանիշների ընդունման, նոր կառույցների ձևավորման և համապատասխանաբար իրենց հայ կամ ադրբեջանական փոքրամասնություններին զանգվածաբար արտաքսելու գործընթացին:

Հաջորդ ջրբաժանը 1990 թվականն էր, երբ խորհրդային առաջնորդները «կորցրեցին» Ադրբեջանը, նախ՝ Բաքվի փողոցներն ազգայնական ընդդիմությանը զիջելով, իսկ այնուհետև իրավիճակն էլ ավելի սրելով, երբ Ադրբեջանի «Ժողովրդական ճակատ»-ին ճնշելու նպատակով քաղաք մտցրեցին բանակը, ինչի արդյունքում սպանվեցին մի քանի տասնյակ քաղաքացիական անձինք: Այս ճգնաժամի առաջին զոհերը դարձան Բաքվում մնացած հայերը, որոնցից իննսունը զոհվեցին ջարդերի ընթացքում, մինչ կհասցնեին տարհանվել քաղաքից: Բաքուն վերջնականապես կորցրեց ազգերի միջև հանդուրժողականության դրսևորման օրրանի իր համբավը:

## Լարվածության աճ և բաց պատերազմ

Խորհրդային Միության փլուզման արդյունքում 1991 թվականին ղարաբաղյան հակամարտությունը քաղաքացիական պատերազմից վերածվեց միջպետականի: Նախկին 15 խորհրդային հանրապետությունները իրենց խորհրդային սահմանների շրջանակներում անկախ

***Նկարում՝ ավերված մզկիթը Շուշայում***

*Աղբյուրը՝ Լորենս Բրոերս*

հռչակեցին իրենց պետականությունները, իսկ Լեռնային Ղարաբաղը ֆորմալ առումով միջազգայնորեն ճանաչվեց իբրև Ադրբեջանի մաս. սա է այն կենտրոնական հարցը, որը շարունակում է մնալ այս հակամարտության առանցքում: Նույն այդ ժամանակահատվածում խորհրդային սպառազինությունների փոխանցումը հակամարտության երկու կողմերին մեծացրեց նրանց կործանարար ներուժը:

Աշխարհագրական դիրքի և ժողովրդագրական իրավիճակի իրողություններն այնպիսին էին, որ հակադրության առջև կանգնեցրին ադրբեջանական (որն օղակում էր Լեռնային Ղարաբաղն ադրբեջանական քաղաքներով և գյուղերով) և հայկական կողմերին: Իմիջիայլոց, վերջինս, չնայած տարածքային առումով անջատված էր ոչ այնքան հեռու գտնվող Հայաստանից, շատ ավելի մեծ վերահսկողություն ուներ բուն Ղարաբաղի նկատմամբ: Այդպիսով, հակամարտության ռազմական ելքը կախված էր ադրբեջանցիների կարողությունից՝ շրջափակելու Լեռնային Ղարաբաղը և սեփական պայմանները թելադրելու, ինչին հակադրվում էր հայկական կողմի ունակությունը՝ ճեղքելու ռազմական շրջափակումը և կապ ստեղծելու ոչ հեռու գտնվող Հայաստանի հետ:

Հայկական տեսանկյունից պատերազմի ամենամռայլ դրվագները 1991-1992 թվականների Ստեփանակերտի անխնա ռմբահարումներն էին և 1992 թվականին ադրբեջանական ռազմուժի սրընթաց հարձակումը Ղարաբաղի վրա: Ադրբեջանցիները սարսափով են վերհիշում պատերազմի ընթացքում տեղի ունեցած դաժան հաշվեհարդարը, երբ 1992 թվականի փետրվարին շուրջ 485 ադրբեջանցիներ, մեծամասամբ՝ քաղաքացիական բնակչություն, հայկական զորքերի կողմից սպանվեցին Խոջալուում: Դրանից բացի, 1992-1994 թվականներին Ադրբեջանն, անկասկած, մարդասիրական ծանր ճգնաժամ ապրեց, երբ հայկական ուժերը գրավեցին Ղարաբաղին հարող ադրբեջանական յոթ շրջանները և այդ տարածքներից շուրջ կես միլիոն մարդ տեղահանվեց: Լեռնային Ղարաբաղից դուրս գտնվող տարածքների վրա պատերազմական գործողությունների տեղափոխման հետևանքները (Ղարաբաղի տարածքը ներառյալ հայերը ներկայումս վերահսկում են Ադրբեջանի միջազգայնորեն ճանաչված տարածքի 13,6 տոկոսը) մինչ այժմ մնում են իբրև չլուծված հակամարտության բաց վերք:

Այսպիսին էր պատերազմի դաժան իրականությունը: Սակայն դրանում մեղքի իր չափաբաժինն ունի նաև արտաքին աշխարհը, որն ի վիճակի չեղավ ավելին ներդնել՝ սատարելու պատերազմող կողմերի լուծում գտնելու պատրաստակամությանը: Դաժանության արտահայտման օրինակներին գուցե հնարավոր է որևէ բացատրություն տալ «սպանիր-կամ-կսպանվես» իրավիճակով թելադրված ռազմական գործողությունների տրամաբանության շրջանակներում (թեպետ դժվար է ռազմավարական տրամաբանություն գտնել Խոջալուի դեպքերում, ուր հավանաբար մեծ դեր են ունեցել վրեժխնդրության ձևախեղված շարժառիթները): Հաղթանակ տանելու համար ադրբեջանցիներին հարկավոր էր սեղմել տնտեսական և քաղաքական շրջափակման օղակը Ղարաբաղի շուրջ. նպատակ, որ նրանց չհաջողվեց իրագործել՝ նույնիսկ արյան գնով: Հայերն, իրենց հերթին, պիտի Ղարաբաղը խոցելի անկլավից վերածեին պաշտպանունակ ամրոցի. նպատակ, որին նրանք հասան արյան գնով:

## Միասին՝ մեկուսացման մեջ

1988 թվականից ի վեր Ղարաբաղի շուրջ վեճի չմարող թեմաներից է գործուն և հեղինակավոր արտաքին դատավորի բացակայությունը: Կարելի է ասել, որ հակամարտությունը ծնունդ առավ որպես կայսրության անկման պահին մշտապես վիճելի տարածքի հանդեպ քաղաքական հավակնությունների բախում: Այն շատ արագ վերաճեց տարածքային անվտանգության հիմնախնդրի, երբ կայսերական կենտրոնն ի վիճակի չեղավ պաշտպանել խոցելի համայնքները, և երկու կողմերն էլ հայացքները հառեցին սեփական հնարավորություններին:

Իհարկե, հակամարտության զարգացման ընթացքը շուտով ձևափոխեց դրա նախնական բնույթը: 1988 թվականի փետրվարից հետո ասպարեզ ելան նաև տնտեսական գործոնները, որոնք այժմ էլ հակամարտության սնուցման աղբյուրներն են հանդիսանում: Զենքի առքուվաճառքից շահույթ ստացողներ, ընչաքաղց թալանչիներ, միջնորդներ և մաֆիոզներ. ահա նրանք, ովքեր շահում են հակամարտության խորացումից և դրա չկարգավորվածությունից: Սրան հավելենք նաև պատերազմի ահագնությունները և դրա արդյունքում ծնունդ առած ատելությամբ լի քարոզչությունը, քսան հազար մարդու կյանք խլած հակամարտության արդյունքում առաջացած վրեժի ծարավը, որոնք հետզհետե ի չիք դարձրին հայերի և ադրբեջանցիների երբեմնի մշակութային ընդհանրությունը և առաջացրին հակակրանք, որն այժմ հետադարձ ուժով տարածվում է նաև անցյալի վրա:

Խնդրի լուծմանը նպաստելու տեսանկյունից ինչպիսի՞ եզրակացություններ կարելի է անել հակամարտության արմատների և դրա զարգացման համառոտ այս վերլուծության արդյունքում: Նախ, որ մեղավորը սոցիալ-տնտեսական պայմանները չէին և, որ հայ-ադրբեջանական սոցիալական ու տնտեսական կապերը, թեպետ տարիների ընթացքում վնասված, սակայն, լիովին վերականգնելի են: Երկրորդ, որ Ղարաբաղի քաղաքական նախկին կարգավիճակը կառուցվածքային ճակատագրական բացթողումներ էր պարունակում, ինչի արդյունքում ձևավորվել էր փոխադարձ անվստահության և անապահովության զգացողություն, և որ միայն ներկայի հզոր ուժերը, ի դեմս Ռուսաստանի և Արևմուտքի, ունակ են ստեղծելու անվտանգության նոր համապարփակ համակարգ, որը բոլոր կողմերին հնարավոր ագրեսիայից ապահովագրված լինելու երաշխիքներ կտրամադրի: Եվ վերջապես, որ հակամարտության էությունը պարփակված է նեղ քաղաքական պատումներում, որոնց շրջանակներում սովոր են գործել Հայաստանն ու Ադրբեջանը ինչպես սեփական, այնպես էլ հակառակ կողմի կերպարները սահմանելիս: Հակամարտության կապանքներից ազատվելու համար նրանք պետք է իրենց ընդհանուր ապագայի վերաբերյալ անկեղծ երկխոսություն սկսելու ցիտանական ջանք գործադրեն: 1988 թվականից ի վեր Լեռնային Ղարաբաղը վերածվել է հար խորացող վիհի, սակայն ինչպես հայերը, այնպես էլ ադրբեջանցիները պետք է ջանան վերաիմաստավորել դրա ընկալումը, ոչ միայն իբրև զուտ տարածքի, այլ նաև իբրև մի կամրջի, որը և՛ հուսալի հենարան է երկու կողմերի համար, և՛ անմիջականորեն կապում է մի կողմին մյուսի հետ:

# Վերաինտեգրման և համագործակցության միջոցով դեպի խաղաղության հաստատում Ադրբեջանի Հանրապետության Լեռնային Ղարաբաղի Մարզում

**Էլմար Մամեդյարով**



*Նկարում՝ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը Հեյդար Ալիևին պատկերող պաստառի առջև*

*Աղբյուրը՝ Ռոյթերս/Սերգեյ Կարպուխին*

**Էլմար Մամեդյարովը 2004 թվականից ի վեր Ադրբեջանի Հանրապետության արտաքին գործերի նախարարն է: Նա Կիևի պետական համալսարանի, ԽՍՀՄ Դիվանագիտական ակադեմիայի և Բրաունի համալսարանի Արտաքին քաղաքականության մշակման կենտրոնի շրջանավարտ է: Մինչ նախարարի պաշտոնը ստանձնելը, նա աշխատել է Ադրբեջանի դիվանագիտական առաքելություններում՝ Միավորված ազգերի կազմակերպությունում, Միացյալ Նահանգներում և Իտալիայում:**

Ադրբեջանի Հանրապետության Լեռնային Ղարաբաղի մարզում և դրան հարող տարածքներում ընթացող ռազմական հակամարտության արդյունքում երկրի տարածքի շուրջ մեկ հինգերորդ մասը գտնվում է հակառակորդի վերահսկողության տակ, իսկ յուրաքանչյուր ութ բնակչից մեկը դարձել է փախստական կամ տեղահանվել հայրենի բնակավայրից: Ադրբեջանի կառավարության ռազմավարությունը նպատակաուղղված է բոլոր գրավյալ տարածքների ազատագրմանը, հարկադրաբար տեղահանված անձանց իրենց հայրենի վայրեր վերադարձնելուն և տևական խաղաղության և կայունության հաստատմանը Լեռնային Ղարաբաղի մարզում, ինչպես նաև ամբողջ Հարավային Կովկասում:

Հակամարտության կարգավորման իրավական և քաղաքական բաղադրիչները հիմնված են միջազգային իրավունքի նորմերի և սկզբունքների վրա, որոնք ամրագրված են Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Անվտանգության խորհրդի թիվ 822, 853, 874 և 884 բանաձևերում, ինչպես նաև Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) համապատասխան փաստաթղթերում և որոշումներում: ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի վերոնշյալ բանաձևերն ընդունվեցին 1993 թվականին՝ ի պատասխան Ադրբեջանի տարածքների զավթման և վերահաստատեցին Ադրբեջանի Հանրապետության անկախությունը, տարածքային ամբողջականությունը և Ադրբեջանի ու տարածաշրջանի մյուս բոլոր պետությունների միջազգային սահմանների անձեռնմխելիությունը:

Չնայած ԵԱՀԿ-ի շրջանակներում ավելի քան տաս տարի ընթացող միջնորդական ջանքերը միշտ չէ, որ հետևողական են եղել, և, բացառությամբ հրադադարի հաստատման, դեռևս իրական արդյունք չեն գրանցել՝ Ադրբեջանը շարունակում է հավատարիմ մնալ հակամարտությանը ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակում կարգավորման մասին ձեռք բերված համաձայնությանը: Այնուամենայնիվ, խաղաղության հաստատման գործընթացի հաջողությունը կախված է նաև ձեռք բերված համաձայնությանը հավատարիմ մնալու Հայաստանի պատրաստակամությունից և գործընթացի նկատմամբ կառուցողական մոտեցում ցուցաբերելուց, ինչպես նաև ԵԱՀԿ-ի անդամ բոլոր երկրների, հատկապես՝ Մինսկի խմբում ներկայացված պետությունների և Մինսկի խմբի համանախագահների ակտիվ մասնակցությունից: Մենք պատրաստ ենք շարունակել բանակցությունները Հայաստանի հետ Ադրբեջանի տարածք ռազմական ներխուժման և դրանց զավթման հետևանքները վերացնելու նպատակով :

Մենք բարձր ենք գնահատում նաև միջազգային տարբեր կազմակերպությունների, մասնավորապես Միավորված ազգերի կազմակերպության և Եվրոպայի խորհրդի դերը միջազգային հանրության ընդհանուր դիրքորոշումը ձևավորելու և համախմբելու գործում, ըստ որի՝ հարգվում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունն ու դատապարտվում է երկրի տարածքների գրավման և տարահռչակ էթնիկ զտումների փաստը: Այն ուղղված է նաև այնպիսի խնդիրների լուծմանը, որոնց նկատմամբ ուշադրության պակասը կարող է խաղաղության հաստատման բանակցությունների ճանապարհին լուրջ արգելքների առաջացման պատճառ հանդիսանալ և անկանխատեսելի հետևանքներ ունենալ: Այսպես, ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 59-րդ նստաշրջանի օրակարգում «Իրավիճակը Ադրբեջանի գրավյալ տարածքներում» հարցի ընդգրկումը կարևորագույն դեր խաղաց Ադրբեջանի գրավյալ տարածքներում հայերի կողմից ապօրինի վե-

րաբնակեցման գործընթացին ուշադրություն հրավիրելու, ինչպես նաև այդ վտանգավոր ձեռնարկումը կասեցնելուն ուղղված հրատապ քայլեր ձեռնարկելու տեսանկյունից:

Սույն հոդվածը գրվում է մի ժամանակահատվածում, երբ հակամարտության կարգավորման ճանապարհին համեստ դրական նշաններ են ի հայտ գալիս: Ադրբեջանը հստակորեն և աներկբայորեն արտահայտել է իր ձգտումը դեպի խնդրի կառուցողական լուծում՝ հիմնված այսպես կոչված Պրահայի գործընթացի վրա և նպատակ ունի առավելագույնս օգտագործել ձեռքի տակ ունեցած քաղաքական ու դիվանագիտական բոլոր միջոցները:

Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը չի կարող փոխզիջման առարկա լինել: Մենք մեր տարածքներից մեկ թիզ անգամ չենք զիջի: Ադրբեջանը պատերազմ չի ուզում և շարունակում է հավատարիմ մնալ խնդրի խաղաղ կարգավորմանը: Սակայն, եթե կանխամտածված քայլեր ձեռնարկվեն տարածքների գրավման առկա ստատուս քվոն առավել ամրապնդելու ուղղությամբ, ապա Ադրբեջանը պատրաստ կլինի բանեցնելու որևէ այլ հասանելի միջոց իր տարածքային ամբողջականությունը  արդարացիորեն վերականգնելու նպատակով: Տարածքների զավթման և էթնիկ զտումներ իրագործելու գործելաոճը անհամատեղելի են համամարդկային և եվրոպական արժեքների հետ և հակասում են խաղաղության, ժողովրդավարության, կայունության և տարածաշրջանային համագործակցության սկզբունքներին ու գաղափարներին:

Քողարկելու համար Ադրբեջանի հանդեպ իր հարձակողական քաղաքականությունը, հայկական կողմը հաճախ շահարկում է ազգերի ինքնորոշման միջազգային իրավունքի սկզբունքը: Մինչդեռ իրականում վերոհիշյալ իրավունքի իրացումը, ինչպես նշվում է համապատասխան միջազգային փաստաթղթերում, չի ենթադրում միակողմանի անջատում, այլ մի լեգիտիմ գործընթաց է, որն իրականացվում է միջազգային և տեղական օրենքներին համապատասխան և դրանց սահմաններում:  Նդրո առարկա հակամարտության համատեքստում ինքնորոշման հարցին անդրադառնալիս ակնհայտորեն վճռորոշ գործոն է դառնում այն, որ Ադրբեջանի տարածքից որևէ հատված անջատելը հակասահմանադրական է և հակասում է միջազգային իրավունքի հիմնարար նորմերին, մասնավորապես նրանց, որոնք արգելում են ուժի կիրառումը և տարածքների զավթումը:

Ինքնորոշման իրավունքի հանդեպ մեր վերաբերմունքը բխում է դրա ճշմարիտ արժեքից և նախատեսում է Լեռնային Ղարաբաղի մարզի հայ և ադրբեջանական համայնքների խաղաղ գոյակցության, համագործակցության և անհրաժեշտ այլ պայմանների ապահովում, որոնց շրջանակներում վերջիններս հնարավորություն կունենան արդյունավետորեն իրացնելու պետության հասարակական և քաղաքական կյանքին մասնակցելու իրենց իրավունքը, ներառյալ մարզի բոլոր մակարդակներում լեգիտիմ իշխանություններ ձևավորելը:

Մենք վստահ ենք, որ Լեռնային Ղարաբաղի մարզի իրավական կարգավիճակը կարող է հստակեցվել միայն Ադրբեջանի թե՛ ադրբեջանցի, թե՛ հայ քաղաքացիների լիարժեք և հավասար մասնակցությամբ՝ օրինական և ժողովրդավարական գործընթացի շրջանակներում: Չնայած վերը նկարագրված հեռանկարը կանխատեսվում է իրականություն դարձնել խաղաղության հաստատման գործընթացի եզրափակիչ փուլում, այնուամենայնիվ անտրամաբանական կլիներ ակնկալել, որ նախանշված ռազմավարությունն իրականություն կդառնա, քանի դեռ չի վերականգնվել Ադրբեջանի ինքնիշխանությունը գրավյալ բոլոր տարածքների նկատմամբ և քանի դեռ բռնի տեղահանված ադրբեջանցի բնակչությունն անվտանգ և արժանապատիվ կերպով չի վերադարձել այդ տարածքներ:

Համաձայնության հասնելուն պես, կարիք կլինի, որ միջազգային հանրությունը սատար կանգնի և երաշխավորի այդ համաձայնագրի իրագործումը բազմազգ խաղաղապահ ուժեր տեղակայելու, ականազերծմանն օժանդակելու, հաղորդակցության ուղիներն ու հողերը վերականգնելու, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի մարզի բնակչությանն անվտանգության երաշխիքներ տրամադրելու (ներառյալ ադրբեջանցի և հայ համայնքների համար տեղական ոստիկանական ուժեր ձևավորելու  միջոցով: Ադրբեջանի կառավարությունը պատրաստակամ է բոլոր հնարավոր եղանակներով օժանդակել միջազգային հանրությանը ենթակառուցվածքների վերականգնման և տնտեսական զարգացման, ինչպես նաև տեղական տնտեսության մեջ ներդրումներ ներգրավելու գործում:

Հակամարտության կարգավորման ընթացքում հատուկ ուշադրություն պետք է դարձնել հաղորդակցման ուղիների հարցին: Նրանք, ովքեր ծանոթ են հակամարտությանը, հաճախ են բախվում «միջանցքներ» կամ «ազատ հաղորդակցություն» հասկացություններին: Ադրբեջանն առաջարկում է անցում կատարել այդ հասկացության սահմանափակ, թշնամական ընկալումներից դեպի «միջանցք»՝ որպես մարզում հաղորդակցման բոլոր հնարավորությունների՝ ի շահ երկու կողմերի օգտագործման ընկալման: Այս մոտեցումը առանձնահատուկ նշանակություն է ստանում այսպես կոչված «Լաչինի միջանցքի» դեպքում, որը կարևոր է ինչպես Լեռնային Ղարաբաղի մարզի հայ բնակչությանը Հայաստանին կապելու, այնպես էլ Ադրբեջանի և Ադրբեջանին պատկանող Նախիջևանի Ինքնավար Հանրապետության միջև Հայաստանի տարածքով հաղորդակցություն ապահովելու տեսանկյունից: Լաչինի ճանապարհի համատեղ օգտագործումը Աղդամ- անքենդի-Շուշա-Լաչին-Գորիս-Շահբուզ-Նախիջևան և հակառակ ուղղությամբ (հետագայում նաև դեպի Թուրքիա դուրս գալու հնարավորությամբ) կարող է Ադրբեջանին և Հայաստանին անվտանգ և երաշխավորված հաղորդակցության հնարավորություն տալ: «Լաչինի միջանցքի» շահագործման այս եղանակը շատ ավելի կարևոր արդյունքների կարող է հանգեցնել, քան երկու երկրների միջև ուղղակի տրանսպորտային հաղորդակցությունից բխող գործնական օգուտները: Այս ճանապարհը կարող է քաղաքական, տնտեսական և միջտարածաշրջանային մեծ կարևորություն ունեցող «խաղաղության ուղու» վերածվել:

Հայ-ադրբեջանական պատերազմը հսկայական վնասներ բերեց և անասելի տառապանքի պատճառ դարձավ հարյուր հազարավոր տեղահանված մարդկանց համար, ովքեր արդեն ավելի քան մեկ տասնամյակ զրկված են կենսագործունեության պատշաճ պայմաններից: Հաշվի առնելով այդ մարդկանց հայրենի տուն վերադառնալու մեծ ցանկությունը՝ նրանց խնդիրների իրական լուծում կարող է գտնվել միայն հակամարտության երկարաժամկետ կարգավորման դեպքում:

# Հին ու նոր պետություններ. փոփոխվող հարացույցերն (պարադիգմեր) ու Լեռնային Ղարաբաղում խաղաղության հասնելու դժվար ճանապարհը

**Վարդան Օսկանյան**



***Նկարում՝ Հայաստանի Հանրապետության Նախագահ Ռոբերտ Քոչարյանը***

*Աղբյուրը՝ Ռոյթեր/Մայկ Սիգար*

**Վարդան Օսկանյանը Հարվարդի համալսարանի և Ֆլեթչերի իրավունքի և դիվանագիտության բարձրագույն դպրոցի շրջանավարտ է: Նա Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարն է 1998 թվականից ի վեր:**

Անցյալ տասնամյակի ընթացքում Լեռնային Ղարաբաղի շուրջ բանակցությունների բովանդակությունն ու և ուղղվածությունը կտրուկ փոխվել են: Բաժանենք գործընթացը փուլերի և հասկանալի կդառնա, թե ինչպես հանգեցինք մի կետի, որտեղից, բավարար քաղաքական կամք դրսևորելով՝ կարող ենք առավել որոշակիորեն շարժվել դեպի առկա տարաձայնությունների հաղթահարումը:

Հակամարտությունն սկսվեց 1988 թվականին, երբ Ադրբեջանն ուժ կիրառեց ի պատասխան Լեռնային Ղարաբաղի ժողովրդի խաղաղ ցույցերի, որոնց մասնակիցները պահանջում էին, որ այս հայաբնակ մարզի բնակչությանը սեփական կարգավիճակը որոշելու հնարավորություն տրվի: Նախկին խորհրդային տարածքի շրջանակներում միջնորդության դրվագային, չհամակարգված, պատահական և իմպուլսիվ ջանքեր էին գործադրվում այնքան այն ժամանակ, երբ ակտիվ ռազմական գործողություններ էին ընթանում: 1992 թվականին Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդաժողովի ընդգրկմամբ հակամարտության կարգավորման գործընթացը միջազգայնացվեց: Մի պահ, երբ թվում էր թե մարտական գործողություններն այլևս դադարել են, 1993 թվականի դեկտեմբերին Ադրբեջանը ձեռնարկեց մեկ այլ հարձակում, որը հետ մղվեց Ղարաբաղի հայերի կողմից, և վերջիններս իրենց վերահսկողության տակ առան Ղարաբաղին հարող որոշ տարածքներ՝ հետագա ռազմական հարձակումները կանխելու նպատակով: 1994 թվականի մայիսին փոխադարձ համաձայնության արդյունքում զինադադար հաստատվեց: ԵԱՀԽ-ի, որը վերանվանվեց Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ), Բուդապեշտում կայացած դեկտեմբերյան գագաթաժողովում միավորեց բանակցությունների տարբեր ուղղությունները: Այսպիսով, ռազմական գործողությունների ավարտը համընկավ բանակցային մի համապարփակ մեխանիզմի ստեղծման հետ, որն աշխատում է մինչ օրս:

Տարիների ընթացքում միջազգային զարգացումները և աշխարհի տարբեր մասերում տեղի ունեցած ինքնորոշման գործընթացներն արմատական փոփոխությունների ենթարկեցին ղարաբաղյան հակամարտության հիմքում ընկած հարցերի միջազգային հանրության ընկալումները, ինչպես նաև բանակցությունների ընթացքն ու բովանդակությունը: Հարաբերությունները հին և նոր պետությունների միջև ձևափոխման փուլում են: Մենք ականատես դարձանք հանրաքվեի միջոցով Արևելյան Թիմորի անկախության հռչակման գործընթացին, ինչպես նաև Սուդանի մի մասում անցկացված հանրաքվեի արդյունքում տասնամյակներ ձգված հակամարտությանը վերջ դնող համաձայնագրի ստորագրմանը: Լրջորեն քննարկվում է Կոսովոյի կարգավիճակը սահմանելու նպատակով հանրաքվե անցկացնելու հարցը: Քաղաքագետների, իրավագետների և գիտնականների շրջանում աճում է գիտակցումն այն բանի, որ որոշ հանգամանքներում հնարավոր և իրագործելի է ազգերի ինքնորոշման իրավունքի ճանաչումը:

Ինքնորոշման համար մղվող պայքարի յուրաքանչյուր օրինակի մասին պետք է դատել՝ հաշվի առնելով դրա պատմական և իրավական առանձնահատկությունները, ինչպես նաև՝ առկա իրավիճակը: Ինքնորոշման խնդիր պարունակող հակամարտությունները բաժանվում են չորս տեսակի՝ կախված պետության կողմից սեփական տարածք-

ների նկատմամբ վերահսկողության աստիճանից (ներառյալ այն տարածքը, որտեղ փաստացի ապրում է ինքնորոշման ձգտող բնակչությունը) և ինքնորոշման այն աստիճանից, որին գործնականում հասել են դրան ձգտողները: Առաջին տեսակի հակամարտություններում ինքնորոշման ձգտողներն իրենց իրավունքը կյանքի են կոչում քվեարկության միջոցով և այդ կերպ լուծում տվյալ պետության կազմում մնալու կամ չմնալու խնդիրը: Այս տարբերակի միակ օրինակը Քվեբեկն է, որը քվեարկեց հօգուտ Կանադայի կազմում մնալու: Ներկայիս անջատողական շարժումների ճնշող մեծամասնությունը պատկանում է երկրորդ տեսակին, որտեղ պայքարող կողմը չունի ինքնորոշման որևէ աստիճան, քանի որ պետությունը շարունակում է լիարժեքորեն վերահսկել խնդրո առարկա հանդիսացող տարածքը: Երրորդ տեսակին են պատկանում միջանկյալ այն օրինակները, երբ պետությունն անկարող է վերահսկել ինքնորոշման ձգտողներին, որոնք էլ, իրենց հերթին, բավարար հզոր չեն, որպեսզի իրենց տարածքների նկատմամբ վերահսկողություն իրականացնեն առանց որևէ մտավախության, որ իրավիճակը կարող է փոփոխվել:

Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը պատկանում է դրանցից լիովին տարբերվող չորրորդ տարատեսակին: Ադրբեջանը որևէ կերպ չի վերահսկում Ղարաբաղը, որը վերջին 15 տարիների ընթացքում ձեռք է բերել լիակատար անկախության բոլոր չափելի հատկանիշները: Նման պայմաններում փորձել համոզել ժողովրդին, որ վերջինս ընդունի Ադրբեջանի տիրապետությունը՝ գայթակղելով նրանց մարդու իրավունքների և տնտեսական օգուտների մասին խոստումներով՝ անիմաստ զբաղմունք է: Նվաճված ինքնորոշման երկարատևությունից և խորությունից բացի Լեռնային Ղարաբաղում ձևավորված իրավիճակն ամրապնդում և ամբողջականացնում են հետևյալ փաստերը. առաջին, որ Լեռնային Ղարաբաղն անջատվել է Ադրբեջանից օրինական ճանապարհով՝ այն ժամանակ գործող օրենքներին համապատասխան: Երկրորդ՝ վիճահարույց տարածքն անկախ Ադրբեջանի Հանրապետության իրավասության ներքո երբևէ չի գտնվել: Երրորդ՝ Ադրբեջանը, բռնություն իրականացնելով մի ժողովրդի հանդեպ, ում համարում էր սեփական քաղաքացիներ, կորցրել է այդ ժողովրդին խնամակալելու բարոյական իրավունքը: Եվ վերջապես, *դե ֆակտո* քաղաքական իրականությունը վկայում է, որ Լեռնային Ղարաբաղն ունի ընտրություններ անցկացնելու, սեփական ժողովրդին ղեկավարելու, իր սահմանները պաշտպանելու և միջազգային հարաբերություններ վարելու այլևս ապացուցված կարողություններ:

Ադրբեջանի իշխանությունների համար դժվար է համակերպվել անառարկելի այս իրականության հետ: Փոխարենը, նրանք սեփական մոտեցումները կառուցում են նոր ենթադրությունների և առասպելների վրա: Նախ, ադրբեջանցիներն իրենք իրենց համոզել են, թե հարցի բուն իմաստն իրենց տարածքներն են: Մինչդեռ, երբ հակամարտությունն սկսվեց, հայերի կողմից չէր վերահսկվում Լեռնային Ղարաբաղից դուրս գտնվող որևէ տարածք: Այդ տարածքները հայերի հսկողության տակ անցան ոչ միայն այն պատճառով, որ Ղարաբաղի կարգավիճակի շուրջ անհամաձայնություն գոյություն ուներ, այլև նաև, որ Ադրբեջանը փորձում էր Լեռնային Ղարաբաղի տարածքն ամբողջովին մաքրել հայերից:

Երկրորդ, Ադրբեջանի իշխանությունները հակված են կարծելու, որ եթե բանակցությունների միջոցով չհաջողվի բավարարել իրենց առավելագույն պահանջները, ապա միշտ կարող են ապավինել խնդրի ուժային լուծմանը: Մինչդեռ, արդյո՞ք ակնհայտ չէ այն, որ ռազմական եղանակով անհնար է խնդրին վերջնական լուծում տալ: Ռազմի դաշտում հաջողության հասնելու համար Ադրբեջանից կպահանջվի ավելին, քան զենքով դուրս գալ հայրենի տունը պաշտպանող ժողովրդի դեմ: Ադրբեջանին կհաջողվի մեկընդմիշտ լուծել խնդիրը միայն Լեռնային Ղարաբաղի տարածքում հայերի նկատմամբ էթնիկ բնաջնջում իրականացնելու ճանապարհով:

Երրորդ, Ադրբեջանը կարծում է, թե ժամանակն իր օգտին է աշխատում. համոզմունք՝ հիմնված այն ենթադրության վրա, թե նավթային եկամուտները կնպաստեն իրենց ռազմական կարողությունների աճին: Սա մեծ խաբկանք է, քանզի երաշխավորված չէ, թե ժամանակն աշխատում է կողմերից որևէ մեկի օգտին: Միջազգային իրավունքի ասպարեզում այսօր ազգերի ինքնորոշման իրավունքի վերահաստատման հստակ միտում է զգացվում: Որքան Լեռնային Ղարաբաղը պահպանի իր *դե ֆակտո* անկախությունը, այնքան ավելի դժվար կլինի հետ շրջել պատմության անիվը:

Չորրորդ, Ադրբեջանի իշխանությունները կարծում են, թե մեկուսացված Հայաստանը տնտեսապես ի վիճակի չի լինի պահպանել իր դիրքերը և վաղ թե ուշ ստիպված կլինի գնալ էական զիջումների: Սա սխալ ենթադրություն է, քանզի զիջումների գնալու համաձայնություն նախևառաջ պետք է տա Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը: Ավելին, թե՛ Հայաստանը, թե՛ Լեռնային Ղարաբաղն արդեն հաղթահարել են զուտ տնտեսական գոյատևման փուլը և այժմ տնտեսական աճ են արձանագրում:

Եվ վերջապես, Ադրբեջանն ինքն իրեն համոզել է, թե Հայաստանին որպես ագրեսոր ներկայացնելով, իրեն կհաջողվի օգտագործել միջազգային ատյանների որոշումները՝ հարկադրելու Հայաստանին հանձնվել: Սակայն, հայերը բազմիցս ցույց են տվել, որ Ադրբեջանը սեփական ագրեսիայի զոհն է: Հայերի վերահսկողության տակ գտնվող տարածքները կարող են վերադարձվել միայն, որպեսզի ապահովվի Լեռնային Ղարաբաղի անվտանգությունն ու ապագան: Մինչդեռ դրանք կարող են նաև չվերադարձվել, եթե այդ կերպ հնարավոր է առավել արդյունավետորեն իրագործել նույն նպատակները: Նպատակն անվտանգությունն ու ինքնորոշումն են, այլ ոչ թե տարածքներ ձեռք բերելը:

Հնարավոր չէ խնդիրը լուծել ռազմական գործողությունների կամ միջազգային որոշումների միջոցով, և որևէ լուծում չի կարող պարտադրվել դրսից: Լուծման հասնելու միակ ճանապարհը քաղաքական կամքի արտահայտումն է և իրատեսական դիրքորոշումների որդեգրումը: Հայերը մնում են իրենց նախնական դիրքորոշմանը, որ Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի միջև չի կարող գոյություն ունենալ ուղղահայաց կապ, որ Ղարաբաղը պետք է աշխարհագրական կապ ունենա Հայաստանի հետ, և որ պետք է ապահովվի Լեռնային Ղարաբաղի ժողովրդի անվտանգությունը:

Մեր տեսանկյունից, խնդրի կարգավորման հիմքում պետք է դրվի Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի հաստատումը և այդ իրավունքի միջազգային ճանաչումը: Ադրբեջանի կողմից այս փաստի ընդունումը և համաձայնագրի միջոցով դրա պաշտոնական ամրագրումը ճանապարհ կհարթեն հակամարտության կարգավորման և դրա հետևանքների վերացման համար:

# Հայացք Ղարաբաղից

**Գեղամ Բաղդասարյան**

***Նկարում՝ հուշարձան Ստեփանակերտի մոտակայքում, որն անվանում են «Տատիկ-պապիկ» և որը համարվում է Ղարաբաղի խորհրդանիշը***

*Աղբյուրը՝ Լոռենս Բրոերս*

«Ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» վիճակը և մի կողմից Ադրբեջանի, մյուս կողմից՝ Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) միջև պաշտոնական կապերի իսպառ բացակայությունը լուրջ խոչընդոտներ են առաջացնում հակամարտության մեջ ներգրավված պետություններում և քաղաքական միավորներում ժողովրդավարության զարգացման տեսանկյունից: Վերջին տարիներին ադրբեջանցի պաշտոնյաներն ավելի ու ավելի խիստ ձևակերպումներ են օգտագործում հակամարտության լուծման նպատակով ուժի հնարավոր կիրառման վերաբերյալ: Թվում է, թե Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի բնակչության համար այս երևույթը սովորական է դարձել, և նրանք համակերպվել են պատերազմի վերսկսման հեռանկարի հետ:

## Ղարաբաղցի հայերի պահանջները

ԼՂՀ-ի պաշտոնական դիրքորոշումը հիմնված է երեք առանցքային սկզբունքների վրա: Առաջին. հակամարտության մասնակիցների միջև չի կարող գոյություն ունենալ ուղղակի ենթակայություն, այսինքն՝ ուղղահայաց հարաբերություններ Ադրբեջանի և ԼՂՀ-ի միջև: Երկրորդ. ԼՂՀ անկլավային վիճակի բացառում, այսինքն Ղարաբաղի բնակչությունը դրսի աշխարհի հետ պետք է ցամաքային կապ ունենա: Երրորդ. անվտանգության երաշխիքներ, որոնց աստիճանը պետք է որոշեն ԼՂՀ ղեկավարներն ու ժողովուրդը: Ինչ վերաբերում է ԼՂՀ հարակից տարածքներին (որոնք հայկական աղբյուրներում կոչվում են «անվտանգության գոտի»), ապա դրանց ճակատագիրը բանակցությունների առարկա է: Սկզբունքորեն ղարաբաղյան կողմի այս դրույթները դարձան նաև պաշտոնական Երևանի մոտեցումն այն բանից հետո, երբ ԼՂՀ նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանը 1998 թվականին դարձավ Հայաստանի նախագահ:

ԼՂՀ իշխանությունները լիովին չեն մերժում պատերազմի արդյունքում Ղարաբաղը լքած ադրբեջանցի բնակչության վերադարձի գաղափարը, բայց այն դիտարկում են հայ փախստականների՝ Ադրբեջան վերադառնալու հարցի լուծման հետ փոխկապվածության մեջ: Այդուամենայնիվ, ԼՂՀ արտաքին գործերի նախարար Արման Մելիքյանը 2005 թվականին հայտարարեց «Քաղաքացիության մասին» ԼՂՀ օրենքն ուժի մեջ մտնելու մասին, որը Ղարաբաղ վերադարձող ցանկացած ադրբեջանցու կօժտի քաղաքացուն հատուկ բոլոր իրավունքներով՝ ի հավելումն մի շարք մշակութային իրավունքների, որոնցից վերջիններս կարող են օգտվել որպես ազգային փոքրամասնություն:

Ադրբեջանի կողմից ԼՂՀ իշխանությունների հետ ուղղակի հաղորդակցման մերժումը, ԼՂՀ-ին առնչվող բոլոր գործընթացների բոյկոտումը և Հայաստանին զավթիչի դերում ներկայացնելու փորձերը Ստեփանակերտի կողմից դիտարկվում են որպես ապակառուցողական և փոխզիջումների չնպաստող: Ղարաբաղը մեկուսացնելու և տեղի բնակչության նկատմամբ տնտեսական ու մարդասիրական ճգնաժամ հրահրելու փորձը ոտնահարում է ղարաբաղցի հայերի իրավունքները և դիտարկվում է որպես սեփական հայրենիքից նրանց վտարելու ջանք: Ստեփանակերտի իշխանությունները հավատացած են, որ բանակցությունների գործընթացն արդյունավետ կարող է դառնալ միայն այն դեպքում, եթե ԼՂՀ-ն պատշաճ կերպով ներգրավվի դրանց մեջ: Վերջիվերջո, Ղարաբաղի իշխանու-

**Գեղամ Բաղդասարյանը Ստեփանակերտի մամուլի ակումբի հիմնադիրներից է և ներկա տնօրենը, ինչպես նաև «Դեմո» անկախ լրագրի խմբագիրը: 1992-93 թվականներին ղեկավարել է Լեռնային Ղարաբաղի Գերագույն խորհրդի մամլո ծառայությունը: Այժմ նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խորհրդարանի անդամ է:**



թյուններն են, որ իրավասու են Ադրբեջանի առանցքային շահերին առնչվող հարցերի, մասնավորապես՝ տարածքների և փախստականների վերաբերյալ որոշումներ կայացնել: Ղարաբաղի հայերի տեսանկյունից, Ադրբեջանի կողմից առկա իրավիճակի սթափ գնահատականի բացակայությունը հակամարտության կարգավորման ուղղությամբ առաջընթացի հիմնական արգելքն է: Ադրբեջանի նախագահի Իլհամ Ալիևի այն հայտարարությունը, թե կարգավորման ոչ բռնի միջոցներին դիմելն այն առավելագույն փոխզիջումն է, որն Ադրբեջանը կարող է կատարել, միայն ամրապնդում է նշված տեսակետը:

## Երևան-Ստեփանակերտ փոխհարաբերությունները

Ոչ միայն Ադրբեջանը, այլև Հայաստանն է խնդիրներ առաջացնում խաղաղության հաստատման գործընթացին մասնակցելու՝ ԼՂՀ-ի հույսերի իրականացման ճանապարհին: Ստեփանակերտը դիվանագիտորեն նշում է, որ Հայաստանի և Ադրբեջանի նախագահների միջև հանդիպումներին վերաբերվում է «անհրաժեշտ ըմբռնումով»: Այդուհանդերձ, այս հայտարարություններում դժվար չէ ընթացիկ ձևաչափից դժգոհություն նշմարել, իսկ Լեռնային Ղարաբաղում ավելի ու ավելի լսելի են դառնում խաղաղության հաստատման գործընթացից դուրս մնալու վերաբերյալ դժգոհությունները: Շատերի կարծիքով անընդունելի է Հայաստանի կողմից հակամարտությունը կարգավորելու իրավունքի սեփականաշնորհումը, և ավելանում են Հայաստանին ուղղված կոչերը՝ չստանձնել որևէ այլ պատասխանատվություն, քան Ղարաբաղի հայերի անվտանգության երաշխավորի գործառույթն է: Սա առաջ է բերել բանավեճ այն հարցի շուրջ, թե ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործում երկու հայկական պետություններն ինչպիսի իրավունքներ ու պարտականություններ պետք է ունենան:

Ղարաբաղի հայերի համար կարգավիճակի հարցը կարևորագույն նշանակություն ունի: Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության Մինսկի խմբի «փուլային» առաջարկը Ղարաբաղում մերժվեց հենց այն պատճառով, որ ըստ դրա առաջարկվում էր հետաձգել կարգավիճակի հարցի լուծումը: Ղարաբաղի ներսում, սակայն, նույնպես կան տարբեր դիրքորոշումներ: Ըստ հասարակական կարծիքի ուսումնասիրությունների, բնակչությունը բաժանված է երկու մասի. մի մասը պաշտպանում է Հայաստանի հետ միություն կազմելու գաղափարը, իսկ չնչին տարբերությամբ մեծամասնություն կազմող մասը կողմ է անկախությանը: Ցանկացած դեպքում ԼՂՀ իշխանությունների կողմից իրենց սեփական գործերին ակնհայտորեն չմասնակցելը Ղարաբաղի հայ հանրության համար ավելի ու ավելի անհասկանալի է դառնում:

Հայաստանի թե՛ կառավարությունը և թե՛ հասարակությունը ԼՂՀ-ի անկախությանը թերահավատորեն են վերաբերվում և փոխարենը սատարում են միացյալ հայկական պետության գաղափարը: Այս ընկալումների համար փոքր դեր չի խաղում այն հանգամանքը, որ Հայաստան պետությունը որոշիչ դեր ունի Ղարաբաղի քաղաքական վերնախավի քաղաքական ճակատագրի հարցում: Սակայն այս հարաբերությունները երկու երես ունեն. պատերազմից ի վեր, «ղարաբաղյան գործոնը» որոշիչ է եղել ներհայաստանյան քաղաքականության մեջ. մի փաստ, որը չեն կարող անտեսել ո՛չ Հայաստանի կառավարությունը, ո՛չ հասարակությունը: Այս խճճված հարաբերությունները՝ Հայաստանի ազդեցությունը Ղարաբաղի իշխանությունների վրա և ղարաբաղյան գործոնի որոշիչ դերը ներհայաստանյան քաղաքականության մեջ, կազմում են մի գորդյան հանգույց, որը մինչ օրս հնարավոր չի եղել արձակել և որը նպաստում է այսօրվա փակուղու գոյությանը:

## Հասարակություննե՞րը, թե՞ էլիտաները

Ինչպե՞ս կարող ենք դուրս գալ այս փակուղուց: Հաճախ նշվում է, որ ի տարբերություն էլիտաների, հասարակությունները պատրաստ չեն փոխզիջումների: Սա մոլորություն է. խաղաղության հաստատման գործընթացի կարևորագույն թերություններից մեկը հակամարտության մեջ հասարակությունների դերի թերագնահատումն է, մյուսը՝ հասարակությունների կողմից փոխհամաձայնություն կայացնելուն պատրաստ չլինելու մասին վստահեցումների մեջ էլիտաների դերի թերագնահատումը: Տվյալ համատեքստում, երկու հասարակությունների (ԼՂՀ-ի և Ադրբեջանի) միջև փոխադարձ կապերի հաստատումը հատկապես կարևոր է վստահություն սերմանելու առումով, ինչն անհրաժեշտ է խաղաղության հաստատման գործընթացում առաջընթացի տեսանկյունից:

Բոլոր միջնորդներն ուղղակի անուշադրության են մատնել իրենց առջև դրված խնդրի չափազանց կարևոր այս կողմը: Այնուամենայնիվ, ուրախալի է նկատել, որ այս հարցի առնչությամբ ավելի լուրջ մոտեցում ունեն հենց հասարակությունները: Ղարաբաղյան քաղաքական գործիչ և «Ի՞նչ անել» լրագրի խմբագիր Մուրադ Պետրոսյանը նշում է.

«Եթե խաղաղության հաստատումը սկսվի... առանց հասարակական գիտակցության արմատական փոփոխությունների, ապա այս շինությունը, եթե նույնիսկ տանիքով պատված լինի, վաղ թե ուշ կունենա պաղեստինյան խաղաղության ճակատագիրը: ...Հայերի համար իրական խաղաղության բանալին ոչ թե Ադրբեջանի իշխող վերնախավի ձեռքում է, այլ Ադրբեջանի հասարակական գիտակցության մեջ: Նույնը ադրբեջանցիների համար. բանալին հայերի հասարակական գիտակցության մեջ է»:

Արտաքուստ տպավորություն է ստեղծվում, թե ադրբեջանական հասարակությունը պատրաստ չի հաշտության, բայց սա ավելի շուտ արտահայտում է Ադրբեջանի իշխող շրջանակների, այլ ոչ թե հանրային կարծիքը: Մի քանի տարի առաջ ես Բաքու այցելած ղարաբաղցի հայ լրագրողների խմբում էի, և մենք ադրբեջանցիների շրջանում ավելի կառուցողական տեսակետների հանդիպեցինք: Մեր այցի շուրջ մթնոլորտը շիկացած էր, ինչպես վկայում էին այցի օրը լույս տեսած տեղական թերթերի գլխագրերը. օրինակ, «Հայ ահաբեկիչները Բաքվում»: Մենք, այնուամենայնիվ, հարցրեցինք, թե արդյոք հնարավոր կլիներ հանդիպել սովորական քաղաքացիների, և երկար մտորումներից հետո մեր անվտանգությունն ապահովող խումբը համաձայնեց թույլ տալ մեզ ռիսկի դիմել և Բաքվի կենտրոնական և մարդաշատ փողոցներից մեկում խոսել պատահական անցորդների հետ: Տաս հոգուց ինը մեզ ընդունեցին սրտանց` հանգիստ զրուցելով մեզ հետ հակամարտությունից և իրենց խնդիրներից: Միայն տասից մեկը սպառնաց վրեժ լուծել մեզնից:

Լրատվամիջոցները հսկայական դեր կարող են խաղալ ղարաբաղյան հակամարտությունը և խաղաղության հաստատման գործընթացը օբյեկտիվորեն ներկայացնելու և «թշնամու» կարծրատիպերը մերժելու գործում: Այդուհանդերձ, մինչ կառավարություններն ունակ են ազդել հասարակական կարծիքի վրա և հիմք ստեղծել անխուսափելի փոխհամաձայնության համար, նրանք վախենում են, որ զարգացող քաղաքացիական հասարակությունը և լրատվամիջոցները կարող են հզորացնել «ընդհատակյա» (իմա` իրական) հասարակական կարծիքը` հակառակ քաղաքական վերնախավի: Այսպես, էլիտաները վարում են քարոզչական պատերազմ, որը պատկերավոր կերպով կարելի է նկարագրել Ադրբեջանի լրատվամիջոցների մոտեցումների օրինակով: Առաջատար լրատվամիջոցները, հատկապես հեռուստատեսությունը, վերահսկվում են կառավարության կողմից (ինչպես և Հայաստանում) և տարածում են իշխող վերնախավի տեսակետները` դրանք ներկայացնելով իբրև հասարակական կարծիք: Հայաստանում և Ղարաբաղում մինչև վերջերս լրատվամիջոցները դիմադրում էին քարոզչական պատերազմին, չնայած որոշ նոր նշաններ հուշում են, որ հայկական լրատվամիջոցները նույնպես ներքաշվում են այդ պատերազմի մեջ: Սա ակնհայտ է որոշ հայկական լրատվամիջոցների այն արձագանքից, որը տրվեց 2004 թվականին Բուդապեշտում ադրբեջանցի սպայի կողմից հայ սպայի գազանաբար սպանությանը, ինչի հետևանքով ոմանք պնդեցին, թե երկու ժողովուրդները գենետիկորեն անհամատեղելի են: Ղարաբաղի լրատվական դաշտում ոչինչ չի փոխվել, սակայն իշխանությունները լրագրողներին պարսավում են նրանց «խաղաղասիրական» հակումների համար այն ժամանակ, երբ ադրբեջանցի լրագրողները «ռազմի փողերն են հնչեցնում»:

## Քաղաքական զարգացման ուղիներ

Առկա փակուղուց դուրս գալու ելքը ժողովրդավարացման ճանապարհին է. մի գործոն, որը միջնորդական ջանքերի համատեքստում երկար ժամանակ թերագնահատվել է: Վրաստանի, Ուկրաինայի և Ղրղզստանի դեպքերը ցույց տվեցին հետխորհրդային երկրներում առկա հեղափոխական ներուժը: Այնուամենայնիվ, Ղարաբաղի նման չճանաչված պետություններում զարգացման ավելի էվոլյուցիոն` առանց լուրջ խռովությունների ճանապարհը հաստատապես գերադասելի է:

2004 թվականի տեղական ընտրություններում հաջողության հասնելուց հետո ընդդիմությունը սկսեց նախապատրաստվել այս ձեռքբերման ամրապնդմանը 2005 թվականի հունիսի Լեռնային Ղարաբաղի խորհրդարանական ընտրություններում: Սակայն ընդդիմությունը ձեռքից բաց թողեց պատմական հնարավորությունը և ջախջախիչ պարտություն կրեց: Ընդդիմությունը քննադատեց ընտրությունների ընթացքը` հատկապես իշխանությունների կողմից վարչական ռեսուրսի լայնորեն օգտագործման համար: Իսկ օտարերկրյա դիտորդների (մոտ 130 դիտորդ) ճնշող մեծամասնությունը գովաբանեց ընտրությունները` նշելով, որ դրանք անցկացվեցին որակապես ավելի բարձր մակարդակով, քան համանման ընտրությունները Հայաստանում և Ադրբեջանում: Այս գնահատականի հարցում էական դեր ունեցավ զանգվածային կեղծումների և հասարակական հուզումների բացակայությունը ընտրություններից առաջ և հետո: Ղարաբաղում շատերը մերժում են Հայաստանի և Ադրբեջանի հետ արվող համեմատությունները` գերադասելով վերջին ընտրությունները գնահատել միջազգային չափանիշերի և զարգացած արևմտյան երկրների փորձի համաձայն, ըստ որի կա մտավախություն, որ Ղարաբաղի քաղաքական զարգացումը կարող է լճացման վիճակում լինել:

Խաղաղարար գործընթացի տեսանկյունից առանցքային հարցն այն է, թե արդյո՞ք ընտրություններն ազդում են հակամարտության կարգավորման վրա, և որքանո՞վ են այս երկու հարցերը շաղկապված: Շատ ղարաբաղցի հայեր ժողովրդավարությունը դիտում են որպես գոյատևման և իրենց իրավունքների պաշտպանության միջոց: Միևնույն ժամանակ ժողովրդավարացումը հանրության համար ապահովում է խաղաղության հաստատման գործընթացի առավել ուղղակի մատչելիություն: Ներկայում Ղարաբաղի հասարակությունը թերտեղեկացված է այդ գործընթացի բովանդակության վերաբերյալ և հեռացված է հարցի շուրջ տեղի ունեցող քննարկումներից: Ղարաբաղյան հասարակությունը միայն ժողովրդավարական փոխակերպման միջոցով կարող է ավելի իրազեկ դառնալ խաղաղության տարբեր առաջարկների մանրամասների վերաբերյալ, սեփական մտահոգություններն արտահայտելու հնարավորություն ունենալ, և որ ամենակարևորն է` ադրբեջանական հասարակության հետ սկսել քաղաքացիական երկխոսություն`դուրս գալով էլիտաների նեղ շրջանակներից:

# Ղարաբաղի ադրբեջանցու տեսակետ

**Թաբիբ Հուսեյնով**

Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման բանակցությունները շարունակվում են ավելի քան մեկ տասնամյակ՝ փաստորեն, առանց որևէ շոշափելի առաջընթացի: Դառնալով «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» տաղտկալի իրավիճակի պատանդը, թե՛ Հայաստանը, թե՛ Ադրբեջանը, ինչպես նաև Ղարաբաղի հայ իշխանությունները հաջողությամբ հարմարվել են «սպասենք՝ տեսնենք» մոտեցմանը: Ղարաբաղի ադրբեջանցիները դուրս են մնում այս շարքից, քանի որ հանդիսանում են ձևավորված ստատուս քվոյի երկարաձգման ամենաակնհայտ զոհերը: Նրանցից շատերի կարծիքով ստատուս քվոն հարվածում է իրենց շահերին՝ օր-օրի զրկելով անմիջականորեն իրենց առնչվող որոշումների կայացման գործընթացի վրա ազդելու հնարավորություններից և նվազեցնելով հայրենիք վերադառնալու հավանականությունը:

## Սահմանման խնդիրներ

Ադրբեջանում «Ղարաբաղի ադրբեջանցի» եզրույթը սովորաբար օգտագործվում էր պատմական Ղարաբաղի՝ Լեռնային Ղարաբաղի տարածքը Լաչինի և Քելբաջարի շրջանների (այս երկու շրջանները միասին ազերիներն անվանում են «բարձրադիր» կամ «լեռնային Ղարաբաղ») և հարակից ցածրադիր տարածքների («դաշտային Ղարաբաղ») հետ միասին, առավել ընդարձակ սահմաններում բնակվող քաղաքացիների մասին խոսելիս: Ի տարբերություն հայերի, ադրբեջանցիները պատմականորեն չեն տարբերակել ցածրադիր և բարձրադիր հատվածները և Ղարաբաղն ընկալել են որպես մեկ աշխարհագրական, տնտեսական և մշակութային տարածք, որտեղ քաղաքական և ժողովրդագրական առումներով նրանք միշտ գերիշխող դիրք են ունեցել: Այս պատճառով, շատ ազերիներ կարծում են, որ 1923 թվականին «արհեստական» (նախկինում գոյություն չունեցած) սահմաններով Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի ստեղծման նպատակը խորհրդային ռուսական «բաժանիր, որ տիրես» քաղաքականության շրջանակներում Ադրբեջանի ներսում հայազգի բնակչության մեծամասնությամբ մի մարզ ստեղծելն էր: Այսպիսով, հայերն ընկալվում էին որպես մի հիմնական գործիք Ադրբեջանը մշտական վերահսկողության տակ պահելու համար:

Ըստ Ադրբեջանի նորօրյա պաշտոնական մոտեցման՝ Ղարաբաղի ադրբեջանական համայնքը սահմանվում է որպես նախկին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի (ԼՂԻՄ) ազերի բնակչություն, որը 1989 թ. մարդահամարի տվյալներով կազմում էր ԼՂԻՄ-ի բնակչության 21,5 տոկոսը (մոտ 40,000 մարդ): Ըստ նույն սահմանման՝ Ղարաբաղի ազերիները կազմում են գրավյալ տարածքներից շուրջ 600 հազար ներքին տեղահանված անձանց (ՆՏԱ) մի փոքր մասը միայն:

Այնուամենայնիվ, պաշտոնական այս սահմանումը զգալի երկիմաստություն է պարունակում, քանի որ Ադրբեջանն ինքը 1991 թվականի վերջին չեղյալ հայտարարեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի կարգավիճակը (ի պատասխան Հայկական «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» ինքնահռչակման) և փոփոխություն մտցրեց այս տարածքի վարչական բաժանման մեջ՝ նախկին ԼՂԻՄ-ի որոշ մասեր միացնելով հարակից Քելբաջարի, Աղդամի և Թերթերի շրջաններին: Այսպիսով, նշված հարակից շրջաններում ապրող ազերիներն այլևս չեն տեղավորվում Ղարաբաղի ադրբեջանական համայնքի պաշտոնական սահմանման շրջանակներում: Փաստորեն, Ղարաբաղի ադրբեջանական համայնքը փոքրացավ և գործնականում հավասարվեց Շուշայի բնակչության թվաքանակին, քաղաք, որտեղ նախքան հակամարտությունն ապրում էր ԼՂԻՄ ազերի բնակչության 70 տոկոսը: Իսկ

**Թաբիբ Հուսեյնովն աշխատում է Բաքվի Միջազգային հանրապետական ինստիտուտում: Նա Կենտրոնական եվրոպական համալսարանի շրջանավարտ է, մասնակցել է Լեռնային Ղարաբաղին առնչվող մի շարք երկխոսությունների և գիտական հանդիպումների:**



ամենակարևորը, այս սահմանումից դուրս է մնացել Լաչինի բնակչությունը (շուրջ 60 հազար մարդ)՝ չնայած բանակցությունների ողջ ընթացքում Լաչինի ապագա կարգավիճակի հարցը անքակտելիորեն կապվել է Լեռնային Ղարաբաղի ապագա կարգավիճակի հետ:

## Քաղաքական մարգինալացում

Ներպետական մակարդակում Ղարաբաղի ադրբեջանական համայնքի հիմնախնդիրներն անբաժանելի են առավել մեծաթիվ ՆՏԱ համայնքի հիմնախնդիրներից, որի մի մասն են նրանք կազմում: Մեկ շնչի նկատմամբ ՆՏԱ-ների թվաքանակն Ադրբեջանում աշխարհում ամենամեծ ցուցանիշներից մեկն է կազմում, մինչդեռ ներքին տեղահանվածների ազդեցությունն Ադրբեջանի քաղաքականության վրա նվազագույն է: Նման իրավիճակն արդյունք է նրանց թերի ինքնակազմակերպման, ինչպես նաև սոցիալ-տնտեսական պայմանների և պետության կողմից նրանց նկատմամբ կիրառվող քաղաքական սահմանափակումների: Օրինակ, 1995 թվականից ի վեր Ադրբեջանում անցկացված բոլոր ընտրություններում ՆՏԱ-ների գրանցման ու քվեարկություններին մասնակցելու գործընթացների ոչ թափանցիկ լինելը հնարավորություն չի ընձեռել մոնիտորինգի ենթարկել դրանք՝ հարցականի տակ դնելով այս համայնքների մասնակցությամբ ընտրությունների վավերականությունն ու ճշգրտությունը: Բացի այդ, իշխանությունները ՆՏԱ համայնքի անդամների մի զգալի մասին շարունակում են պահել ժամանակավոր կացարաններում և փախստականների ճամբարներում՝ բնակչության մնացած մասից փաստացի մեկուսացված վիճակում: Ընդ որում, ընդդիմության, լրատվամիջոցների ներկայացուցիչների և քաղաքացիական հասարակության ինստիտուտների համար այդ ճամբարների հասանելիությունը խստորեն սահմանափակված է:

Ավելին, ներքին տեղահանվածները չունեն տեղական ինքնակառավարման մարմիններ: Մինչ օրս, ՆՏԱ ներկայացնող իշխանության միակ մարմինը նշանակովի «արտաքսված գործադիր իշխանություններն» են, որոնց գործունեությունը զուտ խորհրդանշական է և հիմնականում առնչվում է սոցիալական նպաստների բաշխման խնդիրներին: Ադրբեջանի իշխանությունները Ղարաբաղի ադրբեջանցիներին բացահայտորեն զրկել են նաև համայնքի առաջնորդ ընտրելու իրավունքից, որն իրավասու կլիներ բանակցություններում ներկայացնելու համայնքը: Փոխարենը, 1992 թվականից ի վեր այդ դերը ստանձնել է հանրապետության նախագահի կողմից նշանակված Շուշայի «արտաքսված գործադիր իշխանության» ղեկավար Նիզամի Բահմանովը:

Այս պայմանները, որոնք լրացվում են նաև բանակցություններում առաջընթացի պակասի առաջ բերած հիասթափությամբ և լքված լինելու աճող զգացումներով, պարարտ հող են դառնում արմատականության զարգացման և խնդրի ռազմական ճանապարհով լուծման ուղղությամբ կոչերի ի հայտ գալու համար: Այս միտումները համալրվում են ազգայնական ճառերով և ներկայացնում հակամարտությունը որպես հայերի կողմից ազերիների նկատմամբ իրականացվող «ցեղասպանություն», որի նպատակն է տարածքների զավթումը և «Մեծ Հայքի» ստեղծումը: Ինչ-որ իմաստով, Ադրբեջանի հասարակական գիտակցության մեջ նշմարվում են այնպիսի միտումներ, ինչպիսիք ավելի վաղ նկատվում էին հայ հասարակության շրջանում. դրանք բխում են «պարտվողի բարդույթից», չիրագործված ազգային ձգտումներից և ազգի՝ որպես զոհի ընկալումից:

Ներքին տեղահանվածների շահերը ներկայացնող սակավաթիվ հասարակական կազմակերպություններից ամենահայտնին Ղարաբաղի ազատագրման կազմակերպությունն (ՂԱԿ) է, որը քննադատում է կառավարության «պարտվողական» դիրքորոշումը, միջազգային կազմակերպությունների «երկակի չափանիշները» և հակամարտության ռազմական լուծման կոչ է անում: Այնուամենայնիվ, ՂԱԿ-ի «Չկա՛ Ադրբեջան առանց Ղարաբաղի» տարածված կարգախոսն արտահայտում է բազմաթիվ ադրբեջանցիների այն մտահոգությունը, որ Ղարաբաղի կորուստը կնշանակի երկրի կազմալուծում և ազերի ազգության ամբողջական վերացում: Չնայած Ղարաբաղի ադրբեջանական համայնքը թույլ է և անկազմակերպ, սակայն այն տիրապետում է բավարար ներուժի՝ ապագայում Ադրբեջանն ապակայունացնող հզոր ուժ դառնալու, եթե այսօր նրա շահերն անուշադրության մատնվեն:

## Մեկուսացում խաղաղ կարգավորման գործընթացից

1992 թվականին, համաձայն Մինսկի խմբի մանդատի, որում խոսք է գնում «Լեռնային Ղարաբաղի ընտրված և այլ ներկայացուցիչների» մասին, Ղարաբաղի ադրբեջանցիները (Ղարաբաղի հայերի հետ միասին) ճանաչվեցին հակամարտության «շահագրգիռ կողմ»: Այնուամենայնիվ, գործնականում Ղարաբաղի ադրբեջանական համայնքն ընդհանուր առմամբ դուրս է թողնվել բանակցություններից՝ առավելապես Ադրբեջանի և Հայաստանի, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների կողմից որդեգրված քաղաքականության արդյունքում: Անկախ նրանից՝ խոսքը գնում է ներպետական, թե միջպետական հակամարտության մասին, և՛ հայկական, և՛ ադրբեջանական մոտեցումներում անտեսվում է Ղարաբաղի ադրբեջանական առանձին համայնքի գոյությունը և, հետևաբար, աչքաթող է արվում Ղարաբաղի հայերի և ազերիների միջև հակամարտության միջհամայնքային հատույթը:

Այն պարզ պատճառով, որ Ղարաբաղի ազերիները չէին կարող անմիջականորեն մասնակցել բանակցություններին, նրանց շահերը հիմնականում անուշադրության են մատնվել բանակցությունների ողջ ընթացքում: Այսպես կոչված «հող խաղաղության դիմաց» մոտեցումը կամ դրա տարատեսակներից մեկը՝ «5+1+1» բանաձևը, որին հաճախ անդրադառնում են բանակցությունների ընթացքում, նախատեսում է Լեռնային Ղարաբաղին հարակից ադրբեջանական հինգ գրավյալ տարածքների վերադարձ և ապա Քելբաջարի ու

***Ղարաբաղից տեղահանված երկու երեխա խաղում են Բաքվի լքված նավթահանքերից մեկում***

*Աղբյուրը՝ Պանոս/Հեյդի Բրադներ*

Լաչինի վերադարձ, ինչ-որ պայմանների առկայության դեպքում: Այն փաստը, որ հայկական կողմը Լեռնային Ղարաբաղից դուրս գրավյալ տարածքներն օգտագործում է որպես սակարկման առարկա Լեռնային Ղարաբաղի անկախության կամ Հայաստանի հետ միավորման հարցում զիջումներ կորզելու նպատակով, ուղղակիորեն վտանգում է Ղարաբաղի ադրբեջանական համայնքի շահերը:

## Ապահով և արժանապատիվ վերադարձ

Ղարաբաղի ազերիների հիմնական մտահոգությունն ապահով և արժանապատիվ վերադարձն է իրենց հայրենիք: Ըստ նրանց՝ Հայաստանի և Ադրբեջանի նախագահների միջև ստորագրված խաղաղ կարգավորման ցանկացած փաստաթուղթ պետք է ներառի դրույթներ Լեռնային Ղարաբաղում Ղարաբաղի ադրբեջանցիների ապագա կարգավիճակի և հետևաբար՝ Շուշայի ու Լաչինի ապագա կարգավիճակի շուրջ: Շուշան Ղարաբաղի ազերիների ինքնության և գոյության անկյունաքարն է, և խաղաղության հաստատման ցանկացած առաջարկի նկատմամբ նրանց վերաբերմունքն ուղղակիորեն կախված է այն բանից, թե այդ առաջարկն ինչպիսի հնարավորություն կստեղծի ապահով և արժանապատիվ կերպով այնտեղ վերադառնալու համար: Շուշան նախկին ԼՂԻՄ-ի հինգ շրջաններից միակն էր, որտեղ նախքան հակամարտությունը ազերիները ճնշող մեծամասնություն էին կազմում (91 տոկոս) և որն ազերիների համար ունի խորհրդանշական հսկայական նշանակություն, քանի որ Ղարաբաղի պատմական կենտրոնն է և հանդիսանում է ադրբեջանցի բազմաթիվ ականավոր մշակութային գործիչների ծննդավայրը:

Մինչ թվում է, թե Ադրբեջանի ներկայիս կառավարությունն առավելապես մտահոգ է Լեռնային Ղարաբաղին հարող ադրբեջանական մարզերի վերադարձի խնդրով, Ղարաբաղի ադրբեջանցիները չեն պատկերացնում հարակից տարածքների վերադարձն առանց Շուշան վերադարձնելու: Բանակցությունների ողջ ընթացքում հայկական կողմը փորձել է Ղարաբաղի ազերիների՝ Շուշա վերադարձի հարցը կապել Ադրբեջանի՝ Լեռնային Ղարաբաղից դուրս գտնվող այլ մարզեր հայերի վերադարձի խնդրի հետ: Այսուհանդերձ, Ղարաբաղի ազերիները կարծում են, որ նման ձևակերպումը կեղծ է և պատրվակ է հանդիսանում՝ մերժելու վերադարձի իրենց իրավունքը, քանի որ Ադրբեջանի՝ Լեռնային Ղարաբաղից դուրս գտնվող այլ մարզերից հայ փախստականների վերաբնակեցման հարցը պետք է դիտարկել Հայաստանից ազերի փախստականների համանման իրավունքի ճանաչմանը զուգահեռ:

Այսօր Ղարաբաղի ադրբեջանական համայնքի լրջագույն մտահոգություններից մեկը գրավյալ տարածքների ակտիվ վերաբնակեցումն է հայկական իշխանությունների կողմից: Այսպես, համաձայն Ղարաբաղի հայկական իշխանությունների կողմից ընդունված «պաշտոնական» ծրագրի, Լեռնային Ղարաբաղի բնակչության թվաքանակը մինչև 2010 թվականը պետք է կրկնապատկվի. վաղ 1990-ականների 150 հազար ցուցանիշի համեմատ՝ 2010-ին կազմելով շուրջ 300 հազար: Այս ապօրինի վերաբնակեցումը և վիճակն անշրջելի դարձնելու ձգտումները կարող են զգալիորեն բարդացնել խաղաղ կարգավորման գործընթացը և հակամարտության լուծման ճանապարհին երկարաժամկետ հեռանկարի տեսանկյունից մեծ խոչընդոտի վերածվել:

## Ոչ «նոր փոքրամասնություն»

Հայկական կողմը շարունակ վկայակոչում է Ղարաբաղի հայերի ինքնորոշման իրավունքը, որը ցանկանում է իրացնել Ադրբեջանից անջատման միջոցով: Ադրբեջանը միշտ հակադարձում է՝ տարածքային ամբողջականության և միջազգային սահմանների անխախտելիության սկզբունքների վկայակոչմամբ: Այնուամենայնիվ, «ինքնորոշումն ընդդեմ տարածքային ամբողջականության» ենթադրյալ բանավեճը զարմանալիորեն անուշադրության է մատնում այն փաստը, որ Ղարաբաղի ադրբեջանցիները նույնպես ունեն ինքնորոշման իրավունք: Ավելին, ո՛չ Ղարաբաղի հայերի, ո՛չ Ղարաբաղի ազերիների ինքնորոշման իրավունքը անհրաժեշտաբար չի ենթադրում անջատման իրավունք:

Ղարաբաղի ազերիները վճռական են չընդունելու որևէ լուծում, որի դեպքում իրենք կհայտնվեն Ղարաբաղի հայերի նկատմամբ ստորադաս դիրքում: Ղարաբաղի հայերը բազմիցս հայտարարել են, որ չեն ցանկանում, որպեսզի Ադրբեջանի ներսում իրենց վերաբերվեն որպես փոքրամասնության՝ այդպիսով փաստարկելով Ադրբեջան պետության և Ղարաբաղի հայկական իշխանությունների միջև ոչ հիերարխիկ հարաբերությունների հաստատման անհրաժեշտությունը: Նմանապես, Ղարաբաղի ազերիները դեմ են այնպիսի լուծմանը, որը նրանց կվերածի «նոր փոքրամասնության» հայերի գերիշխանությունը վայելող Լեռնային Ղարաբաղում: Ղարաբաղի ադրբեջանցիներից շատերը պարզապես չեն վերադառնա Ղարաբաղում գտնվող իրենց տները, եթե պիտի հայտնվեն իրենց նախկին ախոյանների տիրապետության տակ՝ առանց անվտանգության զուգահեռ երաշխիքների և ինքնակառավարման այնպիսի մակարդակի ապահովման, որը համարժեք կլինի Ղարաբաղի հայերի ստացած երաշխիքներին:

## Եզրակացություն

Դժբախտաբար, թե՛ հայ, թե՛ ադրբեջանական հասարակություններում և լրատվամիջոցներում գերիշխող բանավեճերը հիմնականում անտեսել են հակառակ կողմի խնդիրներն ու մտահոգությունները: Հակամարտության լուծումը պահանջում է արմատական փոփոխություններ հակամարտության և՛ հայկական, և՛ ադրբեջանական կողմերի մոտեցումներում և որդեգրած դիրքորոշումներում: Այն պահանջում է նորովի դիտարկել «ինքնիշխանություն», «ինքնորոշում», «ազգային և էթնիկ սահմաններ» և «մեծամասնություն-փոքրամասնություն հարաբերություններ» ավանդական հասկացությունները: Այս առումով դիտարկման համար չափազանց օգտակար կարող է լինել եվրոպական փորձը, մասնավորապես՝ Եվրամիության ինտեգրման մոդելի հնարավորությունները:

Անկասկած, լուծումը համակեցության և համագործակցության մեջ է, ինչպես Հայաստանի և Ադրբեջանի, այնպես էլ Ղարաբաղի հայերի և Ղարաբաղի ազերիների միջև: Բանակցություններում նոր առաջընթաց գրանցելու համար պահանջվում է Լեռնային Ղարաբաղի հայ և ազերի ներկայացուցիչների ավելի ակտիվ մասնակցություն: Միջազգային հանրությունը պետք է օժանդակի և խրախուսի քաղաքացիական նախաձեռնությունները, որոնք կներառեն ուղղակի շփումներ ոչ միայն Հայաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչների, այլև Ղարաբաղի հայերի և ազերիների միջև: Ղարաբաղի հիմնախնդրի գոյությունը նաև լրջորեն խոչընդոտում է Ադրբեջանում և Հայաստանում ժողովրդավարության զարգացմանը : Միևնույն ժամանակ, ցավոտ փոխզիջումներ պարունակող որոշումները պետք է կայացվեն ուժեղ, ժողովրդավար և լեգիտիմ իշխանությունների կողմից:

# Անձնական պատմություններ

**Հայաստանցիների և ադրբեջանցիների այս անձնական պատմությունները վերցված են հարավկովկասյան ռադիոօրագրերի ծրագրից, որը սկսվեց վրացի և աբխազ լրագրողների հետ համատեղ իրականացվող «Հաշտեցման պատարներ» կազմակերպության երկամյա փորձնական ծրագրի արդյունքում: Այսօր Հարավային Կովկասի ավելի քան քսան ռադիոկայաններ են մասնակցում ծրագրին՝ հեռարձակելով սովորական մարդկանց կողմից գրառված և տեղացի լրագրողների կողմից խմբագրված պատմություններ:**

## Բաժանված ընտանիք

Իմ անունը Հասմիկ Հակոբյան է, ապրում եմ Ղարաբուղաղ գյուղում: Ես 68 տարեկան թոշակառու եմ: Բժշկական ուսումնարանն ավարտելուց հետո 1954 թվականին ինձ գործուղեցին Շուշա՝ որպես բուժքույր: Այնտեղ էլ հարևաններիս շրջապատում հանդիպեցի մի բարեսեր երիտասարդ ադրբեջանցու: Չնայած և՛ իմ, և՛ նրա ծնողները դեմ էին մեր հանդիպումներին, մենք ուշադրություն չդարձրինք և ի վերջո ամուսնացանք: Բազմանդամ ընտանիք կազմելու բարեբախտություն ունեցանք. ես երկու տղա և երկու աղջիկ ունեցա: Նրանք բարեսեր, խելացի երեխաներ էին, և բոլորն էլ բարձրագույն կրթություն ստացան: Ես չափազանց երջանիկ էի: Բայց հետո, 1988 թվականին, կռիվն սկսվեց: Այդ ընթացքում ես հիվանդացա և պառկած էի Թուրքմենստանի մայրաքաղաք Աշխաբադում. չէի կարող բուժում ստանալ Ստեփանակերտում, քանի որ ամուսինս ադրբեջանցի էր և չէի կարող մեկնել Բաքու, քանի որ հայ էի: Սա էր պատճառը, որ փեսաս ինձ տեղափոխեց Աշխաբադ, որտեղ ազգականներ ուներ: Այնտեղ էի գտնվում, երբ հեռուստատեսությամբ տեղեկացա, որ Շուշան այլևս հայերի հսկողության տակ է և ոչ մի ադրբեջանցի չի մնացել քաղաքում: Ես կորցրեցի կապն ընտանիքիս հետ. միայն գիտեի, որ ընտանիքս Բաքու է տեղափոխվել: Հետո իմացա, որ մայրս հիվանդ է: Որոշեցի գնալ խնամել նրան և սպասել, թե երբ կվերջանա այս պատերազմը: Այսպես, 1992 թվականին ես վերադարձա Ղարաբուղաղ, բայց երբեք չէի պատկերացնի, որ այս դրությունն այսքան երկար կձգվի: Ես սարսափելի կարոտել եմ երեխաներիս և ապրում եմ լոկ այն հույսով, որ մի օր կրկին կտեսնենք իրար: Սրանից ավելի ցանկալի երազանք ես չունեմ:

## Բասրա

1980-ականներին աշխատում էի Իրաքի Նասիրիյա քաղաքի մի էլեկտրակայանում՝ որպես պայմանագրային թարգմանիչ: Սա այն ժամանակաշրջանն էր, երբ իրանաիրաքյան պատերազմը հասել էր իր գագաթնակետին, և ռմբակոծությունները Իրանի կողմից հաճախակի բնույթ էին կրում: Խորհրդային մասնագետներին արգելվում էր ազատ տեղաշարժվել երկրում, բայց ես սիրված էի շաբաթը մեկ անգամ Նասիրիյայից գնալ Բասրա, քանի որ օտարերկրացիների հարցերով զբաղվող պետական մարմնի գրասենյակն այնտեղ էր: Նասիրիյայում խորհրդային շատ մասնագետներ էին աշխատում, ներառյալ՝ ադրբեջանցիներ: Ես ընկերացա նրանցից մեկի՝ Աբիլ Ասֆերովի հետ: Նա Իրաքում ավելի վաղուց էր աշխատում, քան ես, և քանի որ նրա պայմանագիրն արդեն լրանալու մոտ էր, Աբիլը խնդրեց ինձ իրեն մի օր Բասրա տանել: Այնտեղ պարտաքները ավելի էժան էին, և նա ցանկանում էր մեկնումից առաջ նվերներ գնել: Սա արգելված էր, բայց ես այնուամենայնիվ համաձայնեցի, և մենք գնացինք Բասրա: Քայլում էինք քաղաքով, երբ հանկարծ Իրանի կողմից հրետակոծություն սկսվեց: Մենք վազեցինք դեպի ավտոմեքենան, որպեսզի հեռանանք այդ վտանգավոր գոտուց, երբ հանկարծ մի ռումբ պայթեց անմիջապես մեր կողքին: Չհասցրեցի հասկանալ, թե ինչ է կատարվում, երբ Աբիլը հրեց ինձ դեպի պատը և փակեց իր մարմնով: Տեսնելով բեկորների թողած հետքերը պատերին՝ մենք փառք տվեցինք Աստծուն, որ ողջ ենք մնացել: Վերադարձի ճանապարհին հարցրեցի Աբիլին, թե ինչու ծածկ գտնելու և թաքնվելու փոխարեն նա մնաց և պաշտպանեց ինձ: Երբեք չեմ մոռանա նրա պատասխանը: Նա ասաց. «Այդ պահին մտածեցի՝ ճակատագիրն ինչ ուզում է, թող անի ինձ հետ, միայն թե քեզ բան չպատահի: Եթե քեզ բան պատահեր, դա իմ մեղքով կլիներ: Դրանից հետո ես ինչպե՞ս կկարողանայի ապրել»: Ավելի ուշ՝ հայցնի դեպքերից հետո, նա հեռացավ ինձ Երևան և, հաշվի առնելով մեր վիճակը, հարցնում էր, թե արդյո՞ք որևէ բանով կարող է օգտակար լինել: Դրանից հետո մենք կապը կորցրեցինք, բայց շատ կուզեի իմանալ, թե որտեղ է նա հիմա և ինչպես է:

## Շուշայի սոխակը

Երբեf չեմ մոռանա Ղարաբաղում տեղի ունեցած մի հանդիպում: Շուշայում անց էr կացվում «Բյուլբյուլի orեr» փառատոնը: Որոշեցինf մի փոfr հանգստանալ: Մոսկվայից հյուrեr ունեինf, և Իսա Բուլաղու աղբյուրի կողfին արագ ու հանդաsrաստից մի փոfrիկ fեֆ կազմակեrպեցինf: Սեղանին ամեն ինչ կար, բացի ալկոհոլից, fանի nr Գորբաչովի նախաձեռնած հակաալկոհոլային շարժման տարիներն էին: Ամեն ինչ հrաշալի էr, բացի գինու կամ օղու բացակայությունը, և հենց այս պատճառով էլ fեֆը բավականին արագ ավարtվեց: Պատrաստվում էի հեռանալ, երբ խոrhrդավոr և զարմանալի ձայն լսեցի: Յանեցի ձայնագrիչս ու ձայնի ուղղությամբ բարձrացա բլուrն ի վեr: Այնտեղ հայտնաբեrեցի մի տիպիկ ադrբեջանական նվագախումբ` ավանդական եrաժշտական գոrծիfնեrով` թառ ու fյամանչա, nrոնf շատ նման են ուդին: Նրանց կողfին կանգնած էr մի կին` ձեռfին մի դափ: Թվում էr, նա ինձ չի նկատել և շաrունակում էr երգել ադrբեջանական ժողովrդական հայտնի մի երգ` «Ղաչաղ Նյաբի» էպոսից: Երբ վեrջացrեց, շrջվեց իմ կողմը և խնդrեց անջատել ձայնագrիչը: Միայն այդ պահին հասկացա, nr նա բացաrձակ կույr է: Ապա ինձ պատմեց երգչուհու իr կաrիեrայի մասին. թե ինչպես է երգել մեծ երգիչ Շուշեցի անի համաr, nrպեսզի ընդունվի Բաfվում գտնվող նrա ակադեմիան: «Նա ընդունեց ինձ և առաջաrկեց իr հետ տեղափոխվել Բաfու: Բայց եղբայrս` Սուrենը, թույլ չտվեց մեկնել», պատմում էr նա: Երբ լսեցի Սուrեն անունը, հասկացա, nr կինը հայ է` չնայած անթեrի ադrբեջաննեrենով երգում էr ադrբեջանական ժողովrդական երգեr: Որոշ ժամանակ անց, Ղարաբաղի դեպfեrից հետո, փորձեցի պարզել, թե ինչ է պատահել այդ կնոջը: Պարզվեց, nr նա այդպես էլ չի լfել Շուշան և մինչ օrս էլ Իսա Բուլաղուին կից բլrի վrա երգում է ադrբեջանական ժողովrդական երգեr: Նrան խնդrել էին չեrգել այդ երգեrը, բայց նա շաrունակել էr երգել, ինչպես նախկինում:



## Իմ ուղին

Պատմեմ իմ պատմությունը: Զorակոչվեցի 1992 թվականի սկզբին: Շատ դժվաr էr` թե՛ ֆիզիկապես, թե՛ հոգեպես: ?ազմաթիվ կոrուստնեr էինf ունենում: Ծանr էr. ճակատամաrտից առաջ մեկի հետ զrուցում էիr, իմանում նrա խնդիrնեrի մասին, փոrձում ինչ-nr կեrպ օգտակաr լինել նrան, և այլն, իսկ մի fանի ժամ անց` hrետակոծությունից հետո պարզում, nr այդ մաrդը սպանվել է: Մեr ստոrաբաժանումն անցավ հաrձակման: Ես գիտեի, nr եթե նույնիսկ մեզ հաջողվի գrավել այդ դիrfեrը, այդ բաrձունfնեrը, մենf երբեf չենf կաrողանա պահել դrանf: Պաrզապես եrեf հազաrն ընդդեմ մեr 117-ի չափազանց մեծ գեrակշռություն էr: Այնուամենայնիվ, մենf կատաrեցինf տrված hrամանը: Վեrջին պահին, երբ արդեն ամեն ինչ գrեթե վեrջացrել էինf, նrանf ջախջախիչ հակահաrձակման անցան: Ահավոr մի hrետակոծություն սկսվեց, և ես գլխից վիrավոrվեցի: Ուշfի եկա միայն դաշտային հոսպիտալում: Ավելի ուշ փաստաթղթեrից իմացա, nr երկու շաբաթ է, ինչ գտնվում եմ այնտեղ: Ինձ տեղափոխեցին Բաfվի հոսպիտալ, nrտեղ անցկացrի մեկ ու կես ամիս: Փետrվաrին կինս և երկու երեխանեrս եկան ինձ այցի: Կինս փող չուներ ավտոբուսով տեղ հասնելու համաr և ամեն օr nտfով էr ինձ այցի գալիս` յոթ կիլոմետr դեպի հոսպիտալ և յոթ էլ` հետ: Կնոջս հագին հնամաշ կոշիկնեr էին, nտfեrը թrջվում ու սառչում էին: Մի երեխային դնում էr սայլակի մեջ, մյուսին պահում գrկին, իսկ սայլակի բռնակից կախում էr սննդով պայուսակը: Ահա այդպես էr նա ինձ խնամում, և դrա շնոrհիվ էr, nr արագ կազդուrվեցի: Յոսպիտալից դուrս գrվելուց հետո զոrացrվեցի: Այժմ մի փոfr արհեստանոց ունեմ, nrտեղ կահույf եմ պատrաստում: Վատ չի ստացվում, մաrդիկ ինձ ճանաչում են, և ես կաrողանում եմ ծայrը ծայrին հասցնել: Այսօr ես լիաrժեf կյանfով եմ ապrում, մեծացrել եմ իմ երկու երեխանեrին ու եթե նույնիսկ ամեն ինչ վեrսկսելու հնաrավոrություն ստանայի, ոչինչ էլ չէի փոխի, fանի nr երբ սովոrում էի ռազմական ուսումնաrանում, orուգիշեr տղամաrդու և fաղաfացու համաr պաrտադիr եrեf հիմնական հոգեբանական հասկացություննեr էին մտցնում մեr գլուխնեrը` Պատիվ, Քաջություն և Յայrենիf:

# ԵԱՀԿ-ի դերը.

## միջազգային միջնորդական ջանքեր

### Ֆոլկեր Յակոբի

**Ֆոլկեր Յակոբին 1998-1999 թվականներին աշխատել է իբրև ԵԱՀԿ գործող նախագահի Լեռնային Ղարաբաղի հարցով անձնական ներկայացուցչի օգնական: 1999 թվականին դոկտորական թեզ է պաշտպանել Հայաստանի քաղաքականություն թեմայով, իսկ 1999-2004 թվականների ընթացքում տարբեր պաշտոններ է զբաղեցրել ԵԱՀԿ Վրաստանի առաքելության շրջանակներում:**

*«Դա պետք է լինի մի լուծում, որն ընդունելի կլինի Հայաստանի կառավարության և Ադրբեջանի կառավարության, Հայաստանի ժողովրդի ու Ադրբեջանի ժողովրդի համար»:*
Քերի Քավանոյի՝ Մինսկի խմբի ԱՄՆ նախկին համանախագահի մեկնաբանությունը 2001 թվականին Քի Վեսթում (Ֆլորիդա) կայացած բանակցությունների վերաբերյալ:

*«Ղարաբաղի դիրքորոշումը թերագնահատելը մեծ սխալ է»:*
Տերհի Հակալա, Հարավային Կովկասում Ֆինլանդիայի հատուկ հանձնարարություններով դեսպան

Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդաժողովը (ԵԱՀԽ) սկսել է զբաղվել Լեռնային Ղարաբաղի հակամարտությամբ 1992 թվականի մարտից՝ նորանկախ Հայաստանի և Ադրբեջանի կողմից կազմակերպությանն անդամագրվելուց անմիջապես հետո: Սա համընկավ պատմական այն բացառիկ պահի հետ, երբ «երկաթե վարագույրի» ընկնելուց հետո թվում էր, թե ԵԱՀԽ մասնակից պետությունների շրջանում առկա է փոխըմբռնում առ այն, որ համագործակցությունը հակամարտությունից գերադասելի է: Համընդհանուր այս էյֆորիայի պայմաններում թվում էր, թե Խորհրդային Միության ժառանգորդ պետությունները, հատկապես Ռուսաստանը, կարող են հավասարի հիմունքներով ընդգրկվել համաշխարհային համակարգ: ԵԱՀԽ-ն կատարեց առաջին քայլերն այս ուղղությամբ՝ վերափոխվելով Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ, կազմակերպության անվանումը փոխվեց միայն 1994 թվականի դեկտեմբերին) և փորձելով լուծումներ գտնել համընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ այսօրվա տեսանկյունից գուցե միամիտ թվացող մի ոգով, որը հիմնված էր փոխադարձ վստահության և նեղ ազգային շահերի նկատմամբ համընդհանուր արժեքների գերակայության վրա:

*Նկարում՝ Նախագահներ Հեյդար Ալիևը և Ռոբերտ Քոչարյանը Մինսկի խմբի երեք համանախագահների և ԱՄՆ-ի պետքարտուղար Քոլին Փաուելի հետ 2001 թվականի ապրիլին Քի Վեսում կայացած բանակցությունների սեղանի շուրջ:*

*Աղբյուրը՝ Էնդի Նյուման/ՖՊԳ/Գեթթի Իմիջիս*

Տարածաշրջանային մանդատի շնորհիվ ԵԱՀԽ-ն ավելի էր համապատասխանում ղարաբաղյան հակամարտությամբ զբաղվելու դերին, քան Միավորված ազգերի կազմակերպությունը (ՄԱԿ), թեպետ Հայաստանը և Ղարաբաղի հայերը որպես կարգավորման ֆորում գերադասում էին ՄԱԿ-ը, քանի որ նրանց պատմական «բարեկամներ» Ֆրանսիան և Ռուսաստանը Անվտանգության խորհրդի անդամներ էին: Նույն պատճառով Ադրբեջանը հակված էր ԵԱՀԽ-ի ներգրավմանը, որի անդամն էր Ադրբեջանի հուսալի դաշնակից Թուրքիան: Առանցքային դերակատարների համոզվածությունն առ այն, որ հակամարտության հանգուցալուծումը մոտ է, դրդեց ԵԱՀԽ-ին ստանձնել ղարաբաղյան հակամարտության միջնորդական առաքելության պատասխանատվությունը:

ԵԱՀԽ-ի կողմից հետագայում «Մինսկի գործընթաց» կոչված գործընթացը մեկնարկելու պահին նախատեսվում էր ոչ ուշ՝ քան 1992-ի գարնանը, Բելառուսի մայրաքաղաք Մինսկում գումարել համաժողով, որի ընթացքում կորոշվեին հակամարտության խաղաղ կարգավորման մանրամասները: ԵԱՀԽ անդամները համոզված էին, որ համաժողովի ընթացքում հարկ կլիներ միայն հստակեցնել տեխնիկական մանրամասները, քանի որ հիմնական աշխատանքն արդեն իսկ կատարված պետք է լիներ նախապատրաստող մարմնի, այն է՝ ԵԱՀԽ տասնմեկ երկրներ ներկայացնող «Մինսկի խմբի» կողմից: Մինչդեռ, քանի որ երևան եկան նոր խնդիրներ, նախապատրաստող մարմինն ինքը վերածվեց բանակցային ֆորումի, իսկ Մինսկի համաժողովը հետաձգվեց անորոշ ժամկետով: Մասնակից երկրներն այս հընթացս իրականացված շտկումն ընդունեցին առանց առարկությունների:

## Դերի սահմանում. ազգային օրակարգերն ընդդեմ վերազգայինների

1994 թվականին ԵԱՀԽ-ի առջև երկակի բնույթ ունեցող մի խնդիր էր ծառացել. մի կողմից՝ միջնորդել, նպաստել և աջակցել Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանը, մյուս կողմից՝ բանակցել գործընթացին մասնակից պետությունների միջև հարաբերությունների հստակեցման շուրջ և սահմանել ԵԱՀԽ-ի, մասնավորապես, Մինսկի գործընթացի դերն այդ համատեքստում: Գործընթացի նախնական փուլերում ԵԱՀԿ առանցքային դերակատարների միջև առկա հակասությունները հատկապես բարդացնում էին այդ երկու նպատակների իրագործումը:

Ռուսաստանը, որպես Մինսկի խմբի անդամ և տարածաշրջանում գերիշխող պետություն, կրկնակի դեր էր խաղում: Այն մշտապես իր սեփական շահն ու նպատակներն էր հետապնդում «մերձավոր արտասահմանում» (տասնչորս նախկին խորհրդային հանրապետու-



թյունները, որոնք ներկայումս անկախ պետություններ են), որոնք միշտ չէ, որ համընկնում էին Մինսկի խմբի մյուս անդամների շահերի ու նպատակների հետ: Ռուսաստանի կողմից սեփական` այլընտրանքային միջնորդության նախաձեռնումը այս հակասության վառ արտահայտությունն էր. Ռուսաստանի, այլ ոչ թե Մինսկի խմբի միջնորդության արդյունքում 1994 թվականին կնքվեց զինադադարի համաձայնագիրը: ԵԱՀԿ մասնակից մյուս պետությունները հավանության արժանացրին այդ ջանքերը, սակայն առանձնապես շտապողականություն չէին ցուցաբերում տարածաշրջանում խաղաղապահ ուժեր տեղակայելու հարցին հավանություն տալու խնդրում: Այդուհանդերձ, բոլոր կողմերն էլ համաձայնվեցին, որ բազմազգ ուժերը գերադասելի են բացառապես ռուսական ուժերից, և 1994 թվականի դեկտեմբերին այժմ արդեն ԵԱՀԿ կոչվող կառույցը Վիեննայում կազմավորեց Բարձր մակարդակի ծրագրման խումբ, որի խնդիրն էր նախապատրաստել ԵԱՀԿ խաղաղապահ ուժերի տեղակայումը հակամարտության գոտում:

Առնվազն 1994 թվականից ԱՄՆ-ն սկսեց հետաքրքրություն հանդես բերել տարածաշրջանի նկատմամբ` կապված Կասպյան ավազանում նավթի առկայության և իր օրակարգային խնդրի լուծման հետ` նավթարդյունահանման և նավթի տեղափոխման ուղիների դիվերսիֆիկացում Իրանը շրջանցելու ճանապարհով: 1993 թվականի մարտին հայկական ուժերի կողմից Քելբաջարի գրավման հետևանքով լարվածությունը Հայաստանի և Թուրքիայի (Մինսկի խմբի անդամ մի պետություն, որն աջակցում է Ադրբեջանին) միջև աճեց: Թուրքիան հայտարարեց իր կողմից Հայաստանը շրջափակման մեջ առնելու մասին և խոստովանեց ի լուր աշխարհի, որ աջակցում է Ադրբեջանին ռազմական տեխնիկայի տրամադրման միջոցով:

1993 թվականի կեսերին Մինսկի խմբի շվեդ նախագահն, արձագանքելով տարաբնույթ ազգային օրակարգերի միջև ծնունդ առած հակասություններին, որոշեց սահմանափակել բանակցությունների մասնակիցների շրջանակը: Համաձայն այդ որոշման` Մինսկի խմբի այն անդամները, որոնց դերակատարումը գործընթացի շրջանակներում կհամարվի պակաս նշանակալի, կտեղեկացվեն գործընթացի մասին, սակայն կզրկվեն հետագա բանակցություններին մասնակցելու իրավունքից: Հրադադարից հետո Ռուսաստանը Շվեդիայի հետ համատեղ ստանձնեց Մինսկի խմբի համանախագահությունը, իսկ 1997-ին ձևավորվեց համանախագահների մշտական «տրոյկա» եռյակ ` ի դեմս Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի: Սրան հետևեց հակամարտության կարգավորմանն ուղղված «մաքոքային դիվանագիտության» ակտիվ շրջանը, որին խոչընդոտում էր փոքր հավանականությունն առ այն, որ Մինսկի խմբի համանախագահները հանդես կգային որպես անկախ միջնորդներ և ոչ որպես իրենց պետությունների ներկայացուցիչներ:

Տեղերում գործող ԵԱՀԿ-ի միակ մարմինը ԵԱՀԿ գործող նախագահի Անձնական ներկայացուցիչն է, որը 1997 թվականից սկսած զբաղեցնում է Լեհաստանի դեսպան Անջեյ Կասպրշիկը: Այնուահանդերձ, բանակցությունները նրա մանդատի մեջ ներառված չեն:

## Մինսկի գործընթացը. խնդիրներ, առաջարկներ և սկզբունքներ

Մինսկի խմբում կայուն աշխատանքային հարաբերություններ հաստատելուց հետո քննարկումները կենտրոնացան Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի և անվտանգության, ինչպես նաև փախստականների ու ներքին տեղահանվածների հարցերի և Ղարաբաղի տարածքում գտնվող, նախկինում ադրբեջանցիների կողմից վերահսկվող Շուշա քաղաքի հիմնախնդրի վրա: 1997-ից 2001 թվականների ընթացքում քննարկման սեղանին են դրվել կարգավորման չորս տարբերակներ, որոնցից յուրաքանչյուրը հիմնվում էր հակամարտության կարգավորման տարբեր մեթոդաբանությունների վրա: «Փաթեթային լուծում» կոչվող առաջին տարբերակում բոլոր խնդիրները (ներառյալ Ղարաբաղի վերջնական կարգավիճակի հարցը) դիտարկվում էին միասին` բարենպաստ հավասարակշռություն ապահովելու նպատակով: Հաշվի առնելով սեղանին դրված հարցերի քանակը` այս մոտեցումը փոխհամաձայնության հասնելու տեսանկյունից տրամադրում էր գործողությունների առավել մեծ ազատություն: Համանախագահների կողմից 1997 թվականի մայիս-հունիսին ներկայացված փաթեթային առաջարկը բաղկացած էր երկու օրակարգերից: Առաջին` «Համաձայնություն Ա» հակամարտությունը դադարեցնելու շուրջ: Այն ենթադրում էր զորքերի հետքաշում, խաղաղապահների տեղակայում, տեղահանվածների վերադարձ և անվտանգության երաշխիքներ: Երկրորդ` «Համաձայնություն Բ» Ղարաբաղի վերջնական կարգավիճակի շուրջ: Փաթեթային առաջարկը բաժանված էր առանձին մասերի, որպեսզի, ինչպես նշված էր 1997 թ. ԵԱՀԿ Նախարարների խորհրդի հաշվետվության մեջ. «կողմերին հնարավորություն տրվի բանակցել և օրակարգերից յուրաքանչյուրն իրագործել սեփական տրամաբանության համապատասխան, միևնույն ժամանակ հստակ գիտակցելով, որ վերջիվերջո բոլոր վիճելի հարցերը պետք է լուծում ստանան»: Բաքվի և Երևանի արձագանքները ոգևորիչ էին, մինչդեռ Ստեփանակերտն այս առաջարկը մերժեց:

1997 թվականի սեպտեմբերին առաջ քաշված այսպես կոչված «փուլային» լուծումը ենթադրում էր, նախ` «Համաձայնություն Ա»-ի կնքում և ապա անդրադարձ «Համաձայնություն Բ»-ին. իմիջի-

այլոց, Լեռնային Ղարաբաղը Հայաստանին կապող Լաչինի միջանցքի հարցը տեղափոխվում էր վերջինիս մեջ: Լեռնային Ղարաբաղը պետք է շարունակեր գոյություն ունենալ իր ներկա վիճակով մինչև վերջնական կարգավիճակի շուրջ համաձայնություն ձեռք բերելը, սակայն ստանալու էր միջազգայնորեն ճանաչված «միջանկյալ կարգավիճակ»: Սկզբունքորեն, փուլային տարբերակը կառուցողական մթնոլորտ կարող էր ձևավորել սկզբնական՝ ռազմական խնդիրների քննարկման ընթացքում՝ ճանապարհ հարթելով ավելի բարդ քաղաքական հարցերի շուրջ բանակցությունների համար:

Այնուամենայնիվ, Ղարաբաղի հայերը պատրաստ չէին համաձայնվելու՝ կատարել առաջին քայլը և հետ քաշվել գրավյալ ադրբեջանական տարածքներից: Ստեփանակերտը պնդում էր, որ բուֆերային այս գոտին ազդեցության իր հիմնական լծակն է, որը չի կարող հանձնվել առանց անվտանգության հստակ երաշխիքներ տրամադրող համաձայնության կայացման: Ղարաբաղի հայերը մեկ անգամ ևս ցույց տվեցին, որ չնայած բանակցային գործընթացում իրենց վերապահված սահմանափակ դերին, Ստեփանակերտն օժտված է լուծման հնարավոր տարբերակների ընդունման գործընթացի հանդեպ վետոյի կիրառման զգալի ներուժով:

1998 թվականին ներկայացված «ընդհանուր պետության» տարբերակը Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի մասնակցությամբ աղոտ սահմանված ընդհանուր պետություն հիմնելու առաջարկ էր Բաքվի և Ստեփանակերտի միջև քիչ թե շատ «հորիզոնական» հարաբերություններով: Այս տարբերակը մերժվեց Ադրբեջանի կողմից այն հիմնավորմամբ, որ խախտվել են իր տարածքային ամբողջականության և ԵԱՀԿ-ի որդեգրած սկզբունքները, որոնք համաձայնեցվել էին 1996 թվականի դեկտեմբերին Լիսաբոնում տեղի ունեցած ԵԱՀԿ գագաթաժողովի ընթացքում, որտեղ Հայաստանը միակ պետությունն էր, որ մերժեց Ադրբեջանի տարածքային ամբողջականության շեշտադրմամբ կոնֆլիկտի լուծման սկզբունքներն ամրագրող հայտարարությունը:

Եվ վերջապես, 2001 թվականին Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանի և Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևի քննարկմանը ներկայացվեց տարածքների հասանելիության փոխանակման սկզբունքի վրա հիմնված մի առաջարկ, որն այդպես էլ չդարձավ ԵԱՀԿ-ի կողմից առաջարկվող համաձայնության նախագիծ: Միայն բանակցությունների ավարտից հետո՝ ներքին բանավեճերի ընթացքում, Ալիևը հայտարարեց (իսկ Քոչարյանը ժխտեց), որ այն ներառում էր Հայաստանի կողմից իր հարավային դարպասը հանդիսացող Մեղրիի հանձնում, որը ապահովում էր Ադրբեջանի ուղղակի կապը Նախիջևանի հետ, իսկ փոխարենը Հայաստանը վերահսկողություն էր ստանում Ղարաբաղը Հայաստանին կապող Լաչինի միջանցքի նկատմամբ:

Առաջարկներից և ոչ մեկն ի զորու չեղավ կողմերից յուրաքանչյուրի քիմքին համապատասխան հավասարակշռել ազգերի ինքնորոշման և տարածքային ամբողջականության սկզբունքները և մոտեցնել նրանց կարգավիճակի շուրջ համաձայնության կայացմանը: Հիմնվելով Հելսինկյան սկզբունքների վրա (սահմանվել են 1975 թվականին Հելսինկիում ընդունված ԵԱՀԽ եզրափակիչ ակտով)՝ ԵԱՀԿ-ն պաշտպանում է իր անդամ պետությունների սահմանների անխախտելիությունը: Թեպետ տարածքային ամբողջականության սկզբունքն ամրագրվել է՝ նկատի ունենալով միջպետական հակամարտությունները, սակայն այն պարունակում է խիստ անորոշ մի դրույթ, թե ինչպես պետք է այն կիրառել ներպետական հակամարտությունների նկատմամբ: Այստեղ՝ եզրափակիչ ակտում խոսվում է ժողովուրդների ինքնորոշման իրավունքի մասին՝ « պետությունների տարածքային ամբողջականությանը համապատասխան»: Սա որոշ հեղինակների հիմք է տալիս պնդելու, որ ԵԱՀԿ-ն անկարող է չեզոք լինել: Հելսինկյան սկզբունքները, այդուհանդերձ, մի կարևոր պայման են պարունակում. սահմանների փոփոխմանն ուղղված ցանկացած որոշում պետք է կայացվի «խաղաղ միջոցներով և կայացված համաձայնության շրջանակներում»: Այդպիսով, չկա հակասություն սահմանների անխախտելիությունն ընդունելու և միևնույն ժամանակ չեզոք լինելու միջև, եթե ձեռք բերված համաձայնությունն ընդունելի է հակամարտության բոլոր կողմերի համար:

## Նախապայմաններ փոխհամաձայնության համար

Ադրբեջանն ընկալում է ԵԱՀԿ-ն որպես մի «միջազգային կատարածու», որը պետք է օգնի իրեն բանակցությունների սեղանի շուրջ վերագտնել ռազմի դաշտում իր կորցրած տարածքային ամբողջականությունը: Այս խնդիրը հստակորեն տեսանելի դարձավ, երբ քննարկվում էր Լեռնային Ղարաբաղի՝ հակամարտության կողմ դիտարկվել-չդիտարկվելու հարցը: Ներկայումս այն միայն «շահագրգիռ կողմ» է՝ ԵԱՀԿ գործընթացի շրջանակներում ունենալով բանակցողի՝ Ադրբեջանի և Հայաստանի, համեմատ ավելի ցածր կարգավիճակ: Մինսկի խմբում մեծապես համոզված էին, թե Երևանը բավարար ազդեցություն ունի Ստեփանակերտի վրա՝ երաշխավորելու Ղարաբաղի հայերի համաձայնությունը խաղաղության ցանկացած պայմանագրի նկատմամբ, ուստի վերջիններիս մասնակցության անհրաժեշտությունը խաղաղության հաստատման գործընթացում՝ իբրև առանձին և հավասար բանակցող կողմ, վերանում է: Մինչդեռ պարզվեց, որ դա սկզբունքային սխալ էր: Մյուս կողմից, բանակցային գործընթացի շրջանակներում Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի բարձրացումը և նրան որպես հավասարազոր կողմ ներգրավումը ընդունելի չի Ադրբեջանի համար: Մինսկի խմբին դեռևս չի հաջողվել հաղթահարել այս հակասությունը:

Ենթադրությունը, թե Հայաստանի և Ադրբեջանի նախագահները հաջողությամբ կարող են համաձայնության հասնել դեմ առ դեմ բանակցությունների միջոցով, նույնպես սխալ դուրս եկավ: Հայաստանի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը ստիպված եղավ հրաժարական տալ իր իսկ նախարարների ճնշման ներքո այն բանից հետո, երբ հրապարակավ պաշտպանեց Ադրբեջանին զիջումներ կատարելու տեսակետը: Նախագահ Հեյդար Ալիևը հսկայական ճնշումների ենթարկվեց 2001 թվականին, այն բանից հետո, երբ հայրենիք վերադարձավ Քի Վեսթում Քոչարյանի հետ բանակցություններից, իսկ ձեռք բերված արդյունքները հօդս ցնդեցին՝ ներքին քննադատությանը բախվելով: Մեկնաբանելով Քի Վեսթում տեղի ունեցածը՝ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Քերի Քավանոն գովաբանեց երկու նախագահներին «իրենց ժողովուրդներից առաջադեմ լինելու» համար:

Սակայն Տեր-Պետրոսյանի հրաժարականը և Ալիևի շուտափույթ հրաժարումը փոխզիջումից խիստ կասկածի տակ են առնում

առաջնորդների միջև իրենց հասարակություններից մեկուսի կայացված համաձայնությունների կենսունակությունը: Երբ չկա հասարակությանը, ներառյալ քաղաքական ընդդիմությանը ներգրավելու ռազմավարություն, խաղաղության հաստատման ձախողման հավանականությունը մեծ է: Հակափաստարկը, թե հասարակությանը ներգրավելու փորձն էր, որ Տեր-Պետրոսյանին կանգնեցրեց հրաժարականի առջև, թյուր է: 1997 թվականի հայտնի մամուլի ասուլիսը, որի ընթացքում նա կարծես փորձ արեց տեղեկացնել և ներգրավել հասարակությանը, նրա առաջին ասուլիսն էր վերջին հինգ տարիների ընթացքում: Դրան նախորդել էր տևական լռությունը, և չէր կատարվել ոչ մի էական քայլ Հայաստանի ազգաբնակչությանը խաղաղ կարգավորման գործընթացին մասնակից դարձնելու ուղղությամբ:

## Կա՞ խաղաղաշինության հնարավորություն

Իր մեկնարկից ի վեր Մինսկի գործընթացը գրեթե ամբողջությամբ մեծապես կենտրոնացած է եղել խաղաղարարության` համաձայնություն կայացնելու, քան համապարփակ լուծում առաջադրելու կամ վերաբերմունքի մեջ փոփոխություն մտցնելու վրա: Դրան հակառակ, խաղաղաշինության սկզբունքը ճանաչում է վերաբերմունքի փոփոխության անհրաժեշտությունը` որպես համաձայնության հասնելուն նպաստող մթնոլորտ ձևավորելու գրավական, որպես առաջին քայլ` համապարփակ լուծման հասնելու ճանապարհին: Հույսը բացառապես քաղաքական առաջնորդների վրա դնելու դեպքում նրանց միջև կայացված ցանկացած գործարք կանգնում է տեղերում մերժվելու վտանգի առջև: Ցանկալի է խաղաղարարությունը լրացնել խաղաղաշինությամբ, ինչը բխում է հասարակության առավել լայն շերտերին հաղորդակից դարձնելու անհրաժեշտությունից, առանց որի խաղաղության հաստատման գործընթացի նկատմամբ սեփականության զգացում հասարակության մոտ չի կարող ձևավորվել: Ինչպես ցույց է տալիս Ղարաբաղի օրինակը, առանց հասարակական աջակցության անհնար է որևէ համաձայնության կայացում:

Այնուամենայնիվ, խնդիրն ավելի խորն է, քան հասարակության հետ հարաբերությունների հարցը և շոշափում է ազգային ինքնության և շահերի հիմնարար հասկացությունները: Օրինակ, որևէ հարցի նկատմամբ Ստեփանակերտի և Երևանի իրարից տարբերվող դիրքորոշումներից յուրաքանչյուրն իր հերթին կարող է չհամընկնել հայկական սփյուռքում ձևավորված մոտեցումների հետ: Մինչդեռ, ներհասարակական այդ հակասությունները քննարկման առարկա դարձնելու նկատմամբ հստակ տաբու գոյություն ունի հայկական քաղաքական մշակույթում, ուր հաճախ փորձեր են արվում բացառել այս կամ այն տեսակետը` պիտակելով այն որպես հայերի ազգային իղձերին «դավաճանող»: Ադրբեջանական կողմում նույնպես առկա է շահագրգիռ կողմերի միջև և հատկապես ազերի ՆՏԱ-ների մասնակցությամբ ընդգրկուն ներքին երկխոսություն ծավալելու անվիճելի անհրաժեշտություն: Տարբեր սոցիալական խմբերի ներսում և դրանց միջև անհրաժեշտ է նախաձեռնել հաշտեցման գործընթացների ամբողջական մի շարք, որպեսզի հնարավոր դառնա առաջնորդների մակարդակով կայուն փոխհամաձայնության կայացումը: Այստեղ ևս ԵԱՀԿ-ն կարող է դերակատարում ունենալ` աջակցելով հաշտեցմանն ուղղված քննարկումներին և խրախուսելով հակամարտության կողմերին` նախաձեռնելու հասարակական փոխհամաձայնության կայացմանն ուղղված գործընթաց այն հարցի շուրջ, թե որն է Ղարաբաղի խնդրում իրական «ազգային շահը»:

ԵԱՀԿ-ն մինչ օրս այս հարցին չի անդրադարձել և ոչ էլ փորձ է արել աշխատել երկրների առաջնորդների հետ նման փոխլրացնող մոտեցում մշակելու ուղղությամբ: Չնայած ԵԱՀԿ-ի փորձառության շրջանակներում նման նախադեպի բացակայությանը, այնուամենայնիվ անհրաժեշտ է, որ առաջին մակարդակի (պաշտոնական) դիվանագիտությունը համալրվի այլ դերակատարների կողմից իրականացվող երկրորդ, երրորդ մակարդակների հասարակական դիվանագիտությամբ` մեկ ընդհանուր, սակայն բազմամակարդակ մոտեցման շրջանակում: Ակնհայտորեն, սա կնպաստի թույլ տալ, որ հայերն ու ադրբեջանցիներն ուղղակի շփումների մեջ մտնեն: Հաշվի առնելով, որ այս գաղափարը մերժվել է Ադրբեջանի կողմից` Մինսկի խմբի գործողությունների հնարավոր կիզակետ կարող է դառնալ կողմերին համոզելը, որ համաձայնության գան խաղաղաշինության և խաղաղարարության փոխլրացնող բնույթի շուրջ: Սա, իր հերթին, կնպաստի նաև Ստեփանակերտի *դե ֆակտո* իշխանությունների հետ ուղղակի բանակցությունների ընդունում: Այստեղ Մինսկի խումբը կարող է մեծ դեր խաղալ` առաջարկելով ցամաքային ուղիղ կապ հաստատել շփման գծի վրայով թերևս միջազգային վերահսկողության ներքո, ինչի արդյունքում հնարավոր կդառնա ապահովել միջազգային կազմակերպությունների մուտքը Լեռնային Ղարաբաղ, առանց խախտելու Ադրբեջանի *դե յուրե* սահմանը:

ԵԱՀԿ-ն կարող է ուժեղ լինել այնքանով, որքանով իր անդամ պետությունները թույլ են տալիս նրան լինել այդպիսին: Մինչդեռ, ԵԱՀԿ-ին անդամակցող պետությունների շահերի միջև հակասությունները շարունակվում են: Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում ԵԱՀԿ-ի` որպես միջնորդի, փորձը ցույց է տալիս, որ անհիմն է ենթադրել, թե դերակատարների միավորումը կարող է ավելի զորեղ կամ առաջադեմ լինել, քան այդ միավորման առանձին անդամներն են: Այսուհանդերձ, այս հակամարտության միջնորդությունը առաջ է քաշում նաև միաժամանակյա և աստիճանական գործընթացների խնդիրը: Դրանցից մեկը հայ-ադրբեջանական խաղաղության հաստատման գործընթացն է, մյուսը` անդամ պետությունների միմյանց հակասող օրակարգերի պայմաններում ԵԱՀԿ-ի կարողությունների զարգացումը, երրորդը` հասարակությունների ներսում ընթացող քննարկումները: Ցուցակը կարելի է շարունակել: Ներկայացված գործընթացների փոխկապվածությունն ակնհայտ է, մինչդեռ նման բարդ խնդիրների հետ գործ ունենալու համար անհրաժեշտ առկա հայեցակարգային և ինստիտուցիոնալ հնարավորությունները բավարար չեն: Հակամարտությունների խաղաղ կարգավորման գործընթացները կրկին ու կրկին ապացուցում են երրորդ կողմի հստակ սահմանված դեր ունենալու հույժ կարևորությունը և ընդգծում մեծ թվով պետական և ոչ պետական դերակատարների ներգրավման արդյունքում նրանց կողմից ներդրվող փոխլրացնող ջանքերի արժեքը` ի նպաստ բազմամակարդակ խաղաղ կարգավորման գործընթացի: ԵԱՀԿ-ի միջնորդական ջանքերը և դրանց սահմանափակումները խորհրդանշում են այն աշխարհը, որում ապրում ենք և առիթ են տալիս խորհելու քաղաքականության լրիվ նոր, ամբողջական ոճի մասին:

***Նկարում՝ Նախագահներ Հեյդար Ալիևը (ձախից) և Լևոն Տեր-Պետրոսյանը Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելի հետ 1997 թվականի ապրիլին:***

*Աղբյուրը՝ Ռոյթըր*

# Այդ անորսալի «ճիշտ բանաձևը»՝ «ճիշտ պահին».

## խաղաղության հաստատման պաշտոնական գործընթացի պատմական վերլուծություն


### Ժիրայր Լիպարիտյան


1992 թվականի մարտին, Հայաստանի և Ադրբեջանի անդամագրումից հետո, Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդաժողովը (ԵԱՀԽ) նախարարների մակարդակով որոշում կայացրեց միջնորդություն իրականացնել Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծման նպատակով: ԵԱՀԽ-ի (1994 թվականին վերանվանվեց Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության՝ ԵԱՀԿ) կողմից իրականացված միջնորդությունն իր «Մինսկի համաժողովի» միջոցով շուտով դարձավ բանակցությունների շարունակման հիմնական մայրուղին: Այնուամենայնիվ, թեպետ բանակցությունները հնարավորություն ընձեռեցին փորձարկել մի շարք բանաձևեր, որոնք գուցե դեռ օգտակար կլինեն լուծման հասնելու գործում, ԵԱՀԿ միջնորդությանը չհաջողվեց լուծում գտնել: Նույնիսկ 1994 թվականի հրադադարի համաձայնագիրն արդյունք էր Ռուսաստանի միակողմանի ջանքերի և հակամարտող կողմերի ուղղակի բանակցությունների:

Մինսկի համաժողովի նպատակի իրականացմանը, այն է՝ գումարել մի համագումար, որտեղ կմնարկվի և կորոշվի Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը, հենց սկզբում խոչընդոտեցին ռազմական գործողությունները: 1992 թվականի մարտին ծրագրված համաժողովն այդպես էլ չգումարվեց: Այդ տարի ավելի ուշ Մինսկի համաժողովը վերափոխվեց Մինսկի խմբի, իսկ հետագայում՝ Մինսկի գործընթացի: Շարունակվող ռազմական գործողությունները խոչընդոտում էին Մինսկի խմբի միջնորդությանը. 1993 թվականի ընթացքում հայկական ուժերի կողմից մեկը մյուսի հետևից տարածքների գրավումը միջնորդներին ստիպեց լուծման առաջարկների փոխարեն մշակել ռազմական գործողությունների հետևանքների վերացման «ժամանակացույցեր»: Գործունակության մեծացման նպատակով Մինսկի խումբն սկսեց հանդիպել առանց Հայաստանի ու Ադրբեջանի, որոնց վետոյի իրավունքը նշանակում էր, որ միջնորդների ցանկացած առաջարկ դատապարտված էր նախքան այն նույնիսկ կձևակերպվեր: Ավելի ուշ անգամ ինն անդամներից բաղկացած այդ խումբը դադարեց հանդիպել: Համանախագահներն իրենց վրա վերցրեցին առաջարկների մշակման ողջ պատասխանատվությունը և հաճախ նույնիսկ չէին էլ տեղեկացնում մյուսներին իրենց գործողությունների մասին: 1999 թվականի գարնան դրությամբ համանախագահները (Ռուսաստան, ԱՄՆ, Ֆրանսիա) մեկ քայլ հետ կատարեցին՝ իրենց վերապահելով սոսկ Հայաստանի և Ադրբեջանի նախագահների ուղիղ բանակցություններին աջակցողի դեր (ի հավելումն վերջերս տեղի են ունենում նաև արտգործնախարարների հանդիպումներ):

Այս հոդվածի սահմաններում հնարավոր չէ ամբողջովին ներկայացնել ԵԱՀԿ գործընթացի թույլ կողմերը: Ի թիվս այլոց, այն ներառում է Լեռնային Ղարաբաղի անորոշ առընչությունը մի գործընթացի, որին ԼՂՀ ներկայացուցիչները լիակատար անդամի փոխարեն մասնակցում էին լոկ որպես «շահագրգիռ կողմ», գործընթացի սկզբնական շրջանում փոփոխական առաջնորդումը, խմբի առանցքային անդամների անհամաչափ շահերը, երբ նրանց ուշադրությունը հաճախ շեղվում էր դեպի միջազգային այլ ճգնաժամեր, ինչպես նաև նրանց՝ սեփական շահերով պայմանավորված տարբաժանվածությունը և հակամարտող կողմերի վրա համակարգված ճնշում գործադրելու անկարողությունը, ինը երկրներ ու Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչներին ընդգրկող գործընթացի ծանրաշարժ բնույթը: Նպատակաուղղված ջանքերի բացակայության պայմաններում Մինսկի համաժողովը, որը հղացվել էր իբրև արբիտրաժային գործըն-


**1991-ից 1997 թվականներին Ժիրայր Լիպարիտյանն աշխատել է որպես Հայաստանի առաջին նախագահի նախ խորհրդական, ապա ավագ խորհրդական և անմիջականորեն ներգրավված է եղել ղարաբաղյան բանակցություններում: Ներկայում նա, որպես Կովկասի հարցերով մասնագետ, աշխատում է Միչիգանի համալսարանի պատմության ամբիոնում:**



թաց, որոշ ժամանակ գործեց իբրև միջնորդական գործընթաց և, ի վերջո, վերածվեց սոսկ օժանդակող մի մեխանիզմի:

## Հակամարտության կողմերի խնդիրներն ու պատասխանատվության շրջանակները

Այնուամենայնիվ, վերջին հաշվով հակամարտության կողմերն են պատասխանատու ցանկացած լուծման համար: Կողմերի կողմից հաշտության հայեցակարգերի որոշակի համակարգի մշակումն ու իրագործումը կարող էր հաղթահարել հակամարտության միջազգայնացման հարուցած խնդիրները: Մինչդեռ կողմերից յուրաքանչյուրն ուներ իր գործողությունների պատմական, բարոյական և իրավական արդարացումները, որոնցից ամուր կառչած էր: Երկու կողմերին էլ թվում էր, որ ցանկացած աննշան, թե մեծ, խորհրդանշական, թե իրական զիջում կվտանգի իրենց անվտանգությունը, ինքնության զգացողությունը և հենց գոյությունը: Այս համոզմունքները խորհրդային հանրապետությունների «եղբայրությանը» փոխարինած քաղաքական և ազգայնական գաղափարախոսությունների մասը դարձան: Երբեմն այս համոզմունքների ուժից կուրացած կամ էլ իրենց նորանկախ հանրապետությունների ձևավորվող քաղաքական կառույցների փխրուն և մասնատված բնույթից դրդված, կողմերը հաճախ սխալ էին հաշվարկում իրենց ռազմական, քաղաքական և դիվանագիտական հնարավորությունները, կամ էլ գերագնահատում սեփական կամքը հակառակ կողմին պարտադրելու իրենց ունակությունը: Սա հատկապես հատուկ էր Ադրբեջանին՝ հակամարտության առաջին տարիներին և Հայաստանին՝ 1997 թվականից հետո: Ադրբեջանը համոզված էր, որ կարող է հաղթել ռազմի դաշտում և կատարելապես դուրս մղել հայերին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզից (ԼՂԻՄ), սակայն ստացվեց հակառակը: Հայկական կողմը համոզված էր, որ ռազմական հաղթանակն ադրբեջանցիներին կստիպի կատարել զիջումներ, որպիսիք նրանք պատրաստ չէին կատարել՝ հաշվի առնելով միջազգային հանրության աջակցությունը տարածքային ամբողջականության սկզբունքին: Բանակցությունների ընթացքում նվազագույնը մեկ վճռորոշ պահի կողմերից յուրաքանչյուրը մերժեց առաջարկներ, որոնք կարող էին բավարարել նրանց կարիքները, ակնկալելով ավելին և հաշվարկելով, որ ժամանակն աշխատում է իրենց օգտին:

Ավելին, բոլոր բանակցությունները փակ էին, եթե չասենք գաղտնի: ԵԱՀԿ-ն և կողմերը գերադասում էին չբացահայտել բանաձևերի և առաջարկների մանրամասները, մինչև համաձայնությունը թղթի վրա չամրագրվեր: Այս մոտեցման հետևանքով հանրությունը դուրս մնաց գործընթացից՝ կասկածի ստվեր նետելով բոլոր առաջարկների վրա, ինչն ընդդիմադիր խմբավորումներին ամբոխավարությամբ զբաղվելու լայն հնարավորություններ ընձեռեց: Քաղաքականապես թույլ իշխանությունների համար հեշտ չէր թոթափել «ծախող» լինելու մեղադրանքը: Ազգայնական տրամադրություններով հագեցած մթնոլորտում իշխանություններին հաճախ չէր հաջողվում խելամիտ լուծումների գնալու համար ստանալ հանրության աջակցությունը, և նրանք իրենց «ժողովուրդներին» մեղադրում էին փոխզիջումների գնալու անպատրաստության մեջ:

## Հայաստանը և նրա առջև կանգնած երկընտրանքները

Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի իշխանությունների դիրքորոշումների միջև առկա տարբերությունները ևս նպաստեցին գործընթացի բարդացմանը: Չնայած միջնորդներից շատերի ակնկալիքներին, թե Հայաստանի քաղաքական կամքը պետք է վճռորոշ լինի երկու մայրաքաղաքներում էլ, և չնայած այն հանգամանքին, որ Ադրբեջանն այս տարբերությունները ներկայացնում էր իբրև հայկական խորամանկության դրսևորում, Լեռնային Ղարաբաղի հասունացումը որպես առանձին քաղաքական միավոր մշտական լարվածություն առաջ բերեց Երևանի և Ստեփանակերտի իշխանությունների միջև: Համոզված լինելով, որ Հայաստանի տնտեսական և ռազմական աջակցությունը երաշխավորված է, Լեռնային Ղարաբաղը կարող էր իրեն թույլ տալ իր արտաքին հարաբերությունները վարել մեկ հստակ ուղղվածությամբ, այն դեպքում, երբ Երևանի հարաբերություններն իր հարևանների և մնացյալ աշխարհի հետ անհրաժեշտաբար ավելի բազմահատույթ էին: Ճիշտ ինչպես Հայաստանի դիրքորոշումը հակամարտության վերաբերյալ որոշում էր միջազգային հանրության հետ նրա հարաբերությունների մասշտաբն ու բնույթը, այնպես էլ այլ հատույթները սահմանափակում էին հակամարտության լուծման նրա ունեցած տարբերակները: Այնտեղ, որտեղ Երևանը պատրաստ էր փոխհամաձայնության, Ստեփանակերտը կարող էր ընդդիմանալ և հաճախ հաջողության հասնել, քանի որ Ադրբեջանի տիրապետությունից դուրս պրծնելուն ուղղված Լեռնային Ղարաբաղի պայքարը, որպես տառապյալ ժողովրդի կյանքում պատմական արդարության վերականգնման դրսևորում, համընդհանուր գրավչություն ուներ համայն հայության համար:

Այն բանից հետո, երբ կնքվեց զինադադարի պայմանագիրը, Երևանի և Ստեփանակերտի հարաբերություններն արտացոլում էին խաղաղության հաստատման գործընթացի խնդիրները, որոնք առնչվում էին հարցերի երկու խմբի: Առաջինը բովանդակային դիրքորոշումներն էին՝ երեք հիմնական խնդիրների վերաբերյալ. կարգավիճակ, անվտանգություն և հակամարտության հետևանքներ (ներառյալ շրջափակումը, փախստականները և տեղահանված անձինք): Երկրորդ՝ կարգավորման մեթոդոլոգիան. արդյո՞ք բոլոր երեք առանցքային հարցերը պետք է կարգավորվեն «փաթեթային համաձայնությամբ», թե՞ կարգավիճակի հարցը, լինելով ամենաբարդը, պետք է կարգավորվի երկրորդ փուլի համաձայնությամբ:

Հայաստանի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը վերանայել էր իր մոտեցումը Ղարաբաղյան խնդրի նկատմամբ այն ժամանակների համեմատ, երբ ինքը Ղարաբաղ կոմիտեի ղեկավարներից էր և Ղարաբաղի՝ Հայաստանի հետ վերամիավորման կողմնակիցը: Նրա նախագահության օրոք Հայաստանի կառավարությունը որդեգրեց մի մոտեցում, ըստ որի հարցը սահմանվում էր որպես Լեռնային Ղարաբաղի անվտանգության խնդիր և ինքնորոշման իրավունք, ինչն անհրաժեշտաբար չէր ենթադրում անկախության կամ Հայաստանի հետ վերամիավորման նպատակներ, որոնք չեն վայելում միջազգային հանրության հավանությունը: Տեր-Պետրոսյանը ձգտում էր մի այնպիսի փոխհամաձայնության, որի դեպքում հայկական կողմը կհամաձայներ Ղարաբաղի՝ իրավական առումով Ադրբեջանի կազմում լինելուն: Ադրբեջանն իր հերթին պետք է համաձայներ այնպիսի մի կարգավիճակի, որը կլիներ ավելին, քան մինչև 1988 թվականը ԼՂԻՄ-ի ունեցած անվանական ինքնավարությունը, սակայն մեկ նիշով անկախությունից ավելի ցածր: Ի լրումն, Ադրբեջանը պետք է վերացներ շրջափակումը և ապահովեր անվտանգության ուժեղ երաշխիքներ, ներառյալ Լաչինի միջանցքի վերահսկումը հայկական կողմից և Հայաստանի իրավունքը՝ պաշտպանել տարածքի կարգավիճակն ու ազգաբնակչությանը: Պարզ դարձավ նաև, որ Ղարաբաղի վերաբերյալ ցանկացած համաձայնության արդյունքում Թուրքիան կհամաձայներ կարգավորել հարաբերությունները Հայաստանի հետ: Այդպիսով, Տեր-Պետրոսյանը հրաժարվեց ճանաչել ԼՂԻՄ-ի միակողմանիորեն հռչակված անկախությունը և հույս ուներ, որ Ադրբեջանը կվերանայեր ռազմական հաղթանակի և էթնիկական զտումների միջոցով Ղարաբաղի նկատմամբ լիակատար վերահսկողություն սահմանելու իր նպատակը:

Կարգավիճակն ըստ սեփական պայմանների որոշելու հարցում Ադրբեջանի համառությունն իր հայելային անդրադարձումն էր գտնում Ղարաբաղի իշխանությունների նմանատիպ դիրքորոշման մեջ: Քանի որ կարգավիճակի վերաբերյալ համաձայնության կայացումը դեռևս շատ հեռու էր, կարգավորման «փաթեթային տարբերակի» ձախողումն անընդունելի էր Տեր-Պետրոսյանի վարչակարգի համար, որն էլ 1993 թվականին իրատեսորեն նախընտրությունը տվեց կարգավորման «փուլային» մոտեցմանը: Նման քայլի հիմնավորումն այն էր, որ թեպետ Հայաստանը կարող է գոյատևել շրջափակման պայմաններում, սակայն տնտեսական զարգացումը շատ դժվարին, եթե ոչ անհնար կլինի, քանի դեռ կարգավորված չեն հարաբերությունները հարևանների հետ, և օրակարգում է մնում պատերազմի վերսկսման հարցը: «Ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրավիճակը պահանջում էր պետական զգալի միջոցներ, որոնք պետք է տրամադրվեին պատերազմին պատրաստվելուն՝ կտրելով դրանք այլ կարիքներից, ինչպիսիք են տնտեսական և սոցիալական բարեփոխումները կամ այդպան անհրաժեշտ ներդրումների ներգրավումը: Տեր-Պետրոսյանի վարչակարգը չէր հավատում, որ սփյուռքի օգնությունը բավարար կլինի հավասարակշռելու համար Ադրբեջանի առավելությունները. միջազգային հանրության (ներառյալ Հայաստանի ենթադրյալ բարեկամներ Ռուսաստանի և Իրանի) աջակցությունը Ադրբեջանի տարածքային ամբողջականության խնդրում և նավթը՝ իբրև ֆինանսական ռեսուրս և դիվանագիտական զենք:

Հրաժարվելով տարածքային հավակնություններ ենթադրող քաղաքականությունից՝ Տեր-Պետրոսյանը իր քաղաքականությունը սևեռեց իրենց պատմական հայրենիքում Ղարաբաղի հայերի շարունակական անվտանգ և ազատ գոյությունն ապահովելու խնդրին: Բանակցային ռազմավարության հիմնական բանաձևը պետք է լիներ տարածքների վերադարձը հանուն խաղաղության: Մյուս կողմից, Լեռնային Ղարաբաղն ավելի ու ավելի էր հակվում «տարածքներ կարգավիճակի դիմաց» բանաձևի կողմը, փաստարկելով, որ գրավյալ տարածքներն իր ձեռքին ամենահզոր խաղաթուղթն է՝ Ադրբեջանից կատարելապես «բաժանվելու» իր նպատակն իրագործելու ճանապարհին՝ եթե ոչ հանուն Հայաստանի հետ միավորման, ապա գոնե՝ Ադրբեջանից անկախության: Բաքուն, մյուս կողմից, համոզված էր, որ ժամանակը և նավթային դիվանագիտության ու տարածքային ամբողջականության խնդրում արտաքին աջակցության համակցումը Ղարաբաղը կվերադարձնեն իրենց: Այսպիսով, փուլային տարբերակն ըստ էության մերժվեց թե՛ Լեռնային Ղարաբաղի, թե՛ Ադրբեջանի կողմից, և բանակցությունները վերածվեցին անարդյունք վարժանքների:

## Բաց թողնված հնարավորություններ

Այնուամենայնիվ, թե՛ փաթեթային և թե՛ փուլային մոտեցումները կարող էին արդյունավետ լինել և մոտ էին հաջողությանը: Ուղղակի և փակ բանակցությունները, որոնք Հայաստանի նախաձեռնությամբ 1995 թվականի դեկտեմբերից 1996 թվականի նոյեմբեր ընկած ժամանակահատվածում կայացան նախագահներ Ալիևի և Տեր-Պետրոսյանի անձնական և լիազոր ներկայացուցիչների միջև, լուրջ առաջընթաց արձանագրեցին և կարող էին հասնել գագաթնակետին՝ լուծելով կարգավիճակի հարցը, եթե Ադրբեջանը չորոշեր, որ բանակցությունների ընթացքում իր կատարած զիջումների կարիքը չի լինի, եթե 1996 թվականի դեկտեմբերին ԵԱՀԿ Լիսաբոնի գագաթնաժողովում ինքը մեջտեղ բերի նավթային դիվանագիտության իր խաղաքարտը: Ալիևը համոզված էր, որ Ադրբեջանի կողմից նավթի որոնման կոնցեսիաներ ստացած երկրներին հնարավոր կլինի համոզել ճնշում գործադրել Հայաստանի վրա, որպեսզի վերջինս, ի հատուցում ինքնավարության ու անվտանգության մշուշոտ խոստումների, ընդունի Ղարաբաղն իբրև Ադրբեջանի մաս: Գագաթաժողովի ընթացքում կատարած այդ խուսանավումը, որի վրա վետո դրեց Հայաստանը, վերացրեց կարգավիճակի վերաբերյալ մինչ այդ կայացած ամենաբովանդակային բանակցությունների՝ փոխհամաձայնեցված լուծման հասնելու հնարավորությունը:

Փակ բանակցությունների որոշ տարրեր, այդուհանդերձ, ներառվեցին Մինսկի խմբի՝ «փաթեթային լուծման» իրար հաջորդած առաջարկներում, որոնք կողմերին ներկայացվեցին 1997 թվականի մայիս և հունիս ամիսներին: Ղարաբաղի ղեկավարությունը միանգամից դրանք մերժեց, Ադրբեջանը տատանվում էր, մինչդեռ Հայաստանը դրանք որպես հիմք ընդունեց հետագա բանակցությունների համար, սակայն լուրջ վերապահումներով:

Արդյունքը 1997 թվականի սեպտեմբերին Մինսկի խմբի ներկայացրած առաջարկն էր՝ հիմնված փուլային մոտեցման վրա։ Այն Լաչինի միջանցքի և կարգավիճակի հարցերը թողնում էր կարգավորվելու ապագայում, սակայն լուծումներ էր առաջարկում գրավյալ տարածքների, շրջափակման և փախստականների հարցերի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկում էր խաղաղության համաձայնագիր ու իրավիճակի կարգավորում դրա հիման վրա։ Հայաստանն ու Ադրբեջանն այս առաջարկն ընդունեցին լուրջ վերապահումներով, բայց Ղարաբաղի իշխանությունները և Տեր-Պետրոսյանի վարչակարգի մի քանի ազդեցիկ անդամներ մերժեցին այն՝ պնդելով փաթեթային լուծման վրա։ Այս ներքին ընդդիմությունը հանգեցրեց Տեր-Պետրոսյանի հրաժարականին և 1998 թվականի ապրիլին Լեռնային Ղարաբաղի նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանի՝ նախագահական պաշտոնին հասնելուն։ Ընդդիմանալով1997 թվականի սեպտեմբերի առաջարկը որպես բանակցությունների հիմք ընդունելուն՝ Քոչարյանն ու իր դաշնակիցները համոզված էին, թե հայկական կողմն այնպիսի դիրքում է, որ կարող է իրեն թույլ տալ պնդել Ղարաբաղի անկախացման կամ Հայաստանի հետ վերամիավորման հնարավորություն ընձեռող փաթեթային տարբերակի վրա։ Նրանք չէին կիսում Տեր-Պետրոսյանի՝ հակամարտությունը լուծելու շտապողականությունը՝ պակաս կարևորություն տալով շրջափակման, որպես տնտեսական զարգացումն արգելակող գործոնի, ազդեցությանը։ Փոխարենը, նրանք Տեր-Պետրոսյանին մեղադրում էին այն բանում, որ նա չկարողացավ ամբողջությամբ օգտագործել սփյուռքի ներուժը կամ առավելագույնի հասցնել երկրի «ոգեղեն» հնարավորությունները, ինչպիսիք են պատմական արդարությունը վերականգնելու համընդհանուր տենչը, հղումներն այդ անարդարություններից բխող սեփական ճշմարտացիության ընդհանուր գիտակցությանը և քաղաքական տարաձայնությունները համահարթեցնող հայրենասիրական կիրքը։

1997 թվականի սեպտեմբերի առաջարկից գրեթե մեկ տարի անց Մինսկի խումբը ներկայացրեց փաթեթային լուծման մեկ այլ առաջարկ՝ հիմնված «ընդհանուր պետության» բանաձևի վրա, որը կիրառվել էր այլ հակամարտությունների պարագայում։ Առաջարկն արտացոլում էր Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի միջև «հորիզոնական» հարաբերությունների սկզբունքը՝ ինքնավարության հայեցակարգի դեպքում ենթադրվող ուղղահայաց հարաբերությունների փոխարեն։ Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը որոշ լուրջ վերապահումներով ընդունեցին առաջարկը։ Ադրբեջանի համար, ըստ հաղորդումների, փաստաթուղթը մշակման փուլում ընդունելի էր, սակայն ի վերջո մերժվեց։ 1999 թվականի ապրիլից բանակցությունները տեղափոխվեցին նախագահների մակարդակ՝ Մինսկի խմբի համանախագահներին վերածելով հիմնականում դիտորդների։ 1999 թվականի ամռանը բանակցությունների համար հիմք դարձավ մի նախագիծ, որի էությունը լավագույնս արտացոլում է «տարածքների փոխանակություն» ձևակերպումը։ Քոչարյանը պահանջել էր, որպեսզի Լեռնային Ղարաբաղը կցվի Հայաստանին՝ փոխարենը համաձայնելով Ալիևի պատասխան պահանջին՝ Ադրբեջանի վերահսկողության տակ առնել հարավային Հայաստանի Մեղրիի տարածաշրջանը, որը բաժանում է Նախիջևանի էքսկլավն Ադրբեջանի մնացյալ տարածքից։ Այս անհավանական և ժողովրդական լայն զանգվածների համար անընդունելի բանաձևի մանրամասներն սկսեցին բացահայտվել՝ Քոչարյանի փոփոխվող դիրքորոշմանը զուգահեռ։ Այնուհետև նա առաջարկեց Մեղրին իբրև տարանցիկ ուղի օգտագործելու իրավունք տալ Արբեջանին՝ վիճարկվող տարածքի նկատմամբ լիակատար ինքնիշխանություն ստանալու պայմանով։ Ալիևը բավարար գլխացավանքի մեջ էր ընկել փոխանակման նախնական նախագիծն Ադրբեջանում առաջ մղելիս և հակված չէր ընդունել վերանայված տարբերակը։ ԱՄՆ կողմից այդ բանաձևը կյանքի կոչելու վերջին փորձը, որն արվեց 2000 թվականին երկու նախագահների՝ Քի Վեսթում (Ֆլորիդա նահանգ) կայացած հանդիպման ժամանակ, որևէ արդյունք չտվեց։

## Վերադարձ հիմքերի՞ն

2003 թվականից սկսած բանակցություններն ընթացել են Հայաստանի և Ադրբեջանի նախագահների միջև՝ զուգակցվելով երկու նախագահների հազվադեպ հանդիպումներով։ Ադրբեջանը վերադարձել է փուլային մոտեցմանը՝ շարունակելով հավատալ, որ ժամանակն աշխատում է իր օգտին, հատկապես Բաքու-Ջեյհան նավթատարի շահագործումից հետո։ Հայաստանը դժկամորեն հետևեց Ադրբեջանի օրինակին, թեպետ Երևանը կգերադասեր, որ առաջին փուլի ցանկացած համաձայնություն թեկուզ որևէ հղում պարունակի առ այն, թե ինչ կերպ պետք է ապագայում որոշվի կարգավիճակի հարցը։ Քի Վեսթի հանդիպումից հետո Մինսկի համանախագահները որևէ սեփական առաջարկ չեն մշակել, և նրանց մասնակցությունը կարծես թե վերածվել է ձևականության։ Բավարարված լինելով առկա իրավիճակով, երբ ռազմական գործողությունները չեն վերսկսվում, Ռուսաստանը, ԱՄՆ-ն և Ֆրանսիան իրենց տեսանկյունից շատ ավելի հրատապ հարցերի մի երկար շարան ունեն լուծելու։ Մինչդեռ Ստեփանակերտը չի մասնակցել երկկողմ քննարկումներին։

Անցնող ժամանակը հակամարտության կողմերից ոչ մեկի համար էլ բարեհաճ չի եղել։ Որքան ավելի շատ ժամանակ է անցնում, այնքան ավելի է դժվարանում գրավյալ տարածքները վերադարձնելը։ Տնտեսական աճը Հայաստանում, Ադրբեջանում և Լեռնային Ղարաբաղում չի անդրադարձել բնակչության մեծամասնության կենսապայմանների բարելավման վրա։ Հակառակ Հայաստանի ակնկալիքների՝ միջազգային հանրությունը հավանություն չտվեց ստատուս քվոյին, միևնույն ժամանակ Ադրբեջանը ևս հուսախաբված է, քանի որ այդ նույն հանրությունը հրաժարվում է պարտադրել Հայաստանին՝ հետ քաշել զորքերը, թեպետ այս հարցում ունի պաշտոնական տեսակետ և իրավական փաստարկներ։ Նմանապես, մինչ սփյուռքը շարունակել է քաղաքական և տնտեսական աջակցություն ցուցաբերել Հայաստանին, այն առանձնապես մեծ ազդեցություն չի ունեցել գերտերությունների դիրքորոշումների վրա, և սփյուռքն ավելի ու ավելի է իր ուշադրությունը սևեռել ցեղասպանության ճանաչման հարցին։

Վերջին հաշվով, բանակցությունների միջոցով ձեռքբերված վերջնական լուծումը կախված է երեք գործոններից. լուծում գտնելու հրատապության աստիճանի՝ հակամարտության մասնակիցների ընկալումից, նրանց ղեկավարների ունեցած քաղաքական կապիտալից, որպեսզի փոխհամաձայնեցված լուծման համար ապահովեն աջակցություն այնպիսի հասարակություններում, որոնք սնվել են կոշտ գիծ քարոզող դիրքորոշումներով, ինչպես նաև տարածաշրջանային ու միջազգային դերակատարների՝ նման լուծմանն աջակցելու համատեղ ու վճռական ջանքերից։ Բանակցությունների միջոցով հակամարտության լուծմանը երկու այլընտրանք կա՝ ռազմական գործողությունների վերսկսում կամ գերտերությունների կողմից ուժի գործադրմամբ պարտադրված լուծում, որոնք չեն կարող գրավիչ լինել կողմերից և ոչ մեկի համար։

# Խոչընդոտներ կարգավորման ճանապարհին.

## ադրբեջանական տեսակետ

**Թոֆիկ Զուլֆուգարով**

***Նախագահներ Հեյդար Ալիևը (ձախից) և Ռոբերտ Քոչարյանը 1999 թվականի ԵԱՀԿ գագաթաժողովում:***

*Աղբյուրը՝ Զոյս*

Վաղ 90-ականների Ադրբեջանի ձգտումը՝ ապահովել Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդաժողովի (ԵԱՀԽ) միջազգային միջնորդությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացում, պայմանավորված էր մի շարք գործոններով: Հույս կար, որ բանակցությունների և ձեռք բերված համաձայնությունների իրագործման փուլում միջազգային մասնակցություն ապահովելու շնորհիվ կխուսափենք այն հնարավոր մեղադրանքներից, թե ադրբեջանական կողմը կողմնակալ մոտեցում է ցուցաբերում հակամարտության հիմքում ընկած խնդիրների լուծման հանդեպ և, միևնույն ժամանակ, կփոխհատուցենք Ադրբեջանի ռազմական և վարչական ռեսուրսների պակասը՝ ուղղված հայկական հարձակողականությանը դիմագրավելուն: Ավելին, հույս կար, որ արևմտյան տերությունները կչեզոքացնեին Ռուսաստանի կողմից Հայաստանին ցուցաբերվող քաղաքական և ռազմական աջակցության գործոնը: ԵԱՀԽ-ի սկզբունքներն առաջնային են համարում անդամ երկրների տարածքային ամբողջականության պահպանումը, իսկ Ադրբեջանում հայկական փոքրամասնության խնդրի լուծման համար մոդել մշակելիս կարող էին կիրառվել ինքնավարությունների եվրոպական փորձը և չափանիշները: Եւ վերջապես, հույս կար (պարզվեց՝ անհիմն), որ ԵԱՀԽ-ի էթիկական և բարոյական սկզբունքների օգնությամբ հնարավոր կլինի վերջ տալ հակամարտության գոտում ադրբեջանցիների նկատմամբ իրականացվող էթնիկական զտումներին:

## 1992-1994: բանակցային սեղանի և ճակատամարտի դաշտի միջև

Տարբեր մակարդակներում տեղի ունեցած քննարկումների արդյունքում 1992 թվականի մարտին ԵԱՀԽ Նախարարների խորհուրդն ընդունեց մի շարք բանաձևեր, որոնք կոչ էին անում անհապաղ դադարեցնել բոլոր ռազմական գործողությունները և հիմքեր ստեղծել Լեռնային Ղարաբաղի ապագա կարգավիճակի շուրջ բանակցությունների համար: Այս որոշումը դարձավ Մինսկում 1992 թվականի մայիսին նախատեսված համաժողովի իրավական հիմքը կամ մանդատը: Համաժողովին պետք է մասնակցեին ԵԱՀԽ-ի տասնմեկ անդամներ, ներառյալ Ադրբեջանը և Հայաստանը:

Լեռնային Ղարաբաղի ադրբեջանական և հայկական համայնքները համաժողովին պետք է մասնակցեին որպես «շահագրգիռ կողմեր»: Ադրբեջանը համաձայնեց այս ձևաչափին՝ ելնելով այն նկատառումից, որ թեպետ բանակցություններում պետք չէր և հնարավոր չէր Ղարաբաղի հայերի կարգավիճակը հավասարեցնել Մինսկի համաժողովին մասնակից պետությունների կարգավիճակին, նրանց ակտիվ ներգրավումն էական դեր ուներ: Ադրբեջանցի բանակցողները մինչ օրս էլ պաշտպանում են այս մոտեցումը, հակառակ հայերի և միջազգային որոշ դիտորդների պնդումների, թե Ադրբեջանը հրաժարվում է բանակցել «Լեռնային Ղարաբաղի» հետ: Սա ընդամենը քարոզչություն է՝ օրինականացնելու (դեռևս բանակցային փուլում) Ղարաբաղի հայերի՝ անկախ պետություն ունենալու նկրտումները և Ղարաբաղի բնակչության միատարր կազմությունը, որին նրանք հասել են էթնիկ զտումների ճանապարհով:

1992 թվականի առաջին կեսին ԵԱՀԽ-ի կողմից միջնորդության առաջին ջանքերին զուգընթաց շարունակվում էին ինտենսիվ բախումները պատերազմի դաշտում: Հայկական զինուժի հաջողու-

**Թոֆիկ Զուլֆուգարովը 1998-99 թվականներին զբաղեցրել է Ադրբեջանի արտաքին գործերի նախարարի, իսկ 1994-98-ին՝ արտաքին գործերի փոխնախարարի պաշտոնը: Նա անմիջական մասնակցություն է ունեցել հայ-ադրբեջանական բանակցություններին, իսկ այսօր Ադրբեջանի դեսպանն է Լատվիայում:**



թյունները՝ Շուշա քաղաքի և Լաչինի շրջանի գրավումը և Խոջալու քաղաքի ազերի բնակչության ոչնչացումը, Լեռնային Ղարաբաղից ազերիների լիակատար էթնիկական զտման պատճառ հանդիսացան: Այս զարգացումները խարխլեցին ընթացող բանակցությունների հիմքը, քանի որ Շուշայի և Լաչինի գրավման հետևանքները դարձան Մինսկի համաժողովի քննարկման առաջնահերթ հարցը, որի լուծումն ավելի հրատապ էր, քան Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի որոշումը: Այս կապակցությամբ ԱՄՆ պետքարտուղար Ուորեն Քրիստոֆերի առաջարկով որոշվեց Հռոմում անցկացնել համաժողովին նախորդող բանակցությունների և արտակարգ նախապատրաստական հանդիպումների մի շարք: Միջնորդներն առաջ քաշեցին այսպես կոչված «Արտակարգ միջոցառումների ժամանակացույցը», որը ներառում էր որոշակի քայլեր՝ ուղղված Շուշայի և Լաչինի շրջաններից հայկական զորքերի դուրսբերմանը և ազերի բնակչության վերադարձին:

Մինչև 1996 թվականը ԵԱՀԽ-ի (կամ ԵԱՀԿ-ի, երբ 1994 թվականի դեկտեմբերին «խորհուրդը» փոխակերպվեց «կազմակերպության») որդեգրած մոտեցման հիմքում այն տրամաբանությունն էր, որ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը կարող է քննարկվել միայն ռազմական գործողությունների հետևանքների վերացումից և վերադարձող բնակչության անվտանգությունն ապահովելու նպատակով միջազգային խաղաղապահ ուժերի տեղակայումից հետո: Այնուհանդերձ, ռազմական գործողությունները կրկին հանկարծակի բերեցին միջնորդական առաքելությանը: Հայաստանը հաջողությամբ օգտվեց քաղաքական անկայունությունից ու 1993 թվականին Ադրբեջանում տեղի ունեցած իշխանափոխությունից և զավթեց Լեռնային Ղարաբաղի շրջակա տարածքները՝ զտելով դրանք ազերի բնակչությունից: Հանգամանքների նման դասավորության լույսի ներքո բանակցային ջանքերը դարձան ապարդյուն: Միայն 1993 թվականի աշնան և ձմռան ամիսներին հայկական ռազմական առաջխաղացումը վերջապես իրական դիմադրության հանդիպեց ադրբեջանական ուժերի կողմից: Մարտական գործողությունների լարվածությունը և մարդկային ու ռազմական տեխնիկայի զգալի կորուստները մի տեսակ նախազգուշացում դարձան Հայաստանի քաղաքական էլիտայի համար առ այն, որ նրանք ստիպված են լինելու բարձր գին վճարել իրենց զավթողական ռազմավարությունը շարունակելու դեպքում: Այսպիսով, Ռուսաստանի ակտիվ միջամտության արդյունքում միջնորդների՝ զինադադարի համաձայնության հասնելուն ուղղված նախկին անհաջող փորձերը 1994 թվականի մայիսին տվեցին իրենց պտուղները:

Գրեթե նույն պահից հակամարտության ձևափոխման գործընթացն սկսեց զարգանալ երկու ուղղությամբ: Առաջին ուղղությունը կենտրոնանում էր միջազգային մասնակցության կառուցվածքի ու ձևերի վրա, մասնավորապես՝ միջազգային խաղաղապահ և դիտորդական առաքելությունների բնույթի և պատասխանատվության: Երկրորդը սևեռվում էր հայ-ադրբեջանական հակամարտության հետ ուղղակի առնչություն ունեցող խնդիրների և հակամարտության լուծման առաջարկների վրա:

## Միջնորդների մրցակցող օրակարգերը

Ադրբեջանցի փորձագետներից շատերը վստահ են, որ և՛ Ռուսաստանը, և՛ արևմտյան տերությունները Ղարաբաղում խաղաղապահ գործողությունների նկատմամբ վերահսկողության հաստատումը դիտում են որպես ողջ տարածաշրջանում ազդեցության հաստատման կարևորագույն միջոց: Տարածաշրջանում գերիշխանության ձգտող տերությունների միջև այս հարցի շուրջ համաձայնեցված դիրքորոշման բացակայությունը բանակցային գործընթացի առաջընթացի գլխավոր խոչընդոտներից մեկն է:

Չնայած Ռուսաստանը կիսում էր Մինսկի խմբի համանախագահությունը Ֆինլանդիայի հետ՝ ընդհուպ մինչև 1995 թվականը այն փորձում էր մենաշնորհային իրավունք նվաճել խաղաղ կարգավորման գործընթացը վարելու, միջնորդելու և վերահսկելու հարցերում: Ադրբեջանցի բանակցողների տեսանկյունից, Ռուսաստանի համար բովանդակային հարցերի քննարկումը պակաս կարևոր էր, քան միջնորդության միակողմանի ձևաչափի պահպանումը: Տպավորություն էր ստեղծվում, թե միջնորդ Վլադիմիր Կազիմիրովի հիմնական նպատակը բանակցությունների քառակողմ ձևաչափը (որն ընդգրկում էր Հայաստանը, Ադրբեջանը և Լեռնային Ղարաբաղի հայերին և ադրբեջանցիներին՝ որպես շահագրգիռ կողմեր), եռակողմ ձևաչափով փոխարինելն էր (դա ենթադրում էր ընդգրկել Հայաստանը, Ադրբեջանը և Լեռնային Ղարաբաղի հայերին):

Ռուսաստանի շահերի երկրորդ ուղղությունը ԵԱՀԽ-ին պարտադրելն էր ճանաչել իր «հատուկ դերը» հակամարտության գոտում խաղաղապահ ուժերի կազմավորման, խաղաղապահ գործողության իրականացման և վերահսկման գործում: Ռուսաստանի կողմից առաջարկված Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) խաղաղապահ նախաձեռնությունն Ադրբեջանի կողմից ընկալվում էր որպես քողարկված, զուտ ռուսական միակողմանի նախաձեռնություն: Ավելին, Ռուսաստանը ջանում էր ստանձնել Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի երաշխավորի դերը՝ պնդելով, որ հա-

մաձայնության նախագիծը ներառի Ռուսաստանին այդ գործառույթով օժտող դրույթ: Արևմտյան տերությունները մերժեցին Ռուսաստանի առաջարկները և պաշտպանեցին Ադրբեջանի դիրքորոշումն առ այն, որ քննարկման ենթակա է միայն ԵԱՀԽ-ի հովանու ներքո բազմազգ խաղաղապահ գործողությունների նախաձեռնումը:

Ռուսաստանի և Հայաստանի՝ որպես մի կողմ, և Ադրբեջանի և արևմտյան տերությունների՝ որպես մյուս կողմ, դիրքորոշումների միջև հակասություններն իրենց գագաթնակետին հասան 1994 թվականի վերջին՝ ԵԱՀԿ Բուդապեշտի գագաթաժողովի նախօրեին: Գագաթաժողովից առաջ Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևը մերժեց Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինի հրավերը ժամանել Մոսկվա՝ առաջիկա գագաթաժողովի օրակարգում դրված խաղաղապահ գործողությունների կառավարումը Ռուսաստանին կամ ԱՊՀ-ին վերապահելու հարցի շուրջ միասնական դիրքորոշում ձևավորելու համար: Գագաթաժողովի մեկնարկից առաջ, արևմտյան երկրներն արդեն իսկ հստակեցրել էին իրենց դիրքորոշումներն այս հարցում՝ խաղաղապահ գործողությունները կարող են լինել բացառապես որպես բազմազգ նախաձեռնություն՝ ԵԱՀԿ-ի հովանու ներքո: Այս սկզբունքային դիրքորոշումն արտացոլվեց գագաթաժողովի հատուկ բանաձևում: Ռուսաստանի ֆորմալ համաձայնության և նման կարգի որևէ նախաձեռնության հանդեպ նրա վճռական անհանդուրժողականության միջև առկա հակասությունը դրդեց Ռուսաստանին այս հարցի շուրջ դիվանագիտական նոր մոտեցում որդեգրել: Վերջինիս էությունը կայանում էր հետևյալում՝ որպես խաղաղապահ գործողությունների նախաձեռնման նախապայման, նախևառաջ Հայաստանը և Ադրբեջանը պետք է խաղաղության համաձայնություն կնքեն: Փաստորեն, նման համաձայնության բացակայության պայմաններում բազմազգ խաղաղապահ գործողություններ չեն կարող ձեռնարկվել: Այն պարզ պատճառով, որ զինադադարի ներկա պայմանները բացառում են Հայաստանի նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու և կողմերին խաղաղություն պարտադրելու հնարավորությունը, «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրավիճակը շարունակվում է արդեն տասնմեկ տարի:

## Կարգավորմանն ուղղված ջանքեր. «կարգավիճակ տարածքի դիմաց» փակուղին

1996 թվականից սկսած Հայաստանը որդեգրեց առավել կոշտ դիրքորոշում՝ պնդելով, որ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի և Ղարաբաղին հարող գրավյալ տարածքների ազատման հարցերը լուծվեն միաժամանակ: Այս դիրքորոշումն իր արտահայտությունը ստացավ «կարգավիճակ տարածքի դիմաց» բանաձևում. պատերազմի արդյունքում զավթված ադրբեջանական տարածքների վերադարձ՝ Լեռնային Ղարաբաղի քաղաքական կարգավիճակի վերջնական հստակեցման դիմաց: Այս դիրքորոշումը ոչ միայն արմատապես փոփոխեց միջնորդների կողմից 1992 թվականից ի վեր որդեգրված մոտեցումը, այլ նաև հիմնովին հակասում էր ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերի տառին ու ոգուն: Ցավոք, միջնորդները չդրսևորեցին անհրաժեշտ սկզբունքայնություն՝ համակերպվելով այս ապակառուցողական առաջարկի հետ և, փաստորեն, բանակցային գործընթացը տարան փակուղի, որից չի հաջողվում դուրս գալ մինչ օրս:

1996 թվականի մարտին Շվեյցարիայի արտաքին գործերի նախարար Ֆլավիո Կոտտիի և նրա ռուս գործընկեր Եվգենի Պրիմակովի միջև քննարկվեց նախնական համաձայնության տեքստում Լեռնային Ղարաբաղի կարգավիճակին վերաբերող դրույթներ ներառելու հնարավորությունը: Նրանց հանդիպման արդյունքում Մինսկի խմբում բանակցությունների առարկա դարձան Լեռնային Ղարաբաղի կարգավիճակն  ընդհանուր գծերով սահմանելու նկատմամբ կողմերի մոտեցումները: Պետք է նշել, որ թե՛ Ռուսաստանը և թե՛ Արևմուտքն այն սկզբունքի կողմնակից էին, որ դիտարկվող ցանկացած մոդել անպայմանորեն պետք է ապահովի Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: Այս միասնական մոտեցումը, որն անվերապահորեն վայելում էր Ադրբեջանի աջակցությունը, արտացոլվեց 1996 թվականի դեկտեմբերին ԵԱՀԿ Լիսաբոնի գագաթաժողովում կազմակերպության գործող նախագահի հայտարարության մեջ: Մինչդեռ դրա ամրագրումը նման կարևորություն ունեցող փաստաթղթում առաջ բերեց հայկական կողմի վրդովմունքը, քանի որ այն հստակորեն ցույց տվեց, որ միջազգային հանրությունը չի պատրաստվում մի կողմ քաշվել և ականատես լինել, թե ինչպես է Հայաստանը զավթում Ադրբեջանի տարածքները:

Վաղ 1997 թվականին որոշվեց ընդլայնել Մինսկի խմբի նախագահության կազմը, և այդ ժամանակից ի վեր համանախագահությունը բաժանվեց Ռուսաստանի, Ֆրանսիայի և Միացյալ Նահանգների միջև: Ադրբեջանն ակտիվ լոբբիստական գործունեություն ծավալեց Միացյալ Նահանգներին Մինսկի խմբի համանախագահների կազմում ընդգրկելու ուղղությամբ՝ ի հակակշիռ Ռուսաստանի և մասամբ Ֆրանսիայի, որն ադրբեջանական հասարակության կողմից ընկալվում է որպես Հայաստանի կողմնակից: Ցավոք, Գերմանիային ընդգրկելու Ադրբեջանի առաջարկը չստացավ Հայաստանի աջակցությունը:

Մինսկի խմբի համանախագահության կազմն ընդլայնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, համանախագահները մշակեցին հակամարտության կարգավորման երկու առաջարկներ, որոնք բանակցությունների համար որպես հիմք ծառայելու տեսանկյունից արժանացան Ադրբեջանի հավանությանը: Այնուամենայնիվ, այդ հիմքով բանակցությունները վերսկսելուն համաձայնություն տալով հանդերձ, Բաքուն շեշտում էր, որ կարգավիճակի հարցը Լեռնային Ղարաբաղին հարակից գրավյալ տարածքների վերադարձման պայմաններին վերաբերող փաստաթղթերի մեջ ներառելով՝ միջնորդները խաղաղության հաստատման գործընթացը տանում են փակուղի:

Հայկական կողմը մերժեց երկու առաջարկներն էլ և համանախագահներին կոչ արեց մշակել «լուծման փաթեթային տարբերակ», որի շրջանակներում նախ՝ Լեռնային Ղարաբաղին կշնորհվեր անկախ պետության կարգավիճակ, որից հետո հնարավոր կդառնար ազատել Լեռնային Ղարաբաղին հարող գրավյալ տարածքների մի մասը: Սա ընդմիջեց խաղաղ կարգավորման գործընթացը մինչև 1998 թվականի նոյեմբեր ամիսը, երբ համանախագահները առաջ քաշեցին ամբողջովին նոր հայեցակարգի վրա հիմնված մի երրորդ առաջարկ: Ընդհանուր գծերով նման լինելով նախորդ երկու առաջարկներին՝ վերջինս ենթադրում էր նաև «ընդհանուր պետություն» ստեղծելու հնարավորություն: Սակայն այդ փաստաթղթում ինտեգրումը սահմանվում էր ոչ թե որպես Ղարաբաղի վերաինտեգրում Ադրբեջանի կազմում դեռևս քննարկման ենթակա ինչ-որ մեխա-

նիզմների միջոցով, այլ որպես միջազգային իրավունքի երկու հավասարազոր ինքնիշխան սուբյեկտների ինտեգրում: Գոյություն ունեցող տեսակետը, թե նշված առաջարկությունը սկզբում խանդավառությամբ է ընդունվել Ադրբեջանում, թյուր է: Բանակցային գործընթացում ընդգրկված մեր գործընկերներից ոմանք Ադրբեջանի պաշտոնական շրջանակների կողմից պատասխանի բացակայությունը դրական նշան էին համարել, մինչդեռ իրականում ցանկացած առաջարկ, որը ներառում է Ղարաբաղի ինքնիշխան կարգավիճակի սահմանում, ի սկզբանե անընդունելի է Ադրբեջանի համար:

Այնուհետև Մինսկի խմբի համանախագահներն առաջարկեցին ստեղծել բանակցային նոր ձևաչափ՝ Հայաստանի և Ադրբեջանի նախագահների միջև ուղղակի հանդիպումների ձևով: Նման հանդիպումների նպատակն էր հնարավորություն տալ կողմերին մշակելու հակամարտության կարգավորման փոխադարձ ընդունելի մի մոդել, սակայն, չնայած որ հանդիպումները մինչօրս էլ շարունակվում են, նախանշված նպատակն այդպես էլ չի հաջողվել իրագործել: Ադրբեջանն այս իրավիճակը համարում է Հայաստանի կողմից որդեգրված այն դիրքորոշման արդյունք, որի մասին իշխանության գալուց անմիջապես հետո հայտարարեց Ռոբերտ Քոչարյանը: Դրա հիմնական բաղադրիչներն են. Լեռնային Ղարաբաղին հարող տարածքների ազատումը հնարավոր է Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչումից հետո միայն, և նախկին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի և Հայաստանի միջև գտնվող տարածքը պետք է անցնի Հայաստանին:

Այս ռազմավարությունը հստակ մի նպատակ է հետապնդում՝ հարկադրել Ադրբեջանին անձնատուր լինի, ինչն, ըստ հայկական կողմի, կլինի իրենց կողմից տարած ռազմական հաղթանակի տրամաբանական ավարտը:

## Չորսի հրովարտակը

Տարածքային պահանջների լույսի ներքո հավանաբար մշակվեց այսպես կոչված «տարածքների փոխանակում» առաջարկը: Դրա մանրամասները գաղտնի էին պահվում, և նույնիսկ այսօր դժվար է ճշգրտորեն ասել, թե ինչ էր պարունակում այն, և ով էր դրա հեղինակը: Այսուհանդերձ, տողերիս հեղինակն Ադրբեջանի արտաքին գործերի նախարարի պաշտոնից հրաժարական տվեց ի նշան բողոքի՝ ընդդեմ նման առաջարկի անգամ քննարկման հնարավորության: Առաջարկի վերաբերյալ այն կցկտուր տեղեկատվությունը, որ հասնում էր ադրբեջանական հասարակությանը, բողոքի ալիք բարձրացրեց և վերջիվերջո հանգեցրեց այսպես կոչված «Չորսի հրովարտակի» ընդունմանը: Նշված փաստաթուղթը մշակվեց և հրապարակվեց մի խումբ մարդկանց կողմից, որոնք ավելի շուտ հայտնի հասարակական, քան քաղաքական գործիչներ էին (այս հոդվածի հեղինակը փաստաթղթի չորս նախաձեռնողներից մեկն էր, բայց այն ժամանակ արդեն հեռացել էր պետական պաշտոնից), հետևաբար այն ստացավ հարյուրավոր քաղաքական և հասարակական կազմակերպությունների աջակցությունը: «Հրովարտակը» նախանշելով հեղինակների տեսակետն այն մասին, թե ինչպիսին պետք է լինի Ադրբեջանի կառավարության մոտեցումը ղարաբաղյան հակամարտության կարգավորման խնդրում՝ դարձավ կառավարության կողմից վարվող ղարաբաղյան քաղաքականության նկատմամբ մի յուրօրինակ «մինիհանրաքվե»: Դրա հիմնական դրույթները հետևյալն էին.

- ի լրումն քաղաքական միջոցների, ռազմական ուժի գործադրման թույլատրելիության ընդունումը՝ զավթողականությանը հակազդելու և երկրի տարածքային ամբողջականությունը վերականգնելու նպատակով,
- Ղարաբաղի ողջ բնակչությանը՝ թե՛ հայերին և թե՛ ադրբեջանցիներին, լայն ինքնավարության տրամադրման հնարավորություն,
- հակամարտության կարգավորման փուլային մեթոդի որդեգրման անհրաժեշտություն, որի դեպքում Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցի լուծումը հնարավոր է միայն հարակից գրավյալ տարածքների ազատումից հետո. միայն դրանից հետո կարելի կլինի որոշել Ադրբեջանի կազմում Լեռնային Ղարաբաղին տրվելիք լայն ինքնավարության աստիճանն ու հատկանիշները,
- միջազգային հանրության լայն մասնակցության անհրաժեշտություն բանակցային գործընթացի բոլոր փուլերում և մակարդակներում, ինչպես նաև ձեռք բերված համաձայնությունների իրագործման և հետպատերազմյան վերականգնման խնդիրներում:

Ադրբեջանի կառավարությունը հետագայում «Չորսի հրովարտակն» օգտագործեց որպես վկայություն այն բանի, որ ադրբեջանական հասարակությունը պատրաստ չէ զիջումների: Գործնականում, այս փաստաթուղթը սահմանեց ադրբեջանական հասարակության համար ընդունելի փոխհամաձայնության չափորոշիչները, որոնք Ալիևն ակնհայտորեն գերազանցել էր Քոչարյանի հետ բանակցություններում:

## Հեռանկարներ

Ալիևի հիվանդությունն ու մահը, դրան հաջորդած իշխանափոխությունը Ադրբեջանում դանդաղեցրեցին հակամարտության կարգավորման գործընթացը: Իլհամ Ալիևի իշխանության գալուց հետո հանդիպումները երկու երկրների նախագահների միջև վերականգնվեցին և համալրվեցին արտաքին գործերի նախարարների միջև հանդիպումներով:

2005 թվականի օգոստոսին համանախագահներն առաջ քաշեցին «միջանկյալ կարգավիճակ» կոչվող մի նոր հայեցակարգ: Լեռնային Ղարաբաղին հարող որոշ տարածքներ կարող էին վերադարձվել՝ ի ճանաչում Ղարաբաղի ներկա *դե ֆակտո* իրավիճակի, մինչև որ մարզի վերջնական կարգավիճակը կորոշվեր միջազգային միջնորդների հովանու ներքո ընթացող բանակցությունների շրջանակներում: Այս առաջարկը մի փորձ էր դուրս գալու կարգավորման երկտարբերակ («փուլափաթեթային») մոդելի փակուղուց: Երկու կողմերի փորձագետները դրական վերաբերմունք են արտահայտում «միջանկյալ կարգավիճակի» մոդելի նկատմամբ և գնահատում այն որպես մի եղանակ՝ հաղթահարելու «փաթեթայինն» ընդդեմ «փուլայինի» երկվությունը, որը բնորոշ էր ուշ 1990-ականներին, որը սակայն արդեն իրեն ամբողջությամբ սպառել է: Այնուամենայնիվ, նշաններ կան, որ հայկական կողմի բանակցողները փորձել են արդեն նախնական համաձայնության մեջ ներառել Լեռնային Ղարաբաղի՝ որպես անկախ պետության կարգավիճակը կանխորոշող դրույթներ: Ըստ այդմ, Երևանը կրկին անգամ ձգտում է գրավյալ տարածքների վերադարձը փոխանակել Լեռնային Ղարաբաղի անկախ կարգավիճակի հետ: Քանի դեռ Երևանը չի հրաժարվել իր այս ռազմավարությունից, բանակցությունների հաջողության հասնելու հնարավորությունը փոքր է, և հետևաբար հայ-ադրբեջանական հակամարտությունից բխող լարվածությունը կպահպանվի:

# Եզակի փորձ. հրադադարի ինքնակարգավորվող գիծ

**Օկսանա Անտոնենկո**

Ադրբեջանը և *դե ֆակտո* հայկական վերահսկողության տակ գտնվող Լեռնային Ղարաբաղը բաժանող հրադադարի կամ շփման գիծը (ՇԳ) հակամարտող երկրների կողմից պահպանվում է ավելի քան մեկ տասնամյակ՝ առանց միջազգային խաղաղապահների կամ մոնիտորինգի մշտական ուժերի մասնակցության։ Հրադադարի գծի այս ինքնակարգավորվող բնույթը ղարաբաղյան հակամարտության յուրահատկությունն է։ Այլ հակամարտություններում, ինչպիսիք են Քաշմիրն ու Կիպրոսը, որոնց պարագայում դեռևս չի հաջողվել հասնել քաղաքական կարգավորման, մի երրորդ ուժ (նշված դեպքերում՝ ՄԱԿ-ը) հսկում, իսկ որոշ դեպքերում պարտադրում է հրադադարի պահպանումը։ Նախկին Խորհրդային Միության տարածքում ռուսական, վրացական և հյուսիսօսական ստորաբաժանումներից կազմված համատեղ խաղաղապահ ուժը հսկում է հրադադարը Հարավային Օսիայում։ Թե՛ Աբխազիայում և թե՛ Մերձդնեստրում ռուսական խաղաղապահները գործում են Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) մանդատի ներքո։

Հրադադարի սահմանափակ թվով խախտումները, դժբախտ պատահարների փոքրաթիվ քանակը (մոտ 200 զոհ և վիրավոր) և որևէ ակտիվ ռազմական գործողության բացակայությունը վկայում են այս ինքնակարգավորվող համակարգի աննախադեպ հաջողության մասին։ Որոշ փորձագետների կարծիքով, հրադադարը պահպանվում է շնորհիվ կողմերի միջև առկա ռազմական հավասարակշռության, որի պայմաններում կողմերից որևէ մեկի հաղթանակը երաշխավորված չէ, եթե զինված հակամարտությունը վերսկսվի։ Այնուամենայնիվ, դժվար է ասել, թե երկարաժամկետ առումով որքանո՞վ այս համակարգը կայուն և արդյունավետ կգտնվի, եթե հակամարտության քաղաքական կարգավորման ուղղությամբ առաջընթաց չարձանագրվի։

Հայաստանի և Ադրբեջանի միջև հրադադարի համաձայնությունը, որի նախագիծը պատրաստվել էր ԱՊՀ Միջխորհրդարանական համաժողովի, Ղրղզստանի Հանրապետության խորհրդարանի և Ռուսաստանի Դաշնային խորհրդի ու Արտաքին գործերի նախարարության նախաձեռնությամբ, ձեռք բերվեց Ռուսաստանի միջնորդությամբ և ուժի մեջ մտավ 1994 թվականի մայիսի 11-12-ի կեսգիշերին։ Այսուհանդերձ, միջնորդները և հակամարտության կողմերը չկարողացան համաձայնության գալ խաղաղապահ ուժերի տեղակայման հարցի շուրջ. գլխավոր խոչընդոտը դրանց կազմությունն էր։ Ադրբեջանական կողմը մերժեց այդ խաղաղապահ ուժերի կազմում Ռուսաստանի որևէ մասնակցությունը, մինչդեռ Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդա-

**Օկսանա Անտոնենկոն Լոնդոնի Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտի Ռուսաստանի և Եվրասիայի ծրագրերի ղեկավարն է։**

ժողովը (ԵԱՀԽ, ապա՝ ԵԱՀԿ՝ Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն) բազմազգ խաղաղապահ ուժեր կազմավորելու որևէ մեխանիզմ չուներ: Ամեն դեպքում, այդ ժամանակ արևմտյան տերությունների զորքերը զբաղված էին Բոսնիայով:

1994 թվականի դեկտեմբերի 5-6-ին Բուդապեշտում կայացած ԵԱՀԽ գագաթաժողովի ընթացքում ձեռք բերվեց սկզբունքային համաձայնություն Լեռնային Ղարաբաղ բազմազգ խաղաղապահ ուժեր ուղարկելու վերաբերյալ: ԵԱՀԽ-ի նախաձեռնության համաձայն՝ այս ուժերը պետք է կազմված լինեին 3,000 զինվորներից, ընդ որում յուրաքանչյուր երկրի մասնակցություն չպետք է գերազանցեր 30 տոկոսը: Բուդապեշտի գագաթաժողովից հետո ԵԱՀԽ-ն հիմնեց Բարձր մակարդակի պլանավորման խումբ (ԲՄՊԽ), որի առաքելությունը ԵԱՀԿ-ի խաղաղապահ ուժերի տեղակայման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելն էր: Միևնույն ժամանակ, ըստ ԲՄՊԽ-ի մշակած փաստաթղթի, խաղաղապահների տեղակայումն ուղղակիորեն կախված էր քաղաքական կարգավորման գործընթացի հաջող իրականացումից: Այսինքն, առանց հակամարտության քաղաքական կարգավորման ուղղությամբ արձանագրած առաջընթացի որևէ խաղաղապահ ուժ չէր կարող տեղակայվել:

Մշտական հիմունքներով տեղակայված ուժի բացակայության պայմաններում ԵԱՀԿ-ի դիտորդներն իրականացնում են շփման գծի մոնիտորինգ՝ պարբերական այցելությունների միջոցով: Այս այցելությունները հայտարարվում են նախապես և ընդգրկում են առանձին ստուգայցեր շփման գծի թե՛ հայկական, թե՝ ադրբեջանական կողմ: Անցյալում՝ չեզոք գոտու կամ միջանցքի ականազերծումից հետո, դիտորդները կատարում էին նաև շփման գծի խորհրդանշական հատումներ: Սակայն այս հատումները դադարեցվեցին այն պատահարից հետո, երբ մի ական պայթեց: Այս համակարգը չի նախատեսում դիտորդների մշտական ներկայություն, ոչ էլ փորձում է կողմերին հանկարծակիի բերել: Այն նաև չի ներառում վստահության ստեղծման որևէ միջոց՝ շփման գծի հակառակ կողմերում գտնվող զինուժերի միջև, որոնց կողմից ռազմական ուժի կիրառումը քաղաքական կարգավորման բացակայության պայմաններում որևէ կերպ չի կանոնակարգվում: Արդյունքում, թե՛ Լեռնային Ղարաբաղի *դե ֆակտո* իշխանությունները, թե՛ Ադրբեջանի կառավարությունը շփման գծի երկայնքով ստիպված են պահպանել զգալի ռազմական ներկայություն, ինչպես նաև խրամատների ու այլ ամրաշինությունների զարգացած ենթակառուցվածքներ: Քննարկվել են մի շարք լրացուցիչ միջոցներ, ներառյալ՝ հրամանատարների միջև ուղղակի հաղորդակցման կամ «թեժ գծի» ստեղծման հնարավորությունը, համաճարակային իրավիճակի վերահսկման հարցում երկկողմանի շահավետ համագործակցությունը և ոչ ռազմավարական ականային դաշտերի մասին տեղեկատվության փոխանակումը:

Եթե հակամարտությունը կարգավորվի, ապա կրկին կբարձրացվի խաղաղապահ ուժերի տեղակայման հարցը՝ ԵԱՀԿ-ի որոշման համաձայն: Այս դեպքում խաղաղապահ ուժերի առաքելությունն առավել հավանական է, որ կլինի ոչ թե հակամարտության կողմերի միջև շփման գծի հսկումը, այլ մարդկանց անվտանգ տեղաշարժի ապահովումը, մասնակի զինաթափման գործընթացի հսկումը, վստահության ամրապնդմանն ուղղված միջոցների ներդրումը և հնարավոր է՝ փախստականների վերադարձի գործընթացի վերահսկումը: Այնուամենայնիվ, դեռևս պահպանվում են նախկին անհամաձայնությունները, որոնք վերաբերում են ապագա որևէ խաղաղապահ ուժի կազմավորման և դրա ներգրավման կանոններին: Հայկական կողմն աջակցում է ռուսական խաղաղապահ զորախմբի տեղակայմանը շփման գծի երկայնքով, մինչդեռ Ադրբեջանը հակամարտության ամբողջ գոտում ավելի բազմաքանակ և բազմազգ խաղաղապահ ուժերի տեղակայման կողմնակից է: Այդ ուժերը պիտի օժտված լինեն շատ ավելի լայն լիազորություններով, ներառյալ՝ փախստականների վերադարձին օժանդակելը: Մինչ այդ, ԵԱՀԿ-ի ստուգայցերն ավելի անակնկալ դարձնելը և կողմերի միջև վստահության վերականգնմանն ուղղված ոչ մեծ միջացառումների իրականացումը կարող է նպաստել գործող համակարգի արդյունավետության բարձրացմանը:

# Խաղաղության հաստատման վերջին հնարավորությու՞ն

## Սաբինա Ֆրեյզեր

Թվում է, թե այսօր՝ 2005 թվականի աշնանը, Ադրբեջանն ու Հայաստանը խաղաղությանն ավելի մոտ են, քան երբևէ։ Բայց արդյո՞ք այս բանակցությունները ևս չեն ձախողվի։ Եթե ձախողվեն, այդ դեպքում խոշորամասշտաբ ռազմական գործողությունների վերսկսման հեռանկարը այսօր ավելի իրական է, քան երբևէ։ Աճող ռազմական ծախսեր, հրադադարի հաճախակի դարձած խախտումներ, հակառակ կողմի հրեշայնացում. սրանք են մտահոգիչ նշաններն առ այն, որ բանակցությունների ժամանակը սպառվում է։

2004 թվականի մայիսից ի վեր Ադրբեջանի և Հայաստանի արտաքին գործերի նախարարները տասնմեկ անգամ հանդիպել են այսպես կոչված «Պրահայի գործընթացի» շրջանակներում։ Երկու երկրների նախագահներն իրենց աջակցությունն են հայտնել դեմառդեմ հանդիպումների արդյունքում գրանցված առաջընթացին։ 2005թ. օգոստոսին Մինսկի խմբի համանախագահները երկրների ղեկավարներին ներկայացրել են կարգավորման մեկ էջանոց ռազմավարություն։ Եթե կողմերը շարունակեն բանակցությունները՝ հիմնվելով տվյալ փաստաթղթի վրա, ապա խաղաղության համապարփակ համաձայնագիրը կարող է պատրաստ լինել 2006 թվականին։

Երկու կողմերի դիրքորոշումներն ավելի քան երբևէ մոտ են միմյանց, քանի որ երկու կողմերն էլ ընդունել են, որ խաղաղության հաստատման ցանկացած համաձայնություն կիրականացվի փուլային եղանակով։ Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակը կարող է որոշվել միայն այն բանից հետո, երբ տեղերում շոշափելի կլինեն վստահության վերականգնմանն ուղղված միջոցների և անվտանգության երաշխիքների արդյունքները։ Հայաստանի աջակցությունը վայելող Ղարաբաղի հայկական ուժերը հետ կքաշվեն բոլոր գրավյալ տարածքներից կամ դրանց մեծ մասից։ Կտեղակայվեն բազմազգ խաղաղապահ ուժեր, ներքին տեղահանվածները կվերադառնան իրենց նախապատերազմյան բնակավայրերը, կվերականգնվեն առևտրային և հաղորդակցության կապերը։ Միայն այս ամենից հետո՝ տասը, տասնհինգ կամ քսան տարի անց ինքնորոշման հարցով բացառապես Ղարաբաղի հայերի և ազերիների մասնակցությամբ և միջազգային հանրության հավանությանն արժանացած հանրաքվեի արդյունքում կորոշվի Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը։ Մինչ այդ Լեռնային Ղարաբաղը *դե յուրե* կմնա իբրև Ադրբեջանի մասը, իսկ *դե ֆակտո*՝ անկախ։

Սա առաջին դեպքը չէ, երբ թվում է, թե բանակցող կողմերը գտել են հարցի լուծման բանաձևը։ 2001 թվականի ապրիլին Քի Վեսթում տեղի ունեցած բանակցություններից հետո նույնպես թվում

**Սաբինա Ֆրեյզերը Միջազգային ճգնաժամային խմբի Կովկասի ծրագրի տնօրենն է։**

էր, թե խաղաղության հաստատման համապարփակ համաձայնագրի ստորագրումը հնարավոր է: Սակայն բանակցությունները հայտնվեցին փակուղում: Փորձելով բացատրել ձախողումը՝ Մինսկի խմբի նախկին համանախագահ Քերի Քավանոն կարծիք հայտնեց, թե «նախագահներն իրենց ժողովուրդներից առաջ էին»: Բայց ավելի համոզիչ է այն բացատրությունը, որ չափազանց մեծ էր տարբերությունը Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարության՝ փակ զրույցներում և հրապարակայնորեն արտահայտած մտքերի միջև: Այսօր ոչինչ չի փոխվել: Մինչ Պրահայի գործընթացը դանդաղ առաջ է ընթանում, Բաքվում, Երևանում կամ Ստեփանակերտում շատ քիչ բան է արվում՝ մարդկանց խաղաղությանը նախապատրաստելու համար: Տարածաշրջանային էլիտաները վաղուց են հարում «կոշտ դիրքորոշումը բարձրացնում է քաղաքական վարկանիշը» ռազմավարությանը:

Չնայած պատերազմն սկսելու պահին դրա էթնիկական հենքը փոքր էր, անցած տարիներին պաշտոնական քարոզչությունը նպաստել է փոխադարձ ատելության աճին: Երկու երկրների բնակչությունն էլ հոգեբանորեն պատրաստվել է կռվի և սպանությունների նոր շրջափուլ սկսելուն: Մասնավորապես Ադրբեջանում Լեռնային Ղարաբաղից և շրջակա տարածքներից կես միլիոնից ավելի ներքին տեղահանվածները դարձել են պատերազմամետ ազդեցիկ զանգված. ըստ Բաքվի մամուլի ակումբի կողմից 2004 թվականին անցկացված հարցման արդյունքների, նրանց մոտ 84 տոկոսը հակամարտությունը ռազմական ճանապարհով լուծելու կոչ է անում:

Ադրբեջանի թռիչքաձև աճող նավթային եկամուտները փոխում են իրադրությունը տարածաշրջանում: 2005 թվականի հուլիսին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը հայտարարեց ռազմական ծախսերի աճի մասին՝ 2003թ. 135 միլիոն ԱՄՆ դոլարից մինչև 300 միլիոն ԱՄՆ դոլար 2005թ. ընթացքում: Այն բանից հետո, երբ հայ պաշտոնյաները հայտարարեցին համարժեք պատասխան քայլերի մասին, Բաքուն խոստացավ 2006 թվականին ռազմական ծախսերը հասցնել 600 միլիոն ԱՄՆ դոլարի: Հայաստանը, որը շարունակում է տուժել տարածաշրջանային նախագծերում մասնակցությունից զրկված լինելու փաստից և տնական շրջափակումից, չի կարող իրեն թույլ տալ Ադրբեջանի ծախսերին համարժեք ծախսեր: Թուրքիայի կողմից կամ Թուրքիայում վերապատրաստված ադրբեջանցի սպաների նոր սերունդը և երկրի կողմից զորքերի տրամադրումը Իրաքում ու Աֆղանստանում անգլոամերիկյան առաջնորդությամբ իրականացվող գործողություններին մեծացրել են ադրբեջանական զինվորականության մարտական պատրաստականությունը: Տասնամյակից ավելի ձգված անուշադրությունից հետո Ադրբեջանի բանակը դեռևս ստիպված է հաղթահարել այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են հնացած զինատեսակները, կոռուպցիան, օպերատիվ պլանավորման, ծրագրավորման և բյուջետավորման անարդյունավետ համակարգերը: Սակայն հաղթական հարձակում ձեռնարկելու նպատակով իրավիճակը բարեփոխելու իրական պատրաստակամությունը շատ արագ կարող է փոխել դրությունը:

Սեփական տարածքային ամբողջականությունը վերականգնելու համար ուժ գործադրելու Ադրբեջանի սպառնալիքն իրական է: Կոշտ դիրքորոշման հայ ջատագովները պնդում են, որ զորքերի դուրսբերումը Լեռնային Ղարաբաղի շուրջը տարածվող անվտանգության գոտուց հավասարազոր է ինքնասպանության: Սակայն ադրբեջանական տարածքների շարունակվող տիրապետումն այն ժամանակ, երբ Բաքուն արագորեն զինվում է, միայն հարձակման հավելյալ արդարացում է տալիս Ադրբեջանին:

Ստեփանակերտի համար այսօր գոյություն ունեցող անվտանգության երաշխիքներից լավագույնը զորքերի դուրսբերումն է: Եթե Լեռնային Ղարաբաղի զինված ուժերը դուրս բերվեն գրավյալ շրջաններից և այնտեղ տեղակայվեն միջազգային խաղաղապահ ուժեր, ապա միջազգայնորեն ընդունված խաղաղության համաձայնագրով Ադրբեջանը հարկադրված կլինի զերծ մնալ ուժի կիրառումից: Եթե վերջինս խախտի այդ համաձայնագիրը և հարձակվի, ապա կվտանգի այն բոլոր միջազգային կապերը, որոնցից կախման մեջ է իր նորահայտ հարստությունը՝ թե՛ որպես արտադրող և թե՛ որպես առաջիկա տարիներին նավթի և գազի ապահով տարանցիկ երկիր:

Թե՛ Բաքուն և թե՛ Երևանը շահագրգիռ են խաղաղության շուտափույթ հաստատմամբ: Այլապես նրանք պատերազմի թափանիվը կանգնեցնելու շատ քիչ լծակներ կունենան:

***Նկարում՝ իրավապաշտպան կազմակերպությունների ներկայացուցիչների բողոքի ցույցն ընդդեմ պետական իշխանությունների կողմից ուժի կիրառման Երևան, ապրիլ 2004թ.***

*Աղբյուրը՝ Ֆոտոլուր/ԻՏԱՌ-ՏԱՍՍ*

# Կամուրջ անջրպետների վրայով.

## քաղաքացիական հասարակության խաղաղաշինական նախաձեռնությունները


## Ավազ Հասանով և Արմինե Իշխանյան

**Ավազ Հասանովը Ադրբեջանի Հումանիտար հետազոտությունների ընկերակցության տնօրենն է և այդ կազմակերպության կողմից հրատարակվող «Մարդու իրավունքներն Ադրբեջանում» ամսագրի խմբագիրը: Նա ակտիվորեն մասնակցել է իր հայ գործընկերների հետ երկխոսություն-հանդիպումներին:**

**Արմինե Իշկանյանը դասախոսում է Լոնդոնի տնտեսագիտության և քաղաքագիտության համալսարանում: Նա Հայաստանում և նախկին Խորհրդային Միությունում քաղաքացիական հասարակության, ժողովրդավարության, զարգացման, գենդերային և մարդու իրավունքների թեմաներով բազմաթիվ հրապարակումների հեղինակ է:**


Հայաստանում և Ադրբեջանում քաղաքացիական հասարակության անկախ ինստիտուտներն ու հասարակական շարժումները սկսեցին ձևավորվել խորհրդային կարգերի գոյության վերջին տարիների ընթացքում: Խորհրդային Միության փլուզումից հետո արևմտյան օժանդակության ծրագրերի գերակա ուղղությունը դարձավ ժողովրդավարության կայացման խթանումը, քանի որ քաղաքացիական հասարակության ինստիտուտների զարգացումն սկսեց դիտվել որպես կարևոր նախապայման ժողովրդավարացման և շուկայական տնտեսությանն արդյունավետ անցում ապահովելու տեսանկյունից: Այդ ջանքերը հանգեցրին ոչ կառավարական/հասարակական կազմակերպությունների (ՀԿ) քանակի աննախադեպ աճի: Այսպիսով, հայ-ադրբեջանական հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացի վրա ազդելու և սեփական երկրներում ժողովրդավարության հիմնական շարժիչ ուժ դառնալու փորձերը քաղաքացիական հասարակության ինստիտուտների կողմից ձեռնարկվում էին զուգահեռաբար: Հաճախ այս իրավիճակը լարվածության պատճառ էր դառնում երկրների քաղաքացիական հասարակությունների և կառավարությունների միջև. վերջիններիս համար խորթ էին անկախ նախաձեռնությունները, իսկ այդ կազմակերպությունների օտարերկրյա ֆինանսական աջակցության աղբյուրները կասկածելի էին թվում: Այսուհանդերձ, 1994 թվականից ի վեր քաղաքացիական հասարակության ինստիտուտները, որոնք հաճախ աշխատում են չափազանց դժվարին պայմաններում, զբաղվում են բազմաթիվ կարևոր խնդիրներով, այդ թվում՝ մարդու իրավունքների պաշտպանություն, պատանդների և ռազմագերիների ազատ արձակում, փախստականների և ներքին տեղահանվածների հիմնախնդիրների լուծման և հակամարտության խաղաղ կարգավորման ուղիների որոնում:

Ներկա իրավիճակը, ներառյալ ալիևյան ռեժիմի կասկածահարույց վերականգնումը Ադրբեջանում, կառավարություն-ընդդիմություն դիմակայությունը Հայաստանում և «հեղափոխությունների» ալիքը նախկին Խորհրդային Միությունում, վատթարացրել է քաղաքացիական հասարակության ինստիտուտների գործունեության պայմանները, բայց միևնույն ժամանակ՝ նոր հնարավորություններ ստեղծել նրանց գործունեության համար: Մինչ իշխաններն ավելի մեծ դժկամություն են դրսևորում խաղաղարարության իրենց մենաշնորհը թուլացնելու գործում, խաղաղության հաստատման գործընթացում առաջընթաց արձանագրելու անհրաժեշտությունը հակամարտության կողմերի միջև քաղաքացիական հաղորդակցման նոր ձևեր է առաջադրում:

## Խաղաղաշինություն. հնարավորություններ և մարտահրավերներ

Գոյություն ունեն մի շարք գործոններ, որոնք սահմանափակում են ՀԿ-ների արդյունավետությունն ու ազդեցությունը Հայաստանում և Ադրբեջանում: Դրանք են՝ կազմակերպությունների համեստ կարողությունները, քաղաքական մթնոլորտը և այն հասարակության առանձնահատկությունները, որոնց մասնիկն են հանդիսանում դրանք:

Աղքատության բարձր ցուցանիշն այս երկրներում նշանակում է, որ միայն սակավաթիվ կազմակերպություններ են գործում շարքային անդամների աջակցության և անդամավճարների շնորհիվ, ինչը ՀԿ-ներին կախվածության մեջ է դնում օտարերկրյա դոնորներից, քանի որ դրանք են ապահովում նրանց ֆինանսական միջոցների առյուծի բաժինը: Այս իրողությունը քաղաքական գործիչներին և լրագրողներին թույլ է տալիս հարցականի տակ դնել խաղաղաշինության և հակամարտությունների կարգավորման հարցերով զբաղվող ՀԿ-ների շարժառիթներն ու նպատակները: Միևնույն ժամանակ, միջազգային ներգրավվածությունն անմիջապես հակամարտության կարգավորման ջանքերում ավելի փոքր է եղել, քան, օրինակ, հարևան Վրաստանում: նդիրը մասամբ առնչվում է հասանելիությանը, քանի որ Բաքուն և Ստեփանակերտը մինչ այժմ չեն կարողացել համաձայնության գալ մի այնպիսի ընդհանուր մանդատի շուրջ, որը միջազգային կազմակերպություններին թույլ կտար կողմերի համար ընդունելի ներկայություն ապահովել Լեռնային Ղարաբաղում: Իրավիճակը բարդանում է նաև այն պատճառով, որ այդ դաշտում ընդգրկված ՀԿ-ներ մեծ մասամբ չափազանց փոքր են և սահմանափակ գործունեություն են ծավալում. ՀԿ-ների համար հասանելի է բնակչության միայն փոքր մասը, մինչդեռ լայն հասարակությունն անմասն է մնում նրանց աշխատանքներին, հետևաբար քամահրանքով է վերաբերվում «քաղաքացիական հասարակություն» հասկացությանը: Որպես հետևանք՝ բնակչության մասնակցությունը խաղաղության հաստատման գործընթացին խիստ սահմանափակ է, իսկ դրա հանդեպ սեփականության զգացումը չափազանց ցածր:

Կարողությունների խնդրից զատ, առկա քաղաքական իրականությունն ավելի է սահմանափակում ՀԿ-ների զարգացման հնարավորություն-




ները: 1999 թվականին նախագահ Հեյդար Ալիևը հայտարարեց. «Քանի դեռ Հայաստանի հետ խաղաղության համաձայնագիր չի ստորագրվել, կարիք չկա, որ մեր ՀԿ-ները համագործակցեն հայերի հետ: Երբ ես և Քոչարյանը գտնենք այս քաղաքական խնդրի լուծումը, այն իրենից կներկայացնի մի փոխզիջում, որին շատերը դեմ կլինեն: Այնժամ թող ՀԿ-ները փորձեն հաշտեցնել երկու ժողովուրդներին»: Այլ կերպ ասած, ՀԿ-ներին տրվում է ոչ թե խաղաղության հաստատման գործընթացի ինքնուրույն մասնակցի, այլ երկրների քաղաքական առաջնորդների հասցեին ակնկալվող հասարակական քննադատությունը մեղմող միջոցի դեր: Հակառակ կողմի ներկայացուցիչների հետ հանդիպումների մասնակից ակտիվիստներն երկու երկրներում էլ տուն վերադառնալուց հետո ենթարկվում են հալածանքի, երբեմն` ֆիզիկական, ինչը վախի մթնոլորտ է ստեղծում: Սա գործող իշխանությունների կողմից բանակցային գործընթացի նկատմամբ մենաշնորհ պահպանելու փորձերի անքակտելի մասն է: Հաճախ այս պայմանները պահանջում են, որ քաղաքացիական հասարակության ակտիվիստները զգալի անձնական խիզախություն ցուցաբերեն իրենց ամենօրյա գործունեության ընթացքում: Դրան ավելացնենք նաև ֆինանսական միջոցների համար մրցակցությունը, և պարզ կդառնա, որ այս ամենը զգալի բացասական ազդեցություն է ունենում ինքնին փոքր ՀԿ համայնքի ներսում ձևավորվող հարաբերությունների վրա: Հատկապես (բայց ոչ բացառապես) Ադրբեջանում, միջազգային կոնֆլիկտները և ազդեցության ոլորտների համար մղվող պայքարը մասնատել են քաղաքացիական հասարակությունը և թուլացրել նրա մեկ ճակատով գործելու ունակությունը:

Կառավարություն-ընդդիմություն դիմակայության համատեքստում ՀԿ-ների քաղաքականացումը նույնպես զգալի ազդեցություն է թողնում: Մասնավորապես, Վրաստանում և Ուկրաինայում քաղաքացիական հասարակության ինստիտուտների նախաձեռնած «վարդերի» և «նարնջագույն» հեղափոխություններից հետո Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունները նկատելի կասկածամտությամբ են վերաբերվում սեփական քաղաքացիական հասարակություններին` դրանց համարելով ընդդիմության գաղտնի զենք: Այս սպառնալիքը չեզոքացնելու նպատակով կառավարությունները վաղուց օգտագործում են իրենց կողմից ֆինանսավորվող ՀԿ-ներ (կամ ԳՈՆԳՕ-ներ` «Կառավարության կողմից հիմնադրված» ոչ կառավարական կազմակերպություն (GONGO)) ստեղծելու և բազմացնելու ռազմավարությունը: Վերջերս Հայաստանում ԳՈՆԳՕ-ներին սկսել են անվանել «գրպանային» ՀԿ-ներ` ընդգծելու, որ դրանք աշխատում են իշխանությունների համար կամ նրանց «գրպանում»: Ադրբեջանում կառավարության վերահսկողության տակ գտնվող պատերազմատենչ «Քվազի» ՀԿ-ները, ինչպիսին է Ղարաբաղի ազատագրման կազմակերպությունը, իշխանությունների կողմից ներկայացվում են որպես բազմակարծության օրինակ, մինչդեռ իրականում հալածանք իրականացնելու գործիք են: Քաղաքացիական հասարակության խաղաղաշինական նախաձեռնությունները խթանող դաշինքներ ՀԿ-ների և քաղաքական կուսակցությունների միջև գրեթե գոյություն չունեն: Սա ևս մեկ վկայություն է քաղաքացիական և քաղաքական հասարակությունների միջև գոյություն ունեցող վիհի:

Սակայն չի կարելի թերագնահատել այն փաստը, որ Հայաստանի և Ադրբեջանի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից շատերը, հակամարտության կարգավորման ոչ բռնի միջոցներին և ժողովրդավարությանն իրենց նվիրվածությամբ հանդերձ, Լեռնային Ղարաբաղի ապագայի հարցում անհամատեղելի տեսակետներ են հետապնդում: Իվերջո, քաղաքացիական հասարակությունը լայն հասարակության մասնիկն է և դրանից է ծնունդ առնում: Քանի դեռ այդ հասարակությունների ներսում հակամարտության և դրա ապագայի շուրջ տեղի է ունենում թշնամական վերաբերմունքի վերարտադրություն, իրատեսական չէ ակնկալել, որ հակամարտող երկրների քաղաքացիական հասարակությունների անդամներն իրենց հայացքներով կարող են մոտենալ միմյանց: Հակամարտության երկու կողմում էլ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները կարող են ակտիվ քարոզարշավ ծավալել ի օգուտ խաղաղության հաստատման ոչ բռնի և մասնակցային եղանակների և մեղմել պատերազմական քարոզչամեքենայի կողմից թշնամու կերպարի ձևավորման ծայրահեղ հետևանքները: Այնուամենայնիվ, կարգավորման մեթոդների հարցում հնարավոր այս փոխհամաձայնությունը չի կարող նշանակել, թե հակամարտության կարգավորման շուրջ կողմերի քաղաքական նպատակները ևս համընկնում են: Քաղաքացիական հասարակության` որպես միջնորդի, ներուժը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև այս գործոնը: Հաճախ այդ դերակատարներն օժտված են լինում համապատասխան կարողություններով, որոնք թույլ են տալիս սեփական հասարակությունների մտահոգությունները ղեկավարներին հասցնել և քննարկման առարկա դարձնել խրթին կամ արգելված թեմաները: Սակայն հասարակությունների միջև առկա քաղաքական անջրպետների վրայով կամուրջ գցելը և արդարության` միմյանց բացառող մեկնաբանությունների միջև ընդհանուր հայտարար գտնելը նոր մարտահրավերներ է առաջ քաշում, որոնց դիմագրավելու համար պահանջվում է լրացուցիչ միջնորդական կարողությունների բացահայտում և զարգացում:

## Ծրագրերը և կազմակերպությունները

Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի ՀԿ-ները կազմակերպում և մասնակցում են հակամարտության կողմերի միջև երկխոսություն-հանդիպումների, ջանքեր են գործադրում ռազմագերիների

ազատ արձակման ուղղությամբ, կազմակերպում են երիտասարդական ճամբարներ և քաղաքացիական կրթության և հակամարտությունների կարգավորման թեմաներով դասընթացներ, ինչպես նաև ներքին տեղահանված անձանց և փախստականների համար իրականացնում են տարաբնույթ հմտություններ հաղորդող ուսուցողական ծրագրեր: Այս միջոցառումները նպատակ են հետապնդում բաց պահել հաղորդակցության ուղիները, հնարավորություն տալ հայերին և ադրբեջանցիներին հանդիպելու միմյանց հետ, դիմակայել թշնամու կերպարի ձևավորման և անմարդկային կերպարի կերտման գործընթացներին, հասարակության շրջանում հանդուրժողական վերաբերմունք դաստիարակել դեպի հաշտությունն ու երկխոսությունը: Ամենաառաջին նախաձեռնություններից մեկը՝ 1991 թվականի «Խաղաղության քարավանը», որ կազմակերպվել էր Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի (ՀՔԱ) Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի մասնաճյուղերի կողմից, հայ և ադրբեջանցի քաղաքացիական հասարակության ակտիվիստների հանդիպման հնարավորություն ստեղծեց հայ-ադրբեջանական սահմանի Ղազախ-Իջևան հատվածում (հայտնի է որպես «խաղաղության միջանցք»)՝ հակամարտության կարգավորման հեռանկարները քննարկելու և խաղաղության համատեղ կոչ նախապատրաստելու համար:

ՀՔԱ-ի կովկասյան մասնաճյուղերը, որոնք ՀՔԱ կազմակերպությունների համաշխարհային ընդարձակ ցանցի մի մասն են, Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում և Լեռնային Ղարաբաղում իրենց աշխատանքը համակարգելու, գործունեությանը և միմյանց միջև համագործակցությունը զարգացնելու նպատակով 1992 թվականին հիմնեցին «Կովկասյան երկխոսությունը»: 1992 թվականին Հայաստանից՝ Անահիտ Բայանդուրը և Ադրբեջանից՝ Արզու Աբդուլայևան արժանացան Ուլոֆ Պալմեի հիշատակի հիմնադրամի կողմից սահմանված Խաղաղության մրցանակին, իսկ 1998 թվականին Աբդուլայևան պարգևատրվեց նաև Եվրոպական Միության և ԱՄՆ կառավարության կողմից սահմանված «Հանուն ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության» մրցանակով:

Հաջողված նախաձեռնություններից մյուսը Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության կողմից 1995 թվականին Բոննում (Գերմանիա) կազմակերպված համաժողովն էր: Համաժողովի արդյունքում ձեռնարկվեցին վստահության վերականգնմանն ուղղված մի շարք միջոցառումներ, ներառյալ՝ պատանդների և ռազմագերիների ազատ արձակում, ուսանողների, լրագրողների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների երկուստեք այցելություններ: Հաջորդող տարիների ընթացքում հարյուրավոր պատանդներ և ռազմագերիներ են փոխանակվել՝ որպես վստահության վերականգնմանն ուղղված փոխհամաձայնեցված միջոցների մի բաղկացուցիչ մաս, սակայն ինչպես Մարի Կալդորն ու Միենս Յան Ֆաբերն են պնդում, շարժիչ ուժի պակասի և քաղաքական հանգամանքների պատճառով 1990-ականների վերջում այս գործընթացը հայտնվեց լճացման մեջ: 1990-ականների վերջում կազմակերպվեցին մի շարք տարածաշրջանային հանդիպումներ և նախաձեռնություններ: Դրանց թվում էին Նալչիկում 1998 թվականին տեղի ունեցած սեմինարը, որի արդյունքում ստեղծվեց ՀԿ-ների համագործակցության ամենաերկարակյաց և կարևոր ֆորումներից մեկը՝ «Կովկասյան ֆորումը», ինչպես նաև 2001 թ. Ծաղկաձորի համաժողովը, որի շրջանակներում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները քննարկումներ ծավալեցին խաղաղության հասնելու տարբեր ուղիների շուրջ: Այս հանդիպումները տեղական ՀԿ-ների և նրանց միջազգային գործընկերների միջև «Միջազգային ահազանգ» կազմակերպության օժանդակությամբ կայացած համագործակցության օրինակներ էին: Կարելի է հիշատակել նաև Փախստականների և ներքին տեղահանվածների հարցերով ՀԿ-ների կովկասյան համացանցը (CRINGO), որը ստեղծվեց 2001թվականին տեղահանված բնակչությանն օժանդակություն տրամադրելու նպատակով:

«Կաթոլիկ օգնության ծառայություն», «Հաշտության պաշարներ», «Միջազգային ահազանգ», «Հակամարտությունների և պետականաշինության Լոնդոնի տեղեկատվական ցանց» (LINKS) միջազգային ՀԿ-ներից բաղկացած կոալիցիայի կողմից վերջերս մեկնարկված «Կոնսորցիումի նախաձեռնությունը» իրենից առավել համապարփակ մոտեցում որդեգրելու մի փորձ է ներկայացնում: Միացյալ Թագավորության կառավարության կողմից ֆինանսավորվող «Կոնսորցիումի նախաձեռնությունը» ռազմավարական մոտեցում որդեգրելու օրինակ է, որը միավորում է ՀԿ-ների գործունեության այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են քաղաքական և քաղաքացիական երկխոսության խթանումը, կոնֆլիկտների նկատմամբ զգայուն զարգացման ծրագրերը, կոնֆլիկտների և խաղաղ կարգավորման գործընթացի վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացումը: Նախաձեռնությունը նաև հստակ միտում ունի հակամարտության կարգավորման գործընթացի մեջ ներգրավել Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի հասարակությունների և տեղահանված բնակչության շահագրգիռ բոլոր շերտերին:

Հաշվի առնելով հակամարտող երկրների ներկայացուցիչների միջև փոխադարձ այցելություններ և հանդիպումներ անցկացնելու առնչությամբ իշխանությունների կողմից պարտադրվող սահմանափակումները՝ ծրագրերում հաճախ նախատեսվում են տարածաշրջանային բաղադրիչներ: Չնայած այս հանդիպումներին տարածաշրջանային բնույթ տալը նվազեցնում է հայ-ադրբեջանական ուղղակի երկխոսությունների հնարավորությունը, հաճախ դա միակ հնարավոր եղանակն է՝ ընդգրկելու Ղարաբաղի հայերին, քանի որ Բաքուն մինչ այսօր ընդգծված դժկամությամբ է թույլատրում հանդիպումներ կազմակերպել հատկապես ադրբեջանցիների և Ղարաբաղի հայերի միջև: Բացի այդ, այդ հանդիպումներն այն սակավաթիվ միջոցներից են, որը թույլ է տալիս զարգացնել շահերի համակովկասյան ընդհանրության զգացում մի այնպիսի տարածաշրջանում, որը բզկտված է հակամարտություններով, շրջափակումներով և մասնատված՝ ճակատային գծերով:

ՀԿ-ներից բացի, գոյություն ունեն նաև փախստականներին, զինվորականների մայրերին կամ կանանց, պատանդների կամ ռազմագերիների ընտանիքները համախմբող ինքնօգնության փոքր խմբեր, որոնք հաճախ համագործակցում են ՀԿ-ների հետ:  Գոյություն ունի աճող միտում՝ ըստ որի, այդ խմբերը ժամանակի ընթացքում ինստիտուցիոնալացվում են և գրանցվում որպես ՀԿ-ներ: Հայկական սփյուռքը, մասնավորապես ԱՄՆ-ի սփյուռքահայ համայնքը, լոբբիստական գործունեություն է ծավալում ի պաշտպանություն Հայաստանի շահերի, ապահովում է արտաքին օժանդակություն, ներկայացնում է Հայաստանի դիրքորոշումները: Չնայած Հայաստանի անկախությունից ի վեր սփյուռքահայ ոչ կառավարական կազմակերպությունները և անձինք ԱՄՆ-ից, Եվրոպայից և Մերձավոր Արևելքից ակտիվ մասնակցություն են ունենում Հայաստանում իրականացվող մարդասիրական օգնության և զարգացման ծրագրերում, այնուամենայնիվ նրանք գրեթե չեն համագործակցում խաղաղաշինության և հակա-

մարտության կարգավորման հարցերով զբաղվող հայաստանյան ՀԿ-ների հետ կամ չեն աջակցում նրանց: Ընդհակառակը, որոշ սփյուռքահայ կազմակերպություններ, հատկապես ազգայնական քաղաքական կուսակցությունները, հակամարտության նկատմամբ որդեգրել են չափազանց ոչհաշտվողական դիրքորոշում:

## Կանանց ՀԿ-ներն ու ցանցերը

Նախկին խորհրդային երկրներում գործող ՀԿ-ների առանձնահատկություններից մեկն այն է, որ դրանցում ընդգրկված են մեծ թվով կանայք: Հայ և ադրբեջանցի կանայք գործակցում են ՀԿ-ների, ինչպես նաև խաղաղաշինության և հակամարտության կարգավորմանն օժանդակող վերազգային քաղաքական համացանցերի շրջանակներում: Կանանց ՀԿ-ների նման համագործակցության օրինակ է «Կանանց անդրկովկասյան երկխոսությունը», որն ստեղծվեց 1994 թվականին Վաշինգտոնյան Խաղաղության ազգային հիմնադրամի հովանու ներքո: 1997-99 թվականներին «Կանանց անդրկովկասյան երկխոսությունը» տարբեր ծրագրեր իրականացրեց բնապահպանության, ժողովրդավարական իրավունքների և կրթության բնագավառներում, այդ թվում՝ Թբիլիսիի պետական համալսարանում եռամյա ամառային դպրոցի կազմակերպումը: Կանանց տարածաշրջանային նախաձեռնություններից մյուսը «Աշխատենք միասին. միավորենք Կովկասի կանանց» ծրագիրն էր (1997-2002), որը գործում էր Արևելյան Եվրոպայում ժողովրդավարության ինստիտուտի (ԱԵԺԻ/IDEE) հովանավորությամբ և ԱՄՆ Պետքարտուղարության Կրթական և մշակութային հարցերի գրասենյակի ֆինանսական աջակցությամբ: «Աշխատենք միասին» ծրագիրն ուղղված էր Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի կին առաջնորդներին և նպատակ էր հետապնդում աջակցել տարածաշրջանային համացանցի ընդլայնմանը: Ուսուցողական ծրագրերի, քաղաքացիական կրթության, ՀԿ-ների կարողությունների զարգացման և միջսահմանային հաղորդակցության համացանցերի ձևավորման միջոցով ԱԵԺԻ-ի ծրագրերը փորձում էին հզորացնել կանանց առաջնորդական ունակությունը և անձնական կարողությունները, նրանց ղեկավարած ՀԿ-ների կարողությունները, ինչպես նաև նպաստել հասարակական կյանքին կանանց առավել ակտիվ ներգրավմանը:

## Ոչ միանշանակ հեռանկարներ

Քաղաքացիական հասարակության ինստիտուտների կարողությունը՝ ազդելու ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացի վրա, միշտ կախված է եղել Հայաստանի ու Ադրբեջանի ներքին քաղաքական իրադարձություններից բխող հնարավորությունների և սահմանափակումների ցիկլերից: Կարող է տպավորություն ստեղծվել, թե ներկա պահին քաղաքացիական հասարակությունն առավելապես կաշկանդված է սահմանափակումներով, քան օժտված է հնարավորություններով, և որ հեռանկարները որոշ առումներով ամենևին հուսադրող չեն: Հակամարտությունը դեռևս հեռու է կարգավորումից, խաղաղության հաստատման գործընթացի տեմպը պահելը դժվար է, աճում են ռազմատենչ կոչերը, և վտանգ կա, որ շատ անհատներ և կազմակերպություններ կհիասթափվեն առաջընթացի պակասից: Նույնիսկ այն դեպքերում, երբ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար ապահովված է գործընթացի հասանելիությունը, միևնույն է ՀԿ-ներն ի վիճակի չեն ազդելու քաղաքական գործիչների և վարվող քաղաքականության վրա: Ավելին, նավթային աճող եկամուտները և Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի հաջող գործարկումն ապագայում ենթադրում են հասարակությունից ադրբեջանական պետական համակարգի կտրվածության առավել բարձր աստիճան:

Հոռետեսությամբ լի այս իրավիճակում անգամ, անկասկած, 1994 թվականի հրադադարից ի վեր ՀԿ-ներն էական դերակատարում են ունեցել՝ պահպանելով երկխոսությունը, խրախուսելով խաղաղության և մարդու իրավունքների մշակույթի զարգացումը, աշխատելով ռազմագերիների ազատ արձակման ուղղությամբ և կազմակերպելով հակամարտության կողմերի անհատ գործիչների հանդիպումները: Տարիների ընթացքում ՀԿ-ները ձեռք են բերել փորձ, նոր ունակություններ և հմտություններ, ինչի արդյունքում այժմ կառավարության նույնիսկ ամենապահպանողական շրջանակները ընդունում են քաղաքացիական հասարակության ներուժը: 2005 թվականի հունիսի 14-ին Ադրբեջանի արտաքին գործերի նախարարությունը հրապարակեց մի հայտարարություն, որում հստակ աջակցություն էր հայտնվում միջազգային հանրության նախկինում արված այն կոչերին, որոնք հորդորում էին Ղարաբաղի հայ և Ղարաբաղի ադրբեջանցի համայնքների միջև ապահովել ուղղակի հաղորդակցություն: Այս հայտարարության համաձայն, միջհամայնքային ուղղակի երկխոսությունները և դրանց առնչվող վստահություն կառուցելու միջոցները կօգնեն ստեղծել անհրաժեշտ նախապայմաններ Ղարաբաղի հայերի և վերադարձող ադրբեջանցիների միջև նորմալ հարաբերությունների հաստատման համար: Այս հայտարարությունը մի կարևոր հնարավորություն է ստեղծում, որպեսզի նշված երկու առանցքային խմբերը պատերազմից ի վեր առաջին անգամ երկխոսություն սկսեն: Մյուս դրական միտումը հենց Ղարաբաղում քաղաքացիական հասարակության զարգացումն է. սա մի նորելույկ երևույթ է, որը կարող է մեղմել ռազմական բաղադրիչի ազդեցությունը Ղարաբաղի հայերի քաղաքականության վրա:

Խոսելով քաղաքացիական հասարակության ապագայի մասին՝ պետք է նշել, որ վերջինիս գործունեության առաջնահերթություններից կարևորագույնը խաղաղության հաստատման գործընթացում առավել լայն և տեղեկացված մասնակցություն ունենալն է:  աղաղ կարգավորման գործընթացի մասին հասարակության պատշաճ տեղեկացվածությունն ու հասարակության լայն մասնակցությունն էական են տարածաշրջանում ժողովրդավարության զարգացման, հակամարտության երկուստեք ընդունելի և կայուն լուծում գտնելու տեսանկյունից: Այստեղ քաղաքացիական հասարակության առջև խնդիր է դրվում մշակել ինչպես բովանդակային, այնպես էլ ընթացակարգային հարցերին վերաբերող առաջարկություններ և նախագծեր և ներկայացնել բանակցող կողմերի քննարկմանը: Բացի այդ, պահանջվում է նաև, որ քաղաքացիական հասարակությունը հասնի մարգինալացված համայնքներին և երկխոսություն ծավալի ցավոտ, հաճախ արգելված հարցերի շուրջ: 2000 թվականի հունիսին Հայաստանը և Ադրբեջանը դարձան Եվրոպայի Խորհրդի անդամներ, ինչը երկրներին պարտավորեցրեց ղարաբաղյան հակամարտությունը լուծել խաղաղ միջոցներով. սա տարածաշրջանում խաղաղաշինությամբ զբաղվողներին հուշում է, որ նրանք կարող են ակնկալել Եվրոպական կառույցների (ինչպիսիք են Եվրոպայի  որհուրդը և Եվրոպական Միությունը) աջակցությունը: Այս աջակցությունը քաղաքացիական հասարակության համար կենսական կարևորություն ունի, սակայն վերջիվերջո կարևորը հիասթափված բնակչությանը խաղաղության տարբերակների շուրջ իմաստալից երկխոսության մեջ ներգրավելն է և այդպիսով հասարակության մեջ խաղաղության հաստատման հետագա գործընթացի նկատմամբ սեփականության զգացում ներարկելը:

*Նկարում՝ հետաքննող լրագրող Էլմար Հուսեյնովի այրին և նրա վշտակիցները կոչով դիմում են կառավարությանը արագացնել լրագրողի սպանության հետաքննությունը և մամուլին տալ առավել մեծ ազատություն:*

*Աղբյուրը՝ Ռոյթերս/ Ռաֆայիլ Շակիրով*

# Ազատության և տաբուի միջև.

## Ղարաբաղյան հակամարտության լուսաբանումը զանգվածային լրատվամիջոցներում


## Մարկ Գրիգորյան և Շահին Ռզաև

**Շահին Ռզաևն ավարտել է Ադրբեջանի պետական նավթային ակադեմիան՝ ստանալով ինժեների որակավորում: 1991 թվականից զբաղվում է լրագրությամբ: Նախկինում հանդիսացել է «Իստիղլալ» լրագրի թղթակիցը, իսկ 1999 թվականից աշխատում է Պատերազմի և խաղաղության լուսաբանման ինստիտուտի (IWPR) ադրբեջանական գրասենյակում:**

**Մարկ Գրիգորյանը Երևանում գործող Լրատվամիջոցների կովկասյան ինստիտուտի հիմնադիրներից է: Իր դեմ իրականացված մահափորձից և արդյունքում վիրավորվելուց հետո տեղափոխվել է Լոնդոն: Նախկին Խորհրդային Միությունում լրագրության թեմայով բազմաթիվ հոդվածների և մենագրությունների հեղինակ է: Այժմ աշխատում է Բի-Բի-Սի-ի Համաշխարհային ծառայությունում:**


Ղարաբաղյան հակամարտությունն օգտակար պրիզմա է, որի միջոցով կարելի է ուսումնասիրել զանգվածային լրատվամիջոցների (ԶԼՄ) ազատության աստիճանի վայրիվերումները հետխորհրդային Հայաստանում և Ադրբեջանում: Երկու երկրներից ոչ մեկում էլ չեն ձևավորվել առողջ լրատվամիջոցներ, որոնք անկախ կլինեին պետությունից, քաղաքական կամ գործարար շահերից: Հակամարտությունը վեր հանեց խորհրդային ավանդույթներով աշխատող և գրաքննության ենթակա լրատվամիջոցների թույլ կողմերը, մասնավորապես՝ դեպքերը համարժեք լուսաբանելու անկարողությունը 1994 թվականի հրադադարից հետո ստեղծված իրավիճակում նկատվում է լրատվամիջոցների վերադարձ հարմարվողականություն և կողմերի պաշտոնական դիրքորոշումներն արտահայտելու գործելաոճ: Այս գործընթացը կապված է քաղաքական տեսակետների միականացման հետ, որը թելադրված է երկրներում տիրող՝ մի դեպքում հաղթանակի ոգով, մյուս դեպքում՝ պարտության հոգեբանությամբ, ինչպես նաև հետխորհրդային երկրների տեղեկատվական շուկայի տնտեսաքաղաքական վիճակի հետ: Այսօր լրատվամիջոցների կողմից հակամարտության լուսաբանումն ազգայնական երանգ ունի, չնայած հայկական լրատվամիջոցները, որոնք ներկա իրավիճակից գոհ լինելու ավելի շատ հիմքեր ունեն, որպես կանոն, ավելի զուսպ են և նախկին բարեկամական հարաբերությունները վերականգնելու պատրաստակամություն են հայտնում: Այնուամենայնիվ, երկու հասարակություններն էլ զրկված են հակամարտության կարգավորման բնակչությունների ուղղվածության և բովանդակության վերաբերյալ լիարժեք և օբյեկտիվ (առարկայական) տեղեկատվությունից: Նման տեղեկատվության պակասը խանգարում է հանրության գործուն մասնակցությանը խաղաղության հաստատման գործընթացին:

### Խորհրդային տարիները (1988-1990)

1988 թվականի առաջին ամիսներին, երբ Ստեփանակերտում և Երևանում ծնունդ առավ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը (ԼՂԻՄ) Խորհրդային Հայաստանին միացնելուն ուղղված շարժումը, ԽՍՀՄ-ում մամուլը վերելք էր ապրում: Միխայիլ Գորբաչովի հայտարարած «գլասնոստ»-ի քաղաքականության շնորհիվ կենտրոնական մամուլում սկսեցին հայտնվել նախկինում անմատչելի արխիվային փաստաթղթեր, արգելված գրական գործեր և խորհրդային քաղաքականությունը քննադատող աղմկալի հոդվածներ: Սակայն այս ամենն անցյալին էր վերաբերում: Իսկ ներկա իրադարձությունները շարունակում էին լուսաբանվել՝ օբյեկտիվ տեղեկատվության փոխարեն առաջարկելով մեկնաբանություններ և վերլուծություններ, որոնք բխում էին երկրի ղեկավարության կողմից առաջարկված ու հավանության արժանացած տեսակետներից:

Նախ Ստեփանակերտում, ապա Երևանում տեղի ունեցած բազմահազարանոց ցույցերին խորհրդային լրատվամիջոցների առաջին արձագանքը, համաձայն նշված կարծրատիպերի, քար լռությունն էր: Գրեթե ոչինչ չհաղորդվեց ադրբեջանցիների կողմից Հայաստանի Կապանի շրջանը լքելու և ադրբեջանական Սումգայիթ քաղաքում հայերի նկատմամբ կատարված զանգվածային բռնությունների մասին: Փոխարենը, ԶԼՄ-ները շարունակում էին իրենց ավանդական քարոզչությունը «ԽՍՀՄ ժողովուրդների բարեկամության» և «սոցիալիստական ինտերնացիոնալիզմի» թեմաներով: Հարյուր հազարավոր ցուցարարներին անվանում էին «մի խումբ ազգայնականներ ու ծայրահեղականներ»: Այս պիտակները բացարձակապես չէին համապատասխանում հայ ժողովրդին համակած համազգային վերելքի և համընդհանուր ոգևորության զգացումներին և վերջիվերջո՝ ուղղակի չէին համապատասխանում իրականությանը: Տեղեկատվության նման պակասը չէր բավարարում նաև ադրբեջանական հասարակության ակնկալիքները, որն ընդամենը գիտեր, որ «ինչ-որ բան է կատարվում Ղարաբաղում և դրա շուրջ»: 1988 թվականի ամռան և աշնան ողջ ընթացքում հակամարտության երկու կողմերում էլ մարդիկ հավատացած էին, թե կենտրոնական լրագրերն ու հեռուստաալիքները, որոնք, բռնկված հակամարտության վերաբերյալ տեղական ԶԼՄ-ներում տեղեկատվության բացակայության պայմաններում, երկար ժամանակ մարդկանց համար լրատվության միակ աղբյուրն էին, աջակցում էին իրենց հակառակորդին:

Հակամարտության ողջ սրությունը քողարկելուն ուղղված՝ խորհրդային զանգվածային լրատվամիջոցների ջանքերը պատճառ դարձան շշուկներով և ենթադրություններով սնվող մթնոլորտի ստեղծման, ինչն էլ ավելի սրեց իրավիճակը: Այդ ջանքերը մարդկանց ստիպեցին նաև տեղեկատվության այլընտրանքային աղբյուրներ փնտրել: Նման աղբյուրներից մեկը Հրապարակն էր: Նույնիսկ առաջացավ «տեղեկատվական միտինգ» հասկացությունը: Տեղեկատվության մեկ այլ աղբյուր դարձան այլընտրանքային այլախոհական հրատարակությունները՝ ինքնահրատը («սամիզդատ»): Ավանդաբար, «սամիզդատի» էջերում կարելի էր հանդիպել այն «ճշմարտությանը», որը բացակայում էր կոմունիստական մամուլում և որը մատչելի էր մարդկանց միայն սահմանափակ խմբի: Դրանք «սամիզդատի»




ծաղկման տարիներն էին, երբ հրատարակվում էին ազգայնական և հակասովետական նյութեր, որոնք չէին կարող տպագրվել պաշտոնական մամուլում: Երևանում արդեն 1989 թվականի կեսերին գործում էին տասից ավելի ընդհատակյա պարբերականներ: Բաքվում անկախ մամուլի «առաջին ծիծեռնակը» Ղարաբաղի ժողովրդական օգնության կոմիտեի պաշտոնաթերթ «Ադրբեջան» լրագիրն էր: Մոտավորապես այդ ժամանակ Ադրբեջանի հանրապետական հեռուստաընկերության եթերում սկսեցին հայտնվել այնպիսի հրապարակախոսական հաղորդումներ, ինչպիսին էր «Դալգա»-ն (Ալիք), որի շրջանակներում համեմատաբար ավելի բաց քննարկումներ էին ընթանում ծավալվող հակամարտության թեմայով:

1989 թվականի աշնանն ընդունվեց «Մամուլի մասին» ԽՍՀՄ օրենքը, որով վերացվեց գրաքննությունը: Սա սկիզբ դրեց մի շարք նոր, անթաքույց հակակոմունիստական լրագրերի, որոնք արտացոլում էին հասարակության մեջ ձևավորվող ազգայնական հայացքները և, միևնույն ժամանակ, նման հայացքների աղբյուր էին հանդիսանում: Չնայած այն փաստին, որ նշված լրագրերը տեղեկատվության պաշտոնական աղբյուրների այլընտրանք էին, դրանք (օրինակ, Հայոց համազգային շարժման կողմից հրատարակվող «Հայքը» և Ադրբեջանի ազգային ճակատի պաշտոնաթերթ «Ազադլիգը») իսկապես ազատ մամուլի օրինակներ չէին: Դրանք զբաղվում էին հակաքարոզչությամբ, որը խորհրդանշում էր հրաժարում խորհրդային կարծրատիպերից ու պիտակներից: Հետևաբար, դրանք մտնում էին բանավեճի մեջ այն դաշտում, որը դեռևս կառուցված էր խորհրդային ԶԼՄ-ների կանոններով: Դա նշանակում է, որ ԶԼՄ-ները ներգրավվեցին խորհրդային վարչակազմի և ազգայնական ճամբարի միջև ընթացող պայքարին, որի պայմանները սակայն դեռևս որոշվում էին իշխանությունների կողմից:

## Խորհրդային Միության փլուզումը և հակամարտության սրումը

1991 թվականին Հայաստանի և Ադրբեջանի կողմից անկախության հռչակմանը հաջորդեց մի շարք նոր անկախ լրագրերի ստեղծումը: Ադրբեջանական նոր պարբերականներից շատերը, օրինակ՝ «Այնա», «Զերկալո», «Սեհեր», «7 գյուն» և «Այդինլըղ» լրագրերը, ձեռք բերեցին մեծ ժողովրդականություն: Այդ ժամանակահատվածում էր, որ ստեղծվեցին Ադրբեջանի առաջին անկախ լրատվամիջոցները՝ «Թուրան» լրատվական գործակալությունը, Էթիբար Մամեդովի ղեկավարած Ազգային անկախության կուսակցության պաշտոնաթերթ «Միլյաթ»-ը, Ալիզադե եղբայրների ղեկավարած Սոցիալ-ժողովրդավարական կուսակցության պարբերական «Իստիղլալը» և Իսա Ղամբարի ղեկավարած «Մուսաաֆաթ» կուսակցության պաշտոնաթերթ «Ենի մուսաֆաթ»-ը: Լրագրող Չինգիզ Մուսթաֆաևը հիմնեց «215 ԿԼ» անկախ հեռուստաստուդիան: Բացի այն, որ այս պարբերականների հայտնվելով առաջացան տեղեկատվության քիչ թե շատ վստահելի աղբյուրներ, նաև զգալիորեն բարելավվեց հակամարտության լուսաբանման որակը և օպերատիվությունը: Հայաստանում հիմնադրվեցին և սկսեցին ժողովրդականություն վայելել «Մունետիկ» և «Ժամանակ» անկախ լրագրերը, Ռամկավար-ազատական կուսակցության «Ազգ» և Հայ հեղափոխական դաշնակցության «Երկիր» պաշտոնաթերթերը:

Այս պարբերականներից շատերը ոգևորությամբ պաշտպանում և տարածում էին Ղարաբաղում կատարվող իրադարձությունների տրամագծորեն հակառակ ազգայնական մեկնակերպեր: Հայաստանյան ԶԼՄ-ներում հայերը հաճախ ներկայացվում էին որպես Ստալինի քաղաքականության և բոլշևիկյան կառավարության ու Թուրքիայի տարածքային դավադրության, իսկ հետագայում՝ Կրեմլի քաղաքական անհեռատեսության և Անկարայի պանթուրքիստական նկրտումների զոհ (այս տեսության համաձայն Բաքուն Թուրքիայի բնական դաշնակիցն է): Ավելին, ըստ հայկական ԶԼՄ-ների, ի պատասխան հայերի կողմից անցկացված խաղաղ և օրինական ցույցերի, ադրբեջանցիներն իրենց երկրում հանգիստ ու խաղաղ ապրող հայերին ենթարկեցին ահաբեկչության, էթնիկական զտման ու զանգվածային արտաքսման, ներառյալ՝ 1991թ. ապրիլին իրականացված «Օղակ» գործողությունը: Բնականաբար, նման մոտեցումը լսարանի գիտակցության մեջ հաջողությամբ արմատավորում էր «զոհի» և «թշնամու» պատկերները:

Ադրբեջանական մամուլում հայտնված հոդվածները, որոնք հաճախ գրվում էին մտավորականության ներկայացուցիչների կողմից, միմյանց էին հակադրում հայկական ազգայնականությունը և ադրբեջանական ինտերնացիոնալիզմը: Այդ հոդվածներում շատ էր խոսվում Կրեմլում «հայերի բարեկամների», մոսկովյան ծախու լրագրողների, Ադրբեջանի տեղեկատվական շրջափակման, Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի (ԱՍԱԼԱ) տիպի հայկական ահաբեկչական կազմակերպությունների և Ստալինի ժամանակներում Հայաստանից ադրբեջանցիների զանգվածային արտաքսումների մասին: Բնիկ ղարաբաղցիները ներկայացվում էին որպես նախկին աղվանցիներ, և փաստեր էին բերվում Ռուսական կայսրության

ժամանակներում Թուրքիայից դեպի Ղարաբաղ հայերի պարբերական վերաբնակեցումների մասին:

## Լայնածավալ պատերազմ Ղարաբաղում

1992 թվականին Ղարաբաղում արդեն լայնամասշտաբ պատերազմ էր ընթանում: Այն ցույց տվեց, որ լրագրողների նոր սերունդն ունի և՛ ազդեցություն, և՛ ներուժ. նրանք ուղևորվեցին աշխատելու որպես ճակատային թղթակիցներ և ռեպորտաժներ էին ուղարկում առաջին գծից: Քաղաքական ցնցումների պայմաններում և կենտրոնական գրաքննությունից հեռու նրանց աշխատանքը վերահսկել դժվար էր: Արդյունքում, ճակատում տեղի ունեցող իրադարձությունների պաշտոնական լուսաբանման և անկախ տեղեկատվական աղբյուրների կողմից սփռվող՝ ականատեսների պատմությունների և նկարահանումների միջև գոյություն ունեցող անհամապատասխանությունը կառավարությունների վերելքների ու անկման պատճառ էր դառնում: Այսպես, Ադրբեջանի նախագահ Այազ Մութալիբովի հրաժարականը մասամբ կապված էր հենց անկախ լրատվամիջոցների կողմից 1992թ. փետրվարին Խոջալուի դեպքերի ժամանակ սպանված ադրբեջանցիների իրական թվի բացահայտման հետ:

ԶԼՄ-ների դերի կարևորությունը չվրիպեց այն մարդկանց ուշադրությունից, ովքեր մասամբ նրանց ազդեցության շնորհիվ էին իշխանության հասել: Այն բանից հետո, երբ Մութալիբովի վարչակարգին Ադրբեջանում փոխարինեց Աբուլֆազ Էլչիբեյի ղեկավարած Ազգային ճակատը, երևան եկան բազմաթիվ նոր հրատարակություններ, մասնավոր հեռուստատեսային և ռադիո ընկերություններ, ընդունվեց «ԶԼՄ-ների մասին» նոր օրենք: Զանգվածային լրատվամիջոցների նման բարգավաճումը նոր իշխանություններին ձեռնտու էր այն պատճառով, որ այդ ԶԼՄ-ներն աջակցում էին գործող վարչակազմին: ԶԼՄ-ների մեծամասնությունը պաշտպանում էր նախագահ Էլչիբեյին և կոչ էր անում Ղարաբաղում պատերազմը շարունակել մինչև «հաղթական ավարտ»: «Բազեների» այդ երգչախմբի ձայնից տարբերվում էր միայն Սոցիալ-ժողովրդավարական կուսակցության «Իստիղլալ» լրագրի ձայնը, որն ադրբեջանական հարձակման գագաթնակետին՝ 1992 թվականի ամռանը, երբ բանակը գրավեց Մարտակերտ/Աղդերե քաղաքը, տպագրեց «Ժամանակն է կանգ առնել» հոդվածը: Սակայն այդ կոչն այդպես էլ մնաց անպատասխան թե՛ լրատվամիջոցների մեծամասնության, թե՛ երկրի բնակչության կողմից: Եվ շուտով «Իստիղլալի» կանխագուշակումն իրականացավ. կարճաժամկետ հաղթանակներին հաջորդեցին լուրջ կորուստները: 1993 թվականի ադրբեջանական կողմի ապշեցուցիչ ռազմական պարտությունների սկիզբը նշանավորվեց ԶԼՄ-ների նկատմամբ ճնշումների սաստկացմամբ: Հայկական զորամիավորումների կողմից 1993թ. ապրիլի 2-ին Քելբաջարի վերջնական գրավման նախօրեին նախագահ Էլչիբեյը հրամանագիր ստորագրեց, ըստ որի երկրի լրատվամիջոցներում մտցվեց ռազմական գրաքննություն: Շուտով ազգային ժողովրդավարների իշխանությունը տապալվեց՝ ոչ թե լրատվամիջոցների արած բացահայտումների, այլ զինված հեղաշրջման արդյունքում: Բայց գրաքննությունը՝ և՛ ռազմական, և՛ քաղաքական, գոյությունը պահպանեց դեռևս հինգ տարի:

Չնայած զինված հակամարտությանը՝ նույնիսկ պատերազմի ժամանակ սերտ հարաբերություններ ձևավորվեցին երկու երկրների տեղեկատվական գործակալությունների միջև: Առաջինն ադրբեջանական «Թուրան» և հայկական «Սնարք» (այժմ՝ Արմինֆո) գործակալություններն էին: Նրանց միջև տեղեկատվության փոխանակումը չի դադարել ո՛չ պատերազմական գործողությունների ընթացքում, ո՛չ հետո:

## Հրադադարի հաստատումից հետո

1994թ. հրադադարի պայմանագրի ստորագրմանը հետևած պետականաշինության ակտիվ գործընթացներին զուգահեռ երկու երկրների ԶԼՄ-ները կրեցին լուրջ փոփոխություններ, որոնք արտացոլում էին նոր ձևավորվող սոցիալական և քաղաքական իրականությունը: Չքավոր բնակչության համար ամենաազդեցիկ լրատվամիջոցը հեռուստատեսությունն է. այս փաստը չի վրիպում ո՛չ կառավարության, ո՛չ էլ քաղաքական նկրտումներ ունեցող գործարարների (կամ առնվազն այն գործարարների, ովքեր ցանկանում են ստանալ որոշումներ ընդունողների բարի կամեցողությունը) սևեռուն ուշադրությունից: Եվ սա այն դեպքում, որ տպագիր մամուլն ունեցել է ինքնավարության ավելի բարձր աստիճան, ինչի պատճառը մասամբ քաղաքական կազմակերպությունների և հարուստ անհատների ազդեցությունն է:

Չնայած խաղաղարար գործընթացի շրջանակներում որոշակի իրադարձությունների հետ կապված պարբերական «բռնկումներին», հրադադարի հաստատմանը հետևած ժամանակահատվածն, ընդհանուր առմամբ, բնութագրվում է հակամարտության նկատմամբ հետաքրքրության թուլացմամբ: Թե՛ Ադրբեջանում և թե՛ Հայաստանում խաղաղության հաստատման գործընթացի վերաբերյալ իշխանամետ և ընդդիմադիր ԶԼՄ-ների մոտեցումները գրեթե ամբողջապես համընկնում են, ինչը ներկայացվում է իբրև ազգային շահերի ընկալման հարցում հասարակական համաձայնության արտահայտություն: Նման իրավիճակի հետևանքներից մեկն էլ այն է, որ հակադարձ կողմին հնարավոր զիջումների բնույթին ու մանրամասն բովանդակությանը վերաբերող լուսաբանումների նկատմամբ գործում են տարբեր «տաբուներ»: Վերջիններս ամրապնդվում են հիմնականում կոնֆլիկտային դատողությունների ձևակերպման համար կիրառվող արդեն արմատացած տերմինաբանությամբ: Այսպես, օրինակ Ադրբեջանում հայերին և Հայաստանը հաճախ անվանում են «ագրեսոր», մինչդեռ, Հայաստանի արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանն ստիպված էր ընկրկել ԶԼՄ-ների բարձրացրած քննադատության փոթորկի առջև այն բանից հետո, երբ իր խոսքում հրապարակայնորեն օգտագործեց «գրավյալ տարածքներ» արտահայտությունը՝ «անվտանգության գոտի» կամ «ազատագրված տարածքներ» տարածված պիտակների փոխարեն:

Հետպատերազմյան տարիներին Հայաստանում ղարաբաղյան թեմայի նկատմամբ հետաքրքրության աստիճանական թուլացումը հասարակական այն տրամադրությունների արտահայտությունն է, ըստ որոնց հակամարտությունը արդեն լուծված է Հայաստանի կողմից Ղարաբաղի *դե ֆակտո* վերահսկման միջոցով: Նույնիսկ եթե հասարակությունը դիտարկում է հակամարտության խաղաղ կարգավորման համար անհրաժեշտ զիջումների հնարավորությունը, միևնույն է, հայկական մամուլի համար ամենախիստ տաբուներից մեկը Ղարաբաղի հարցով բանակցությունների ընթացքում հայկական կողմի զիջումների բնույթին վերաբերող հարցերի քննարկումն է: Հազվադեպ են պատահում վերլուծական հոդվածներ. դրանք, հիմնականում, ազգայնական երանգ են կրում և, որպես կանոն, վերաբերում են Ադրբեջանից Ղարաբաղի անջատման իրավական ու պատմական հիմնավորումներին կամ Ղարաբաղի ու «ազատագրված տարածքների» (Լեռնային Ղարաբաղի շրջակա յոթ շր-

ջանները) նկատմամբ Հայաստանի պատմական իրավունքին: Հակամարտությանն առնչվող մեկ այլ թեմա է հայկական բանակի ուժն ու մարտունակությունը:

Ի տարբերություն Հայաստանի, Ադրբեջանի հասարակական կարծիքը հակամարտությունն ավարտված չի համարում, և այս տեսակետն ամեն կերպ խրախուսվում է ԶԼՄ-ների կողմից: Վերջիններս գնալով ավելի հաճախ են անդրադառնում ռազմական ճանապարհով հիմնախնդրի լուծման հնարավորությանը՝ երբեմն անցնելով պատերազմի բացահայտ քարոզչության: Այսպես, առաջատար «ANS» մասնավոր հեռուստառադիոընկերությունն ամեն օր իր լրատվական թողարկումներն սկսում է «Հայաստանի ագրեսիան Ադրբեջանի նկատմամբ դեռ շարունակվում է» բառերով, իսկ ղարաբաղյան պատերազմի մասին խոսելիս «ANS»-ի հաղորդավարները միշտ օգտագործում են «առաջին ղարաբաղյան պատերազմ» արտահայտությունը, ինչով հեռուստադիտողների գիտակցության մեջ փորձում են արմատավորել այն գաղափարը, թե շուտով կսկսվի երկրորդը: «Հայամետ տրամադրություններ» կամ «հայերի հետ համագործակցություն» արտահայտությունները Ադրբեջանի իշխանությունների կողմից վերահսկվող ԶԼՄ-ներում հավասարազոր են մեղադրանքի և պարբերաբար օգտագործվում են ընդդիմադիր կուսակցությունների կամ անկախ ՀԿ-ների վարկաբեկման նպատակով: Այն իրավապաշտպաններն ու լրագրողները, ովքեր հանդիպում և շփվում են իրենց հայ գործընկերների հետ, ենթարկվում են օստրակիզմի (դատապետման):

Ադրբեջանական ԶԼՄ-ների խնդիրներին 2002 թվականից ավելացավ նաև քաղաքական մթնոլորտի կտրուկ վատթարացումը: Կարգավորիչ մեխանիզմների թվի աճը, ֆինանսական ճնշումներն ու անհարմարվողական պարբերականների հետապնդումներն իրենց գագաթնակետին հասան 2005 թվականի մայիսին, երբ սպանվեց Ադրբեջանի՝ շատերի կարծիքով ամենահամարձակ լրագրի՝ «Մոնիտոր» խմբագիր Էլմար Հուսեյնովը, ինչից հետո թերթը փակվեց: Նման իրավիճակում չափազանց սահմանափակ է ինքնավար նախաձեռնությունների, ներառյալ՝ հայ լրագրողների հետ շփումների հնարավորությունը: Այդուհանդերձ, որոշ շփումներ շարունակվում են. դրանց մի մասը տեղի է ունենում տարածաշրջանային նախագծերի ու ծրագրերի շրջանակներում, մյուսները՝ երկկողմանի ձևաչափով: Տարածաշրջանային համագործակցության օրինակ է «Ինտերնյուզ» կազմակերպության « աչմերուկ» կեսժամյա հեռուստատեսային հաղորդումը՝ բաղկացած Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը ներկայացնող պատմություններից ու ռեպորտաժներից՝ յուրաքանչյուրը տաս րոպե տևողությամբ: Պատերազմի և խաղաղության լուսաբանման ինստիտուտը (IWPR) նույնպես տարածաշրջանում իրականացնում է անկախ լրագրողների աջակցության ծրագրեր: Երևանի և Բաքվի մամուլի ակումբների միջև պահպանվում են երկկողմանի կապերը, ներառյալ՝ հասարակական կարծիքի ուսումնասիրությունների համատեղ անցկացումը: Հատկապես հազվադեպ են շփումներն ադրբեջանցի և Ղարաբաղի հայ լրագրողների միջև: Չնայած հայ և ադրբեջանցի լրագրողների խմբեր են այցելել թե՛ Բաքու, թե՛ Ստեփանակերտ, վերջին տարիներին նման շփումները գրեթե դադարել են և սովորաբար ներառում են ընդամենը մեկ-երկու լրագրողի ուղևորություն, ինչպես 2005 թվականին Էյնուլլա Ֆաթուլաևի այցելությունն էր Ղարաբաղ, որը լուսաբանվեց «Իրական Ադրբեջան» թերթի կողմից: Ադրբեջանական մամուլից սակավաթիվ մեջբերումներ է տպագրում «Դեմո» անկախ պարբերականը, որը հրատարակվում է Ստեփանակերտի մամուլի ակումբի կողմից՝ «Կոնսորցիումի նախաձեռնության» ֆինանսավորմամբ:

## Բանավեճի վա՞յր

Ղարաբաղյան հակամարտության լուսաբանումն ընթանում էր հետխորհրդային Հայաստանում և Ադրբեջանում տեղի ունեցող փոփոխվող քաղաքական իրականության համատեքստում և ազդեցության ներքո: Հակամարտության սկզբնական փուլում լրատվամիջոցներում գերիշխում էին քարոզչության և ապատեղեկատվության խորհրդային ավանդույթները: Հակամարտության՝ լայնամասշտաբ պատերազմի վերածվելուն զուգընթաց, սկսեցին նշմարվել երկու զուգահեռ գործընթացներ. լրագրողների մասնագիտական որակավորման և լրատվամիջոցներում ազգայնամոլության աճ, այլ խոսքերով՝ ԶԼՄ-ների կողմից ազգայնական արժեքների և գաղափարների ընդունում և տարածում: Այդ ժամանակ թվում էր, թե այս արժեքները համատեղելի են ժողովրդավարության հետ, քանի որ, առնվազն սկզբնական շրջանում, ազգային-ժողովրդավարական ուժերը համարվում էին խոսքի ազատության և բազմակարծության ջատագովներ: Ավելին, վաղ 1990-ականներին բնորոշ պատերազմի և քաղաքական ցնցումների պայմաններում դժվար էր վերահսկել և գրաքննության ենթարկել ԶԼՄ-ներին:

Այդուհանդերձ, պատերազմական գործողությունների ավարտը և դրանով պայմանավորված՝ քաղաքական լեգիտիմությունը և սոցիալ-տնտեսական իրականությունը բարդացնում են ազգայնական գաղափարներից ԶԼՄ-ների հրաժարման գործընթացը: Հայաստանի պարագայում ռազմական հաղթանակը նվազեցրեց պատերազմի արդյունքների և դրանց հիմքում ընկած ազգային գաղափարի վերլուծության անհրաժեշտությունը: Ադրբեջանում, սակայն, իշխող թույլ վարչախումբը պատերազմում կրած պարտությունը ճարպկորեն օգտագործեց որպես հասարակությանը միավորող գաղափար, ինչն իր հերթին լրատվամիջոցներին ստիպում է ավելի հաճախ անդրադառնալ ազգայնական գաղափարներին: Երկու երկրներում էլ բնակչության աղքատությունը, թույլ զարգացած ենթակառուցվածքներն ու կարգավորման խիստ սահմանափակումների առկայությունը նշանակում է, որ ԶԼՄ-ները կախված են ոչ թե իրենց անմիջական հաճախորդների կամ սպառողների հետ ունեցած հարաբերություններից, այլ պետության կամ սեփական հարստության պատճառով կառավարության համար խոցելի առանձին անհատների հովանավորչությունից: Սա տարբերվում է Բալկաններում ձևավորված իրավիճակից, որտեղ արևմտյան երկրներն անկախ, հատկապես՝ ընդդիմադիր տեսակետներ արտահայտող լրատվամիջոցների զարգացման նպատակով շատ ավելի մեծ ծավալի օգնություն են տրամադրել: Եվ այսպես, որպեսզի որևէ լրատվամիջոց հաջողություն ունենա Հայաստանի կամ Ադրբեջանի ԶԼՄ-ների շուկայում, այն պետք է արտահայտի պաշտոնական տեսակետները առանցքային հարցերի առնչությամբ:

Մինչդեռ ԶԼՄ-ների ազգայնական երանգավորումը 90-ականների սկզբին կապվում էր հակախորհրդային և ժողովրդավարական արժեքների հետ, այսօր այս երևույթն առավելապես նույնացվում է քաղաքական հայացքների «միջինացման» ու խաղաղարար գործընթացում պաշտոնական տեսակետները կիսելու հետ: Հայաստանի և Ադրբեջանի ԶԼՄ-ները, որոնք հիմնականում զբաղված են սեփական գոյությունը պահպանելու խնդրով, դեռ պետք է հասնեն ինքնավարության այնպիսի աստիճանի, որը նրանց թույլ կտա սեփական լսարաններին ներգրավել ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման թեմայով քննադատական և, միևնույն ժամանակ, կառուցողական բանավեճի մեջ:

# «Ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրավիճակի հետևանքները հայկական և ադրբեջանական հասարակություններում


## Լաուրա Բաղդասարյան և Արիֆ Յունուսով

**Մոսկվայի պետական համալսարանի շրջանավարտ Լաուրա Բաղդասարյանն զբաղվում է 1990 թվականից ի վեր Հարավային Կովկասում ընթացող քաղաքական գործընթացների ուսումնասիրությամբ: Ներկայումս Երևանի հետաքննող լրագրության «Ռեգիոն» կենտրոնի տնօրենն է:**

**1972-92 թվականներին Արիֆ Յունուսովն Ադրբեջանի գիտությունների ակադեմիայի գիտաշխատող էր: 1992-93 թվականներին աշխատել է Ադրբեջանի նախագահի աշխատակազմում՝ որպես տեղեկատվության բաժնի ղեկավար: Ներկայումս գլխավորում է Բաքվի Խաղաղության և ժողովրդավարության ինստիտուտի Հակամարտությունների և միգրացիայի ուսումնասիրության բաժինը:**


***Նկարում՝ ներկայում Շուշայում բնակվող Բաքվից տեղահանված հայ ընտանիքի տան սենյակի պատը:***

*Աղբյուրը՝ Լորենս Բրոերս*

Ինչպես ցանկացած այլ պատերազմ, Լեռնային Ղարաբաղի հակամարտությունն ունեցավ մի շարք ծանր սոցիալական հետևանքներ, այդ թվում՝ փախստականների հոսքեր, հումանիտար և սոցիալական ճգնաժամեր: Այնուամենայնիվ, հայկական և ադրբեջանական հասարակություններում տեղի ունեցած փոփոխությունները դիտարկելիս հարկ է տարբերակել հակամարտության «հետպատերազմյան» հետևանքները և այն, ինչը կարելի է կոչել «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրավիճակի կամ փակուղային իրավիճակի ախտանիշներ: Դրանք արտահայտվում են ժողովրդավարության զարգացումն արգելակող այնպիսի գործոններով, ինչպիսիք են միջնորդների, պատերազմի մասնակիցների ռազմականացման և դրանց «խաղաղ կարգավորման գործընթացի» մեջ ներգրավման հանդեպ ոչ միանշանակ վերաբերմունքը, հաղթածի (Հայաստան) և պարտվածի (Ադրբեջան) հոգեբանության ողեգրումը: Սակայն այս սինդրոմների գերակշռումը և «թշնամու» հանդեպ ագրեսիվ վերաբերմունքի պահպանման հարցում դրանց խաղացած դերը ստիպում են վերաբերվել դրանց, ոչ թե որպես «հետպատերազմյան» ախտանիշների, այլ ախտանիշների, որոնք ապագայում կարող են հանգեցնել ռազմական գործողությունների կրկնության: Այս ոչ միարժեքությունը ներկա իրավիճակի որոշիչ հատկանիշն է. այն դեպքում, երբ հակամարտության երկու կողմերում որոշ արմատական տրամադրություններ ունեցող իշխանական և ընդդիմադիր ուժեր ձգտում են հասարակության մեջ պահպանել «ախոյանի» նկատմամբ հակակրանքի որոշակի աստիճան, միաժամանակ կարևոր է թույլ չտալ, որ այդ գործընթացը հասնի անդառնալի կետի: Նման «կառավարվող հակակրանքը» որոշակի քաղաքական շահաբաժիններ է բերում առանցքային դերակատարներին՝ նրանց դրդելով ղարաբաղյան գործոնն ակտիվորեն օգտագործել ներքաղաքական պայքարում: Նման մոտեցման հիմնական հետևանքներից է տարածված կարծիքն առ այն, որ իրականում ոչ թե քաղաքական առաջնորդները, այլ հենց հասարակությունները, պատրաստ չեն խնդրի կարգավորմանը և որ հայ-ադրբեջանական հարաբերությունների գլխավոր հատկանիշն ատելությունն ու թշնամանքն է:

## Պատերազմի հետևանքները և սոցիալական փոփոխությունները

«Ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրավիճակի ախտանիշները լավագույնս հասկանալու համար օգտակար է վերլուծել այն փոփոխությունները, որ տեղի են ունեցել Հայաստանում և Ադրբեջանում պատերազմի արդյունքում: Նախ և առաջ անդրադառնանք պատերազմի ընթացքում և դրանից հետո բնակչության զանգվածային տեղաշարժերին, որոնց արդյունքում ձևափոխվեցին երկու երկրների ժողովրդագրական և քաղաքական պատկերները: Հակամարտության սկզբնական փուլում փախստականների հարցը համախմբող գաղափարի դեր էր ստանձնել և հակամարտող կողմերի միջև ամենաթեժ վեճերի առարկա էր հանդիսանում: Սակայն, ժամանակի հետ հայ և ադրբեջանցի բանակցողների բանավեճերում փախստականների խնդիրն սկսեց ձեռք բերել այլ ուրվագծեր: Տեղահանված ադրբեջանցիների վրանային ճամբարների (կամ «վրանային քաղաքների») գոյությունը տեղի ողջ հասարակության համար դարձել էր հակամարտության լուծված չլինելը հիշեցնող միջոց, որը նաև օգտագործվում էր ճամբարներ այցելած միջազգային դիտորդներին հակամարտության պատճառով ադրբեջանցի ժողովրդի կրած տառապանքները ներկայացնելու համար: Դրան հակառակ, հայ փախստականների խնդիրը երբեք նման ակնհայտ քաղաքական ենթատեքստ չի ունեցել: Հաջորդիվ մենք կանդ-



րադառնամ երկու երկրների վրա միգրացիոն գործընթացների ազդեցությամբ պայմանավորված տարբերություններին:

## Փախստականներ և տեղահանված անձինք

1988 թվականին հակամարտության բռնկման հետ միաժամանակ երկու երկրներն էլ բախվեցին բնակչության զանգվածային տեղաշարժերի խնդրին: Արդեն 1990 թվականին ադրբեջանական պատասխանատու մարմինների կողմից հաշվառվում էին Հայաստանից տեղահանված հազարավոր փախստականներ (տես՝ Աղյուսակ 1) և Ուզբեկստանից եկած 48 հազար թուրք մեսխեթցիներ:

**Աղյուսակ 1.** Հայաստանից Ադրբեջան գաղթած փախստականների թվաքանակը, 1990 թվական

| | **Փետրվարին գրանցված** | **Սեպտեմբերին գրանցված** |
|---|---|---|
| Ադրբեջանցիներ | 186,000 | 201,000 |
| Քրդեր | 18,000 | 2,500* |
| Ռուսներ | 3,500 | 1,500* |

** Ազգությամբ ռուս և քուրդ փախստականներից շատերը 1990 թվականին տեղափոխվել են Ռուսաստան:*

**Աղյուսակ 2.** Լեռնային Ղարաբաղից և գրավյալ յոթ շրջաններից գաղթած ՆՏԱ-ները՝ ըստ Ադրբեջանի վիճակագրության պետական կոմիտեի տվյալների, 1993 թվական

| | **Ապրիլ** | **Դեկտեմբեր** |
|---|---|---|
| | 243,000 | 779,000 |

Լեռնային Ղարաբաղից գաղթած ներքին տեղահանվածներին հաշվառելը դժվարին խնդիր էր, սակայն 1993-94 թվականներին, հիմնվելով Վիճակագրության պետական վարչության տվյալների վրա (տես՝ Աղյուսակ 2), Ադրբեջանի իշխանությունները հայտարարեցին, թե երկրում ապրում են մեկ միլիոնից ավելի փախստականներ և ներքին տեղահանված անձինք, ինչը կազմում էր երկրի ընդհանուր բնակչության 12 տոկոսը: Չնայած այն հանգամանքին, որ հետագայում քաղաքական իրավիճակը կայունացավ, կառավարությունը շարունակում է ներկայացնել փախստականների և ՆՏԱ-ների մասին քանակական նույն տվյալները: Այնուամենայնիվ, անկախ փորձագետների, Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) և Միգրացիայի միջազգային կազմակերպության տվյալների համաձայն՝ այսօր Ադրբեջանում ապրում է շուրջ 750 հազար փախստական և ներքին տեղահանված անձ, այսինքն՝ բնակչության 9 տոկոսից մի փոքր ավելի:

Ինչ վերաբերում է Հայաստան ներգաղթած փախստականներին և ներքին տեղահանված անձանց, ապա այստեղ նույնպես դժվար է հստակ պատկեր ստանալ: Պաշտոնական տվյալների համաձայն՝ 1993 թվականի վերջին ղարաբաղյան և աբխազական հակամարտությունների արդյունքում փախստական դարձած և ներքին տեղահանված անձանց ընդհանուր թվաքանակը կազմում էր Հայաստանի բնակչության մոտ 11 տոկոսը (տես՝ Աղյուսակ 3): Ամենայն հավանականությամբ արհեստականորեն ուռճացված այս տվյալները հայտնվեցին տարբեր միջազգային փաստաթղթերում. Հայաստանից ստացված պաշտոնական վիճակագրության տվյալների հիման վրա ՄԱԿ-ը ներկայացնում է հայ փախստականների 500 հազար թվաքանակ: Տարիների ընթացքում նրանց որոշ մասը վերադարձել է Ղարաբաղ կամ պարզապես լքել Հայաստանը, ինչի արդյունքում արդեն 2000 թ. դեկտեմբերին փախստականների թիվը հազիվ գերազանցում էր Հանրապետության բնակչության 8 տոկոսը: Ադրբեջանից գաղթած մոտ 30 հազար փախստականներ 2002 թվականի սկզբին ընդունել են Հայաստանի քաղաքացիություն:

**Աղյուսակ 3.** Հայաստանի իշխանությունների կողմից գրանցված փախստականները և ներքին տեղահանված անձինք

| | **1993 թ. վերջ** | **2000 թ. դեկտեմբեր** |
|---|---|---|
| Հայեր Ադրբեջանից և Լեռնային Ղարաբաղից | 335,000 | 238,000 |
| Սահմանամերձ շրջաններից տեղահանվածներ | 78,000 | 72,000 |
| Փախստականներ Աբխազիայից | 6,000 | 8,000 |
| Փախստականներ Չեչնիայից | - | 3,000 |

## Հետպատերազմյան միգրացիա

1994 թվականին հրադադարի հաստատումից հետո բնակչության արտահոսքը երկու երկրներից էլ դեռ շարունակվում էր: Այս միգրացիայի պատճառն ամենայն հավանականությամբ քաղաքական անկայունությունն ու տնտեսական դժվարություններն էին, ինչն իր ազդեցությունն ունեցավ արտագաղթողների էթնիկական կառուցվածքի վրա. դրանք մեծապես հայեր և ադրբեջանցիներ էին, ոչ թե ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ: Բնակչության արտահոսքը մինչ օրս էլ տարերային բնույթ է կրում, ինչի պատճառով վստահելի տվյալներ ստանալը դառնում է գրեթե անհնար: Մինչդեռ, Ադրբեջանի պաշտոնական աղբյուրների համաձայն՝ 1994 թվականից ի վեր երկիրը լքել է 800 հազար մարդ, ինչն արհեստականորեն նվազեցված թիվ է: 1991-ից 2000 թվականն ընկած ժամանակահատվածում ավելի քան 1.5 միլիոն մարդ է մեկնել Ռուսաստան, որտեղ, ըստ ոչ պաշտոնական տվյալների, ապրում և աշխատում է Ադրբեջանի մոտ 2 միլիոն քաղաքացի (հանրապետության ողջ բնակչության մեկ քառորդը):

Ինչպես Ադրբեջանի դեպքում, Ղարաբաղում հաստատված հրադադարը վերջ դրեց հակամարտության գոտուց դեպի Հայաստան փախստականների գաղթին, սակայն Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացմանը զուգահեռ երկիրը լքողների թիվն զգալիորեն աճեց: Անկախ փորձագետների գնահատմամբ՝ 1990-2001 թվականներին Հայաստանից հեռացել է մոտ մեկ միլիոն մարդ (տես՝ աղյուսակ 4), այսինքն, անկախության հռչակմանը հաջորդած առաջին տաս տարիների ընթացքում երկիրը լքել է բնակչության առնվազն 26 տոկոսը:

**Աղյուսակ 4.** Հայաստանից այլ երկրներ գաղթած անձանց թվաքանակն՝ ըստ անկախ փորձագետների գնահատականների, 1990-2001 թ.թ.

| | |
|---|---|
| Ռուսաստան | 620,000 |
| Միացյալ Նահանգներ | 100,000 |
| Ուկրաինա | 80,000 |
| Արևմտյան Եվրոպա | 20,000 |
| Բելառուս | 15,000 |

## Ժողովրդագրական փոփոխություններ

Երկու հանրապետությունների ժողովրդագրական բնութագրերը հետագայում ևս ենթարկվել են փոփոխությունների՝ կապված պատերազմի և դրա հետևանքով ձևավորված սոցիալ-տնտեսական և քաղաքական իրավիճակի հետ: Հակամարտության տարիներին Ադրբեջանը լքել է երկրի առնվազն 600 հազար քաղաքացի՝ հիմնականում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ: Արդյունքում երկրում մնացած բնակչության 90 տոկոսն այժմ էթնիկ ադրբեջանցիներ են: Ոչ ադրբեջանցի բնակչության կառուցվածքը ևս կտրուկ փոխվել է. եթե նախկինում հիմնական ոչ տիտղոսակիր ազգերը հայերն ու ռուսներն էին (տես՝ Քաղաքական բառացանկը), ապա այսօր նրանց տեղն զբաղեցրել են լեզգիները, թալիշները և քրդերը:

Հայաստանը լքածների ամենամեծ խմբաքանակը կազմում էին ադրբեջանցիները և մուսուլման քրդերը: Մուսուլմանական գրեթե ողջ բնակչության վտարումը Հայաստանից տեղի ունեցավ հակամարտության ամենածանր տարիներին: Էթնիկ մյուս խմբերի արտագաղթը, որոնք դեռ խորհրդային տարիներին ժողովրդագրության առումով սահմանային դիք էին զբաղեցնում, Հայաստանի բնակչության կառուցվածքի վրա զգալի ազդեցություն չունեցավ:

Նշված բոլոր տվյալները կրկին անգամ վկայում են այն մասին, թե ինչպիսի մարդասիրական աղետ էր ղարաբաղյան հակամարտությունը: Թվերի հետևում կենդանի մարդիկ են, ովքեր հոգեբանական լրջագույն ցնցումներ են ապրել, եթե նույնիսկ նրանցից ոմանց հաջողվել է նոր պայմաններում կյանքը նորովի դասավորել: Վատթարագույն վիճակում են ադրբեջանցի ներքին տեղահանված անձինք, ովքեր բնակվում են վրանային ճամբարներում: Հիվանդությունները, չքավորությունը, նվազող միջազգային մարդասիրական օգնությունը, կառավարությունը, որը գերադասում է փախստականներին օգտագործել սեփական քարոզչական նպատակներով՝ փոխանակ լուծելու նրանց խնդիրները. այս ամենի արդյունքում բնակչության այս հատվածը գնալով ավելի արմատական է դառնում: Սեփական հիմնախնդիրների մասին բարձրաձայնելու փախստականների փորձերն ուղեկցվում են հասարակական խժդժություններով, ճանապարհների միտումնավոր փակմամբ և անվտանգության ծառայությունների հետ բախումներով: Փախստականների հուսահատ և հիասթափված վիճակից փորձում է օգուտ քաղել նաև ընդդիմությունը. փաստ, որն էլ ավելի է բարդացնում իրավիճակը և դժվարացնում այն հաղթահարելուն ուղղված ջանքերը:

## Նախկին մարտիկները

Պատերազմի տարիներին մարտիկները հասարակության կողմից ընկալվում էին որպես հայրենիքի հերոս պաշտպաններ: Վերջիններիս քաղաքական դերի նկատմամբ վերաբերմունքը շատ ավելի հակասական էր: 1988-ից 1991 թվականներին տարերայնորեն կազմավորվում էին հայկական և ադրբեջանական աշխարհազորային ու ինքնապաշտպանական ջոկատներ, որոնց ուժերն, ավարի ձեռքբերման և քաղաքական հակառակորդների չեզոքացման նպատակով, օգտագործվեցին բազմաթիվ քաղաքական դերակատարների կողմից, ներառյալ՝ քաղաքական կուսակցությունների: Հայաստանն առաջինը գիտակցեց այն վտանգը, որ ներկայացնում էին անօրինական զինված խմբավորումները, և 1990-91 թվականներին գրեթե բոլոր նման խմբավորումներն ընդգրկվեցին կանոնավոր բանակի կազմում, մինչ դրանց մի զգալի մասն ուղղակի տեղափոխվեց Լեռնային Ղարաբաղ, որտեղ ընթանում էին ռազմական գործողություններ: Հայաստանում առկա զինամթերքի գրեթե կեսը (մի քանի տասնյակ հազար միավոր) մնաց բնակչության մոտ, ինչն իր հերթին բերեց բռնության գործադրմամբ հանցագործությունների քանակի աճի:

Ադրբեջանում կանոնավոր բանակի կազմավորումն սկսվեց ավելի ուշ: 1993 թվականին Ղարաբաղում կռվում էին ինչպես ինքնապաշտպանության կամավորները, այնպես էլ տարբեր քաղաքական կազմակերպությունների կողմից կազմավորված ռազմականացված ջոկատները: 1992 թվականի ամենադաժան մարտերի ժամանակահատվածում Ղարաբաղում մարտնչում էին կանոնավոր բանակի 21 հազար, «Ժողովրդական ճակատի» և այլ քաղաքական կուսակցությունների կամավորական գումարտակների 7 հազար զինվորներ, ինչպես նաև ոստիկանության հատուկ նշանակության ջոկատների 4 հազար մարտիկներ: Ժողովրդական աշխարհազորի մասնակցության նման ծավալը Բաքվի իշխանությունների տեսակետից լուրջ խնդիր էր. 1993 թվականին նախագահ Հեյդար Ալիևը կազմալուծեց 33 կամավորական գումարտակներ, որոնց շարքերում ընդգրկված էին հիմնականում ընդդիմության աջակիցները: Այս քայլը մեծ ազդեցություն ունեցավ ճակատում ճգնաժամի առաջացման և որպես հետևանք՝ հայերի կողմից Լեռնային Ղարաբաղի շրջակա յոթ շրջանների գրավման վրա: 1994-95 թվականներին Ալիևը նույնանման հարված հասցրեց ոստիկանության հատուկ նշանակության ջոկատներին՝ ձերբակալելով 710 սպայի և կազմալուծելով նրանց գլխավորած ջոկատները:

Հրադադարի հաստատումից հետո նախկին մարտիկների դերը երկու հասարակություններում տարբեր է եղել: Նախկին մարտիկների ստեղծած կազմակերպություններն աջակցում են պատերազմի վետերաններին, վիրավորների և զոհվածների ընտանիքներին և զբաղվում երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության հարցերով: Հասարակության տեսանկյունից այդ դերի վերապահումը լիովին արդարացված է, քանի որ այդ կերպ փորձ է արվում վերականգնել արդարությունը հասարակական այն խմբերի նկատմամբ, որոնք դուրս են մնացել իշխանությունների ուշադրության շրջանակներից:

Հայաստանում նախկին մարտիկների հիմնադրած ամենաազդեցիկ կազմակերպությունը 1994 թվականին պաշտպանության առաջին նախարար Վազգեն Սարգսյանի նախաձեռնությամբ ստեղծված «Երկրապահ» միությունն է: Սարգսյանը երկրի ռազմաքաղաքական կյանքում առանցքային գործիչ էր՝ սկսած ղարաբաղյան հակամարտության հենց սկզբից: Նույնիսկ պաշտոնից հեռանալուց հետո նա շարունակում էր մեծ ազդեցություն ունենալ պաշտպանության նախարարությունում: «Երկրապահը», որի անդամները պաշտոնապես իրավունք ունեին զենք կրելու, փաստորեն ֆինանսավորվում էր պաշտպանության նախարարության կողմից: Կազմակերպությունն իր բազմանդամության շնորհիվ (ուներ 40 հազար անդամ) իր համար կարևոր տեղ ապահովեց երկրի ներքաղաքական կյանքում՝ հատկապես 1996 թվականի նախագահական ընտրություններից հետո: Ընտրության արդ-

յունքներից դժգոհ ընդդիմության կազմակերպած փողոցային ցույցերին ի պատասխան՝ իշխանությունները Երևանում հայտարարեցին արտակարգ դրություն, որի վերահսկողությունը հանձնարարվեց «Երկրապահի» անդամներին: Վերջիններս կրում էին դաշտային քողարկող հագուստ (որն, ըստ օրենքի, իրավունք ունեին կրելու բացառապես կանոնավոր բանակի մարտիկները) և զինված էին գնդացիրներով, ականանետերով, դիպուկահարի հրացաններով և ձեռքի նռնակներով: «Երկրապահ» միությունն իր զգալի ազդեցությունը պահպանեց մինչև 1999 թվականին Սարգսյանի սպանությունը:

Հրադադարից հետո Ադրբեջանում ստեղծված իրադրությունը այլ էր: Չնայած կառավարությունը հայտարարել էր, որ իր պարտքն է համարում հոգալ նախկին մարտիկների կարիքները, հենց սկզբից այն մեծ կասկածամտությամբ և անվստահությամբ էր վերաբերվում ղարաբաղյան պատերազմի վետերաններին՝ անհրաժեշտության դեպքում կիրառելով ռեպրեսիվ միջոցներ: 1994 թվականի հոկտեմբերին կազմալուծվեց զոհված մարտիկների ընտանիքների աջակցության «Նիջաթ» (Փրկություն) կազմակերպությունը, իսկ ղարաբաղյան պատերազմի մոտ 40 վետերաններ դատապարտվեցին. նրանց նկատմամբ կիրառվեցին տարբեր աստիճանի պատժաչափեր: 90-ականների երկրորդ կեսին Ադրբեջանի իշխանությունները մի շարք դատական գործեր հարուցեցին նախկին կամավորական գումարտակների մարտիկների նկատմամբ: Այսպես, «Ղարանդուշ» ջոկատին Նախիջևանի հանրապետությունում պետական հեղաշրջում իրականացնելու փորձի մեղադրանք առաջադրվեց, ինչի արդյունքում տասնյակ վետերաններ հայտնվեցին բանտախցերում: 2001 թվականի հունվար-փետրվար ամիսներին իշխանությունները դաժան հաշվեհարդար տեսան Ղարաբաղյան պատերազմի հաշմանդամ-վետերանների միության կազմակերպած ցույցի մասնակիցների հետ, ովքեր պահանջում էին բարձրացնել իրենց թոշակները. այս բողոքի մասնակից 14 հաշմանդամներ ձերբակալվեցին և նրանց նկատմամբ հարուցված գործերը հանձնվեցին դատարան: Նման վայրագ միջոցներ բազմաթիվ անգամ կիրառվել են նաև Ղարաբաղի ազատագրության կազմակերպության ակտիվիստների նկատմամբ:

Ադրբեջանում վատթարացող սոցիալ-տնտեսական պայմանների և բանակցային գործընթացում առերևույթ առաջընթացի բացակայության պատճառով աճող հուսահատության ֆոնին, իշխանությունների կողմից վետերանների, հատկապես՝ հաշմանդամների հանդեպ ձեռնարկվող նման գործողություններն առաջ են բերում հանրության դժգոհությունը և նույն այդ վետերանների մոտ ամրապնդում ծայրահեղական մոտեցումներ: Հարցումները վկայում են այն մասին, որ վետերանների կազմակերպություններն ավելի ծայրահեղական են դարձել, ինչը մշտապես հաշվի է առնվում, երբ վերլուծվում է խաղաղության հաստատման գործընթացի նկատմամբ հանրության վերաբերմունքը:

## «Ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրավիճակի սինդրոմները

Հասարակություններում առկա հայրենասիրական տրամադրությունները սովորաբար իրենց հետքն են թողնում բանակի և դրա մարտունակության բարձրացման նկատմամբ բնակչության վերաբերմունքի վրա: Ռազմական ծախսերի հարցը, որպես կանոն, դիտարկվում է ոչ թե ռազմականացման վտանգի տեսանկյունից, այլ այն բացահայտ սպառնալիքի, որ իրենից ներկայացնում է թշնամին, ինչպես նաև վերջինիս հարձակմանը պատրաստ լինելու անհրաժեշտության տեսանկյուններից: «Ադրբեջանական բանակը պետք է պատրաստ լինի հետ վերցնել Հայաստանի կողմից զավթված տարածքները» կամ «Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի զինված ուժերը պետք է պատրաստ լինեն ցանկացած պահի դիմագրավել ադրբեջանական ռևանշիզմին». նման արտահայտություններ մշտապես հնչել են հետպատերազմյան ստատուս քվոյի հնարավոր փոփոխությունների վերաբերյալ վերջին տասնմեկ տարիներին արված հայտարարություններում:

Զարմանալի չէ, որ 2004 թվականի վերջին այս հոդվածի հեղինակների կողմից Հայաստանում և Ադրբեջանում անցկացված հասարակական կարծիքի հարցումների համաձայն, երկու երկրներում էլ հարցվածների մեծամասնությունը կարծում է, որ ռազմական դիմակայության վերսկսման դեպքում իրենց բանակը կհաղթի: Ավելին, հարցվածները հաղթանակի հարցում իրենց համոզվածությունը որևէ կերպ չեն կապում ո՛չ երկրի տնտեսական զարգացման աստիճանի, ո՛չ էլ որևէ այլ գործոնի հետ: Հասարակություններում նման տրամադրությունների գերակշռման պայմաններում և «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրավիճակի երկու հնարավոր հանգուցալուծումների համատեքստում հասկանալի է, որ ռազմականացումն արգելված թեմա է թե՛ Հայաստանում և թե՛ Ադրբեջանում: Երկրներից յուրաքանչյուրում տարբեր կերպ են բացատրում նման արգելք դնելու անհրաժեշտությունը, սակայն արդյունքը նույնն է: Հայաստանի դեպքում տրամաբանությունը հետևյալն է. քանի որ բանակը հաղթել է վերջին պատերազմում, այն արժանի է հանրության վստահությանը: Ադրբեջանում արգելքը հիմնավորում են այն պնդմամբ, թե բանակի գործողությունների ցանկացած քննադատությունը կամ դրանց հանդեպ վերահսկողության սահմանումը կարող է թուլացնել երկրի տարածքային ամբողջականությունը վերականգնելու վերջինիս կարողությունը:

Առանց չափազանցության, Հայաստանի և Ադրբեջանի հասարակություններում առկա «հաղթածի» և «պարտվածի» ախտանիշները ղարաբաղյան պատերազմի ամենահիմնական հետևանքներից են: Այս հոդվածում մենք անդրադարձանք այս ախտանիշների դրսևորման պակաս ակնհայտ ձևերին, ինչպիսին է, օրինակ, հասարակության ռազմականացման փաստի հրապարակային ընդունման արգելքը: Այս ախտանիշների արտահայտման այլ ձևերի գոյության մասին վկայում են հոդվածի հեղինակների կողմից անցկացված հասարակական կարծիքի հետազոտությունների արդյունքները: «Հաղթածի» և «պարտվածի» ախտանիշներն ազդում են հասարակության կողմից սպառնալիքների ընկալման վրա. եթե Ադրբեջանի դեպքում ղարաբաղյան հակամարտության կարգավորված չլինելը համարվում է ամենալուրջ սպառնալիքը սեփական անվտանգության նկատմամբ, ապա հայերը ղարաբաղյան հակամարտությունը համարում են «լուծված», իսկ ամենամեծ վտանգը տեսնում են ներքաղաքական զարգացումներում: Նմանապես, ադրբեջանական հասարակության կողմից օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հանդեպ վերաբերմունքը կախված է ղարաբաղյան հակամարտության առնչությամբ այդ կառույցների ունեցած դիրքորոշումներից: Հայկական կողմի ընկալումներն արտաքին ուժերի վերաբերյալ ավելի բազմազան են: Նման մոտեցումներն արդյունք են այն չափազանց կողմնակալ տեղեկատվության, որ տարածում են երկու երկրների լրատվամիջոցները: Հայ և ադրբեջանցի հասարակությունների փոխադարձ մեկուսացումը չի դադարի այնքան ժամանակ, մինչև լուրջ ջանքեր չգործադրվեն նրանց միջև վստահության կամուրջներ կառուցելու նպատակով:

# Փակուղային իրավիճակի գինը.

## Լեռնային Ղարաբաղի հակամարտության տնտեսական կողմը

**Ֆիլ Չամփեյն**

*Նկարում՝ Բիբի Հեյբաթ մզկիթը և նավթի հորատման վերնակները Կասպից ծովի ափին, Բաքվում:*

*Աղբյուրը՝ Ռոյթեր/Գրիգորի Դյուկոր*

1994 թվականից ի վեր, երբ Լեռնային Ղարաբաղի հարցի շուրջ զինված հակամարտությունը Հայաստանի և Ադրբեջանի միջև իր տեղը զիջեց «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրավիճակին, կողմերը կանգնեցին ոչ միանշանակ տնտեսական հեռանկարների առջև: Մինչ նավթն Ադրբեջանում սնում էր կառավարության գանձարանը և վերնախավի փոքր խմբին՝ բնակչության մեծամասնության համար տնտեսական ապահովությունը շարունակում է մնալ չափազանց ցածր մակարդակի վրա: Ադրբեջանի դեմ տարած հաղթանակի հոգեբանական առավելությունները Հայաստանում խամրում են տնտեսական բաց թողնված հնարավորությունների ֆոնին, իսկ տնտեսական արտագաղթը դեպի Ռուսաստան և Արևմուտք, որոշ տվյալների համաձայն, հանգեցրել է բնակչության թվի կիսով չափ կրճատման: Ղարաբաղը ևս տուժում է գործազրկության բարձր մակարդակից և ավելի ու ավելի է մեծանում նրա կախվածությունն «արտաքին», մասնավորապես Արևմուտքի հայկական սփյուռքի աջակցությունից և Հայաստանի «միջպետական» վարկերից: Տպավորություն է ստեղծվում, որ այս իրավիճակից շահում են միայն վերնախավերը:

### Հավասարակշռելով խորհրդանշական և նյութական ռեսուրսները

Ընդհանուր առմամբ հակամարտության տնտեսական գինը հակամարտության կողմերը շատ աղոտ են պատկերացնում, մինչդեռ «խաղաղության շահաբաժնի» ստացման հնարավորությունը չհանգեցրեց հակամարտության և ոչ մի կողմի վարած քաղաքականության տեսանելի փոփոխության: Ընթացիկ դիվանագիտական պայքարում ի՞նչ կարգի տնտեսական լծակներ կարող է գործադրել կողմերից յուրաքանչյուրը հակառակորդի հանդեպ: Ադրբեջանը նավթ ունի, և սա անկասկած դիվանագիտական դինամիկայի բաղկացուցիչ մաս կամ բաղադրիչ է: Նավթային շահույթի հեռանկարին հղում է արվում ոչ միայն ռազմական պատրաստականության բարձրացման մասին հայտարարություններ անելիս. այն օգտագործվում է նաև միջազգային հանրության աջակցությունը գրավելու նպատակով: «Միջազգային ահազանգ» կազմակերպության կողմից 2003-2004 թվականներին Ադրբեջանի՝ Բաքվից հեռու գտնվող գյուղական բնակավայրերում կատարված հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ ադրբեջանական բնակչության շրջանում նավթը համարվում է կորուսյալ տարածքները հետ վերադարձնելու բանալի: Այս համայնքներում տարածված տեսակետ է, որ նավթը միջոցներ է բերում բանակի համար և երաշխավորում արևմտյան այն կառավարությունների աջակցությունը, որոնց ընկերությունները մասնակցում են ադրբեջանական նավթի արդյունահանմանը: Հարցվածների կարծիքով այս ամենը վերջ կդնի տնտեսական դժվարություններին և ավելին՝ կհանգեցնի Ղարաբաղի վերադարձին: «Փոփոխության» այս տեսությունը նաև ձեռնտու է նրանց, ովքեր ցանկանում են ուժեղացնել «հայկական թշնամու»՝ այդ նույն համայնքներում առանց այն էլ մեծ տարածում ունեցող կարծրատիպերը:

Եթե Ադրբեջանն ունի ռեսուրսներ, բայց չի տարել ռազմական հաղթանակ, ապա Հայաստանը տարել է հաղթանակ, սակայն չունի ռեսուրսներ: Այդուհանդերձ, Հայաստանում ևս կան ձեռնարկատերեր, ովքեր ամեն կերպ ձգտում են դուրս գալ թուրքական շուկա՝

**Ֆիլ Չամփեյնը «Միջազգային ահազանգ» կազմակերպության ծրագրերի տնօրեններից է: Նա աշխատել է Կովկասում, Նեպալում, Լիբերիայում և Շրի Լանկայում՝ օժանդակելով հակամարտող կողմերի միջև երկխոսության կայացմանը և նաև հեղինակ է հակամարտությունների լուծման տնտեսական կողմի վերաբերյալ մեծ թվով աշխատությունների:**



ոչ պաշտոնական բիզնես կապերի միջոցով: Իսկապես՝ ձգտելով ամրապնդել հաղթանակը, հայաստանյան գործարար շրջանակները հակված են ամրապնդել կապերը Թուրքիայի հետ, այլ ոչ թե հաղթահարել Ադրբեջանի հետ ունեցած հակասությունները: Թուրքական տարբերակը, սակայն, դյուրիններից չէ: Թեպետ կանոնավոր չվերթեր են իրականացվում Թուրքիայից Հայաստան և այս իմաստով հայ-թուրքական սահմանը հատող մարդկանց շարժ կա, Հայաստանի և Թուրքիայի ֆիզիկական սահմանը, սակայն, փակ է. դիվանագիտական մի փակուղի, որ հետևանք է մի կողմից Օսմանյան կայսրության կողմից իր հայկական համայնքի նկատմամբ 1915 թվականին կատարած քայլերի վիճարկվող գնահատականի և մյուս կողմից ղարաբաղյան հակամարտության ընթացքում Թուրքիայի՝ իր թրքախոս հարևան Ադրբեջանի հետ դաշինքի համադրության: Թուրքիայի և Ադրբեջանի գործակցությունն ամրապնդվեց Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի կառուցմամբ, որը ռազմավարական առումով մեկ շարքի մեջ է ընդգրկում Ադրբեջանը, Վրաստանը և Թուրքիան և այդպիսով ամրապնդում հակամարտության գիծը տարածաշրջանում:

## Նավթ. խաղաղությա՞ն, թե՞ պատերազմի միջոց

Նավթի՝ որպես Հարավային Կովկասում տնտեսական լծակի և որպես հակամարտության դինամիկայի բաղադրիչի կարևորությունը բացահայտման կարիք ունի: Նավթային գործոնի ազդեցությունն Ադրբեջանում, թերևս, կարելի է դասակարգել Ստենֆորդի համալսարանից Թերրի Լինն Կարլի և մյուսների առաջարկած եղանակով: Այդ հետևանքներն ընդհանրական են այն առումով, որ դիտվել են նաև այնպիսի երկրներում, ինչպիսիք են Անգոլան, Կոլումբիան և Նիգերիան, ինչպես նաև նավթարդյունաբերող արևմտյան երկրներում, ինչպիսիք են Միացյալ Թագավորությունն ու Նորվեգիան:

Մասնավորապես, նավթից ստացված մեծ եկամուտները սովորաբար ուժեղացնում են նավթարդյունահանող երկրի արժույթը՝ այդպիսով փոքրացնելով նրա կողմից արտահանվող ապրանքների մրցունակությունը («Հոլանդական հիվանդություն»): Համաձայն «Կասպյան եկամտային դիտակ» (Caspian Energy Watch) կազմակերպության տվյալների՝ նավթի մեկ բարելի դիմաց 25 ԱՄՆ դոլար գնի պայմաններում 2003-ից 2010 թվականն ընկած ժամանակահատվածում նավթային եկամուտներից Ադրբեջանի կառավարության մասնաբաժինը կկազմի շուրջ տասնվեց միլիարդ ԱՄՆ դոլար: Մեկ բարելի դիմաց 18 ԱՄՆ դոլար գնի դեպքում Ադրբեջանի ընդհանուր շահույթն ընդհուպ կմոտենա 7.2 միլիարդ դոլարին: Այս համատեքստում դժվար է պատկերացնել Ադրբեջանի գյուղատնտեսական հատվածի այնպիսի վերականգնում, որ հնարավոր լինի ապրանքներ արտահանել Ռուսաստան, որը միշտ եղել է Ադրբեջանի գյուղատնտեսական ապրանքների արտահանման ամենամեծ շուկան:

Նավթային եկամուտները նաև զարկ են տալիս կոռուպցիային և այդպիսով ուժեղացնում «կոռուպցիոն ցանցերը» (ավելի մանրամասն՝ տե՛ս ստորև): Նավթահեն զարգացումը և դրա ընձեռած հնարավորությունները՝ տարածելու հովանավորչություն և բաժանելու ընծաներ, սովորաբար ուժեղացնում է վերնախավին, որն իր դիրքը չկորցնելու համար ամեն ինչի պատրաստ է, քանի որ պաշտոնը դառնում է իշխանության և բարեկեցության հիմնական աղբյուրը: Եթե կոռուպցիան նվազեցնելու ջանքերը զուգակցվեն տեղական «նավթային հսկիչ» հասարակական կազմակերպությունների ազդեցության աճով և միջազգային հանրության՝ թափանցիկությանն ուղղված այնպիսի նախաձեռնությունների օժանդակությամբ, ինչպիսին է Արդյունահանող արդյունաբերության թափանցիկության նախաձեռնությունը (ԱԱԹՆ), ապա այդ դեպքում Ադրբեջանը գուցե վճռականորեն անցում կատարի դեպի ավելի թափանցիկ պետական կառույցներ, որոնք կկարողանան արդյունավետ-

տորեն կարգավորել գերակա նավթարդյունաբերությամբ տնտեսությունը: Այդուհանդերձ, եթե ապագա ընտրություններում ամրապնդվեն անցյալի կլանային քաղաքականության հիմքերը, ապա ամենայն հավանականությամբ գործարար մթնոլորտն Ադրբեջանում կշարունակի խնդրահարույց մնալ՝ հովանավորչական քաղաքականության, ոչ նավթային հատվածի անտեսման և, չնայած Ադրբեջանի՝ ԱԱԹՆ-ին միանալու փաստին, ՀԿ-ների՝ նավթային եկամուտների թափանցիկության աստիճանն ուսումնասիրելու կարողության մեծացմանն ուղղված փոքր աջակցության կամ դրա բացակայության պայմաններում: Մասնավորապես, մայրաքաղաքից դուրս գտնվող համայնքները կմնան չքավորության մեջ՝ խթանելով դժգոհությունը, որի մեծ մասը կուղղորդվի դեպի Հայաստան՝ չթուլացող ռազմատենչ քարոզչության համատեքստում: Նավթը, այս պայմաններում, այդ համայնքների աչքում դառնում է լծակ՝ ինչպես տնտեսական բարելավման, այնպես էլ Լեռնային Ղարաբաղը վերադարձնելու, և հետևաբար՝ պատերազմի միջոց:

Մյուս կողմից, եթե նավթային փողերը հնարավոր լինի պահել պաշտոնական տնտեսության համակարգում և ուղղել ոչ նավթային հատվածի ուժեղացմանը, ապա հնարավոր է, որ առավելությունները զգալի լինեն ոչ միայն Բաքվի բնակչության համար: Եթե դա տեղի ունենա (միջազգային մակարդակում քաղաքականության բարենպաստ զարգացումների հետ մեկտեղ), ապա հնարավոր է, որ Ադրբեջանի համար խաղաղությունը դառնա քաղաքական և տնտեսական ավելի մեծ խթան, քան հակամարտությունը: Այդ պարագայում ԱԱԹՆ-ը կարող է թափ հավաքել, իսկ Ադրբեջանը կսկսի զարգացնել մի ավելի հեռանկարային տնտեսական դեր՝ որպես Հարավային Կովկասի տարածաշրջանային տնտեսական զարգացման առանցք:

## Ոչ պաշտոնական առևտուր և ոչ ֆորմալ իշխանություն

Ի թիվս այլ հարցերի, տարածաշրջանի տնտեսական դինամիկան բնութագրվում է շրջափակումներով և թեժ գծերով: Ցամաքային սահմանները Հայաստանի ու Թուրքիայի և Ադրբեջանի ու Հայաստանի միջև փակ են, էլ չասենք ավելի հյուսիսային գոտիներում առկա շրջափակումների մասին՝ Վրաստանի ու Աբխազիայի և Վրաստանի ու Հարավային Օսիայի միջև: Սա տարածաշրջանում ստեղծել է մի յուրահատուկ տնտեսական դինամիկա, որը հակամարտության և՛ հետևանքն է, և՛ սնողը: Իրականում շրջափակումները ծակոտկեն են և առաջ են բերում չկարգավորվող միջսահմանային առևտուր, այն դեպքում, երբ միջազգային հանրության ավանդական ողջախոհությունը թույլ չի տալիս, որ միջազգային տնտեսական դերակատարները տնտեսական աջակցություն տրամադրեն չճանաչված այնպիսի միավորների, ինչպիսին է Լեռնային Ղարաբաղը:

Ի հեճուկս այս հանգամանքների՝ առևտրային կապերի գոյության փաստն ինքնին ապացույցն է գործարարության անխուսափելիության: Առևտուրը համայնքային կյանքի առանցքային բաղադրիչն է, քանի որ այն զբաղվածության և եկամտի առաջացման աղբյուր է: Առանց առևտրի ոչ մի տեսակի համայնք չի կարող գոյատևել: Ավանդաբար առևտուրը Հայաստանի և Ադրբեջանի միջև եղել է սովորական և դինամիկ երևույթ: Սահմանների պաշտոնապես փակվելու փաստը վերջ դրեց այս առևտրի մեծ մասին, սակայն այն ամբողջովին չի դադարել: Հայկական «Արցախ Աշխարհ» լրատվական գործակալության հաշվումներով՝ 2002 թվականին Հայաստանի և Ադրբեջանի միջև ոչ պաշտոնական առևտուրը կազմել է 40 միլիոն ԱՄՆ դոլար, մինչ առևտուրը Հայաստանի և Թուրքիայի միջև հասել է 60-80 միլիոն ԱՄՆ դոլարի: Վրաստանն ու Իրանը միջնորդի դեր են կատարում՝ հնարավորություն տալով հայկական ապրանքներին հասնել Ադրբեջան և հակառակը:

Կարգավորման բացակայության պայմաններում այս ոչ պաշտոնական առևտուրը հստակորեն իր ազդեցությունն է ունենում Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունների՝ իրենց քաղաքացիների հետ ունեցած հարկային հարաբերությունների վրա: Հաջող կառավարման և ժողովրդավարության տեսն ասում է, որ ժողովրդի կողմից ժողովրդի համար ընտրված կառավարությունները պետք է իրավասու լինեն հարկել իրենց քաղաքացիների եկամուտները՝ ապահովելու համար հասարակության կարիքների համար անհրաժեշտ ծառայությունների բավարարումը: Առևտրի կարգավորման բացակայությունը նշանակում է, որ այս հարկերը չեն հավաքվում, և որ ժողովրդավարական սկզբունքների վրա հիմնված ծառայությունների ապահովմանը փոխարինում է ծառայությունների անհետևողական մատուցումը և «տանիքն» այն մեխանիզմի միջոցով, որը ոմանք անվանում են «կոռուպցիոն ցանցեր»: Նեղ իմաստով այս երևույթը վերաբերում է իշխանության և միջոցների տիրապետման համանման մակարդակների վրա գտնվող անձանց միջև առկա միջսահմանային կապերին: Առավել հաճախ դրանք տեղական իշխանավորներն են և մասնագիտացած իրավապահ մարմինները, մասնավորապես ոստիկանությունը, սահմանապահները և մաքսատան աշխատակիցները: Այս պայմաններում օրինական առևտրով զբաղվողների համար գոյատևման այլընտրանքներ են ստեղծվում, սակայն նաև պարարտ հող է առաջանում սովորական դարձող շահագործման և հանցագործության ծաղկման համար: Հանցավոր գործունեությունը, ինչպիսին է զենքի և թմրանյութերի առևտուրը, իրականացվում է՝ որոշակի կերպով խաչաձևվելով կոռուպցիոն ցանցերի հետ, որոնք առկա են Հարավային Կովկասի ինքնիշխան և չճանաչված հանրապետությունների պետական համակարգերում:

## Կայունություն առանց կարգավորման

Սադախլոյի շուկան այս դինամիկայի հստակ օրինակն է. հակամարտության հետևանքով ստեղծված մի տարածք, որտեղ այլ ապրանքների թվում ալյուր, թեփ և աղ է վաճառվում Հայաստանին և հայկական ծխերգած ձուկ՝ Ադրբեջանին: Տեղակայված լինելով Վրաստանի տարածքում այնտեղ, ուր հատվում են Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի սահմանները, այն միակ վայրն էր, որտեղ 1991-92 թվականներին հնարավոր էր միջսահմանային առևտուր կազմակերպել հակամարտության երկու կողմերի միջև: Այս շուկայի կախվածությունը հակամարտության դինամիկայից հավանաբար լավագույն կերպով բնութագրում է այն նյարդայնությունը, որով առևտրականները նայում են հայ-թուրքական սահմանի հնարավոր բացման հեռանկարին: Սահմանի բացումն ամենայն հավանականությամբ կգուժի շուկայի վերջը, քանի որ դրա հետ մեկտեղ կստեղծվի մրցակցություն: Սադախլոյից կախման մեջ գտնվող առևտրականների համար կարևոր է դրա ընձեռած կայունությունը՝ արդյունավետ հանրա-

յին կառույցների բացակայության պայմաններում: Կայունությունը այն չկարգավորվող համակարգն է, որը նպաստում է «ոչ խաղաղություն, ոչ պատերազմ» իրավիճակին: Որպեսզի այս իրավիճակը վերածվի խաղաղության դրական զարգացումների, ջանքեր պետք է գործադրվեն՝ ստեղծելու արդար, արդյունավետ և թափանցիկ պետական կառույցներ, որոնք ունակ կլինեն գործակցել մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության հետ: Բայց կարո՞ղ է արդյոք մասնավոր հատվածը դերակատարում ունենալ փոխակերպման մի այսպիսի գործընթացում:

## Ո՞րն է մասնավոր հատվածի դերը

Անկասկած հնարավորություն կա ընդգրկելու «օրինական» գործարար համայնքին (ի հակադրություն զենքի, թմրանյութերի և մարդկանց առևտրում ներգրավվածների): 2004 թվականի դեկտեմբերին Տրապիզոնում «Միջազգային ահազանգ» կազմակերպության նախաձեռնած հանդիպումը Հարավային Կովկասի գործարարների միջև ցույց տվեց, որ Կովկասում կա առաջադեմ գործարար համայնք, որը գիտակցում է ստատուս քվոյի կործանարար ազդեցությունն իրենց շահերի վրա, և որն ի պատասխան ձգտում է «բարելավել գործարարության օրենսդրական դաշտը, երկխոսությունը պետության և գործարար աշխարհի միջև և նպաստել գործարարության ընդարձակմանն ազգայինից տարածաշրջանային մակարդակի»: Այս բնույթի տարածաշրջանային հանդիպումները Ադրբեջանի և Հայաստանի գործարարների համար միմյանց հետ շփվելու ապահով տարածք ստեղծելու եղանակ են: Այդուհանդերձ, անհնար է պատկերացնել գործարար կոնկրետ ձեռնարկներ, որոնք հնարավոր է իրականացնել առանց քաղաքական համատեքստի որևէ փոփոխության: Հետևաբար գործարարության դերը պետք է լինի նախ և առաջ միջսահմանային տնտեսական համագործակցության հարցում քաղաքական աջակցություն ստանալու ուղղությամբ լոբբինգ իրականացնելը, և հետո միայն պատրաստ լինելը անհապաղ գործողությունների, երբ քաղաքական համատեքստը այդպիսի հնարավորություն կընձեռի:

## Տարածաշրջանային մոտեցումների կարևորությունը

Գործարար աշխարհի համար այսպիսի դերակատարում նախաձեռնելով՝ խաղաղաշինությամբ զբաղվող կազմակերպությունները կարող են գործարար գաղափարների մշակման գործընթացում հատուկ ուշադրություն դարձնել գոյություն ունեցող կոնֆլիկտին, քանի որ չի կարելի ենթադրել, որ գործարար համայնքը միշտ գործելու է ի շահ խաղաղության: Ի լրումն, տնտեսական համագործակցության տարածաշրջանային մոտեցման որդեգրումը կարող է ավելի շատ օգուտներ մատուցել: «Տարածաշրջանային» տերմինն այստեղ օգտագործվում է բառի ամենալայն իմաստով, ներառելով Ադրբեջանի, Հայաստանի, Վրաստանի և Թուրքիայի միջև կապերը, այդ թվում նկատի ունենալով նաև Աբխազիան, Հարավային Օսիան և Լեռնային Ղարաբաղը: Տարածաշրջանային այսպիսի հեռանկարը իդեալում պետք է ներառի նաև Ռուսաստանն ու Իրանը: Հարավային Կովկասում հնարավոր երկաթուղային գծերի շուրջ ընթացող բանավեճերը տարածաշրջանային հեռանկար որդեգրելու կարևորության մասին են վկայում: Մինչ շատերը կողմ են Բաքու-Նախիջևան-Երևան-Գյումրի-Կարս երկաթուղային գծի բացմանը, որը միմյանց կկապի Հայաստանն ու Ադրբեջանը և կընդգրկի նաև Լեռնային Ղարաբաղը, ուրիշներն առաջարկում են բացել Բաքու-Իջևան-Երևան-Նախիջևան ուղին, որը կխուսափի Ղարաբաղը ներառելուց: Միաժամանակ՝ Վրաստանն ակտիվ լոբբիստական աշխատանքներ է տանում հօգուտ Թբիլիսի-Կարս երկաթգծի, որը Վրաստանի միջոցով Ադրբեջանը կկապի Թուրքիային՝ այդպիսով մեկուսացնելով Հայաստանը: Անհնար է տարանջատել տնտեսական և քաղաքական շահերը, և եթե պետք է գտնվեն Ադրբեջանի և Հայաստանի համար ընդունելի փոխզիջումներ, ապա տարածաշրջանային մոտեցումն անհրաժեշտություն է դառնում:

Ադրբեջանի նավթային արդյունաբերությանը դեռևս չի հաջողվել իր նշանակալի ներդրումն ունենալ տարածաշրջանային այսպիսի մի մոտեցման ձևավորման գործում. այն պայմաններում, երբ Բաքու-Թբիլիսի Ջեյհան նավթամուղը շրջանցում է Հայաստանը և ամրապնդում Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի միջև Արևելք-Արևմուտք դաշինքները: Այդուհանդերձ, Եվրամիության (ԵՄ) նոր հարևանության քաղաքականությունը տնտեսական համագործակցության ավելի ընդգրկուն մոտեցման հնարավորություն է տալիս: Նկատի ունենալով Թուրքիայի անդամության հեռանկարը՝ ԵՄ-ն իրապես ի զորու է տնտեսական մեխանիզմ առաջարկել (մինչև 1990 թվականը Խորհրդային Միության շրջանակներում գոյություն ունեցածի փոխարեն), որի պայմաններում Հայաստանն ու Ադրբեջանը կարող են թափանցիկ և կարգավորվող տնտեսական կապերի հաստատման ուղիներ գտնել:

## Հայացք ապագային

Այս հոդվածում հեղինակը ձգտել է ուրվագծել ղարաբաղյան հակամարտության տնտեսական որոշ հատույթների պատկերը: Հակամարտությունը կողմերին զրկել է թափանցիկ և կարգավորված առևտրի հնարավորությունից՝ անխուսափելիորեն հանգեցնելով մի կացության, երբ լայն հանրությունը շուկայական տնտեսությանն անցման առավելությունները հարցականի տակ է առնում: Կարգավորվող գործարարության փոխարեն միջսահմանային առևտուրը տարերայնորեն իրականացվում է չկարգավորվող ցանցերի միջոցով, որոնք իրենք սնվում են կոռումպացված գործունեությունից և իրենք էլ սնում են այն: Այս համատեքստում ավելի հավանական է դառնում «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» ստատուս քվոյի պահպանումը, քան դրական խաղաղության նոր հնարավորությունների առաջացումը: Այդուհանդերձ, տեղական գործարար ցանցերը հնարավորություն ունեն նպաստելու այս համատեքստի փոփոխմանը, հատկապես երբ դրանք կարողանան գործակցել խաղաղաշինական կազմակերպությունների հետ և որդեգրել տարածաշրջանային մոտեցումներ, ինչը Ադրբեջանի, Հայաստանի և Ղարաբաղի գործարարների շփումների հնարավորություն կստեղծի: ԵՄ նոր հարևանների քաղաքականությունը նույնպես հնարավորություն է տալիս տնտեսական համագործակցության նոր հիմքեր ստեղծելու համար: Միևնույն ժամանակ, կողմերից յուրաքանչյուրն ունի տնտեսական աջակցության իր սեփական աղբյուրները, որոնք ներկա փակուղային իրավիճակում հնարավորություն են տալիս շարունակել գոյատևել: Մասնավորապես, Ադբեջանի նավթը շարունակում է մտահոգության պատճառ հանդիսանալ, թեպետ ինչպես միջազգային, այնպես էլ տեղական մակարդակներում ջանքեր են գործադրվում ապահովելու, որ «սև ոսկին» լինի բարիք, այլ ոչ թե չարիք:

# Ղարաբաղյան հակամարտությունը և ժողովրդավարացումն Ադրբեջանում


## Ռասիմ Մուսաբայով

**Գիտությունների դոկտոր Ռասիմ Մուսաբայովը 1991-92 թվականներին աշխատել է իբրև Ադրբեջանի նախագահի, իսկ 1992-93-ին՝ Խորհրդարանի խորհրդական: Ներկայումս անկախ փորձագետ է: Մուսաբայովն ավելի քան հարյուր հոդվածների և գրքերի հեղինակ է:**


Լեռնային Ղարաբաղի հակամարտությունն իր սկզբնավորման պահից Ադրբեջանի համար դարձավ այն կարևորագույն ազդակը, որն արթնացրեց ազգային ինքնագիտակցությունը, խթանեց էթնիկ համախմբումը և բնակչության լայն զանգվածներին ներգրավեց սոցիալական և քաղաքական բարեփոխումների գործընթացների մեջ: Այս հակամարտության հետ է անմիջականորեն կապվում խորհրդային համակարգի պայմաններում զանգվածային քաղաքական ընդդիմության ձևավորումը, որի շնորհիվ ադրբեջանական հասարակությունում սկիզբ առան առաջին ժողովրդավարական գործընթացները: Միևնույն ժամանակ, սակայն, հայ-ադրբեջանական հակամարտությունը քաղաքական էլիտայի կողմից օգտագործվել և օգտագործվում է որպես քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները սահմանափակելու և քաղաքական ու տնտեսական այնքան անհրաժեշտ բարեփոխումները հետաձգելու պատրվակ:

## Ղարաբաղը և իշխանության ճգնաժամը

Ղարաբաղյան հակամարտությունն Ադրբեջանում առաջ բերեց իշխանության ճգնաժամ, որը սկզբում արտահայտվում էր կոմունիստական ղեկավարության շրջանում իրականացված կադրային փոփոխություններով, իսկ ավելի ուշ՝ իշխող էլիտայի և քաղաքական համակարգի լիակատար փոփոխությամբ: Այդուհանդերձ, չնայած էլիտայի նորացմանը՝ Ադրբեջանի կոմունիստական կուսակցության առաջնորդ Այազ Մութալիբովի ջանքերով հիմնադրված նախագահի պաշտոնին, (որում նա անհապաղ ընտրեց ինքն իրեն), փորձը ցույց տվեց, որ առանց կոմունիստական կուսակցության հին նոմենկլատուրային ցուցաբերած Մոսկվայի օգնության էլիտան անկարող էր սանձել հակամարտությունը: Դրան հաջորդած բողոքի ալիքները կատալիզատորի դեր խաղացին ազգայնական մտավորականության անդամներից բաղկացած նոր՝ ընդդիմադիր էլիտայի ձևավորման գործում: Դրան զուգահեռ ձևավորվեց մի երրորդ խումբ՝ կազմված նախկին առաջին քարտուղար Հեյդար Ալիևի աջակիցներից: «Ղարաբաղի խաղաթուղթն» ակտիվորեն օգտագործվում էր ինչպես այս մրցակից էլիտաների, այնպես էլ անհատապես մրցակցող առաջնորդների պայքարում:

*Նկարում՝ ընդդիմության աջակիցների բախումը ոստիկանության հետ Բաքվում 2003 թվականի հոկտեմբերին, այն բանից հետո, երբ հռչակվեց Իլհամ Ալիևի հաղթանակը նախագահական ընտրություններում:*

*Աղբյուրը՝ Ռոյթեր/Սերգեյ Կարպուխին*

Լայնամասշտաբ ռազմական գործողությունների սկսվելուց ի վեր՝ Բաքվում տեղի ունեցած բոլոր իշխանափոխություններն ուղղակիորեն կապված էին ռազմադաշտում տեղի ունեցող իրադարձությունների հետ: 1992 թվականի մարտին, Ղարաբաղի հայկական անջատողական միավորումների կողմից ադրբեջանական Խոջալու գյուղի բնակչության ջարդերից հետո, ռուսամետ Մութալիբովը հարկադրված էր հրաժարական տալ, երբ պարզ դարձավ, որ այդ ամենին մասնակցել էին նաև խորհրդային բանակի միավորումները: Ավելի ուշ՝ հայկական ուժերի կողմից Շուշայի և Լաչինի զավթումից հետո, Մութալիբովը իշխանությունը վերադարձնելու անհաջող փորձ կատարեց: Այս փորձն ավարտվեց Աբուլֆազ Էլչիբեյի գլխավորած «Ադրբեջանի ժողովրդական ճակատ» (ԱԺՃ) ազգայնական կազմակերպության իշխանության գալով: Ժողովրդական ճակատի վարչակարգը սկզբնական շրջանում վայելում էր լեգիտիմության բավականին բարձր աստիճան: Նրանց ջանքերով Ադրբեջանից դուրս բերվեցին այստեղ տեղակայված խորհրդային զորքերը, և դրվեց ազգային բանակի հիմքը: Այնուամենայնիվ, նոր ղեկավարության անփորձությունը և Լեռնային Ղարաբաղում ռազմական հաղթանակի հասնելու կամ էլ խաղաղ լուծում գտնելու նպատակով քաջություն և ճկունություն ցուցաբերելու նրանց անկարողությունը հասարակական լայն զանգվածներին խորը հիասթափության հասցրին:

Ադրբեջանի ժողովրդական ճակատի կառավարությունը տապալվեց Գյանջա քաղաքում զինվորականների կողմից իրականացված պետական հեղաշրջման արդյունքում: Էլչիբեյը փախավ մայրաքաղաքից՝ օգնության խնդրանքով դիմելով Ալիևին: Հասարակական կարգի համընդհանուր կազմալուծման ֆոնի վրա ԱԺՃ-ի ներկայացուցիչներն ամենուրեք հեռացվում էին իշխանությունից կամ կամովին վայր դնում իրենց լիազորությունները: Ադրբեջանն ընկղմվեց անիշխանության և անօրինության հորձանուտը, որտեղ ծաղկում էին զինված խմբավորումները և հանցավորությունը: Օգտվելով այս իրավիճակից՝ հայկական ուժերը կարողացան գրավել Լեռնային Ղարաբաղին հարող ևս հինգ շրջան: 1993 թվականի աշնանը տեղի ունեցած արտահերթ ընտրություններում Հեյդար Ալիևը ստացավ ընտրողների ճնշող մեծամասնության ձայները՝ այդպիսով դառնալով Ադրբեջանի նոր նախագահը: Ալիևը պահպանեց Էլչիբեյի օրոք հաստատված արտակարգ իրավիճակի ռեժիմը, որի շրջանակներում արգելվում էին զանգվածային ցույցերը, երթերը և հանրահավաքները, իսկ լրատվամիջոցներն աշխատում էին խիստ գրաքննության պայմաններում: Ղարաբաղյան հա-



կամարտությունը խոչընդոտի էր վերածվում Ադրբեջանում կայունության հաստատման, ժողովրդավարության և ազատության զարգացման ճանապարհին: Արդեն վաղ 1993 թվականի իրադարձությունները ռազմի դաշտում պատային իրավիճակի հեռանկար էին կանխագուշակում: Երկու կողմերի առաջխաղացման փորձերը իսկայական կորուստների էին բերում, զգացվում էր զինամթերքի պակաս, ծանր զրահատեխնիկան նորոգելու և նորացնելու անհրաժեշտություն կար, իսկ զորքը վերախմբավորման սուր կարիք էր զգում: Անկարող լինելով ընթացող պատերազմի պայմաններում կենսականորեն անհրաժեշտ տնտեսական և քաղաքական բարեփոխումներ իրականացնել՝ 1994 թվականի մայիսին Հայաստանը և Ադրբեջանը զինադադարի համաձայնագիր ստորագրեցին:

## Քաոսից դեպի կայունություն

Զինադադարը Հեյդար Ալիևին պետական վարչակարգի նկատմամբ վերահսկողությունն ուժեղացնելու հնարավորություն ընձեռեց: Պաշտոնից ազատվեց վարչապետ և Գյանջայի հեղաշրջման առաջնորդ Սուրեթ Հուսեյնովը: Ճնշվեց ղարաբաղյան պատերազմի վետերան և Ներքին գործերի փոխնախարար գնդապետ Ռովշան Ջավադովի ղեկավարած ոստիկանության հատուկ նշանակության ջոկատի (ՕՊՕՆ) ընդվզումը: Զուգահեռաբար միջոցներ էին ձեռնարկվում ներքին գործերի նախարարությունում, բանակում, կառավարությունում և տեղական իշխանություններում Ալիևին ընդդիմադիր ուժերին չեզոքացնելու ուղղությամբ:

Ռազմական գործողությունների սառեցումն Ադրբեջանին հնարավորություն տվեց վերադառնալ քաղաքական թվացյալ կայունության: Վերացվեց արտակարգ իրավիճակի ռեժիմը, թույլատրվեց ակտիվ քաղաքական գործունեությունը, իսկ գրաքննությունը դադարեցվեց: Այնուամենայնիվ, ռազմական գործողությունների դադարեցման վերաբերյալ Ադրբեջանում կարծիքները կիսվեցին: Ընդդիմադիր կուսակցությունների և կազմակերպությունների մեծամասնությունը քննադատեց զինադադարի համաձայնագիրը և ժողովրդին կոչ արեց պայքարել հայերի կողմից զավթված տարածքների լիակատար ազատագրման համար. մի տեսակետ, որը շատերն էին կիսում բանակում և կառավարությունում: Դժգոհությունները հատկապես մեծ էին խաղաղապահ ուժերի հնարավոր տեղակայման հեռանկարի կապակցությամբ, ինչն ընկալվում էր իբրև ԱՊՀ դրոշի ներքո ռուսական զորքերի վերադարձ Ադրբեջան: Տրվելով հասարակական դժգոհության և Թուրքիայի և արևմտյան առաջնորդների ազդեցությանը՝ Ալիևը հրաժարվեց ընդունել Ռուսաստանի միակողմանի միջնորդությունը, փոխարենը հայացքը շրջելով դեպի Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) Մինսկի խումբ: 1995 թվականի խորհրդարանական և 1998 թվականի նախագահական ընտրությունների ընթացքում իշխանության և ընդդիմության ներկայացուցիչների դիմակայությունը ղարաբաղյան հակամարտության կարգավորման շուրջ առանձնապես սուր դրսևորում չստացավ: Գործնականում բոլոր թեկնածուներն էլ խոսում էին Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը վերականգնելու անհրաժեշտության մասին, մի տարբերությամբ միայն, որ ընդդիմությունը, համարելով Մինսկի խմբի օժանդակությամբ անցկացվող բանակցություններն անպտուղ և ցածր արդյունավետ, առաջարկում էր ուժեղացնել բանակը՝ գրավյալ տարածքներն ուժով հետ վերադարձնելու նպատակով: «Ուռա-հայրենասիրական» կեցվածքով հատկապես աչքի էին ընկնում այն թեկնածուները, որոնք ծանրաբեռնված չէին իրենց հայտարարությունների պատասխանատվության բեռով: Այնուամենայնիվ, Ղարաբաղի հարցը հմտորեն շահարկվում էր իշխանությունների կողմից որպես արդարացում այն կոշտ միջոցառումների, որ իրականացվում էին ընտրությունների կազմակերպման ընթացքում տեղի ունեցած կեղծիքների և խախտումների դեմ ուղղված բողոքի ելույթները ճնշելու նպատակով: Իշխող վարչակարգը, որպես փաստարկ, մշտապես շեշտը դնում էր հասարակական կայունություն ապահովելու անհրաժեշտության վրա՝ հիմնավորելով, թե Ադրբեջանի պարտությունը պատերազմում ներքին խառնակ վիճակի արդյունք էր:

## Ներքին բանավեճեր

Այն իրավիճակում, որ ձևավորվել է 1997-98 թվականներին Մինսկի խմբի զանազան առաջարկները հակամարտության կողմերի մերժմանն արժանանալուց հետո, Ալիևը մի ոչ սովորական որոշում կայացրեց:  ախտելով բանակցությունների բովանդակությունը չբացահայտելու իր պարտավորությունը՝ նախագահը հանրության առջև բացեց սեղանին եղած բոլոր առաջարկները և խորհրդարանական քննարկում կազմակերպեց այդ խնդիրների շուրջ՝ հասարակական ու քաղաքական գործիչների, զանազան կազմա-

կերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Սակայն քննարկումը կառուցողական հունի մեջ դնել չհաջողվեց: Արտահայտվողների գերակշիռ մասն իր անվերապահ աջակցությունն արտահայտեց պետության կողմից որդեգրված քաղաքական կուրսին՝ ազգային միասնության կոչ անելով և պատրաստակամություն հայտնելով զոհաբերել ամեն ինչ հանուն Ադրբեջանի տարածքային ամբողջականության վերականգնման: Ազգային-ժողովրդավարական ճամբարի կուսակցությունների մի զգալի մասը, ինչպիսիք էին Ադրբեջանի ժողովրդական ճակատը և «Մուսավաթը», չմասնակցեց խորհրդարանական բանավեճին՝ այն համարելով պարզապես իշխանությունների քաղաքական խորամանկություն՝ ուղղված բանակցությունների ընթացքում առաջընթացի բացակայության փաստից հասարակական ուշադրությունը շեղելուն: Ընդդիմության առաջնորդները հրապարակայնորեն քննադատում էին  Ալիևի այն քաղաքականությունը, ըստ որի՝ նավթի արդյունահանման պայմանագրեր բաժանելու միջոցով Ադրբեջանը պետք է ձգտեր իր կողմը գրավել գերտերություններին և նրանց միջոցով ազդեր Հայաստանի վրա, որպեսզի վերջինս համաձայնի խաղաղության քիչ թե շատ ընդունելի փոխզիջումային տարբերակի: Այնուամենայնիվ, Ալիևը, գոնե մասամբ, հասավ իր նպատակին: Հանրությանը տեղեկացրեցին և ցույց տվեցին, որ իշխող վարչակարգի ընդդիմախոսները հակամարտության լուծման որևէ կառուցողական առաջարկ չունեն: Բացահայտված առաջարկների վերաբերյալ ԵԱՀԿ Մինսկի խմբի բացասական արձագանքն էլ ավելի հիմնավորեց բանակցությունների այլընտրանքային ձևաչափի որոնումների անհրաժեշտությունը:

## «Ղարաբաղի գործոնը» ադրբեջանական քաղաքականության մեջ

Ի՞նչ դերակատարում ունի ղարաբաղյան հակամարտությունը Ադրբեջանի քաղաքական թատերաբեմում: Ադրբեջանի թերզարգացած քաղաքական համակարգին բնորոշ է հանրապետության տարբեր տարածքների էլիտայից կազմված խմբերի միջև ընթացող կլանային պայքարը և մրցակցությունը: Ղարաբաղյան հակամարտության հետևանքներից մեկը եղավ այն, որ Հայաստանից տեղահանված (այսպես կոչված՝ «երազի»-ներ) և Նախիջևանի Ինքնավար Հանրապետության ադրբեջանցիները գերիշխող դիրք գրավեցին իշխանական և գործարար շրջանակներում: Այս ադրբեջանցիները շատ ավելի էին շփվել հայերի հետ և նրանց հետ կոնֆլիկտի անմիջական փորձ ունեին: Ինչ վերաբերում է Ղարաբաղի ադրբեջանցիներին, ապա թեպետ նրանք այսօր էլ բավականին լավ են ներկայացված իշխանության օղակներում և գործարար շրջանակներում, սակայն հայերի կողմից Ղարաբաղի և շրջակա տարածքների զավթումն էականորեն նվազեցրեց նրանց տնտեսական և քաղաքական ներուժը: Տարածքային էլիտաների այլ խմբավորումներ, ինչպիսիք էին Բաքու-Շիրվան, Գյանջա-Ղազախ և Մուգան-Լյանքարան խմբերը, հակամարտության արդյունքում հայտնվեցին լիովին մեկուսացված վիճակում:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ վերջին տարիների ընթացքում ղարաբաղյան հարցն անփոփոխ կերպով գտնվել է հանրության ուշադրության կենտրոնում, քաղաքական կուսակցությունները և էլիտաները ձգտել են այն օգտագործել իրենց շահերի համար: «Ղարաբաղյան խաղաթղթի» նման խաղարկումը չի վրիպել հանրության ուշադրությունից: Հայ-ադրբեջանական դիմակայության հիմքում ընկած գործոնների վերաբերյալ անցկացված (այդ թվում՝ հեղինակի կողմից) հասարակական կարծիքի հարցումները ցույց են տալիս, որ հարցվածների կարծիքով ներքին քաղաքական ուժերի կողմից իշխանության համար մղվող պայքարում Ղարաբաղի հարցի շահարկման գործոնը (34.1 տոկոս) շատ քիչ է զիջում համաշխարհային և տարածաշրջանային մրցակցող ուժերի՝ հակամարտության ձգձգման մեջ շահագրգռվածության գործոնին (35.4 տոկոս), որի մասին այդքան խոսվում է մամուլում:

Ի տարբերություն կլանների և էլիտաների միջև ընթացող պայքարի, որը մեծապես գաղտնի է մնում, քաղաքական կուսակցությունները պատրաստ են ղարաբաղյան հակամարտության կարգավորման վերաբերյալ դիրքորոշում արտահայտել և այն հանրության սեփականությունը դարձնել: Այնուամենայնիվ, ղարաբաղյան հակամարտության կարգավորման վերաբերյալ կուսակցությունների դիրքորոշումները բավականին մակերեսային են և հռչակագրային՝ առանց բանակցությունների ձևաչափի և բովանդակության կամ էլ հնարավոր փոխհամաձայնության բնույթի վերաբերյալ կոնկրետ առաջարկների: Ընդդիմադիր այնպիսի կուսակցություններ, ինչպիսիք են «Մուսավաթը», Ադրբեջանի ժողովրդական ճակատը, «Ազգային անկախության» կուսակցությունը և Ադրբեջանի ժողովրդավարական կուսակցությունը, ավելի պակաս են հակված փոխզիջումների, քան Ադրբեջանի իշխող «Նոր Ադրբեջան» կուսակցությունը: Ընդդիմության առաջնորդները պնդում են, որ միայն ազգային հայրենասիրական ուժերն են ի վիճակի համախմբել պետության ռեսուրսները՝ ազատագրելու գրավյալ տարածքները և վերականգնելու Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: Ընդ որում, ընդդիմության գործողությունների ծրագիրը բավական մակերեսային և տեսական բնույթ է կրում և ներառում է հետևյալ դրույթները՝ տնտեսության ուժեղացում կոռուպցիայի կրճատման միջոցով, երկրի պաշտպանունակության բարելավում և Հայաստանի վրա ավելի մեծ քաղաքական և ռազմական ճնշման գործադրում: Չափազանց նվազ տեղ է հատկացված իշխող էլիտայի կոռումպացվածության և մարդու իրավունքների խախտումների քննադատությանը որպես գործոններ, որ վնասում են Ադրբեջանի միջազգային վարկին և նվազեցնում միջազգային հանրության կողմից աջակցություն ստանալու հավանականությունը: Ղարաբաղյան հարցի կարգավորման առումով էլ ավելի անզիջում մոտեցում են հանդես բերում նվազ կշիռ ունեցող բազմաթիվ  կուսակցություններն ու նրանց առաջնորդները՝ ձգտելով իշխանությունների հանդեպ իրենց քծնանքը հանրության աչքերում փոխհատուցել հայերի նկատմամբ իրենց չինծու ռազմատենչ դիրքորոշմամբ:

2001 թվականին մի խումբ իրազեկ և հայտնի քաղաքական գործիչների կողմից հրապարակ նետվեց այսպես կոչված «Ղարաբաղյան հրովարտակը» կամ «Չորսի հրովարտակը»:  մբում ընդգրկված էին արտաքին գործերի նախկին նախարար Թոֆիկ Զուլֆուգարովը, նախագահի աշխատակազմի քարտուղարության նախկին ղեկավար Էլդար Նամազովը, Պետական նավթային ընկերության նախկին նախագահ Սաբիթ Բաղիրովը և հայտնի տնտեսագետ Նազիմ Իմանովը: Գիտակցելով, որ ղարաբաղյան հարցում կառավարության քաղաքականության քննադատությունն ու հայրենասիրական ճառերը բավարար չեն՝ խումբը գտնում էր, որ

անհրաժեշտ է որդեգրել միասնական մի դիրքորոշում, որը կընկալվի և կվայելի հանրության լայն շրջանակների աջակցությունը: Հռովարտակը պահանջում էր, որ Ադրբեջանի իշխանությունները դադարեն մտածել միակողմանի զիջումներ կատարելու մասին և որդեգրեն հակամարտության լուծման փուլային մոտեցում՝ այդպիսով երաշխավորելով Լեռնային Ղարաբաղին հարող ադրբեջանական տարածքների վերադարձը: Հռովարտակը հանրության մոտ լայն արձագանք գտավ և ստացավ քսանից ավելի քաղաքական կուսակցությունների, ինչպես նաև հարյուրավոր պետական մարմինների և գործիչների աջակցությունը: Հռովարտակը սահմանեց Ադրբեջանի «հանդուրժողականության առավելագույն մակարդակը» կամ այլ խոսքով՝ Ադրբեջանի համար ընդունելի փոխզիջումների առավելագույն սահմանը: Սա մի նախազգուշական գնդակ էր՝ արձակված դեպի իշխող էլիտան՝ հասկացնելու վերջինիս, որ այս սահմանի խախտումը հղի է հասարակական լայնամասշտաբ և միահամուռ բողոքի առաջ բերելու սպառնալիքով: Դրան հաջորդած բարձր մակարդակի բանակցությունները Փարիզում և Քի Վեսթում մոտ էին երկու առաջնորդների միջև համաձայնության կայացմանը: Այնուամենայնիվ, վերադառնալով Բաքու՝ Ալիևը չկարողացավ ապահովել անգամ իր մերձկա շրջապատի աջակցությունն առաջարկվող ծրագրին, որով նախատեսվում էր գրավյալ տարածքների վերադարձի դիմաց Լեռնային Ղարաբաղը *դե ֆակտո* հանձնել Հայաստանին:

Ընդդիմությունը և քաղաքացիական հասարակությունը ներկա կառավարության քաղաքականությունը Ղարաբաղի վերաբերյալ գնահատում են որպես պահպանողական, ոչ բավարար ճկուն, իսկ տեղեկատվության ապահովման տեսանկյունից՝ ծայրահեղ պարզունակ: Որոշումների ընդունման լիազորությունը բացառապես երկրի ղեկավարի ձեռքում կենտրոնացնելը, ինչը հետևանք է Ադրբեջանում հաստատված իշխանության ավտորիտար համակարգի, վնասակար ազդեցություն ունի խաղաղ կարգավորման բանակցությունների ոճի վրա: Իշխանությունները հայկական կողմի հետ հարաբերությունների մանրամասները գաղտնի են պահում ոչ միայն լայն հանրությունից, այլև հեղինակավոր քաղաքական գործիչներից, փորձագետներից և նույնիսկ խորհրդարանականներից: Վարչակարգը ջղաձգորեն է արձագանքում Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծմանն ուղղված ժողովրդական դիվանագիտությանը կամ քաղաքացիական որևէ այլ նախաձեռնության:

Նախագահ Իլհամ Ալիևի իշխանության գալուց հետո հակամարտության վերաբերյալ պաշտոնական դիրքորոշումը կոշտացել է: Գրավյալ տարածքներն ազատագրելու նպատակով զենքի դիմելու վերաբերյալ ռազմատենչ հայտարարությունները զուգակցվել են ռազմական ծախսերի էական աճով (2004 թվականի 170 միլիոն ԱՄՆ դոլարից 2005 թվականին հասնելով 300 միլիոն դոլարի) և շփման գծի երկայնքով հրադադարի խախտման դեպքերի քանակի ավելացմամբ: Միաժամանակ, միջազգային ասպարեզում (ՄԱԿ-ում, ԵԱՀԿ-ում և Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովում) նկատվեց Ադրբեջանի դիվանագիտական ակտիվության զգալի աճ՝ նպատակաուղղված հայերի կողմից ադրբեջանական տարածքների գրավման և վերաբնակեցման փաստի դատապարտմանը միջազգային հանրության կողմից: Իլհամ Ալիևի՝ հոր համեմատ լեգիտիմության ավելի ցածր մակարդակը նրան ստիպում է ավելի կոշտ դիրքորոշում որդեգրել: Միևնույն ժամանակ նավթային եկամուտների աճը Բաքվին ազատում է արտաքին դոնորներից կախվածությունից, մի գործոն, որով Ադրբեջանի իրավիճակն էականորեն տարբերվում է Հայաստանի իրավիճակից, որտեղ պետական բյուջեի մոտ մեկ երրորդը համալրվում է արտաքին աղբյուրներից:

## Ներքին և արտաքին լսարաններ

Ադրբեջանի իշխող էլիտայի վարքագիծն, այսպիսով, ծայրահեղ հակասական է: Ներկա ղեկավարությունն իշխանության բարձունքներին հասավ հմտորեն ձեռնածելով Ղարաբաղի խնդրի շուրջ ժողովրդի բողոքական տրամադրություններն ու հակամարտությունն արագորեն ու առանց Ադրբեջանի տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը վնասելու լուծելու բարձրագոչ խոստումները: Այս դիրքորոշումից հետ կանգնելն այժմ վտանգավոր է, քանի որ կարող է հանգեցնել կառավարության լեգիտիմության խաթարմանը: Միևնույն ժամանակ, պետական մարմիններում և տնտեսության մեջ ունեցած առանցքային դիրքերը պահպանելու անհրաժեշտությունը վարչակարգին մղում է փոխարինել փոխհամաձայնության և զիջումների միջոցով ներկա անկայուն «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրավիճակը ավելի կայուն մի իրավիճակով: Միջազգային հանրության առջև իրեն ներկայացնելով իբրև «խաղաղության կուսակցություն», իսկ ընդդիմությանը՝ իբրև Ղարաբաղն ուժի միջոցով վերադարձնելու կողմնակից ծայրահեղականներ՝ Ադրբեջանի կառավարությունը ձգտում է իր քաղաքական ընդդիմախոսներին չեզոքացնելու «քարտ բլանշ» ստանալ: Միևնույն ժամանակ, իշխող էլիտան ներքին սպառման համար շարունակում է լայնորեն կիրառել պոպուլիստական ռազմաշունչ ճառերը: Խաղաղության հաստատման համար կենսական անհրաժեշտություն ունեցող դժվարին փոխզիջումները հնարավոր չեն դառնա, քանի դեռ վարչակարգը չի դադարեցրել այս երկակի մոտեցումը և երկխոսություն չի սկսել հեղինակավոր ընդդիմադիր քաղաքական գործիչների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

Այն պայմաններում, երբ Ադրբեջանի տարածքի զգալի մասը զավթված է Հայաստանի կողմից, ոչ մի քաղաքական կուսակցություն կամ պատասխանատու առաջնորդ չի համարձակվի քաղաքական ինքնասպանություն գործել՝ առաջարկելով ինչ-որ զիջումներ կատարել Հայաստանի տարածքային հավակնությունների հարցում: Յուրաքանչյուրն, ով այդպես կվարվի, շատ արագ կպիտակավորվի իբրև «դավաճան» և «կոլլաբորացիոնիստ», և ժողովրդավարացմանը և բարեփոխումներին վերաբերող նույնիսկ ամենաառողջ գաղափարները, եթե արտահայտվեն զիջումների կոչող նման դիրքորոշումների համատեքստում, որևէ օգուտ չեն տա: Որպես հակամարտության կողմ, որը պարտվել է պատերազմի փուլում, Ադրբեջանը բախվում է խաղաղության հաստատման գործընթացում էական զիջումներ կատարելու հեռանկարին: Այս պայմաններում ընդդիմությունը, որպես բողոքի և այլախոհության խոսափող, ի վիճակի է առաջ քաշել ընդամենն ավելի կոշտ դիրքորոշումներ: Հենց սրանով է բացատրվում ընդդիմության՝ ղարաբաղյան հակամարտության կարգավորմանն ուղղված կառուցողական գաղափարների սակավությունը:

***Նկարում՝ Հայաստանյան ընդդիմության ներկայացուցիչները հանրահավաք են անցկացնում Երևանում 2004 թվականի ապրիլին:***

*Աղբյուրը՝ Ռոյթըր/Մխիթար Խաչատրյան*

# Նոր կառույցներ հին հիմքերի վրա.

## պետությունների ներուժը խաղաղ կարգավորման համար

**Հրաչ Չիլինգիրյան**

Դեպի ժողովրդավարություն անցումն ինչպես Հայաստանում, այնպես էլ Ադրբեջանում բնութագրվում է մի շարք թերություններով: Այդուհանդերձ, սխալ կլիներ դրանք վերագրել ղարաբաղյան հակամարտությանը և դրա հետևանքներին: Անջատողական բնույթի հակամարտություններում չներգրավված հետխորհրդային այլ պետությունները ևս առանձնապես մեծ ձեռքբերումներ չունեն ժողովրդավարության ասպարեզում, ինչպես ցույց են տալիս Բելառուսի և Թուրքմենստանի օրինակները: Հակառակը, Հայաստանում, Ադրբեջանում և տարածաշրջանի այլ երկրներում ժողովրդավարական զարգացման ցանկալի մակարդակի բացակայությունն արդյունք է մի կողմից վարչակարգերի ստեղծած, մյուս կողմից՝ ժառանգություն ստացած համակարգային խնդիրների համադրության: Անհրաժեշտ է հաշվի առնել այս խնդիրները, քանի որ կոնկրետ օրինակների հետազոտությունները ցույց են տվել, որ ժողովրդական վստահության մանդատով օժտված և ժողովրդավարության գործող համակարգ ունեցող պետություններն ավելի հաջողակ են զինված հակամարտությունների երկարաժամկետ լուծումներ գտնելու հարցում:

## Խնդիրներ կապված հարիզմատիկ առաջնորդների հետ

1994 թվականի զինադադարից ի վեր, խաղաղ կարգավորման շուրջ մեկ տասնամյակ տևած բանակցություններից հետո չափազանց ուշագրավ են Ադրբեջանի և Հայաստանի նախագահների հայտարարությունները: Ելույթ ունենալով 2005 թվականի սեպտեմբերին՝ նախագահ Իլհամ Ալիևը միանգամայն հստակ հայտարարություն արեց. «Մենք ստեղծում ենք ռազմական հզոր ներուժ, և մեր թշնամին պետք է իմանա, որ Ադրբեջանն ունակ է ցանկացած պահի ազատագրել իր տարածքները»: Ապա հավելեց, որ Բաքուն կրկնապատկում է իր ռազմական բյուջեն՝ 2006 թվականին հասցնելով մոտ 600 միլիոն ԱՄՆ դոլարի: Ալիևի հայաստանյան գործընկերը՝ ծագումով ղարաբաղցի և Ղարաբաղի նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանի արտահայտությունն ավելի կտրուկ էր. «Լեռնային Ղարաբաղը երբեք չի եղել և երբեք էլ չի լինի Ադրբեջանի մասը: Սա է ստորին սահմանը: Իսկ դրանից վեր կարելի է ինչ-որ լուծումներ մտածել և նոր կարգավիճակներ հայտնագործել»: Ի հիասթափություն միջնորդների և օտարերկրյա դիտորդների մեծամասնության, այս հայտարարությունները պարզապես ներքին սպառման համար չեն նախատեսված, դրանք արտացոլում են քաղաքական առաջնորդների դիրքորոշումները:

Քաղաքական առաջնորդների նման վճռական դիրքորոշումները մեծ ազդեցություն են ունեցել հանրության կողմից ղարաբաղյան հարցի ընկալումների վրա: Իրականում, հիմնախնդրի հիմնական բաղադրիչներից մեկն այն է, որ հակամարտության լուծումը մեծապես կախված է անհատ առաջնորդներից և հենց նրանց է պատկանում առանցքային դերը և ոչ թե ինստիտուտներին ու հասարակությանը: Օրինակ, 2002-ին Հեյդար Ալիևը հայտարարեց. «Եթե ե՛ս չկարողանամ լուծել Ղարաբաղի խնդիրը, ապա աշխարհում ոչ ոք դա չի կարող անել»: Նմանապես, շատերը կարծում են, որ միայն ծագումով ղարաբաղցիներ Քոչարյանն ու Հայաստանի պաշտպա-

**Հրաչ Չիլինգիրյանը Քեմբրիջի համալսարանի Ջաջի անվան Կառավարման ինստիտուտի (Judge Business School) Եվրասիայի հետազոտությունների ծրագրի տնօրենի օգնականն է, իսկ դոկտորական թեզը պաշտպանել է Լոնդոնի տնտեսագիտության և քաղաքագիտության համալսարանում (London School of Economics and Political Science):**



նության նախարար Սերժ Սարգսյանն են ի վիճակի ապահովել հայերի աջակցությունը որևէ համաձայնագրին: Խորհրդային Միության փլուզումից հետո գրեթե բոլոր նորանկախ պետություններում իշխանության գլուխ եկան տարբեր տեսակի «հարիզմատիկ առաջնորդներ»: Ինչպես սահմանել է գերմանացի սոցիոլոգ Մաքս Վեբերը, հարիզման դա «մի բնավորություն է, որը հատկապես անհամատեղելի է կառավարման ամենօրյա գործառույթների հետ» և որը մեծապես հիմնված է «անձնական հատկանիշների գերակայության և գործի դնելու վրա», քան հաստատված կանոններին հետևելու: Սա ենթադրում է պետական ուժեղ ինստիտուտների բացակայություն, ժողովրդավարության զարգացման ցածր մակարդակ և դանդաղ ընթացք, չկայացած քաղաքական մթնոլորտ և որպես այս ամենի հետևանք կառուցվածքային սահմանափակ կարողություններ: Իրականում, հարիզմատիկ իշխանություններն են այս նորահայտ հանրապետություններում հարցականի տակ դրել իշխանության տարբեր թևերի անկախության հարցը. և՛ օրենսդիր, և՛ դատական իշխանությունները գտնվում են գործադիրի ազդեցության տակ:

Հակամարտության կարգավորման տեսանկյունից հարցը կայանում է հետևյալում՝ արդյո՞ք կառուցվածքային աղետալի թերություններ ունեցող սակայն հարիզմատիկ առաջնորդի կողմից կառավարվող պետությունները, ինչպիսիք են Ադրբեջանը, Հայաստանը կամ Վրաստանը, ունակ են կարգավորում տալ ներքին հակամարտություններին և իրենց նախկին ինքնավար մարզերի համար ապահովել իրավունքների պաշտպանության անհրաժեշտ երաշխիքներ: Առաջնորդության և ղեկավարման խնդիրները, ինչպես նաև կառուցվածքային կարողությունների անլիարժեքություններն էլ ավելի են խորանում հակամարտության լուծման համոզիչ ծրագրերի բացակայության պայմաններում: Ղարաբաղի հայերին ադրբեջանական հասարակության մեջ վերաինտեգրելուն ուղղված գրավիչ առաջարկի բացակայությունն էլ ավելի է հեռացրել նրանց «վերամիավորման» մտքից: 1994 թվականի զինադադարից ի վեր Բաքվին նույնիսկ չի հաջողվել ապահովել վստահելի երաշխիքներ կամ հանդուրժողական ժողովրդավարություն անգամ հենց Ադրբեջանի ներսում: Եթե մի կառավարություն չի ցանկանում հանդուրժել երկրի ներքին քաղաքական ընդդիմությանը, բնականաբար հարցականի տակ է առնվում արտաքին «թշնամու» հետ կառուցողական հարաբերություններ հաստատելու նրա ունակությունը: Ղարաբաղին «ինքնավարության բարձր աստիճան» շնորհելու խոստումից զատ Ադրբեջանը չի մասնավորեցրել, թե ինքն ինչ է մտադիր առաջարկել, ոչ էլ հրապարակայնորեն քննարկել է այն հարցը, թե ինչ կարող է նշանակել ինքնավարությունն այդ առաջարկող պետության համար, և ինչ կշահի այդ ստացող հասարակությունը: Հանրային քննարկումների բացակայությունը խոստացված ինքնավարության և դրա առավելությունների շուրջ՝ զուգորդված Բաքվի բարձրաստիճան պաշտոնյաների կողմից արվող ռազմատենչ հայտարարություններով, Ղարաբաղի հայերին քիչ հիմք են տալիս վստահելու Ադրբեջանի մտադրություններին: Փոխարենը, այն անլրջությունը, որով Ադրբեջանում վերաբերվում են ինքնակառավարման բարձր աստիճան տրամադրելու առաջարկներին, նպաստել է վերջին տարիների ընթացքում Ղարաբաղի էլ ավելի խորն ինտեգրմանը Հայաստանի հետ:

## «Ղարաբաղի գործոնը» հայկական քաղաքականության մեջ

Հայաստանը ևս տառապում է «հարիզմատիկ իշխանության» հիվանդությամբ, սակայն այստեղ դրա հետևանքներն այլ կերպ են դրսևորվել: Հայաստանյան ընդդիմադիր կուսակցությունների կողմից «ղարաբաղյան խաղաքարտը» տարբեր կերպ է կիրառվել իշխող վարչակարգերի վարկանիշին հարվածելու համար: Ամենահայտնի օրինակը Լևոն Տեր-Պետրոսյանի հրաժարականն էր. նա մի ամբողջ շարք քաղաքական կուսակցությունների և նախկին դաշնակիցների կողմից մեղադրվեց Ղարաբաղի հարցում պարտվողական դիրքորոշում որդեգրելու մեջ: Վերջին տարիներին նախագահ Քոչարյանի՝ Ղարաբաղի «պատերազմի հերոսի» համբավը նրան չփրկեց քննադատությունից առ այն, որ իր նախագահության օրոք հակամարտությունը Ադրբեջանի և Ղարաբաղի միջև փոխակերպվել է Հայաստանի և Ադրբեջանի միջև երկկողմ հակամարտության, իսկ Ղարաբաղը դուրս է մղվել բանակցային գործընթացից: Ինչ-

պես արտահայտվեց ընդդիմադիր կուսակցություններից մեկի ղեկավար Ստեփան Դեմիրճյանը, մտավախություն կա, որ այսպիսով Հայաստանին կհարկադրեն տարածքային զիջումներ կատարել Ադրբեջանին (օրինակ՝ զիջել Հայաստանի ամենահարավային՝ Մեղրու տարածաշրջանի մի մասը): Թե՛ ընդդիմադիր կուսակցությունները և թե՛ իշխող կոալիցիայի անդամ կուսակցությունները պաշտպանում են այն փաստարկը, որ ինքնիշխան Հայաստանի տարածքը չի կարող սակարկման առարկա դառնալ:

Այնուամենայնիվ, հաճախ դժվար է տարբերակել՝ արդյոք հակամարտության լուծման ուղիների շուրջ հնչող տեսակետներն իսկապե՞ս տարբեր են, թե հակառակ տեսակետներն արտահայտվում են իշխող վարչակարգի ուղղակի քննադատության նպատակով: Քանի որ կուսակցությունները հիմնականում զուրկ են քաղաքական լայն հենարանից, նրանց քաղաքական գործունեությունը սովորաբար սահմանափակվում է իշխանությունների քննադատությամբ: Այդուհանդերձ, նրանց քննադատությունն անարդյունավետ է և չի առաջարկում կենսունակ քաղաքական կամ տնտեսական այլընտրանքներ Հայաստանի զարգացման կամ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի լուծման տեսանկյունից: Ընդդիմության վայելած պահային հասարակական աջակցությունն ավելի շուտ Քոչարյանի կառավարության հանդեպ հասարակական դժգոհության արդյունք է, քան այդ կուսակցությունների վարած քաղաքական գծի կամ գաղափարախոսության հանդեպ տածած հասարակական համակրանքի: Ինչպես և Ադրբեջանում, հայաստանյան քաղաքական ասպարեզում չկա դյուզն անգամ տեղ փոխհամաձայնություն պարունակող քաղաքական մոտեցումների համար: Հայաստանյան որևէ կուսակցություն չի ցանկանա Ղարաբաղը «զիջողի» տպավորություն գործել. երբ «չափավորները», հղում անելով Իսրայելի դեպքում կիրառված «տարածք՝ խաղաղության դիմաց» մոդելին, խոսում են «տարածքային զիջումների» մասին, այդ դեպքում անգամ ի նկատի է ունեցվում ոչ թե Ղարաբաղի, այլ դրանից *դուրս* գտնվող ադրբեջանական գրավյալ տարածքների վերադարձը:

Չնայած որ հայկական սփյուռքը մշտապես արտահայտում է իր դժգոհությունը Քոչարյանի կառավարության հանդեպ՝ կապված կոռուպցիայի, մարդու իրավունքների և մի շարք սոցիալ-տնտեսական հարցերի հետ, այն ընդհանուր առմամբ խրախուսում է Ադրբեջանից անջատվելու Լեռնային Ղարաբաղի հավակնությունը՝ խոշորածավալ ֆինանսական ծրագրերի միջոցով: Հայաստանի և Ղարաբաղի համար մեծապես օգտակար են եղել նաև ԱՄՆ-ում, Եվրոպայում և Ռուսաստանում հաստատված սփյուռքահայ համայնքների լոբբիստական ջանքերը: Այդուհանդերձ, չափազանց կարևոր է այն, որ լոբբիստական գործողություններն իրականացվում են Երևանի և Ստեփանակերտի հետ համաձայնեցված կարգով, և որ սփյուռքը, որպես այդպիսին, Ղարաբաղի հարցի շուրջ առաջ չի քաշում նոր օրակարգ կամ տեսլական: Այնպես ինչպես հայ-թուրքական հարաբերությունների պարագայում, քիչ հավանական է, որ սփյուռքը կմիջամտի Հայաստանի կամ Ղարաբաղի հայերի և Ադրբեջանի միջև քաղաքական խնդիրներին: Թեպետ սփյուռքի որոշ հատվածներ կարող են չհամաձայնել խաղաղության համաձայնագրի վերջնական տարբերակին, մեծ առումով սակայն, հայ-ադրբեջանական հարաբերությունները և հակամարտության կարգավորման խնդիրները համարվում են այն հասարակությունների գործը, որոնք անմիջականորեն ներգրավված են դրանցում:

## Բացառման քաղաքականություն

Քաղաքականության և կառավարման անձնավորումը նպաստել է նաև «օտարման» ծայրահեղ ձևերի առաջացմանը, որոնք արտահայտվում են «այլ խմբի» հրեշայնացման և բացառման ձևով, լինեն դրանք հայերն Ադրբեջանում, թե ադրբեջանցիները՝ Հայաստանում և Ղարաբաղում: Կովկասյան հակամարտությունների այս կողմը բավարար ուշադրության չի արժանացել: Հակամարտությունների առաջացումն այս տարածաշրջանում հաճախ ուղղակիորեն կապվում է փոքրամասնություն-մեծամասնություն հարաբերությունների վերակազմավորման խնդիրների և ոչ անհարժեշտաբար «պատմական» թշնամության հետ, ինչպես հաճախ ներկայացվում է մամուլում: «Օտարող» հայտարարություններն էլ ավելի են թուլացնում փոքրամասնության (Ղարաբաղի հայեր) և մեծամասնության (ադրբեջանցիներ) հարաբերությունները: Նախագահ Քոչարյանն, օրինակ, 2003 թվականի հունվարին ասում էր. «Հայերի ջարդերը Սումգայիթում և Բաքվում և 1991-92 թվականներին հայերին Ղարաբաղից զենքի ուժով զանգվածաբար արտաքսելու փորձերը հաստատում են հայերի՝ Ադրբեջանում ապրելու անհնարինությունն ընդհանրապես: ոսքն ինչ-որ էթնիկ անհամատեղելիության մասին է...»:

Քոչարյանի ադրբեջանցի գործընկեր Հեյդար Ալիևն իր ժամանակին նույնքան ոչ դիվանագիտորեն վարվեց, երբ 2001-ին հայտարարեց. «Հայ ագրեսորները որևէ բանով չեն տարբերվում Հիտլերի զորքերից, գերմանական ֆաշիզմից»:

Նման արտահայտությունները ստվերում են այս տարածաշրջանում տարբեր ազգերի միջև դարերով գոյություն ունեցած բարիդրացիական հարաբերությունների վրա: Հատկապես վերջին տարիների ընթացքում Հարավային Կովկասի հասարակություններում հազվադեպ են քննարկվում էթնիկ խմբերի հարաբերությունների դրական կողմերը: Եվ միայն երբ օտարերկրացիները կամ լրագրողներն են հետաքրքրվում, այնժամ մարդիկ, սովորաբար, վերհիշում են «մյուս կողմի» հետ լավ հարաբերությունների օրինակներ կամ դրվագներ իրենց կենսափորձից:

Մետրոպոլ պետությունների կառուցվածքային թերություններից և նախկին ինքնավարությունների վերաինտեգրման ուղված համոզիչ առաջարկների բացակայությունից բացի, «օտարումը» խորացնող գաղափարական և սոցիալական ճառերը հակամարտությունների լուծման տեսանկյունից լրջագույն խնդիր են ներկայացնում: Եթե, վերջին հաշվով, կայուն խաղաղության ձեռք բերումը հասարակությունների հաշտեցման գործընթացի արդյունք է, Հարավային Կովկասում այդքան տարածված «հակառակ կողմի» շարունակական հրեշայնացման մշակույթը վտանգում է այդ խաղաղությունը: Ադրբեջանցիների դեպքում «օտարող» հայտարարությունների արմատները ռազմական պարտության, տարածքների կորստի, սոցիալ-տնտեսական պայմանների և, որ ամենակարևորն է, մոտ 800 հազար փախստականների և ներքին տեղահանված անձանց (ՆՏԱ) ճակատագրի շուրջ ապրումների մեջ են: Այն հուսալքությունը և ահռելի խնդիրները, որոնց բախվում են ՆՏԱ-ներն իրենց ամենօրյա կենսագործունեության ընթացքում, «օտարման» համար հզոր հուզական և քաղաքական հիմք են ստեղծում: Հայկական կողմի «օտարող» հայտարարությունների արմատները հիմնականում զոհի ազգային հոգեբանության և վերադարձականության (իրեդենտիզմ) մեջ են, որոնք էլ

իրենց հերթին թաքնված են ինչպես անցյալի, այնպես էլ մեր ժամանակների ցեղասպանության մասին հիշողությունների դրա հանդեպ վախի մեջ: Ավելին, հայերն ադրբեջանցիներին նույնացնում են «թուրքերի» հետ, արտապատկերելով Թուրքիայի նկատմամբ տածած թշնամանքը ադրբեջանցիների վրա:

Խնդիրը նրանում չէ, թե որքանով են «օտարող» ճառերն արդարացված կամ արդյոք դրանց համար առկա են լեգիտիմ պատճառներ, այլ նրանում է, թե որոնք են հակամարտության լուծման տեսանկյունից դրա սոցիոլոգիական հետևանքները: Հատկապես վճռորոշ է այն, որ խիստ բաժանումը «մերոնց ու ձերոնց», ինչպես նաև անհատական գործողությունները կամ առանձին դեպքերն ամբողջ բնակչության վրա տարածելն ավելի ու ավելի անհավանական են դարձնում հակամարտության խաղաղ լուծումը: Փոխարենը, «օտարումը» խորացնող ծայրահեղական հայտարարությունները սաստկացրել են ռազմաշունչ տրամադրությունները հասարակություններում, որոնք նման հանգամանքներում շատ հեռու են գտնվում հաշտեցման գործընթացում ներգրավվելուց:

## Նոր կառույցներ հին հիմքերի վրա

Փորձը ցույց է տվել, որ տասնամյակներ տևած հակամարտությունների լուծումը բարդ ու դժվարին խնդիր է անգամ շատ ավելի զարգացած պետությունների և կայացած ժողովրդավարությունների համար, ինչպիսիք են Իսրայելն ու Կիպրոսը, էլ ուր մնաց այնպիսի զարգացող պետությունների, ինչպիսիք են Հայաստանն ու Ադրբեջանը: Հարավային Կովկասում դեռևս շարունակվում է պետական կառույցների վերակառուցման և նախկին խորհրդային համակարգի մնացուկներից ձերբազատվելու կառավարման համակարգի արդիականացման գործընթացը: Այլ կերպ ասած՝ պետականության կերտումը կամ պետության ձևի սահմանման գործընթացը դեռևս շարունակվում է: Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի անկախացումից ավելի քան մեկ տասնամյակ անց, դեռևս ակտիվ քննարկումների առարկա է մնում պետության նախագահական, թե խորհրդարանական մոդելի սահմանման նպատակահարմարությունը: Երեք հանրապետությունների սահմանադրություններն էլ դեռևս շարունակում են լրացվել և փոփոխվել: Ցայսօր քննարկվում են քաղաքացիական ծառայության կազմը, լիազորությունների շրջանակներն ու վարքի կանոնները: Այս խնդիրներն առկա են նաև Ղարաբաղում (և տարածաշրջանի մյուս *դե ֆակտո* պետություններում), սակայն մեկ էական տարբերությամբ. միջազգային հանրության կողմից չճանաչվածության և կարևորագույն ռեսուրսների սղության պատճառով Ստեփանակերտի համար խնդիրը կայանում է Հայաստանի հետ ինտեգրման խորության և ինտենսիվության մեջ:

Ինքնավար մարզերի և մետրոպոլ պետությունների միջև իշխանական լիազորությունների բաշխման նախկին համակարգի արմատական վերափոխումը և Ղարաբաղում *դե ֆակտո* գոյություն ունեցող «նոր կարգը» կազմում են Հարավային Կովկասում պետությունների վերակազմավորման առաջին փուլը: Այնուամենայնիվ, քանի դեռ այդ նոր կարգը միջազգայնորեն չի ճանաչվել, նախկին խորհրդային ինքնավարությունների համար անկախության ամենաէական առանձնահատկությունը կայանում է քաղաքական, սոցիալական, տնտեսական և ազգային սահմանների համընդհանուր վերագծման մեջ: Ղարաբաղյան իշխանությունների և հասարակության համար դա անկախության ամենահիմնական ձեռքբերումն է:

Վերջիններիս տեսանկյունից, Ղարաբաղի հայերն այլևս ինչ-որ տիտղոսակիր մի պետության փոքրամասնությունը չեն, այլ մի վերակազմավորված պետության մեծամասնություն: Նրանք այլևս կախված չեն հեռուներում գտնվող իշխանության կենտրոններում կայացված որոշումներից, այլ իրենք են որոշում իրենց գործողությունները:

Այս համատեքստում կողմերի միջև փոխհամաձայնությունների ու փոխպայմանավորվածությունների ձեռքբերումը պահանջում է, որ շնորհող և ստացող միավորներն օժտված լինեն կառուցվածքային տարրական կարողություններով: Հարցը կայանում է նրանում, թե արդյոք դեռևս կայացման գործընթացում գտնվող պետությունը կարող է տիրապետել նման կայուն կառույցների: Կարևոր է տարբերակել կառուցվածքային թերությունների արտաքին և ներքին հիմքերը: Ներքինի տեսանկյունից, պետության վերակառուցման ելակետը խորհրդային ժամանակներից ժառանգած խարխուլ ենթակառուցվածքներն են. Հարավային Կովկասի երկրները ներգրավված են հին հիմքերի վրա նոր կառույցներ հիմնելու գործընթացի մեջ: Դե ֆակտո պետությունների համար կառուցվածքային թերությունները մեծ մասամբ արտաքին գործոնների հետևանք են, որոնցից ամենավճռորոշներն են միջազգային պաշտոնական աջակցության, օտարերկրյա ներդրումների, ենթակառուցվածքների վերակառուցման համար անհրաժեշտ օգնության, արտաքին աշխարհի հետ հաղորդակցության (հատկապես տեղեկատվական և տեխնոլոգիական) և քաղաքացիական հասարակության զարգացմանն ուղղված էական օժանդակության բացակայությունը: Անկախ ՀԿ-ների կողմից տարվող աշխատանքներից, վերը նշված միջազգային մասնակցության և օգնության տրամադրման մերժումը, նպաստակ է հետապնդում պատժել անջատողականությունը և ինչ-որ գործիքներ կիրառելով հակամարտության կարգավորման փոխհամաձայնեցված տարբերակ պարտադրել: Սակայն այս քաղաքականությունը այլ հետևանքներ է թողել. խորացող մեկուսացում և կասկածներ առ այն, որ միջազգային հանրությունն անկողմնակալ չէ և սատար է կանգնում մետրոպոլ պետությունների դիրքորոշումներին:

Ինքնավար հանրապետություններում բնակվող ազգային փոքրամասնություններին հիմնականում չեն վերաբերվում որպես մեծամասնության պետության քաղաքացիների, ընդհակառակը մեծամասնության կողմից բնորոշվում էին որպես «օտարներ». հայերը մեծամասնության պետությունում «ոչ ադրբեջանցիներ» էին, «վերաբնակեցվածներ» կամ «եկվորներ»: Փոքրամասնությունները գտնում են, որ անկախության ձեռքբերմամբ իրենք ազատվել են մեծամասնության «սոցիալական վերահսկողությունից» և «օտար» լինելու ծանր բեռից: Եթե որպես ցուցանիշ վերցնենք Կիպրոսի կամ պաղեստինաիսրայելական փորձը, ապա Հարավային Կովկասի հակամարտությունների լուծումը չափազանց երկար ժամանակ կպահանջի: Միջնորդական ջանքերն ու լուծումներ գտնելու փորձերը չպետք է սահմանափակվեն միայն կողմերի քաղաքական կամքի դրսևորման ու կողմերի համար ընդունելի համաձայնագրի ձեռքբերման փնտրտուքով, անհրաժեշտ է նաև ընկալել առաջնորդների և պետության կառուցվածքային կարողությունները, ժողովրդավարական զարգացումները և միջհասարակական ու ներհասարակական քննարկումների բովանդակությունը:

# Ճանաչման և ժողովրդավարացման քաղաքականություն

## Լորենս Բրոերս

Մինչև վերջերս միջազգային կազմակերպությունները և արևմտյան պետություններից շատերը հրաժարվում էին որևէ գործ ունենալ եվրասիական *դե ֆակտո* պետությունների (Լեռնային Ղարաբաղ, Աբխազիա, Հարավային Օսիա և Մերձդնեստր) հետ: Համարվում էր, որ ցանկացած այսպիսի հարաբերություն լեգիտիմացնում է էթնիկ զատումները և վտանգում տարածքային ամբողջականության սկզբունքի առաջնայնությունը. մոտեցում, որն Արևմուտքը որդեգրել էր հետխորհրդային պետությունների կազմավորման առնչությամբ: Որպես հետևանք, տարածաշրջանի *դե ֆակտո* պետությունների նկատմամբ Արևմուտքը հազվադեպ է որդեգրել անցումային շրջանի և ժողովրդավարացման այն նույն մոտեցումները, որը որդեգրել է տարածաշրջանի *դե յուրե* պետությունների դեպքում: Որպես առանձին քաղաքական միջավայրեր դիտարկվելու փոխարեն՝ *դե ֆակտո* պետությունները դիտվում են բացառապես արտաքին դերակատարների հետ իրենց հարաբերությունների և խաղաղության հաստատման գործընթացների համատեքստում: Այս բացթողումը վիճարկման առարկա է դարձել որոշ *դե ֆակտո* պետությունների կողմից, որոնք ավելի ու ավելի հաճախ են կիրառում ժողովրդավարության տերմինաբանությունը՝ անկախացման իրենց նկրտումներն ավելի առաջ մղելու նպատակով: Այս ռազմավարությունն արժանանում է նաև որոշ արևմտյան դիտորդների հավանությանը: 2003 թվականից ի վեր, Ղարաբաղի հայ քաղաքական գործիչներն ուշադրություն են հրավիրում «Ֆրիդըմ հաուս» կազմակերպության կողմից հաշվարկվող՝ «Ազատությունն աշխարհում» համաթվի վրա, որը Լեռնային Ղարաբաղի դեպքում գնահատվել է որպես «մասամբ ազատ»: Չնայած այն բանին, որ «Ֆրիդըմ հաուս»-ի համաթիվը ժողովրդավարական գործընթացների գնահատման համար չափազանց պարզունակ համակարգ է, կարևոր է, որ Ղարաբաղի ցուցանիշը գերազանցել է Ադրբեջանի համաթիվը և մոտ է եղել Հայաստանի ցուցանիշին:

Եթե, ինչպես երբեմն պնդում են, ժողովրդավարացումը հակամարտության կարգավորման նախապայմանն է, ապա կարիք կա այնպիսի հարաբերություններ հաստատել *դե ֆակտո* պետությունների հետ, որոնց դեպքում վերջիններս կընդունվեն որպես ինքնուրույն քաղաքական համակարգեր և հետխորհրդային տարածքի վերափոխման ընդարձակ գործընթացների մասնակիցներ: Ավելին, *դե ֆակտո* պետություններում ժողովրդավարական գործընթացներին աջակցություն ցուցաբերելու դժկամությունը վերջիվերջո դանդաղեցնում է իսկապես մասնակցային և բազմակարծիք քաղաքականության զարգացումը, որի վրա, ինչպես փորձագետների մեծամասնությունն է պնդում, պետք է հիմնվի խնդրի ապագա ցանկացած կարգավորում: Այսպիսով, *դե ֆակտո* պետությունների հետ հարաբերությունների հաստատումը տարածքային ամբողջականության սկզբունքի առաջնայնությանը հակառակ մոտեցում համարվելու փոխարեն կարող է և պետք է դիտարկվի որպես ժողովրդավարական կառավարմանը ցուցաբերվող աջակցության համահունչ քաղաքականություն: Վերոնշյալ զարգացումները մի շարք հարցեր են առաջ քաշում. հասարակության ժողովրդավարացման տեսանկյունից որքանո՞վ է կարևոր տվյալ պետության ճանաչումը և դրա անդամակցումը պետությունների միջազգային համակարգին, կարո՞ղ ենք արդյոք տարբերակել ժողովրդավարության մասին արված հայտարարությունները իրականությունից: Եթե այո, ապա ինչպե՞ս են *դե ֆակտո* պետություններն օգտագործում ժողովրդավարության տերմինաբանությունը՝ միջազգային հանրության աչքում լեգիտիմություն ձեռք բերելու նպատակով: Այս հարցերը քննարկման առարկա դարձնելն ինքնին չի նշանակում ապրիորի լեգիտիմացնել *դե ֆակտո* պետությունների գոյությունը, մինչդեռ տրամաբանորեն բխում է խաղաղության հաստատման գործընթացներում վերջիններիս ներգրավելու որևէ փորձից:

## Մեկնարկային դիրքերի կարևորությունը

Անցումային փուլի վերաբերյալ տեսությունների համաձայն, ժողովրդավարացման հաջողության կամ ձախողման հարցում մեկնարկային դիրքերն էական նշանակություն ունեն: Ղարաբաղի դեպքում, զինված հակամարտության բացասական ժառանգությունը մեղմվեց մի շարք գործոնների շնորհիվ: Առաջին հերթին, ի տարբերություն Չեչնիայի, Ղարաբաղի զինված ուժերը չմասնատվեցին և չվերածվեցին միմյանց հետ մրցակցող դաշտային հրամանատարների կողմից ղեկավարվող և «կլանային» խմբավորումների ազդեցությունը կրող առանձին բանակների: Չնայած իշխանության համար պայքար էր մղվում Լեռնային Ղարաբաղի *դե ֆակտո* նախագահ Արկադի Ղուկասյանի և պաշտպանության նախարար Սամվել Բաբայանի միջև՝ այս պայքարը սահմանափակվեց և լուծում ստացավ 2000 թվականին, երբ մահափորձի մեղադրանքով Բաբայանը դատապարտվեց ազատազրկման: Երկրորդ. Հայաստանի կողմից Ղարաբաղին ցուցաբերվող լայնամասշտաբ տնտեսական և այլ բնույթի օժանդակությունը մեղմել է պատերազմում ունեցած կորուստների ազդեցությունը: Հայաստանը (և ավելին՝ հայկական սփյուռքը) ապահովում է Լեռնային Ղարաբաղի բյուջեի ավելի քան կեսը, ինչպես նաև տրամադրում է մեծ ծավալի ռազմական, էներգետիկ օժանդակություն և անհրաժեշտ այլ ապրանքներ ու ծառայություններ: Երրորդ. չնայած միավորումը Հայաստանի հետ 1988 թվականին սկիզբ առած «Ղարաբաղյան շարժման» գլխավոր սկզբունքն էր, այդ շարժումը նաև շատ արագ սկսեց դիտվել որպես ժողովրդավարական արժեքներ խթանող դիսիդենտական շարժում: Որպես հետևանք, ժողովրդավարության (առնվազն) տերմինաբանությունը եղել է և մնում է Ղարաբաղի հայկական քաղաքական մշակույթի առանցքը: Սա լրացուցիչ կարևոր գործիք է ընդդիմության ձեռքին, և վերջինս հաճախ է հղում կատարում ղարաբաղյան շարժման քաղաքական արժեքների այժմեականությանը:



***Նկարում՝ Արկադի Ղուկասյանը քվեարկում է 2002 թվականի օգոստոսի 11-ին Ստեփանակերտում կայացած նախագահական ընտրությունների ընթացքում:***

*Աղբյուրը՝ AP Photo/Ֆոտոլուր*

Ի հակադրություն նշված գործոնների՝ հարկ է դիտարկել կառուցվածքային բազմաթիվ թերությունները: Չնայած Ղարաբաղին հաջողվեց խուսափել այնպիսի կլանային պատերազմներից, ինչպիսիք չափազանց մեծ վնաս հասցրեցին Չեչնիայի անկախանալու մղումներին, այնուամենայնիվ, Ղարաբաղի քաղաքական մշակույթը խիստ ռազմականացված է: Փաստորեն, դեռևս ուժի մեջ է ռազմական դրության ռեժիմը, որի գործողության ժամկետն ամեն տարի երկարաձգվում է նախագահի հրամանագրով, միևնույն ժամանակ պատերազմի տարիներին առանցքային դերակատարների միջև ձևավորված և կոփված քաղաքական դաշինքները ենթակա չեն որևէ քննադատության: Չնայած նման իրավիճակը չի խանգարել քաղաքացիական ապառազմականացված քաղաքականության կայացմանը, այնուամենայնիվ շարունակվող ռազմական դրությունը վարչակազմին թույլ է տալիս գաղտնի պահել որոշ կարևոր տեղեկատվություն, ինչպիսին է, օրինակ, ժողովրդագրական վիճակագրությունը, որն էական նշանակություն ունի ընտրությունների թափանցիկության տեսակետից: Երկրորդ հերթին, Ղարաբաղի ժողովրդավարացման առումով Հայաստանի աջակցությունը մինչ օրս երկսայր սրի դեր է կատարել: Մի կողմից, այդ աջակցությունը մեղմացնում է բնակչության ծանր սոցիալական պայմանները՝ ռեսուրսների արտաքին աղբյուր տրամադրելու միջոցով, սակայն միևնույն ժամանակ այն նաև վերացնում է Ստեփանակերտի իշխանությունների և տեղական հասարակության միջև «սոցիալական պայմանագրի» շուրջ բանակցությունների անհրաժեշտությունը: Սրա պատճառով Ստեփանակերտի վարչակարգն ինչ-որ առումով ընկալվում է որպես «ռանտյե» վարչակարգ, այսինքն, իշխանություն, որը պահվում է արտաքին, այլ ոչ թե իր կողմից կառավարվող հասարակության միջոցների հաշվին, ինչի արդյունքում նվազ հաշվետու է այդ հասարակությանը:

Պատերազմի կարևորագույն արդյունքներից մեկը Լեռնային Ղարաբաղի էթնիկ միատարրության հաստատումն էր՝ ազերի բնակչության արտաքսման միջոցով: Սա թույլ տվեց խուսափել լուրջ քաղաքական պառակտումից և հասնել ձևավորված *դե ֆակտո* պետության գոյության ու դրա նպատակի շուրջ որոշակի համընդհանուր փոխհամաձայնության: Այնուամենայնիվ, միատարրության ապահովումն իր հերթին վերացրեց քաղաքացիական և ոչ էթնիկ պատկանելության վրա հիմնված հասարակություն ձևավորելու հնարավորությունը: Օրինակ՝ բազմազգ Աբխազիայում ազգային փոքրամասնությունները ինտեգրվեցին հասարակության մեջ, և չնայած մինչ այժմ Աբխազիան չի քաղել դրանից բխող իրական ժողովրդավարական պտուղները, այնուամենայնիվ փոքրամասնությունների գոյությունն ինքնին աբխազական պետականության ուրվագծման համար մրցակցային քաղաքական դաշտ է ապահովում: Ղարաբաղում էթնիկ միատարրությունը, փաստորեն, վերջ դրեց քաղաքական անդամակցության խնդրի էությանը վերաբերող բանավեճերին և նպաստեց «Ղարաբաղի ազերի» ինքնության բնաջնջմանը:

## Ժողովրդավարացման վեկտորներ

Այդ դեպքում վերոնշյալ գործոնների և գոյություն ունեցող չճանաչման քաղաքականության ինչպիսի՞ փոխհարաբերության ազդեցությամբ են Լեռնային Ղարաբաղում գրանցվում ժողովրդավարական արդյունքներ: 1991 թվականին անկախություն հռչակելուց ի վեր Լեռնային Ղարաբաղում անց են կացվել երեք նախագահական և չորս խորհրդարանական ընտրություններ: Չնայած այն բանին, որ դրանց մասնակցում էին բազմաթիվ դիտորդական առաքելություններ մի շարք միջազգային կազմակերպություններից և Անկախ պետությունների համագործակցությունից (ԱՊՀ), այդ ընտրությունները միջազգային հանրության կողմից չեն ճանաչվում: Ղարաբաղի իշխող էլիտան ձևավորվեց պատերազմին մասնակից հրամանատարներից, ովքեր Ղուկասյանի նախագահ դառնալուց հետո կարծես թեքվեցին դեպի ապառազմական և բազմակուսակցական քաղաքականություն: Ղարաբաղի ընդդիմությունը ձևավորվել է տեղական որոշակի գործոնների արդյունքում, բայց մասամբ նաև՝ որպես ավելի ընդարձակ հայ քաղաքական դաշտի ածանցյալ: Գլխավոր «ընդդիմադիր» կուսակցությունը՝ Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ կամ դաշնակներ), Հայաստանում իշխող կոալիցիայի անդամ է և հայկական Սփյուռքի խոշոր քաղաքական ուժերից մեկը: Սկզբում այն համագործակցում էր Ղարաբաղի իշխանությունների հետ, իսկ հետագայում կառավարության կազմում ներկայացվածության խնդրի շուրջ վիճաբանության արդյունքում անցավ ընդդիմության շարքերը: Մյուս ընդդիմադիր կուսակցությունները ձևավորվել են բարեփոխումների ջատագովների, կոմունիստական ավանդույթների հետնորդ մտավորականների և նաև իշխող էլիտայի կողմից, որն այդ կերպ փորձում է մասնատել ընդդիմության ընտրազանգվածը: Այնուամենայնիվ, Ղարաբաղում ընտրությունների ընթացքում պայքարն առավելապես ընթանում է ոչ թե կոնկրետ խնդիրների կամ քաղաքականության ընտրության շուրջ, այլ ընդամենը իշխանության ձեռք գցելու. քաղաքական պաշտոնի միջոցով ո՞վ է ստանալու անձեռնմխելիության իրավունք:

Ընտրություններում, սովորաբար, առավելություն էին ստանում իշխող վարչակարգի թեկնածուները, մինչև որ 2004 թվականին Ստեփանակերտի քաղաքագլխի ընտրություններում հաղթանակ տարավ բարեփոխումների ջատագով «Շարժում-88» նորաստեղծ կուսակցության թեկնածուն: Սակայն ակնկալիքները, թե ընդդիմությունը հա-

ջողության կիասնի նաև 2005 թվականի հունիսի խորհրդարանական ընտրություններում, չարդարացվեցին: Ընդդիմադիր հիմնական դաշինքը, որին անդամակցում էին ՀՅԴ-ն և «Շարժում-88»-ը, ստանալով քվեների 25 տոկոսը, տիրացավ 33 մանդատներից ընդամենը երեքին: Վարչակարգի աջակցությունը վայելող «Ժողովրդավարական Արցախ» և «Ազատ հայրենիք» կուսակցությունները միասին ստացան ձայների 64 տոկոսը և հաղթեցին ընտրություններում: Ընտրություններին հետևում էին մոտ 130 միջազգային դիտորդներ, ներառյալ՝ ԱՊՀ-ից, «Մարդու իրավունքների պաշտպանության բրիտանական հելսինկյան խմբի» ներկայացուցիչներ և մի խումբ պաշտոնյաներ Միացյալ Նահանգներից: Դիտորդների գնահատականը գրեթե ամբողջովին դրական էր: Այնուամենայնիվ, անկախ լրատվամիջոցների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները հայտարարում էին նախընտրական քարոզարշավի ընթացքում տեղի ունեցած խախտումների մասին: Նրանք պնդում էին, թե վարչակարգի կողմից սատարվող կուսակցությունների օգտին քվեարկելու նպատակով տրվել են ընտրակաշառքներ: Նրանք իրենց բողոքի ձայնը բարձրացրեցին ընդդեմ ընտրական օրենսգրքում կատարված այն փոփոխությունների, ըստ որոնց վերացվեց մեկ փուլով հաղթանակ տանելու համար գործող «50% + 1» պահանջը և թեկնածուի կողմից ընտրվելու համար սահմանված անհրաժեշտ ձայներ չհավաքելու դեպքում առավելագույն ձայներ ստացած երկու թեկնածուներին հաջորդ փուլ տեղափոխելու հնարավորությունը: Արդյունքում, չնայած դիտորդների և ընդդիմության ներկայացուցիչների կողմից չբողոքարկվեց ընտրությունների վավերականությունը կամ ընթացքը, դրանք, ավելի ամրապնդելով իշխող վարչակարգն, այնուամենայնիվ, չմոտեցրին Ղարաբաղն իրական մասնակցային քաղաքականությանը:

Ինչո՞վ կարելի է բացատրել այն երևույթը, որ ընտրությունները, որոնք կարծես անցկացվել էին օրենքի տառին համապատասխան, չդարձան ներքին քաղաքական փոխակերպման մի մեխանիզմ: Մասամբ սա կարող է բացատրվել այն արտասովոր ազդեցությամբ, որ չճանաչված քաղաքականությունն ունենում է *դե ֆակտո* պետությունների լեգիտիմության կառուցվածքայնացման վրա: Սպառնալիքի մշտական առկայության և միատարր բնակչության պայմաններում պետության ճանաչման մերժումը Ստեփանակերտի վարչակարգին թույլ է տալիս հանդես գալ որպես մեկ հիմնախնդրի կառավարություն, որպես անկախության ձգտումի մարմնացում: Այսպիսով, չճանաչված քաղաքականությունը *դե ֆակտո* պետության ներքին լեգիտիմությունը կախվածության մեջ է դնում այդ երկրի սոսկ գոյությունից, այլ ոչ թե ժողովրդավարական արժեքներին վերջինիս նվիրվածությունից կամ սեփական հասարակության պահանջներին պատշաճ կերպով արձագանքելու կարողությունից: «Կայունությունը» որպես ղարաբաղյան քաղաքականության անկյունաքար սահմանելը վկայությունն է այն անխոս փոխհամաձայնության, որ գոյություն ունի քաղաքական դաշտի բոլոր մասնակիցների միջև մշտական «պաշարման» վիճակում տարակարծության ընդունելի չափի նկատմամբ: Այս փոխհամաձայնության մասին է խոսում այն արհամարհական վերաբերմունքը, որ թե՛ կառավարությունը, թե՛ ընդդիմությունը ցուցաբերեցին Վրաստանում, Ուկրաինայում և Ղրղզստանում տեղի ունեցած հեղափոխական գործընթացների նկատմամբ: Սա երևան է հանում այն կարևոր տարբերությունը, որ գոյություն ունի Ղարաբաղի ներքին քաղաքականության դերակատարների կողմից խաղի գործող կանոնների ընկալումների և ժողովրդավար լինելու չափանիշների վերաբերյալ արտաքին դիտորդների ընկալումների միջև:

Այնուամենայնիվ, Ղարաբաղի իշխանությունները շատ բան են անում, որպեսզի ցուցադրեն, որ բավարարում են ժողովրդավարական երկրներին ներկայացվող միջազգային պահանջներին: Ստեփանակերտը *դե յուրե* պետություններին ներկայացվող միջազգային մի շարք չափանիշներին համապատասխանելու կամավոր գործընթաց է մեկնարկել: Ինչպես ցույց տվեցին 2005 թվականի խորհրդարանական ընտրությունները, իշխանությունները նաև ջանք չեն խնայում ապահովելու ընտրական գործընթացների ընթացակարգային և տեխնիկական օրինականությունը, ինչն անում են առավել ջանասիրաբար, քան տարածաշրջանի *դե յուրե* պետություններից շատերի վարչակարգերը: Իհարկե, այս ռազմավարությունը կարող է համարվել վարչակարգի ներքին լեգիտիմության ամրապնդմանը ուղղված ջանքեր, մինչդեռ այն կարելի է դիտել նաև որպես պատասխան Արևմուտքի ժողովրդավարացման օրակարգերին, որոնցում որոշակի ցուցանիշների առկայությունը  ինչպիսիք են պարբերական ընտրություններն ու բազմակուսակցական համակարգը  ընդունված է համարել առողջ անցումային մեխանիզմի գոյություն: Սա արևմտյան քաղաքականություն կերտողների կողմից ճանաչման հարցի «նախ համապատասխանություն չափանիշներին, ապա՝ կարգավիճակ» բանաձևման տրամաբանական արձագանքն է, ինչպես տեղի ունեցավ Կոսովոյի դեպքում:

Այս համատեքստում տեղին է թվում խոսել ժողովրդավարացման ներքին և արտաքին վեկտորների տարբեր ուղղությունների մասին: Ներքին զարգացումների տեսանկյունից, ականատես ենք լինում ազատականացման ոչ սահուն ընթացող ու չափազանց վիճելի մի գործընթացի, որը նման է *դե յուրե* պետություններում տեղի ունեցող երևույթներին, այն տարբերությամբ, որ այստեղ բարեփոխումների կողմնակիցներին խանգարում են չճանաչման հետևանքով ձևավորված յուրահատուկ պայմանները: Արտաքին զարգացումների տեսանկյունից ականատեսն ենք լինում, թե ինչպես է արտաքին աշխարհին մատուցվում ժողովրդավարական մի պետության պատկեր, որպեսզի էլ ավելի հիմնավորվեն Ղարաբաղի ինքնիշխանության հասնելու նկրտումները: Գուցե 2005 թվականի ընտրությունների արդյունքներն ավելի ճիշտ ընկալվեն հենց այս անկյան տակ: Ներքին արդյունքների տեսանկյունից ընտրությունները սահմանափակ նշանակություն ունեցան վերջին շրջանում երևան եկած բազմակարծությունը ճիշտ հունի մեջ դնելու գործում: Փոխարենը, դրանք ծառայեցին հոգուտ գործող վարչակազմի դիրքերն ամրապնդելուն և վերջիններիս մրցակիցներից պաշտպանելուն: Այսուհանդերձ, արտաքին արդյունքի առումով ընտրությունները կարողացան պատկերել բազմակարծիք և մասնակցային գործընթացի կատարելատիպը (իդեալ), որին արժանի կլիներ նաև որևէ իրական ժողովրդավարական պետություն:

## Միջնորդություն հասարակության և *դե ֆակտո* պետության միջև

Այսպիսով, ինչպիսի՞ լծակներից կարող է օգտվել հասարակությունը՝ *դե ֆակտո* պետության քաղաքականությունը հղկելու նպատակով: Ի տարբերություն *դե յուրե* պետություններում գործող քաղաքացիական հասարակությունների, որոնց կարողությունները հզորացվում են զգալի արտաքին աջակցության միջոցով, Լեռնային Ղարաբաղի քաղաքացիական հասարակությունը պետության վրա ազդեցություն ապահովելու գործում բախվում է մեծագույն դժվարությունների: Ղարաբաղում գրանցված շուրջ 80 հասարակական կազմակերպությունների (ՀԿ) միայն մեկ տասներորդ մասն է հա-

մարվում ակտիվ: ՀԿ-ների զարգացման գլխավոր հիմնախնդիրը միջոցների բացակայությունն է, ինչը հետևանք է այն իրողության, որ մարդասիրական օգնություն տրամադրելուց բացի, մինչ այժմ, միջազգային կազմակերպությունները չեն ցանկանում օժանդակել Ղարաբաղի միայն մեկ համայնքի մասնակցությամբ միակողմանի ծրագրերի մշակման և իրականացման գործին (ի տարբերություն Աբխազիայի և Հարավային Օսիայի, որտեղ գործում են Միավորված ազգերի կազմակերպությունը, Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունը, Եվրամիությունը և մի մեծ խումբ միջազգային ոչ կառավարական կազմակերպություններ, ինչը մասամբ նաև հետևանք է այդ տարածքների համեմամատաբար ավելի մատչելի լինելու): Ղարաբաղի քաղաքացիական հասարակության անդամները հայտնվել են «երեք կրակի» արանքում. մի կողմից տարածաշրջանային նախաձեռնություններն են, մյուս կողմից՝ Ադրբեջանի գործընկերների հետ տեխնիկապես բարդ և քաղաքականապես զգայուն երկկողմանի նախաձեռնությունները, երրորդ կողմից՝ այն բազմաթիվ ազդեցիկ ծրագրերը, որոնք ֆինանսավորվում և իրագործվում են Սփյուռքի կողմից:

Ղարաբաղի քաղաքացիական հասարակության զարգացման նպատակով մեկ համայնքին ուղղված միակողմանի ծրագրերի իրականացումը միջազգային դոնորների և Բաքվի կառավարության համար իրենից մի երկընտրանք է ներկայացնում: Մի կողմից, թերզարգացած քաղաքացիական հասարակությունն ի զորու չէ միջնորդի դեր ստանձնել հասարակության և պետության միջև խաղաղ կարգավորման շրջանակներում: Կայուն խաղաղության հաստատման ցանկացած տարբերակ կպահանջի հակամարտությանը մասնակից հասարակությունների ներսում փոխհամաձայնության որոշակի մակարդակ, ինչին հնարավոր է հասնել միայն քաղաքացիական հասարակությանը մասնակից դարձնելով տարբեր օրակարգերը համատեղելու, հանրության մտավախությունները ներկայացնելու և «ընդունելիի» սահմանները նախանշելու գործին: Մյուս կողմից, մեկ համայնքին ուղղված միակողմանի ծրագրերը կարող են դառնալ և հաճախ էլ ընկալվում են իբրև անջատողական ներուժի զարգացման ծրագրեր: Միևնույն ժամանակ, մետրոպոլ պետությունները ոչ մի կերպ չկարողացան օգտվել *դե ֆակտո* պետությունների տասնամյա մեկուսացումից՝ մոտեցնելու համար դրանց վերամիավորման հնարավորությունը: Այս իսկ պատճառով հարկ է, որ միջազգային դոնորները և Ադրբեջանի կառավարությունը լրջորեն քննության առնեն միակողմանի ծրագրերի ֆինանսավորումը բացառելու (դոնորների դեպքում) և դրանց խոչընդոտելու (Ադրբեջանի դեպքում) իրենց որոշումները:

## Ճարտասանությո՞ւն, թե՞ իրական քաղաքականություն

Այժմ պարզ է, որ էթնիկ անջատողականության գաղափարախոսությունները ի վիճակի չեղան ապահովել *դե ֆակտո* պետությունների միջազգային ճանաչումը, այնպես ինչպես ավելի վաղ տեղի ունեցավ Խորհրդային Միությունից միութենական հանրապետությունների անջատման դեպքում: Ի հեճուկս *դե ֆակտո* պետությունների տիրողասակիր ազգերի՝ նրանց չհաջողվեց աշխարհին համոզել, որ Վրաստանը, Ադրբեջանը և Մոլդովան իրենց խորհրդային սահմաններով կայսերական պետություններ են՝ արժանի նույնպիսի կազմալուծման, ինչպես Խորհրդային Միությունը: Այնուամենայնիվ, առաջատար արևմտյան տերությունների կողմից «ժողովրդավարություն» և «ազատություն» հասկացությունների նորովի շեշտադրումը *դե ֆակտո* պետությունների համար և դրանց կողմից անկախությունը քարոզելու հռետորական նոր դաշտ է ձևավորել: Այս համատեքստում մենք ականատեսն ենք մի երևույթի, որը կարելի է կոչել «մրցակցային ժողովրդավարացում». *դե ֆակտո* պետությունները փորձում են ձեռք բերել արևմտյան դիտորդների համար արտաքուստ ճանաչելի ցուցանիշներն ավելի շուտ, քան դրանց կհասնեն մետրոպոլ պետությունները:

Արդյո՞ք աշխատում է «ժողովրդավարացում հանուն ճանաչման» ռազմավարությունը: Ղարաբաղում ընթացող քաղաքական գործընթացների նկատմամբ մի շարք արևմտյան ոչ կառավարական ինստիտուտների աճող հետաքրքրությունը գուցե չճանաչման պատում առաջին ճեղքերի նշանն է: Այսուհանդերձ, ի հակադրություն վերոգրյալին, ակնհայտ է, որ արտաքին պետություն-դերակատարները շարունակում են տարածքային ամբողջականությունը համարել հակամարտության կարգավորման նախապայման և, ավելին, ընդունել *դե յուրե* պետությունների գոյություն ունեցող սահմանների օրինականությունը՝ անկախ այն բանից, թե ժողովրդավարություն կերտելու ինչպիսի քաղաքական պայմաններ կան այդ սահմանների ներսում: Սա հաստատում է այն, որ ժողովրդավարացումը պետության ճանաչման հետ շաղկապող ցանկացած փաստարկ մոլորություն է:

«Մրցակցային ժողովրդավարացման» գործընթացից բխող ոչ բացահայտ ենթադրություններից մեկն այն պնդումն է, թե պատմության ընթացքում ձևավորված դժգոհություններից կամ էթնիկ տարբերություններից առավել՝ հայ-ադրբեջանական հակամարտությունն ի վերջո արժեքների բախում է, որը ծագել է «արևմտյան» ժողովրդավարական արժեքներին Ղարաբաղի հայերի նվիրվածությունից և այդ արժեքների ու Ադրբեջանի քաղաքական մշակույթի անհամատեղելիությունից: Այսպիսի մոտեցումն առաջ է քաշում մտահոգիչ մի հանգամանք, այն է՝ անտեսվում են «ժողովրդավարություն» ու «ինքնություն» հասկացությունները և հիմնվելով արևելագիտական Արևմուտք-Արևելք կարծրատիպերի վրա՝ փորձ է արվում «քաղաքակրթությունների բախման» թեզը ներմուծել հնարավոր քաղաքական կարգեր և նման կարգերի հետ հայ և ադրբեջանցի ինքնությունների համատեղելիության հարցում: Քաղաքական արժեքների և ինքնության նման շփոթը հղի է այդ արժեքները քաղաքականությունից «վեր» դասելու վտանգով: Ներկայումս Ղարաբաղի հայ հասարակությունը դարձել է «անկախություն» արժեքի գերին, որն իրենից ներկայացնում է առաքելության ու վեհ տեսլականի վերածված մի կատարելատիպ, ինչը Ստեփանակերտի իշխանություններին ազատում է մի շարք կարևոր հարցերի շուրջ իրական քաղաքականությամբ զբաղվելու անհրաժեշտությունից: Այս անուրջների քաղաքականության մեջ «ժողովրդավարությանը» հատկացվում է անկախության նպատակին հասնելու միջոցի դեր, փոխարենը ընկալվելու որպես համընդհանուր պարտավորվածություն առաջացնող սկզբունքների ու ընթացակարգերի համախումբ, որն ունակ է փոխակերպել քաղաքականությունը Ղարաբաղում և կառուցել հայ-ադրբեջանական հարաբերությունների անխուսափելի ապագան: Մնում է մի հարց. դեռ որքա՞ն ժամանակ ինքնիշխանության մասին «դրախտային» խոստումները կծածկեն այն ճեղքվածքը, որ գոյություն ունի վարչակարգի կողմից արտաքուստ պահպանվող ընթացակարգային ժողովրդավարության և իրապես մասնակցային քաղաքականության միջև:

# Առանցքային փաստաթղթեր և համաձայնագրեր

*Լեռնային Ղարաբաղի հակամարտության և խաղաղության հաստատման գործընթացի վերաբերյալ տեքստերի և համաձայնագրերի ընտրանի, ընդգծված վերնագրերով նյութերը կարող եք գտնել այս բաժնում (ոչ պաշտոնական թարգմանություն բնօրինակներից): Լրացուցիչ նյութերի հետ կարելի է ծանոթանալ www.c-r.org/accord ինտերնետային կայքում կամ Ալի Աբասովի և Հարություն Խաչատրյանի «Ղարաբաղյան հակամարտությունը: Լուծման տարբերակները. մոտեցումները և իրականությունը» (Միջազգային հարաբերություններ, Մոսկվա, 2004) գրքում:*

- **Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Խորհրդի որոշումը «Հայաստանի ԽՍՀ կազմի մեջ մտնելու միջնորդության մասին», Ստեփանակերտ, 20 փետրվարի, 1988 թվական.**
- ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշումը Լեռնային Ղարաբաղի հարցով Ադրբեջանի և Հայաստանի Գերագույն խորհուրդների կայացրած որոշումների մասին, Մոսկվա, 18 հուլիսի, 1988 թվական.
- Հայաստանի ԽՍՀ և Լեռնային Ղարաբաղի Մարզի համատեղ որոշումը վերամիավորման մասին, 1 դեկտեմբերի, 1989 թվական.
- Ադրբեջանի ԽՍՀ Գերագույն խորհրդի որոշումը Հայաստանի ԽՍՀ-ի և ԼՂԻՄ միավորման մասին Հայաստանի ԽՍՀ Գերագույն խորհրդի որոշման վերաբերյալ, Բաքու, 6 դեկտեմբերի, 1989 թվական.
- **ԽՍՀՄ օրենքը Միության կազմից դուրս գալու կարգի մասին, 3 ապրիլի, 1990 թվական [հատվածներ].**
- Ժելեզնովոդսկի հայտարարությունը, Ժելեզնովոդսկ, 23 սեպտեմբերի, 1991 թվական.
- ԵԱՀԽ Նախարարների խորհրդի եզրակացությունների ամփոփագիր, Հելսինկի, 24 մարտի, 1992 թվական.
- Երկրների [Հայաստանի, Ադրբեջանի և Իրանի] ղեկավարների համատեղ հայտարարությունը, Թեհրան, 7 մայիսի, 1992 թվական.
- Լեռնային Ղարաբաղի, Ադրբեջանի և Հայաստանի արտաքին գործերի նախարարների միջև ստորագրված համաձայնագիրը հրադադարի մասին, Ալմա-Աթա, 1 սեպտեմբերի, 1992 թվական.
- Ռազմական գործողությունների դադարեցման մասին համաձայնագիր, Սոչի, 19 սեպտեմբերի, 1992 թվական.
- Ազատության աջակցության օրենքի 907-րդ բաժինը (Պետական օրենք 102-511), Վաշինգտոն, 24 հոկտեմբերի, 1992 թվական.
- **ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 822 բանաձևը, 30 ապրիլի, 1993 թվական.**
- **ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 853 բանաձևը, 29 հուլիսի, 1993 թվական.**
- **ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 874 բանաձևը, 14 հոկտեմբերի, 1993 թվական.**
- **ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 884 բանաձևը, 12 նոյեմբերի, 1993 թվական.**
- Անկախ Պետությունների Համագործակցության անդամ երկրների ղեկավարների հայտարարությունը, Մոսկվա, 15 ապրիլի, 1994 թվական.
- **Բիշքեկի արձանագրությունը, Բիշքեկ, 5-ը մայիսի, 1994 թվական.**
- Զինադադարի համաձայնագիրը, Բիշքեկ, 11 մայիսի, 1994 թվական.
- ԵԱՀԽ Գագաթաժողովի որոշումը Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ, Բուդապեշտ, 6 դեկտեմբերի, 1994 թվական.
- Պատահարների [հրադադարի գծի երկայնքով] կարգավորման վերաբերյալ համաձայնագիրը, 6 փետրվարի, 1995 թվական.
- **ԵԱՀԿ գործող նախագահի հայտարարությունը, Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության 1996 թվականի գագաթաժողով, Լիսաբոն, 3 դեկտեմբերի, 1996 թվական.**
- Ռուսաստանի Դաշնության, Միացյալ Նահանգների և Ֆրանսիայի նախագահների համատեղ հայտարարությունը, Դենվեր, 23 հունիսի, 1997 թվական.
- **Մինսկի խմբի առաջարկը («փաթեթային լուծում»), հուլիս, 1997 թվական [ոչ պաշտոնական թարգմանություն].**
- **Մինսկի խմբի առաջարկը («փուլային լուծում»), դեկտեմբեր, 1997 թվական [ոչ պաշտոնական թարգմանություն].**
- **Մինսկի խմբի առաջարկը («ընդհանուր պետություն»), նոյեմբեր, 1998 թվական [ոչ պաշտոնական թարգմանություն].**
- Եվրոպայի Խորհրդի թիվ 1416 բանաձևը, Ստրասբուրգ, 25 հունվարի, 2005 թվական.
- Լեռնային Ղարաբաղի շրջակա գրավյալ ադրբեջանական տարածքներ այցելած ԵԱՀԿ-ի փաստահավաք առաքելության զեկույցը, Պրահա, 6 փետրվարի, 2005 թվական.

## Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Խորհրդի որոշումը «Հայաստանի ԽՍՀ կազմի մեջ մտնելու միջնորդության մասին»

20 փետրվարի, 1988 թվական

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Ժողովրդական դեպուտատների (պատգամավորների) 20-րդ գումարման խորհրդի արտահերթ նիստի

ՈՐՈՇՈՒՄԸ

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Ադրբեջանի ԽՍՀ կազմից Հայաստանի ԽՍՀ կազմ փոխանցելու համար Ադրբեջանի ԽՍՀ և Հայաստանի ԽՍՀ Գերագույն խորհուրդներին միջնորդության մասին

Լսելով և քննարկելով Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի մարզային Խորհրդի ժողովրդական պատգամավորների ելույթները «Հայաստանի ԽՍՀ և Ադրբեջանի ԽՍՀ Գերագույն խորհուրդներին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Ադրբեջանի ԽՍՀ կազմից Հայաստանի ԽՍՀ կազմ փոխանցելու միջնորդություն ներկայացնելու մասին»՝ Ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի 20-րդ գումարման մարզային խորհրդի արտահերթ նստաշրջանը որոշեց.

ընդառաջ գնալով ԼՂԻՄ աշխատավորների ցանկություններին՝ խնդրել Ադրբեջանի ԽՍՀ Գերագույն խորհրդին և Հայաստանի ԽՍՀ Գերագույն խորհրդին ըմբռնումով մոտենալ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության ձգտումներին և լուծում տալ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզն Ադրբեջանի ԽՍՀ կազմից Հայաստանի ԽՍՀ կազմ փոխանցելու հարցին, միևնույն ժամանակ միջնորդել ԽՍՀՄ Գերագույն Խորհրդին՝ դրական լուծում տալ ԼՂԻՄ-ն Ադրբեջանի ԽՍՀ կազմից Հայաստանի ԽՍՀ կազմ փոխանցելու հարցին:

(«Խորհրդային Ղարաբաղ» լրագիր (Ստեփանակերտ), ռուսերեն լեզվով, 21 փետրվարի, 1988 թվական)

## Հատվածներ «Խորհրդային Միության կազմից դուրս գալու կարգի մասին» ԽՍՀՄ օրենքից

3 ապրիլի, 1990 թվական

Որևէ միութենական հանրապետության՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի վերաբերյալ: ԽՍՀՄ օրենք, ապրիլի 3, 1990 թվական (ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների համագումարի և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի տեղեկագիր, 1990 թվական, թիվ 13, էջ 252):

*(Հատվածներ)*

Հոդված 1. ԽՍՀՄ Սահմանադրության 72 հոդվածով նախատեսված, միութենական հանրապետության՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալու կարգը սահմանվում է սույն օրենքով:

Հոդված 2. Միութենական հանրապետության՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալն իրականացվում է հանրաքվեի միջոցով այդ միութենական հանրապետության ժողովրդի կամքի արտահայտմամբ:

Հանրաքվե անցկացնելու որոշումն ընդունվում է տվյալ միութենական հանրապետության Գերագույն խորհրդի կողմից՝ հիմնվելով իր սեփական կամքի կամ ԽՍՀՄ օրենքների համաձայն հանրապետության քվեարկելու իրավունք ունեցող մշտական բնակիչների 10 տոկոսի կողմից ներկայացված դիմումի հիման վրա:

Հանրաքվեն անցկացվում է «Հանրաքվեի մասին» ԽՍՀՄ օրենքի, տվյալ միութենական կամ ինքնավար հանրապետության «Հանրաքվեի մասին» օրենքի համաձայն, եթե դրանք չեն հակասում սույն օրենքին:

Հանրաքվեն անցկացվում է գաղտնի քվեարկությամբ, միութենական հանրապետության կողմից ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին որոշում ընդունելուց հետո՝ ոչ շուտ քան 6 ամիս անց և ոչ ուշ քան 9 ամիս անց:

ԽՍՀՄ այն քաղաքացիները, ովքեր հանրաքվեի անցկացման որոշման ընդունման պահին բնակվում են տվյալ հանրապետությունում և համաձայն ԽՍՀՄ օրենքների ունեն քվեարկելու իրավունք, ունեն հանրաքվեին մասնակցելու իրավունք:

Հանրաքվեի անցկացման ընթացքում չի թույլատրվում քարոզչության իրականացումը:

Հոդված 3. Եթե միութենական հանրապետության կազմում կան ինքնավար հանրապետություններ կամ ինքնավար տարածքներ, հանրաքվեներն անցկացվում են ինքնավարություններից յուրաքանչյուրում առանձին: Ինքնավարությունների բնակիչներն իրավունք ունեն ինքնուրույն որոշել՝ մնալ Խորհրդային Միության կազմում կամ միութենական հանրապետության հետ դուրս գալ ԽՍՀՄ կազմից, ինչպես նաև որոշել իրենց պետական-իրավական կարգավիճակի հարցը:

Եթե միութենական հանրապետության տարածքում կան վայրեր, որտեղ բնակվում են տվյալ տարածքում բնակչության մեծամասնություն կազմող էթնիկ խմբեր, ապա հանրաքվեի արդյունքները հաշվարկելիս այդ տարածքների արդյունքները դիտարկվում են առանձին:

Հոդված 6. Միութենական հանրապետության կողմից ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին որոշումն ընդունվում է հանրաքվեի արդյունքներով, եթե դրա օգտին քվեարկել են տվյալ միութենական հանրապետության տարածքում մշտապես բնակվող և հանրաքվե անցկացնելու մասին որոշման ընդունման պահին ԽՍՀՄ օրենքների համաձայն ընտրելու իրավունք ունեցող ԽՍՀՄ քաղաքացիների ոչ պակաս, քան երկու երրորդը:

Հանրաքվեի արդյունքները քննարկման են ենթարկվում միութենական հանրապետության Գերագույն խորհրդի կողմից: Այն միութենական հանրապետություններում, որոնց կազմում կան ինքնավար հանրապետություններ, ինքնավար մարզեր, ինքնավար շրջաններ կամ այնպիսի տարածքներ, որտեղ կենտրոնացված ձևով բնակվում են ազգային փոքրամասնություններ՝ համաձայն սույն օրենքի հոդված 3-ի երկրորդ մասի, հանրաքվեի արդյունքները պետք է համատեղ քննարկվեն տվյալ միութենական հանրապետության Գերագույն խորհրդի և ինքնավար հանրապետության Գերագույն խորհրդի և ժողովրդական դեպուտատների համապատասխան խորհուրդների կողմից:

Ապա միութենական հանրապետության Գերագույն Խորհուրդը հանրաքվեի արդյունքերը ներկայացնում է ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ: Այն դեպքում, երբ միութենական հանրապետության կազմում կան ինքնավար հանրապետություններ, ինքնավար մարզեր, ինքնավար շրջաններ կամ այնպիսի տարածքներ, որտեղ կենտրոնացված ձևով բնակվում են ազգային փոքրամասնություններ՝ համաձայն այս օրենքի հոդված 3-ի երկրորդ մասի, հանրապետության Գերագույն խորհուրդը, պետական իշխանության համապատասխան մարմինների եզրակացությունների և առաջարկությունների հետ միասին, ԽՍՀՄ Գերագույն խորհուրդ է ներկայացնում հանրաքվեի արդյունքները՝ ըստ յուրաքանչյուր ինքնավար հանրապետության, ինքնավար մարզի, ինքնավար շրջանի կամ այն տարածքների, որտեղ կենտրոնացված ձևով բնակվում են ազգային փոքրամասնությունները: Եթե հաստատվում է, որ հանրաքվեն անց է կացվել օրենքին համապատասխան, ապա ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը դրա արդյունքները ներկայացնում է ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների համագումարի քննարկմանը:

## ՄԱԿ-Ի ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԹԻՎ 822 ԲԱՆԱՁԵՎ

1993 Թ. ԱՊՐԻԼԻ 30

/Ընդունվել է 3205-րդ նիստի ընթացքում/

*(ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ)*

Անվտանգության Խորհուրդը՝

*Հղում կատարելով* Անվտանգության Խորհրդի նախագահի՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության մասին1993 թվականի հունվարի 29-ին և ապրիլի 6-ին արած հայտարարությունների վրա,

*ի գիտություն ընդունելով* Գլխավոր քարտուղարի 1993 թվականի ապրիլի 14-ի զեկույցը,

*խորը մտահոգություն արտահայտելով* Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև հարաբերությունների վատթարացման կապակցությամբ,

*անհանգստությամբ ընդգծելով* զինված ռազմական գործողությունների ծավալումը, և մասնավորապես տեղի հայ ուժերի վերջին ներխուժումը Ադրբեջանի Քելբաջարի շրջան,

*մտահոգված լինելով,* որ այդ իրավիճակը սպառնում է տարածաշրջանի խաղաղությանն ու անվտանգությանը,

*լուրջ մտահոգություն արտահայտելով* մեծաթիվ քաղաքացիական անձանց տեղաշարժի և տարածաշրջանում արտակարգ հումանիտար վիճակի կապակցությամբ, մասնավորապես՝ Քելբաջարի շրջանում,

*վերահաստատելով* հարգանքը տարածաշրջանի բոլոր պետությունների ինքնիշխանության ու տարածքային ամբողջականության նկատմամբ,

*նաև վերահաստատելով* միջազգային սահմանների անխախտելիությունը և տարածքներ ձեռք բերելու նպատակով ուժի կիրառման անթույլատրելիությունը,

*հայտարարելով* Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդաժողովի շրջանակում իրականացվող խաղաղ գործընթացին իր աջակցության մասին, և լինելով մտահոգված կործանիչ հետևանքներով, որ այդ գործընթացի վրա կարող է թողնել զինված գործողությունների հերթական շիկացումը.

1. հաստատուն հրադադարի նպատակով *պահանջում է* բոլոր ռազմական և թշնամական գործողությունների անհապաղ դադարեցում, ինչպես նաև բոլոր զավթիչ ուժերի անհապաղ դուրս բերում Քելբաջարի շրջանից և Ադրբեջանի վերջերս զավթված մյուս շրջաններից.
2. հակամարտությունը Եվրոպայի անվտանգության ու համագործակցության խորհրդաժողովի Մինսկի խմբի խաղաղ գործընթացի շրջանակում կարգավորելու նպատակով, *խստորեն կոչ է անում* շահագրգիռ կողմերին անհապաղ վերսկսել բանակցությունները և ձեռնպահ մնալ խնդրի խաղաղ կարգավորումը դժվարացնող ցանկացած գործողությունից.
3. *կոչ է անում* ապահովել տարածաշրջանում հումանիտար օգնություն ցույց տվող միջազգային գործունեության անխափան իրականացումը, մասնավորապես՝ հակամարտությունից տուժած բոլոր շրջաններում, որպեսզի թեթևանա քաղաքացիական բնակչության տառապանքը, և նորից հաստատում է, որ բոլոր կողմերը պարտավոր են պահպանել միջազգային հումանիտար իրավունքի սկզբունքներն ու նորմերը.
4. *խնդրում է* Գլխավոր քարտուղարին, Եվրոպայի անվտանգության ու համագործակցության խորհրդաժողովի գործող նախագահի, նաև Մինսկի խմբի նախագահի հետ խորհրդակցությամբ գնահատել տարածաշրջանի, մասնավորապես՝ Ադրբեջանի Քելբաջարի շրջանի վիճակը, և հետագա զեկույցը ներկայացնել խորհրդին.
5. *որոշում է* շարունակել ակտիվորեն զբաղվել այս խնդրով:

# ՄԱԿ-Ի ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԹԻՎ 853 ԲԱՆԱՁԵՎԸ

1993 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 29

/Ընդունվել է 3259-րդ նիստի ընթացքում/

*(ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ)*

Անվտանգության խորհուրդը,

*հաստատելով* 1993 թվականի ապրիլի 30-ի իր 822 (1993) բանաձևը,

*ուսումնասիրելով* Եվրոպայի անվտանգության ու համագործակցության խորհրդաժողովի Մինսկի խմբի նախագահի՝ 1993 թվականի հուլիսի 27-ի զեկույցը,

*խորը մտահոգություն արտահայտելով* Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև հարաբերությունների վատթարացման և նրանց միջև լարվածության խորացման կապակցությամբ,

*ողջունելով* իր 822 (1993) բանաձևի իրականացման անհետաձգելի միջոցառումների ծրագրի ընդունումը շահագրգիռ կողմեր կողմից,

*անհանգստությամբ ընդգծելով* ռազմական գործողությունների ծավալումը, և մասնավորապես Ադրբեջանի Աղդամի շրջանի գրավումը,

*լինելով անհանգստացած,* որ այդ դրությունը շարունակում է սպառնալ տարածաշրջանի խաղաղությանն ու կայունությանը,

*կրկին լուրջ մտահոգություն արտահայտելով* մեծաթիվ փախստական անձանց տեղաշարժի և տարածաշրջանում արտակարգ հումանիտար վիճակի կապակցությամբ,

*նորից հաստատելով* Ադրբեջանի և տարածաշրջանի մյուս բոլոր պետությունների ինքնիշխանությունը և տարածքային ամբողջականությունը,

*կրկին վերահաստատելով* միջազգային սահմանների անխախտելիությունը և տարածքներ ձեռք բերելու նպատակով ուժի կիրառման անթույլատրելիությունը,

1. *դատապարտում է* Աղդամի շրջանի և վերջին ժամանակներում Ադրբեջանի մյուս բոլոր շրջանների գրավումը.

2. *դատապարտում է* նաև բոլոր թշնամական գործողությունները տարածաշրջանում, մասնավորապես հարձակումը փախստական անձանց վրա և բնակավայրերի ռմբակոծումն ու գնդակոծումը.

3. *պահանջում է* բոլոր ռազմական գործողությունների անհապաղ դադարեցում և հակամարտության մասնակից բոլոր օկուպացիոն ուժերի անհապաղ, լիակատար և անվերապահ դուրս բերումը Աղդամի շրջանից և Ադրբեջանի՝ վերջերս գրավված մյուս բոլոր շրջաններից.

4. *կոչ է անում* շահագրգիռ կողմերին հասնել կրակի դադարեցման հաստատուն պայմանավորվածություններ և հետևել դրանց.

5. 3 և 4 կետերի համատեքստում *կրկին հաստատում է* իր նախորդ կոչերը տարածաշրջանի տնտեսական, տրանսպորտային և էներգետիկ կապերը վերականգնելու մասին.

6. *հավանություն է հայտնում* հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված Եվրոպայի անվտանգության ու համագործակցության խորհրդաժողովի Մինսկի խմբի շարունակվող ջանքերին՝ ներառյալ 822 (1993) բանաձևի իրականացմանն ուղղված ջանքերը, և լուրջ մտահոգություն է արտահայտում կործանիչ հետևանքի կապակցությամբ, որ այդ ջանքերի վրա թողնում են ծավալվող ռազմական գործողությունները.

7. *ողջունում է* Եվրոպայի անվտանգության ու համագործակցության խորհրդաժողովի մոնիտորինգի առաքելության նախապատրաստման միջոցառումները, ներառյալ դրա ծավալման ժամանակացույցը, ինչպես նաև տարածաշրջանում Խորհրդի ներկայության ապահովման մասին առաջարկի քննարկումը Խորհրդի շրջանակում.

8. *պնդում և կոչ է անում* շահագրգիռ կողմերին ձեռնպահ մնալ հակամարտության խաղաղ կարգավորմանը խոչընդոտող բոլոր գործողություններից և շարունակել բանակցությունները Մինսկի խմբի շրջանակում, ինչպես նաև իրենց միջև ուղիղ շփումների միջոցով, վերջնական կարգավորման հասնելու նպատակով.

9. *կոչ է անում* Հայաստանի Հանրապետության կառավարությանը շարունակել կիրառել իր ունեցած ազդեցությունն Ադրբեջանի Լեռնային Ղարաբաղի շրջանի հայերի կողմից 822 (1993) բանաձևի և ներկա բանաձևի դրույթների կատարումն ապահովելու և նրանց կողմից Մինսկի խմբի առաջարկների ընդունումն ապահովելու նպատակով.

10. *խստորեն կոչ է անում* պետություններին ձեռնպահ մնալ ցանկացած զենքի և ռազմական գույքի մատակարարումից, որոնք կարող են նպաստել հակամարտության էսկալացմանը կամ տարածքների գրավումը շարունակելուն.

11. *կրկին կոչ է անում* ապահովել տարածաշրջանում հումանիտար օգնություն ցույց տվող միջազգային գործունեության անխափան իրականացումը, մասնավորապես՝ հակամարտությունից տուժած բոլոր շրջաններում, որպեսզի թեթևանա փախստական բնակչության տառապանքը, և նորից հաստատում է, որ բոլոր կողմերը պարտավոր են պահպանել միջազգային հումանիտար իրավունքի սկզբունքներն ու նորմերը.

12. *խնդրում է* Գլխավոր քարտուղարին և համապատասխան միջազգային հաստատություններին անհապաղ հումանիտար օգնություն տրամադրել տուժած փախստական բնակչությանը և օգնել տեղահանված անձանց վերադառնալ իրենց տները.

13. *խնդրում է* Գլխավոր քարտուղարին, Եվրոպայի անվտանգության ու համագործակցության խորհրդաժողովի գործող նախագահի, և Մինսկի խմբի նախագահի հետ խորհրդակցելով շարունակել Խորհրդին զեկուցել իրավիճակի զարգացումների մասին.

14. *որոշում է* շարունակել ակտիվորեն զբաղվել այս հարցով:

# ՄԱԿ-Ի ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 874 ԲԱՆԱՁԵՎԸ /1993/

1993Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14

/Ընդունվել է 3292-րդ նիստի ընթացքում/

*/ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ/*

Անվտանգության խորհուրդը,

*հաստատելով* իր 1993թ. ապրիլի 30-ի 822 /1993/ և 1993թ. հուլիսի 29-ի 853 /1993/ բանաձևերը և

*հղում կատարելով* Խորհրդի անունից 1993թ. օգոստոսի 18-ին Անվտանգության խորհրդի նախագահի կարդացած հայտարարությանը,

*քննարկելով* Լեռնային Ղարաբաղի հարցով ԵԱՀԽ Մինսկի համաժողովի նախագահի՝ 1993թ. հոկտեմբերի 1-ի նամակը Անվտանգության խորհրդի նախագահի անունով,

*արտահայտելով* լուրջ մտահոգություն այն կապակցությամբ, որ Ադրբեջանի հանրապետության Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանում և նրա շուրջ հակամարտության շարունակումը և Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև հարաբերություններում լարվածության պահպանումը վտանգ են ներկայացնում տարածաշրջանում խաղաղության ու անվտանգության համար,

*նշելով* Մոսկվայում 1993թ. հոկտեմբերի 8-ին կայացած բարձր մակարդակով հանդիպումները և հույս հայտնելով, որ դրանք կնպաստեն իրավիճակի բարելավմանը և հակամարտության խաղաղ կարգավորմանը,

*կրկին հաստատելով* Ադրբեջանի և տարածաշրջանի մյուս պետությունների ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը,

*կրկին հաստատելով* նաև միջազգային սահմանների անխախտելիությունը և տարածքներ ձեռքբերելու համար ուժի կիրառման անթույլատրելիությունը,

*կրկին արտահայտելով* իր լուրջ անհանգստությունը հակամարտության պատճառով մարդկանց տառապանքների և տարածաշրջանում արտակարգ հումանիտար իրավիճակի կապակցությամբ և արտահայտելով խորը անհանգստություն մասնավորապես Ադրբեջանում մեծ քանակությամբ փախստական անձանց տեղաշարժի կապակցությամբ.

1. շահագրգիռ կողմերին *կոչ է անում* արդյունավետ և մշտական դարձնել ԵԱՀԽ Մինսկի խմբի և Ռուսաստանի Դաշնության կառավարության աջակցությամբ ուղիղ շփումների արդյունքում հաստատված կրակի դադարեցումը,

2. կրկին *հայտարարում է* իր լիակատար աջակցությունը խաղաղ գործընթացին, որն իրականացվում է Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդաժողովի շրջանակներում, ինչպես նաև Մինսկի խմբի ջանքերին,

3. *ողջունում* և կողմերի *ուշադրությանն է հրավիրում* «ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 822 /1993/ և 853 /1993/ բանաձևերի կատարման անհետաձգելի միջոցառումների նորացված ժամանակացույցը», որը մշակվել է 1993թ. սեպտեմբերի 28-ին Մինսկի խմբի խորհրդակցության ժամանակ և խմբի նախագահի կողմից շահագրգիռ կողմերին է ներկայացվել այդ խմբի 9 մյուս անդամների բազմակողմ աջակցությամբ, և կողմերին կոչ է անում ընդունել այն,

4. *համոզվածություն է հայտնում,* որ հակամարտությունից բխած բոլոր մյուս չլուծված և «Նորացված ժամանակացույցում» անմիջականորեն չուսումնասիրված խնդիրները պետք է արագ լուծել Մինսկի գործընթացի համատեքստում, խաղաղ բանակցությունների շրջանակներում,

5. *կոչ է անում* անհապաղ իրականացնել փոխադարձ և անհետաձգելի միջոցառումները, որոնք նախատեսված են Մինսկի խմբի «Նորացված ժամանակացույցով», ներառյալ ուժերի դուրսբերումը վերջերս օկուպացված տարածքներից և հաղորդակցության ու տրանսպորտի համար բոլոր խոչընդոտների վերացումը,

6. նաև *կոչ է անում* անհապաղ հրավիրել Մինսկի համաժողովը բանակցությունների միջոցով հակամարտության կարգավորման հասնելու նպատակով, ինչպես նախատեսված է «Նորացված ժամանակացույցով», 1992թ. մարտի 24-ի ԵԱՀԽ նախարարների խորհրդի մանդատի համապատասխան,

7. Գլխավոր քարտուղարին *խնդրում է* դրական արձագանքել Մինսկի համաժողովին ներկայացուցիչ ուղարկելու առաջարկությանը և հնարավոր ամեն օգնություն ցուցաբերել Համաժողովի բացումից հետո հարցի վերաբերյալ բանակցություններ անցկացնելու համար,

8. *աջակցում է* ԵԱՀԽ ձևավորած մոնիտորինգի առաքելությանը,

9. բոլոր կողմերին կոչ է անում ձեռնպահ մնալ միջազգային մարդասիրական իրավունքի խախտումներից և վերահաստատում է կոչը, որ պարունակվում է 822 (1993) և 853 (1993) բանաձևերում՝ ապահովել հակամարտությունից տուժած բոլոր շրջաններում մարդասիրական օգնություն հասցնելու միջազգային գործունեության անարգել իրականացումը,

10. *կոչ է անում* տարածաշրջանի բոլոր պետություններին ձեռնպահ մնալ ցանկացած թշնամական գործողությունից և ցանկացած միջամտությունից ու ներխուժումից, որոնք կհանգեցնեին կոնֆլիկտի խորացմանը և տարածաշրջանում խաղաղության և անվտանգության խախտմանը,

11. *խնդրում է* Գլխավոր քարտուղարին և համապատասխան միջազգային հաստատություններին արտակարգ մարդասիրական օգնություն հասցնել տուժած քաղաքացիական բնակչությանը, օգնել փախստականներին և տեղաշարժված անձանց արժանապատվորեն վերադառնալ իրենց տները անվտանգության պայմաններում,

12. *խնդրում է* Գլխավոր քարտուղարին, ԵԱՀԽ գործող նախագահին և Մինսկի կոնֆերանսի նախագահին շարունակել Խորհրդին ներկայացնել Մինսկի գործընթացի և տեղում իրավիճակի բոլոր ասպեկտների, ինչպես նաև ԵԱՀԽ և ՄԱԿ-ի միջև ներկա և ապագա համագործակցության մասին զեկույցները,

13. *որոշում է* շարունակել ակտիվորեն զբաղվել այս հարցով:

# ՄԱԿ-Ի ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 884 ԲԱՆԱՁԵՎԸ

1993Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 12

/Ընդունվել է 3313-րդ նիստի ընթացքում/

*/ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ/*

Անվտանգության խորհուրդը,

*հաստատելով* իր 1993թ. ապրիլի 30-ի 822 /1993/, 1993թ. հուլիսի 29-ի 853 /1993/, 1993թ. հոկտեմբերի 14-ի 874 /1993/ բանաձևերը,

*հաստատելով* իր լիակատար աջակցությունը խաղաղ գործընթացին, որ իրականացվում է ԵԱՀԽ շրջանակներում և Մինսկի համաժողովի խմբի ջանքերին,

*ի գիտություն ընդունելով* Լեռնային Ղարաբաղի հարցով Անվտանգության խորհրդի նախագահի անունով ԵԱՀԽ Մինսկի համաժողովի գործող նախագահի՝ 1993թ. նոյեմբերի9-ին թվագրված նամակը,

*արտահայտելով* լուրջ մտահոգություն այն կապակցությամբ, որ Ադրբեջանի Հանրապետության Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանում և նրա շուրջ հակամարտության շարունակումը և Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև հարաբերություններում լարվածության պահպանումը վտանգ են ներկայացնում տարածաշրջանում խաղաղության ու անվտանգության համար,

*մտահոգությամբ նշելով* զինադադարի խախտման արդյունքում ռազմական գործողությունների շիկացումը և ուժի չափից ավելի կիրառումը՝ ի պատասխան այդ խախտման, մասնավորապես Ադրբեջանի Զանգելանի շրջանի և Հորադիզ քաղաքի գրավումը

*հաստատելով* Ադրբեջանի և տարածաշրջանի այլ պետությունների ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը,

*կրկին հաստատելով* նաև միջազգային սահմանների անխախտելիությունը և տարածքներ ձեռքբերելու համար ուժի կիրառման անթույլատրելիությունը,

*արտահայտելով* լուրջ անհանգստություն մեծ քանակությամբ քաղաքացիական անձանց տեղաշարժի ամենավերջին դեպքի և Զանգելանի շրջանում, Հորադիզ քաղաքում և Ադրբեջանի հարավային սահմանում արտակարգ հումանիտար իրավիճակի առաջացման կապակցությամբ.

1. *դատապարտում է* կողմերի միջև հաստատված կրակի դադարեցման վերջին խախտումները, որոնք հանգեցրին ռազմական գործողությունների վերսկսմանը, և մասնավորապես Զանգելանի շրջանի և Հորադիզ քաղաքի գրավումը, խաղաղ բնակչության վրա հարձակումները և Ադրբեջանի Հանրապետության տարածքի գնդակոծումը,

2. Հայաստանի կառավարությանը *կոչ է անում* օգտագործել իր ազդեցությունը՝ Ադրբեջանի Լեռնային Ղարաբաղի հայերի կողմից 822 /1993/, 853 /1993/ և 874 /1993/ բանաձևերը կատարելու նպատակով և ապահովել, որ ներգրավված ուժերին միջոցներ չտրամադրվեն ռազմական արշավը շարունակելու համար

3. *գոհունակությամբ նշում է* Եվրոպայի անվտանգության ու համագործակցության խորհրդաժողովի Մինսկի խմբի ինն անդամների՝ 1993 թվականի նոյեմբերի 4-ի հայտարարության մասին և բարձր է գնահատում դրանում տեղ գտած կրակի դադարեցման մասին միակողմանի հայտարարությունների վերաբերյալ առաջարկությունները,

4. շահագրգիռ կողմերից *պահանջում է* ռազմական ու թշնամական գործողությունների անհապաղ դադարեցում, օկուպացիոն ուժերի միակողմանի դուրս բերում Զանգելանի շրջանից, Հորադիզ քաղաքից, Ադրբեջանի՝ վերջերս գրավված շրջաններից, «Անվտանգության խորհրդի 822(1993) եվ 853 (1993) բանաձևերի կատարման անհետաձգելի միջոցառումների նորացված ժամանակացույցի» և Մինսկի խմբի 1993 թվականի նոյեմբերի 2-8-ը Վիեննայում տեղի ունեցած խորհրդակցության ընթացքում դրանցում կատարված ուղղումների համաձայն,

5. շահագրգիռ կողմերին *կոչ է անում* անհապաղ վերականգնել կրակի դադարեցումը, որը հաստատվել էր ուղղակի շփումների շնորհիվ, որոնք նախաձեռնվում են Ռուսաստանի Դաշնության կառավարության Մինսկի խմբին ցուցաբերվող աջակցությամբ և դարձնել այն արդյունավետ և մշտական և շարունակել կարգավորման հնարավորությունների որոնումը «Նորացված ժամանակացույցի» և 1993 թվականի նոյեմբերի 2-8-ը Վիեննայում տեղի ունեցած Մինսկի խմբի խորհրդակցության ընթացքում դրանում կատարված ուղղումների համատեքստում,

6. *կրկին կոչ է անում* բոլոր պետություններին ձեռնպահ մնալ բոլոր թշնամական գործողություններից և բոլոր միջամտություններից, որոնք կարող են նպաստել հակամարտության խորացմանը և խախտել տարածաշրջանի խաղաղությունն ու անվտանգությունը

7. *խնդրում է* Գլխավոր քարտուղարին և համապատասխան միջազգային հաստատություններին անհապաղ հումանիտար օգնություն տրամադրել տուժած քաղաքացիական բնակչությանը, ներառելով Զանգելանի շրջանը, Հորադիզ քաղաքը և Ադրբե-

ջանի հարավային սահմանների բնակչությանը և օգնել փախստականներին ու տեղահանված անձանց վերադառնալ իրենց տները արժանապատվությամբ և անվտանգ,

8. *կրկին խնդրանքով դիմում է* Գլխավոր քարտուղարին, Եվրոպայի անվտանգության ու համագործակցության խորհրդաժողովի գործող նախագահին և Մինսկի խմբի նախագահին, այնուհետև ևս հաղորդել Անվտանգության խորհրդին Մինսկի գործընթացի և տեղում դրության բոլոր ասպեկտների մասին, մասնավորապես դրան համապատասխանող բանաձևերի իրականացման մասին և Եվրոպայի անվտանգության ու համագործակցության խորհրդաժողովի և Միացյալ ազգերի կազմակերպության միջև այդ առումով ներկա ու ապագա համագործակցության մասին,

9. *որոշում է* շարունակել ակտիվորեն զբաղվել այս հարցով:

## Բիշքեկի արձանագրություն

5 մայիսի, 1994 թվական

Մայիսի 4-5-ը Բիշքեկում ԱՊՀ Միջխորհրդարանական վեհաժողովի, Ղրղզստանի Հանրապետության խորհրդարանի, Ռուսաստանի Դաշնության Դաշնային Ժողովի և Արտաքին գործերի նախարարության նախաձեռնությամբ տեղի ունեցած հանդիպման մասնակիցները՝

- վճռականություն արտահայտեցին ըստ ամենայնի օժանդակել Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ ծավալված զինված հակամարտության դադարեցմանը, որը ոչ միայն անդառնալի կորուստներ է պատճառում հայ և ադրբեջանցի ժողովուրդներին, այլև էականորեն շոշափում է տարածաշրջանի այլ երկրների շահերը, լրջորեն բարդացնում միջազգային իրավիճակը.
- պաշտպանելով ԱՊՀ անդամ պետությունների ղեկավարների խորհրդի 1994 թվականի ապրիլի 15-ի Հայտարարությունը՝ հայտնեցին պատրաստակամություն, որ լիակատար աջակցություն կցուցաբերեն երկրների ղեկավարների և գործադիր իշխանության ներկայացուցիչների ջանքերին՝ ուղղված համապատասխան համաձայնագրի շուտափույթ ստորագրման միջոցով զինված դիմակայության դադարեցմանը և դրա հետևանքների վերացմանը.
- կողմ արտահայտվեցին հակամարտության դադարեցման, ՄԱԿ-ի և ԵԱՀԽ -ի՝ դրան առնչվող սկզբունքների, նպատակների և կոնկրետ որոշումների (նախ և առաջ՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 822, 853, 874, 884 բանաձևերի) իրականացման գործում Համագործակցության և Միջխորհրդարանական վեհաժողովի տրամաբանորեն ակտիվ դերին.
- դիմեցին հակամարտող կողմերի բանականությանը՝ կոչ անելով մայիսի 8-ի լույս 9-ի գիշերը դադարեցնել կրակը՝ հենվելով 1994 թվականի փետրվարի 18-ի Արձանագրության վրա (ներառյալ՝ դիտորդների տեղակայումը), և ամենաինտենսիվ աշխատանքով ամենակարճ ժամկետներում ամրագրել այն հուսալի, իրավաբանորեն պարտավորեցնող համաձայնագրի ստորագրմամբ, որը կնախատեսի ռազմական և թշնամական գործողությունների վերսկսումը բացառող մեխանիզմ, զորքերի դուրսբերում գրավյալ տարածքներից և հաղորդակցության ուղիների վերականգնում, փախստականների վերադարձ, բանակցային գործընթացի շարունակում.
- համաձայնեցին առաջարկել ԱՊՀ անդամ պետությունների խորհրդարաններին՝ քննարկել Միջխորհրդարանական վեհաժողովի խորհրդի նախագահ Վ. Ֆ. Շումեյկոյի և Վեհաժողովի Լեռնային Ղարաբաղի հարցով խաղաղարար խմբի ղեկավար Մ. Շ. Շերիմկուլովի նախաձեռնությունը՝ Համագործակցության խաղաղապահ ուժեր ստեղծելու վերաբերյալ.
- նպատակահարմար են գտնում շարունակել նման հանդիպումները՝ հանուն զինված հակամարտության խաղաղ կարգավորման.
- երախտագիտություն հայտնեցին Ղրղզստանի ժողովրդին և ղեկավարությանը՝ հրաշալի աշխատանքային պայմաններ ստեղծելու, սիրալիրության և հյուրընկալ վերաբերմունքի համար:

## Լիսաբոնյան փաստաթուղթ

3 դեկտեմբերի, 1996 թվական

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԵԱՀԿ ԳՈՐԾՈՂ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Բոլորիդ հայտնի է, որ վերջին երկու տարիների ընթացքում Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման և Ադրբեջանի Հանրապետության տարածքային ամբողջականության վերականգնման գործում որևէ առաջընթաց չի արձանագրվել: Ես ափսոսում եմ, որ հաջողությամբ չեն պսակվել Մինսկի համաժողովի համանախագահների ջանքերը՝ հաշտեցնելու կողմերի դիրքորոշումները կարգավորման սկզբունքների առնչությամբ: Մինսկի խմբի համանախագահների կողմից առաջարկվել են երեք սկզբունքներ, որոնք պետք է դառնան Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման մասը: Այս սկզբունքները վայելում են Մինսկի խմբի բոլոր անդամ-պետությունների աջակցությունը: Դրանք են՝

- Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության տարածքային ամբողջականություն.
- Լեռնային Ղարաբաղի իրավական կարգավիճակի որոշում համաձայնագրի միջոցով՝ հենվելով ինքնորոշման իրավունքի վրա, որով Լեռնային Ղարաբաղին կշնորհվի ինքնակառավարման ամենաբարձր աստիճանն Ադրբեջանի կազմում.
- Լեռնային Ղարաբաղի և նրա ողջ բնակչության երաշխավորված անվտանգություն, ներառյալ փոխադարձ պարտավորություն՝ ապահովելու բոլոր Կողմերի հավասարությունը կարգավորման դրույթներին:

Ցավում եմ, որ մասնակից Պետություններից մեկը չհամաձայնեց սրան: Այս սկզբունքները վայելում են մյուս բոլոր մասնակից Պետությունների աջակցությունը:

Այս հայտարարությունը կներառվի Լիսաբոնի գագաթաժողովի փաստաթղթերում:

## ԼՂ ՀԱՐՑԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՓԱԹԵԹԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ, ԵԱՀԿ ՄԻՆՍԿԻ ԽՄԲԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

### Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման համընդգրկուն համաձայնագիր (նախագիծ)

1997թ. հուլիս

*Ոչ պաշտոնական թարգմանություն ռուսերեն բնօրինակից*

Նախաբան

Կողմերը, լիովին ըմբռնելով խաղաղության և համագործակցության առավելությունը հանուն իրենց ժողովուրդների բարգավաճման և բարեկեցության, լի են վճռականությամբ իրականացնել Լեռնային Ղարաբաղի ձգձգվող հակամարտության խաղաղ կարգավորումը: Ստորև շարադրված կարգավորումը հիմք կստեղծի Կովկասի միասնական տնտեսական զարգացման համար՝ հնարավորություն տալով այս տարածաշրջանի ժողովուրդներին ապրել նորմալ և արդյունավետ՝ ունենալով ժողովրդավարական ինստիտուտներ, աճող բարեկեցություն, խոստումնալից ապագա: Այս համաձայնագրին համապատասխան՝ համագործակցությունը կհանգեցնի նորմալ հարաբերությունների ողջ տարածաշրջանում՝ առևտրի, տրանսպորտի և կապի ոլորտներում՝ հնարավորություն տալով մարդկանց միջազգային կազմակերպությունների միջոցով վերականգնել իրենց քաղաքներն ու բնակավայրերը, հաստատել կայունություն, ինչն անհրաժեշտ է տարածաշրջանում արտաքին կապիտալ ներդրումների ծավալի էական մեծացման համար, և ճանապարհ բացել փոխշահավետ առևտրի համար, ինչը կհանգեցնի բոլոր մարդկանց բնական բարգավաճմանը, ինչի նախադրյալներն առկա են կովկասյան տարածաշրջանում: Հաշտությունն ու համագործակցությունը մարդկանց միջև նրանց ահռելի ներուժը կծառայեցնեն ի շահ իրենց հարևանների և աշխարհի ժողովուրդների: Համապատասխանաբար, Կողմերը, լինելով հավատարիմ ՄԱԿ-ի Կանոնադրության դրույթներին, ԵԱՀԿ

հիմնարար սկզբունքներին ու որոշումներին և միջազգային իրավունքի հիմնարար նորմերին և վճռականություն ցուցաբերելով նպաստել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 822, 853, 874, 884 որոշումների ամբողջական իրականացմանը, սույնով համաձայն են ձեռնարկել զինված հակամարտության դադարեցման և նորմալ հարաբերությունների վերականգնման մասին թիվ 1 Համաձայնագրում արձանագրված միջոցները և համաձայնության հասնել Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի շուրջ՝ ինչպես շարադրված է թիվ 2 Համաձայնագրում:

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 1. ԶԻՆՎԱԾ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

Կողմերը համաձայնում են.

I) ձեռնպահ մնալ միմյանց միջև վեճերի կարգավորման նպատակով զինված ուժի օգտագործումից, այդ թվում՝ սույն Համաձայնագրի իրագործման ընթացքում:

II) դուրս բերել զինված ուժերը երկու փուլով:

Առաջին փուլում Լեռնային Ղարաբաղից դեպի արևելք և հարավ ընկած ներկայիս շփման գծերի վրա տեղակայված ուժերը կհեռացվեն մի քանի կիլոմետր դեպի թիվ 1 Հավելվածում համաձայնեցված գծերը՝ պատշաճ կերպով հաշվի առնելով Բարձր մակարդակի պլանավորման խմբի հանձնարարականները՝ ռազմական տեսակետից հիմնավորված բուֆերային գոտում ԵԱՀԿ բազմազգ ուժերի առաջատար ջոկատների սկզբնական ծավալման համար հնարավորություն ստեղծելու նպատակով, բաժանել կողմերին այդ գծով և անվտանգություն ապահովել երկրորդ փուլի դուրսբերման ընթացքում:

Երկրորդ փուլում ուժերը դուրս կբերվեն թիվ 1 Հավելվածում համաձայնեցված ժամանակացույցի համաձայն՝ հետևյալ կերպ.

ա) Հայաստանի ուժերը դուրս են բերվում և տեղակայվում Հայաստանի Հանրապետության տարածքում,

բ) Լեռնային Ղարաբաղի ուժերը դուրս են բերվում և տեղակայվում Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Հանրապետության 1988թ. սահմանագծից ներս (ստորև՝ VIII և IX կետերում նշված բացառություններով),

գ) Ադրբեջանի ուժերը դուրս են բերվում դեպի թիվ 1 Հավելվածում համաձայնեցված գծեր՝ Բարձր մակարդակի պլանավորման խմբի հանձնարարականների հիման վրա,

դ) ծանր զրահատեխնիկան դուրս կբերվի ավելի հեռու՝ թիվ 1 Հավելվածում համաձայնեցված վայրեր՝ Բարձր մակարդակի պլանավորման խմբի հանձնարարականների հիման վրա, թափանցիկության և հաշվետվության պահանջների պահպանմամբ,

ե) ուժերի դուրսբերման ավարտին Բուֆերային գոտին տեղակայված կլինի ինչպես նշված է թիվ 1 Հավելվածի քարտեզում՝ 1988 թ. ԼՂԻՄ սահմանագծի և հայ-ադրբեջանական սահմանի հյուսիսային մասի երկայնքով:

III) Ուժերի դուրսբերման արդյունքում ազատված տարածքները, վերածվում են Բաժանարար գոտու, որտեղ անվտանգության պահպանմանը պետք է հետևեն ԵԱՀԿ խաղաղարար ուժերը՝ Մշտական խառը հանձնաժողովի հետ համատեղ: Կողմերից ոչ մեկին չի թույլատրվի ներս բերել իր ուժերն այդ գոտի, բացի ԵԱՀԿ խաղաղարար ուժերի և Մշտական խառը հանձնաժողովի թույլտվությամբ՝ թիվ 2 Հավելվածի իրականացման շրջանակներում, ուր նախատեսված կլինեն սահմանափակ ծառայության, ականազերծման և քաղաքացիական ոստիկանական գործառույթների համար համաձայնեցված ստորաբաժանումներ: Կողմերը համաձայնում են բացառել բոլոր ռազմական թռիչքները Բաժանարար գոտում և Բուֆերային գոտում:

IV) Նպաստել ԵԱՀԿ խաղաղության ապահովման բազմազգ ուժերի ծավալմանը Բուֆերային գոտում՝ անվտանգության երաշխավորման համար՝ Մշտական խառը հանձնաժողովի հետ համատեղ: ԵԱՀԿ խաղաղության ապահովման բազմազգ ուժերը կազմված կլինեն ԵԱՀԿ-ի կողմից նշանակված ուժերից, և նրանց մանդատը կսահմանվի ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի որոշմամբ, ընդ որում մանդատը կթարմացվի ԵԱՀԿ գործող նախագահի հանձնարարականով:

V) Բաժանարար գոտում իրականացնել տեղահանված անձանց վերադարձը նրանց նախկին մշտական բնակության վայրեր: ԵԱՀԿ խաղաղարար բազմազգ ուժերը՝ Մշտական խառը հանձնաժողովի հետ համատեղ կհետևեն վերադարձող բնակչության անվտանգությանը և կապահովեն երաշխիքներ բոլոր կողմերի համար այդ գոտու ապառազմականացման ռեժիմին հետևելու առումով:

VI) Ուժերի դուրսբերման հետ միաժամանակ միջոցներ կկիրառվեն ճանապարհների, երկաթուղիների, էլեկտրահաղորդակցման և կապի գծերի, առևտրային և այլ հարաբերությունների բացման ուղղությամբ՝ ներառելով այդ նպատակի համար անհրաժեշտ բոլոր միջոցները: Կողմերը երաշխավորում են այդ կապերի օգտագործումը բոլորի կողմից, ներառյալ՝ էթնիկ փոքրամասնությունները, երաշխավորելով վերջիններիս հասանելիությունն իրենց էթնիկ խմբերին տարածաշրջանի այլ վայրերում: Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է վերացնել բոլոր շրջափակումները և ապահովել մյուս բոլոր կողմերի համար բեռների և մարդկանց փոխադրումը՝ առանց խոչընդոտների: Հայաստանը և Ադրբեջանը երաշխավորում են իրար միջև ազատ և անվտանգ երկաթուղային հաղորդակցություն, մասնավորապես Բաքու-Հորադիզ-Մեղրի-Օրդուբադ-Նախիջևան-Երևան երթուղով:

VII) Համագործակցել Կարմիր խաչի միջազգային կոմիտեի, ՄԱԿ-ի՝ փախստականների հարցերով Գերագույն Կոմիսարի և այլ միջազգային մարդասիրական կազմակերպությունների հետ՝ հակամարտության կապակցությամբ կալանավորվածներին վերադարձնելու, անհետ կորածների ճակատագրերը հետաքննելու և աճյունները հայրենադարձելու նպատակով:

VIII) Հիշյալ միջոցառումների շուրջ՝ կապված Լաչինի միջանցքի հետ.

ա) Ադրբեջանը Միջանցքը վարձակալությամբ տրամադրում է ԵԱՀԿ-ին, որը պայմանագիր կկնքի Միջանցքը բացառապես Լեռնային Ղարաբաղի իշխանությունների կողմից օգտագործելու մասին (տարանցման համար նախատեսված բացառություններով՝ բերված ստորև՝ Ե կետում),

բ) ԵԱՀԿ-ն հետևում է Լեռնային Ղարաբաղի իշխանությունների հետ համագործակցության անվտանգությանը,

գ) Լաչինի միջանցքի սահմանագծերը համաձայնեցված են թիվ 2 Հավելվածում՝ պատշաճ կերպով հաշվի առնելով ԲՄՊԽ-ի հանձնարարականները,

դ) ԵԱՀԿ-ն հետևում է Լաչին քաղաքը շրջանցող ճանապարհի շինարարությանը: Շինարարության ավարտից հետո Լաչին քաղաքը հանվում է Լաչինի միջանցքից: Այն վերադարձվում է Ադրբեջանի իրավասությանը (որպես Բաժանարար գոտու մաս), իսկ նրա նախկին բնակիչները կարող են վերադառնալ այնտեղ,

ե) միջանցքում չի թույլատրվում մշտական բնակավայրերի հիմնում և զինված ուժերի տեղակայում, բացառությամբ՝ թույլատրված քանակությամբ անվտանգության ուժերի: Պաշտոնական անձինք, դիտորդները և ԵԱՀԿ խաղաղության ապահովման ուժերի ներկայացուցիչները նախապես զգուշացնելու դեպքում ունեն տարանցման իրավունք ցանկացած ուղղությամբ, այդ թվում նաև՝ տարածաշրջանի ադրբեջանցի բնակիչները, որոնք տարանցում են կատարում Լաչինի շրջանից Կուբաթլուի շրջան կամ հակառակը: Լաչինի շրջանի տարածքը՝ Միջանցքի շրջանակներից դուրս համարվում է Բաժանարար գոտու մաս:

IX) Հետևյալ միջոցառումների շուրջ՝ կապված Շուշա քաղաքի և Շահումյանի շրջանի հետ.

ա) Կողմերը երկու հատվածներից դուրս են բերում իրենց զինված ստորաբաժանումները՝ բացառությամբ ՀՕՊ ստորաբաժանումների՝ սահմանափակ սպասարկող անձնակազմով,

բ) տեղական իշխանությունները կօժանդակեն ԵԱՀԿ ժողովրդավարական ինստիտուտների և Մարդու իրավունքների Բյուրոյի դիտորդների տեղաբաշխման հարցում,

գ) տեղահանված անձինք կարող են վերադառնալ իրենց նախկին մշտական բնակության վայրերը: Նրանց անվտանգությունը կերաշխավորվի համապատասխան տեղական իշխանությունների կողմից,

դ) վերադարձած բնակիչները օգտվում են բոլոր քաղաքացիական իրավունքներից, այդ թվում՝ կուսակցություններ ստեղծելու: Նրանք համապատասխանաբար ներկայացված կլինեն Բաքվի և Ստեփանակերտի խորհրդարաններում և ընտրական խորհուրդներում, այդ վայրերի ոստիկանությունում և անվտանգության ուժերում՝ այդ վայրերի ողջ բնակչության տոկոսային հարաբերակցությանը համապատասխան,

ե) Մշտական խառը հանձնաժողովը համակարգում է միջազգային օգնության բաշխումն այդ վայրերում՝ արդարության հիմքով և հօգուտ երկու խմբերի ազգաբնակչությանը,
զ) Շուշա քաղաքի և Շահումյանի շրջանի բնակիչների համար երաշխավորված կլինի ճանապարհների, կապի հասանելիությունը և այլ հարաբերություններ Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի հետ:
X) Հիմնել Մշտական խառը հանձնաժողով (ՄԽՀ)՝ տվյալ Համաձայնագրի՝ Ադրբեջանին և Ղարաբաղին առնչվող խնդիրների հետ կապված դրույթների իրականացմանը հետևելու նպատակով: ՄՀ -ն ունի երեք համանախագահ. մեկ ադրբեջանցի, մեկ ներկայացուցիչ Լեռնային Ղարաբաղից և ԵԱՀԿ գործող նախագահի ներկայացուցիչը: Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի համանախագահների հիմնական պարտականությունը Համաձայնագրի իրականացումն է. ԵԱՀԿ-ից համանախագահի հիմնական պարտականությունը միջնորդությունն ու տարաձայնությունների դեպքերում արբիտրաժն է: ՄԽՀ-ն ունի հետևյալ ենթահանձնաժողովները՝ Ռազմական, Տնտեսական, Մարդասիրական և Մշակութային: ՄԽՀ-ի և նրա ենթահանձնաժողովների գործառույթները շարադրված են թիվ 2 Հավելվածում:
XI) Հիմնել ամբողջական դիվանագիտական հարաբերություններ Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի հանրապետության միջև:
XII) Ստեղծել հայ-ադրբեջանական երկկողմ հանձնաժողով (ՀԱԵՀ)՝ Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության կողմից մեկական համանախագահներով: ԵԱՀԿ գործող նախագահը ներկայացված է այդ հանձնաժողովում: ՀԱԵՀ-ն նպաստում է սահմանային միջադեպերի կանխարգելմանը, իրականացնում է կապ երկու երկրների սահմանապահ զորքերի և անվտանգության այլ համապատասխան ուժերի միջև և հետևում է ճանապարհների, երկաթուղիների, կապի, խողովակաշարերի, առևտրային և այլ հարաբերությունների բացման միջոցառումներին:
XIII) ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը սույն համաձայնագրի երաշխավորն է:
XIV) Սույն համաձայնագիրը կգործի մինչև ԵԱՀԿ Մինսկի խորհրդաժողովի ժամանակ համապարփակ կարգավորման մասին Համաձայնագրի կնքումը, որը մասնավորապես կհիմնի անվտանգության և խաղաղության պահպանման մշտական մեխանիզմներ՝ փոխարինելով նրանց, որոնք սահմանված են սույն համաձայնագրում:

[Հավելվածներ 1-ը և 2-ը չեն բերվում]

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 2. ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

### Նախաբան

Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը և նրա պատմական էթնիկ և մշակութային բնութագրի պահպանումը միջազգային հանրության համար, ներառյալ Հայաստանի Հանրապետությունը մտահոգության առարկա են: Այն չի կարող որոշվել ինչպես Ադրբեջանի Հանրապետության, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի իշխանությունների միակողմանի գործողության արդյունքում: Կարգավիճակը որոշվում է հետևյալ չափորոշիչներով:
I) Հակամարտության բոլոր Կողմերի կողմից Ադրբեջանի և Հայաստանի տարածքային ամբողջականության և սահմանների անխախտելիության ճանաչում:
II) Լեռնային Ղարաբաղը պետական և տարածքային կազմավորում է Ադրբեջանի կազմում, և նրա ինքնորոշումը կներառի ստորև թվարկված իրավունքներն ու առավելությունները, երբ նրանք կձևակերպվեն Ադրբեջանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի իշխանությունների միջև կնքված համաձայնագրում, հավանության կարժանանան Մինսկի համաժողովի կողմից և կներառվեն Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի սահմանադրություններում:
III) Լեռնային Ղարաբաղը և Նախիջևանը կունենան Ադրբեջանի և Հայաստանի հետ ազատ և առանց խոչընդոտների տրանսպորտային հաղորդակցության և կապի իրավունք:
IV) Լեռնային Ղարաբաղի վարչական սահմանները գծվում են նախկին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Հանրապետության սահմաններով:
V) Լեռնային Ղարաբաղը կունենա իր սեփական Սահմանադրությունը՝ ընդունված Լեռնային Ղարաբաղի ժողովրդի կողմից՝ հանրաքվեով: Այդ Սահմանադրությունը կներառի Լեռնային Ղարաբաղի իշխանությունների և Ադրբեջանի համաձայնագիրն ինքնորոշման ձևի մասին՝ սույն փաստաթղթի հիման վրա: Ադրբեջանը համապատասխանաբար փոփոխություններ կմտցնի իր Սահմանադրությունում՝ այս համաձայնագրերի ներառման համար: Լեռնային Ղարաբաղը կունենա իր սեփական դրոշը, զինանշանը, օրհներգը:
VI) Լեռնային Ղարաբաղի տարածքում գործում են Լեռնային Ղարաբաղի Սահմանադրոթյունն ու օրենքները: Ադրբեջանի օրենքները, կանոնները և կատարողական որոշումները գործում են Լեռնային Ղարաբաղի տարածքում, եթե նրանք չեն հակասում վերջինիս Սահմանադրությանն ու օրենքներին:
VII) Լեռնային Ղարաբաղն ինքնուրույն կազմավորում է իր օրենսդիր, գործադիր և դատական մարմինները:
VIII) Լեռնային Ղարաբաղի բնակչությունն ընտրում է Ադրբեջանի խորհրդարանի ներկայացուցիչներ և մասնակցում է Ադրբեջանի նախագահի ընտրություններին:
IX) Լեռնային Ղարաբաղը արտասահմանում համապատասխան ներկայացուցչության միջոցով կունենա օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ տնտեսության, գիտության, մշակույթի, սպորտի և մարդասիրական հարցերի ոլորտներում անմիջական արտաքին կապեր իրականացնելու իրավունք: Լեռնային Ղարաբաղի քաղաքական կուսակցություններն իրավունք կունենան կապեր հաստատել այլ երկրների քաղաքական կուսակցությունների հետ:
X) Լեռնային Ղարաբաղի քաղաքացիները կունենան Ադրբեջանի անձնագրեր՝ «Լեռնային Ղարաբաղ» հատուկ հավելագրումով: Լեռնային Ղարաբաղի քաղաքացիները չեն համարվի օտարերկրացիներ Հայաստանի օրենքների համապատասխան (տես՝ Միացյալ Թագավորության Իռլանդական Ակտը (1949)), կարող են ցանկացած ժամանակ արտագաղթել Հայաստան և կարող են ստանալ հայաստանյան քաղաքացիություն՝ Հայաստանի Հանրապետություն մշտական արտագաղթի դեպքում (տես՝ Իսրաելի «Վերադարձի մասին» օրենքը):
XI) Լեռնային Ղարաբաղը կլինի ազատ տնտեսական գոտի՝ տարադրամների ազատ շրջանառությամբ:
XII). Լեռնային Ղարաբաղը կունենա Ազգային գվարդիա և Ոստիկանական ուժեր: Լեռնային Ղարաբաղի քաղաքացիներն իրավունք կունենան ծառայությունն անցկացնել Լեռնային Ղարաբաղի տարածքում:
XIII) Ադրբեջանի բանակը, անվտանգության ուժերը և ոստիկանությունը իրավունք չեն ունենա մուտք գործել Լեռնային Ղարաբաղի տարածք, բացի Լեռնային Ղարաբաղի իշխանությունների թույլտվությամբ:
XVI) Լեռնային Ղարաբաղի բյուջեն կազմվում է սեփական ռեսուրսների հաշվին գոյացած մուտքերից: Լեռնային Ղարաբաղի կառավարությունը կխրախուսի և կերաշխավորի ադրբեջանական և օտարերկրյա անձանց և ընկերությունների ներդրումները:
XV) Լեռնային Ղարաբաղն ունի բազմաէթնիկ բնույթ. յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի օգտագործել իր ազգային լեզուն բոլոր պաշտոնական և ոչ պաշտոնական դեպքերում:

## ՀԱԿԱՄԱՐՏ ԿՈՂՄԵՐԻ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Որպես հակամարտության խաղաղ կարգավորմանը հասնելու մտադրության դրսևորում, Կողմերը, առանց սպասելու որևէ այլ համաձայնության, կարող են իրականացնել վստահության ամրապնդմանն ու անվտանգությանն ուղղված հետևյալ միջոցառումներից ցանկացածը կամ բոլորը:
- Ադրբեջանն ու Հայաստանը կարող են իրենց վրա պարտավորություն վերցնել անմիջապես վերականգնել հրադադարի ռեժիմը՝ Իջևան-Ղազախ հատվածի իրենց սահմանների երկայնքով: Այս ռեժիմը, որն իրագործվել է 1992թ., ներառում էր հրատապ կապի հեռախոսային գիծ և համատեղ սահմանային պարեկություն:
- Կողմերը կարող են համաձայնության գալ ԵԱՀԿ գործող նախագահի դիտորդական առաքե-

լության մեծացման մասին՝ Լեռնային Ղարաբաղի առնչությամբ հավելյալ հսկողություն իրականացնելու համար, օրինակ՝ Իջևան-Ղազախ սեկտորի հայ-ադրբեջանական սահմանի երկայնքով:
- Իրականացնել երկխոսություն ՄԱԿ-ի փախստականների հարցերով Գերագույն Կոմիսարի և Կարմիր խաչի միջազգային կոմիտեի օժանդակությամբ՝ մարդասիրական պահանջարկների գնահատման նպատակով (ինչպես ադրբեջանական տեղահանված անձանց համար, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի ներսում): Դա կարող է իրականացվել կամ ՄԱԿ-ի Գերագույն Կոմիսարի, կամ էլ ԿԽՄԿ-ի համաձայնությամբ:
- Բացել ամենշաբաթյա կամ ամենօրյա շուկաներ Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանում ինչպես հայերի, այնպես էլ ադրբեջանցիների համար: Սա կպահանջի սահմանների հատման կետերի ստեղծում, դեպի շուկայական հրապարակներ տանող ճանապարհների բացում և ականազերծում և համաձայնագրեր՝ կապված տարանցման ռեժիմների և առևտրի կանոնների եղանակավորման հետ:

## ԼՂ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԼԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ, ԵԱՀԿ ՄԻՆՍԿԻ ԽՄԲԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

### Համաձայնագիր Լեռնային Ղարաբաղի զինված հակամարտության դադարեցման մասին (նախագիծ)

1997թ. դեկտեմբերի 2

*Ոչ պաշտոնական թարգմանություն ռուսերեն բնօրինակից*

Նախաբան

*[Նախաբանը բաց է թողնված: Տե՛ս «փաթեթային» տարբերակի նախաբանը, որը համանման տեքստ է:]*

I) Կողմերը հրաժարվում են և ձեռնպահ են մնում ուժի սպառնալիքից կամ ուժի գործադրումից՝ իրենց միջև վեճերի կարգավորման նպատակով: Նրանք լուծում են բոլոր այդպիսի վեճերը, ներառյալ նրանք, որոնք կարող են առաջանալ սույն Համաձայնագրի իրականացման կապակցությամբ, խաղաղ միջոցներով, առաջին հերթին՝ բանակցությունների ճանապարհով, այդ թվում Մինսկի գործընթացի շրջանակներում:
II) Կողմերը դուրս են բերում իրենց զինված ուժերը ներքոհիշյալ դրույթների համապատասխան, ինչպես մանրամասնվում է Հավելվածում 1-ում:
ա) Առաջին փուլում Լեռնային Ղարաբաղից դեպի արևելք և հարավ ընկած ներկայիս շփման գծերի վրա տեղակայված ուժերը կհեռացվեն մինչև թիվ 1 Հավելվածում համաձայնեցված գծերը՝ նրանում ներառված գրաֆիկի համապատասխան, հաշվի առնելով Բարձր մակարդակի պլանավորման խմբի (ԲՄՊԽ) հանձնարարականները՝ ռազմական տեսակետից հիմնավորված բուֆերային գոտում ԵԱՀԿ բազմազգ ուժերի առաջատար ջոկատների սկզբնական ծավալման համար հնարավորություն ստեղծելու նպատակով բաժանել կողմերին այդ գծով և անվտանգություն ապահովել երկրորդ փուլի դուրսբերման ընթացքում:
բ) Երկրորդ փուլում ուժերը դուրս են բերվում միաժամանակ և թիվ 1 Հավելվածում ներառված գրաֆիկի համաձայն՝ հետևյալ կերպ.
1) Հայաստանի բոլոր ուժերը, որոնք տեղաբաշխված են Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, վերադարձվում են այդ սահմաններից ներս:
2) Լեռնային Ղարաբաղի ուժերը վերադարձվում են Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Հանրապետության 1988թ. սահմանագծից ներս՝ բացառությամբ Լաչինի շրջանի:
3) Ադրբեջանի ուժերը դուրս են բերվում դեպի թիվ 1 Հավելվածում նշված սահմանները՝ Բարձր մակարդակի պլանավորման խմբի հանձնարարականների հիման վրա, և դուրս են բերվում Հայաստանի բոլոր տարածքներից:
4) Ծանր զրահատեխնիկան դուրս է բերվում թիվ 1 Հավելվածում նշված վայրեր՝ Բարձր մակարդակի պլանավորման խմբի հանձնարարականների հիման վրա, ԵԱՀԿ խաղաղության պահպանման գործողության հսկողության ներքո, հիշյալ Հավելվածում շարադրված թափանցիկության և հաշվետվության պահանջների պահպանմամբ:
III) Այն տարածում, որ ընկնում է այդ դուրսբերման և ուժերի վերադասավորման սակ, կազմավորում է Բուֆերային գոտի և Բաժանարար գոտի՝ հետևյալ դրույթների համապատասխան և ինչպես մանրամասնվում է թիվ 2 Հավելվածում:
ա) Ուժերի դուրսբերման ավարտին Բուֆերային գոտին տեղակայվում է 1988թ. ԼՂԻՄ սահմանագծի և Լաչինի շրջանի հյուսիսային և հարավային սահմանագծերի երկայնքով: Բուֆերային գոտին մնում է չբնակեցված և ամբողջությամբ ապառազմականացվում է, բացառությամբ ԵԱՀԿ խաղաղության պահպանման գործողության տարրերի:
բ) Բաժանարար գոտին ապառազմականացվում է, բացառությամբ Մշտական խառը հանձնաժողովի հետ համատեղ գործողությունների համար թույլատրված ուժերի, ինչպես մանրամասնվում է թիվ 2 Հավելվածում, ներառյալ.
1) խաղաղության պահպանման գործողության տարրերը,
2) սահմանային պարեկության և ականազերծման համար նախատեսված ստորաբաժանումները,
3) քաղաքացիական ոստիկանությունը, որի քանակությունը և և թույլատրված զինվածությունը նախատեսված են թիվ 2 Հավելվածում:
գ) Բուֆերային գոտում և Բաժանարար գոտում ստեղծվում է ոչ թռիչքային գոտի, որտեղ Կողմերը չեն թույլատրում ռազմական թռիչքներ՝ ԵԱՀԿ խաղաղության պահպանման գործողության վերահսկողության ներքո, ինչպես շարադրված է թիվ 2 Հավելվածում:
դ) Լեռնային Ղարաբաղի իշխանությունների կողմից վերահսկվող տարածքների անվտանգությունը, II) հոդվածի համաձայն ուժերի դուրսբերումից հետո, ապահովվում է գոյություն ունեցող ռազմական կազմավորումների և Լեռնային Ղարաբաղի անվտանգության կազմավորումների կողմից:
IV) ԵԱՀԿ 1994թ. Բուդապեշտյան գագաթնաժողովի որոշումների համաձայն, Կողմերը հրավիրում և աջակցում են ԵԱՀԿ խաղաղության պահպանման բազմազգ գործողությանը (ԽՊԳ), որը կգործի Մշտական խառը հանձնաժողովի (ՄԽՀ) և Հայ-ադրբեջանական միջկառավարական հանձնաժողովի (ՀԱՄՀ) հետ համագործակցված, ինչպես ձևակերպված է 7-րդ կետում: ԽՊԳ-ն հետևում է ուժերի և ծանր զրահատեխնիկայի դուրսբերմանը: Ռազմական թռիչքների չթույլատրմանը, ապառազմականացման ռեժիմի պահպանմանը և հայ-ադրբեջանական սահմանում տիրող իրավիճակին, ինչպես շարադրված է թիվ 2 Հավելվածում: Կողմերը կոչ են անում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին այս նպատակով ընդունել համապատասխան որոշում սկզբնական շրջանի համար, ոչ ավելի՝ քան մեկ տարով, և թարմացնել այդ որոշման դրույթներն անհրաժեշտության դեպքում՝ ԵԱՀԿ Գործող նախագահի հանձնարարականների հիման վրա: Կողմերը համաձայն են, որ խաղաղության պահպանման բազմազգ գործողությունների ընդհանուր շարունակականության ապահովումը կդառնա նվազագույն անհրաժեշտը՝ կախված տարածաշրջանում տիրող իրավիճակից և հակամարտության համընդգրկուն կարգավորման տեմպերից: Կողմերը լիովին համագործակցում են ԽՊԳ-ի հետ, որպեսզի իրականացվի սույն Համաձայնագիրը և կանխարգելվի ցանկացած տապալում կամ խաղաղության պահպանման գործողության դադարեցումը:
V) Կողմերն օժանդակում են տեղահանված անձանց անվտանգ և ինքնակամ վերադարձին իրենց նախկին մշտական բնակության վայրեր Բաժանարար Գոտում, ինչպես շարադրված է թիվ 2 Հավելվածում: Համագործակցելով Մշտական խառը հանձնաժողովի հետ՝ ԽՊԳ-ը հետևում է վերադարձող բնակչության անվտանգությանը, որպեսզի նպաստի բոլոր կողմերի վստահությանը՝ այդ գոտում ապառազմականացման ռեժիմին հետևելու առումով: Կողմերը բանակցություններ են վարում նաև այն անձանց անհատ, անվտանգ և ինքնակամ վերադարձի շուրջ, ովքե ընդգրկված չեն այս Համաձայնագրի կամ համընդգրկուն կարգա-

վորման ծրագրի մեջ և որոնք տեղահանվել են 1987թ. հետո Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտության և լարվածության արդյունքում:
VI) Ուժերի դուրս բերման հետ զուգահեռ Կողմերն անհապաղ միջոցներ են իրականացնում ճանապարհների, երկաթուղիների, էլեկտրահաղորդալարերի և կապի, առևտրային և այլ հարաբերությունների բացման նպատակով, ներառյալ բոլոր գործողությունները, որոնք անհրաժեշտ են թիվ 3 Հավելվածում շարադրված ժամանակացույցերին և կոնկրետ դրույթներին համապատասխան հնարավոր նվազագույն ժամկետներում սույնին հասնելու համար: Կողմերը երաշխավորում են այդ կապերի օգտագործումը բոլորի կողմից, ներառյալ էթնիկ փոքրամասնությունները՝ ապահովելով վերջիններիս հասանելիությունն իրենց էթնիկ խմբերին տարածաշրջանի այլ վայրերում: Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում են հանել բոլոր տեսակի շրջափակումները և ապահովել մարդկանց և բեռների փոխադրումը այլ Կողմերի համար առանց խոչընդոտների: Կողմերը երաշխավորում են ազատ և անվտանգ երկաթուղային հաղորդակցություն իրար միջև:
VII) Կողմերը լիովին համագործակցում են Կարմիր խաչի միջազգային կոմիտեի, ՄԱԿ-ի փախստականների գործերով Գերագույն հանձնակատարի և այլ միջազգային կազմակերպությունների հետ՝ հակամարտության արդյունքում կալանավորվածներին արագ և ապահով վերադարձնելու, անհետ կորածների ճակատագրերը հետաքննելու և աճյունները հայրենադարձելու, ինչպես նաև մարդասիրական և վերականգնողական նպատակներով օգնությունն իրենց վերահսկողության տակ գտնվող տարածքներով առանց որևէ խտրականության հակամարտությունից տուժած շրջաններ փոխադրելու շուրջ: Կողմերը Մշտական խառը հանձնաժողովի միջոցով համագործակցում են ԵԱՀԿ ԽՊԳ-ի հետ՝ վստահության ամրապնդմանն ուղղված միջոցառումների շուրջ:
VIII) Կողմերն անհապաղ հիմնում են Մշտական խառը հանձնաժողով (ՄԽՀ) սույն Համաձայնագրում Ադրբեջանին և Լեռնային Ղարաբաղին առնչվող խնդիրներին վերաբերվող դրույթների իրականացմանը հետևելու նպատակով: ՄԽՀ-ի նախագահը հանդիսանում է ԵԱՀԿ Գործող նախագահի ներկայացուցիչը՝ մեկ ադրբեջանցի և մեկ լեռնային-ղարաբաղցի փոխնախագահներով: ՄԽՀ-ի հիմնական պարտականությունը Համաձայնագրի իրականացմանը հետևելն է. ԵԱՀԿ-ից համանախագահի պարտականությունները ներառում են նաև միջնորդություն տարաձայնությունների դեպքերում, ինչպես նաև թույլատրված միջոցառումների կիրառում արտակարգ իրավիճակների պարագայում, ինչպիսին օրինակ բնական աղետներն են: ՄԽՀ-ն ունի հետևյալ ենթահանձնաժողովները՝ Ռազմական, Տնտեսական, Մարդասիրական և մշակութային և Կապի գծով: ՄԽՀ-ի կառուցվածքը, գործառույթները և նրան առնչվող այլ մանրամասները շարադրված են թիվ 4 Հավելվածում:
IX) Կողմերն անմիջապես ստեղծում են Հայ-ադրբեջանական միջկառավարական հանձնաժողով (ՀԱՄՀ) Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանային միջադեպերի կանխարգելմանն աջակցելու, երկու երկրների սահմանապահ զորքերի և անվտանգության այլ համապատասխան ուժերի միջև կապ ապահովելու և ճանապարհների, երկաթուղիների, կապի, խողովակաշարերի, առևտրային և այլ հարաբերությունների բացմանը հետևելու և նպաստելու նպատակով: ՀԱՄՀ-ն ունի երկու համանախագահ՝ մեկը Հայաստանի, մյուսն Ադրբեջանի կողմից: Հանձնաժողովի մեջ մտնում է ԵԱՀԿ Գործող նախագահի կողմից նշանակված ներկայացուցիչը: ՀԱՄՀ-ի կառուցվածքը, գործառույթները և նրան առնչվող այլ մանրամասները շարադրված են թիվ 5 Հավելվածում: Ադրբեջանի Հանրապետությունը և Հայաստանի Հանրապետությունը միմյանց մայրաքաղաքներում հիմնում են կապի գրասենյակներ:
X) Ադրբեջանի Հանրապետությունը և Հայաստանի Հանրապետությունը տարածաշրջանում անվտանգության բարձրացման նպատակով սկսում են վարել երկկողմ և բազմակողմ բանակցություններ համապատասխան միջազգային և տարածաշրջանային խորհրդաժողովների ժամանակ, ներառյալ ռազմական թափանցիկությունը և ԵԱՀԿ պայմանագրի լիակատար պահպանումը:
XI) Սույն Համաձայնագրի երեք Կողմերն այսպիսով վերջ դնելով հակամարտության ռազմական գործոնին՝ համաձայն են Մինսկի համաժողովի համանախագահների օժանդակությամբ բարեխղճորեն շարունակել վարել բանակցություններ ԵԱՀԿ Գործող նախագահի կողմից համապատասխանաբար հրավիրված այլ կողմերի հետ՝ անհետաձգելի, համընդգրկուն կարգավորմանը հասնելու նպատակով, ներառյալ քաղաքական կողմը, ինչը ներառում է Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի որոշումը և Լաչինի, Շուշիի և Շահումյանի հետ կապված խնդիրների լուծումը. այսպիսի կարգավորումը՝ բանակցությունների ճանապարհով իրականանալուց և վերոհիշյալ Կողմերի կողմից ստորագրվելուց հետո, ենթակա է ճանաչման միջազգային հանրության կողմից, հնարավորինս արագ հրավիրվելիք Մինսկի համաժողովի ժամանակ:
XII) Յուրաքանչյուր Կողմ լիովին հարգում է մյուս Կողմերի և նրանց բնակչության անվտանգությունը: Կողմերը պարտավորվում են բարեխիղճ հարաբերություններ զարգացնել իրենց ժողովուրդների միջև՝ օժանդակելով նրանց միջև առևտրին և նորմալ փոխհարաբերություններին, ձեռնպահ մնալ այնպիսի հայտարարություններից կամ գործողություններից, որոնք կարող են խաթարել սույն Համաձայնագիրը կամ բարեկամական հարաբերությունները:
XIII) Ի հավելումն խաղաղության պահպանման, դուրսբերումը վերահսկելու հետ կապված վերոշարադրյալ հիմնական դրույթների, գոյություն ունեցող սկզբունքների ու ԵԱՀԿ պարտավորությունների մասին հիշատակման, ներառյալ նրանք, որ արտացոլված են 1992թ. Հելսինկյան և 1994թ. Բուդապեշտյան փաստաթղթերում, ԵԱՀԿ-ն համապատասխան մեխանիզմների միջոցով հետևում է սույն Համաձայնագրի բոլոր կողմերի լիակատար իրականացմանը և այդ սկզբունքների և որոշումների համաձայն համապատասխան միջոցներ է ձեռնարկում՝ սույն Համաձայնագրի պայմանների խախտման և դրանց նկատմամբ հակազդեցության կանխարգելման ուղղությամբ: Սույն Համաձայնագրի վկաները, գործելով ԵԱՀԿ Մշտական Խորհրդի և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի միջոցով, նպաստում են դրա լիակատար իրականացմանը: Սույն Համաձայնագրի լուրջ խախտման դեպքում նրանք խորհրդակցում են միմյանց միջև անհրաժեշտ քայլերի վերաբերյալ, անմիջապես տեղեկացնում են ԵԱՀԿ Գործող նախագահին և Միացյալ ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին և խնդրում են ԵԱՀԿ Մշտական խորհրդից կամ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդից՝ քննարկել համապատասխան գործողություններ այս կապակցությամբ:
XIV) Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում նրա ստորագրումից և վավերացումից հետո, այն բացառություններով, որոնք բխում են XI կետում հիշատակված համընդգրկուն կարգավորումից: Սույն Պայմանագիրը կարող է փոփոխվել, լրացվել կամ դադարեցվել բոլոր Կողմերի համաձայնությամբ:
*[Հավելվածները չեն բերվում]*

# ԼՂ ՀԱՐՑԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ՏԱՐԲԵՐԱԿ, ԵԱՀԿ ՄԻՆՍԿԻ ԽՄԲԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԶԻՆՎԱԾ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

10 նոյեմբերի, 1998թ.

*Ոչ պաշտոնական թարգմանություն ռուսերեն բնօրինակից*

Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորումը միջազգային իրավունքի նորմերին և սկզբունքներին համապատասխան, նե-

րառյալ՝ պետությունների տարածքային ամբողջականության և ժողովուրդների ինքնորոշման սկզբունքները իրագործելու վճռականությամբ՝ Հայաստանը, Ադրբեջանը և Լեռնային Ղարաբաղը պայմանավորվում են հետևյալի մասին.

## I. ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Կողմերը կնքում են համաձայնագիր Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի մասին, որը կներառի հետևյալ դրույթները.

Լեռնային Ղարաբաղը հանդիսանում է «հանրապետություն» տեսակի պետական և տարածքային կազմավորում և Ադրբեջանի հետ միասին կազմավորում է Ընդհանուր պետություն՝ նրա միջազգայնորեն ճանաչված սահմաններում:

Ադրբեջանը և Լեռնային Ղարաբաղը կստորագրեն Համաձայնագիր իրենց իրավասություններին ենթակա հարցերի և պետական իշխանության համապատասխան մարմինների միջև իրավասությունների փոխադարձ տարանջատման մասին, որը սահմանադրական օրենքի ուժ կունենա:

Ադրբեջանը և Լեռնային Ղարաբաղը կազմավորում են Համատեղ կոմիտե, որի կազմի մեջ կընդգրկվեն նախագահների, վարչապետների, խորհրդարանների նախագահների ներկայացուցիչները՝ սահմանելու համատեղ իրավասության ոլորտի քաղաքականությունն ու գործունեությունը:

Փոխադարձ կապեր պահպանելու և համատեղ գործունեությունը համակարգելու նպատակով Բաքվում և Ստեփանակերտում ստեղծվում են համապատասխանաբար Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի ներկայացուցչություններ:

Լեռնային Ղարաբաղը կունենա արտասահմանյան պետությունների հետ տնտեսական, առևտրական, գիտական, մշակութային, մարզական, մարդասիրական ոլորտներում արտաքին անմիջական կապերի իրագործման իրավունք, այդ թվում՝ այդ խնդիրներով զբաղվող տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների հետ: Լեռնային Ղարաբաղի քաղաքական կուսակցությունները և հասարակական կազմակերպությունները իրավունք կունենան կապեր հաստատել արտասահմանյան պետությունների քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների հետ:

Լեռնային Ղարաբաղը մասնակցում է Ադրբեջանի արտաքին քաղաքականության իրագործմանն այն հարցերում, որոնք շոշափում են իր շահերը: Այդ հարցերի վերաբերյալ որոշումներ չեն կարող ընդունվել առանց երկու կողմերի համաձայնության:

Լեռնային Ղարաբաղի կառավարությունն իր ներկայացուցիչները կարող է ունենալ արտասահմանյան պետություններում Ադրբեջանի այն դեսպանություններում կամ հյուպատոսական հաստատություններում, որտեղ ունի իր յուրահատուկ շահերը, ինչպես նաև կարող է ադրբեջանական պատվիրակությունների կազմում իր փորձագետներին ուղարկել մասնակցելու միջազգային բանակցություններին, եթե դրանք առնչվում են Լեռնային Ղարաբաղի շահերի հետ:

Լեռնային Ղարաբաղի սահմանները կհամապատասխանեն նախկին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սահմաններին: Դրանց հնարավոր ճշգրտումները կամ փոփոխությունները կարող են լինել Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի միջև հատուկ փոխադարձ պայմանավորվածությունների առարկա:

Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի միջև սահմանները բաց են երկու ուղղությամբ քաղաքացիական անձանց ազատ տեղաշարժման համար: Այցելություններ իրագործելիս և գործնական կապեր վարելիս նրանք ազատվում են մաքսային կամ այլ տուրքերից: Մշտական բնակության իրավունքի տրամադրումը վերաբերում է համապատասխան կառավարության իրավասությանը:

Ադրբեջանը և Լեռնային Ղարաբաղը վեճերի կարգավորման հարցում չեն դիմի ուժի կամ ուժի կիրառման սպառնալիքի:

Անհաղթահարելի վեճերի կամ տարաձայնությունների ծագման դեպքում կողմերը Համատեղ հանձնաժողովի շրջանակներում կարող են հարցումով ստանալ ԵԱՀԿ Գործող համանախագահի խորհրդատվական կարծիքը, որը հաշվի կառնվի վերջնական որոշում ընդունելիս:

Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը կներառի նաև ներքոշարադրյալ իրավունքներն ու արտոնությունները այնպես, ինչպես ձևակերպվելու են Մինսկի համաժողովի հավանությանն արժանացած «Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի մասին» համաձայնագրի մեջ:

1. Լեռնային Ղարաբաղը կունենա սեփական Սահմանադրություն, որը հանրաքվեով կընդունվի Լեռնային Ղարաբաղի ժողովրդի կողմից: Այդ Սահմանադրությունը կպարունակի Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի մասին Համաձայնագրի դրույթները: Ադրբեջանը համապատասխանաբար փոփոխություններ կմտցնի իր Սահմանադրության մեջ՝ այդ Համաձայնագիրը ներառելու համար: Այս Համաձայնագրի կամ Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի Սահմանադրությունների դրույթների այն մասերը, որոնք անհամապատասխանություններ են պարունակում, չեն կարող փոփոխվել առանց բոլոր երեք կողմերի համաձայնության:
2. Լեռնային Ղարաբաղի տարածքում գործում է Լեռնային Ղարաբաղի Սահմանադրությունն ու օրենքները: Ադրբեջանի օրենքները, կանոնները և գործադիր որոշումները գործում են Լեռնային Ղարաբաղի տարածքում այնքանով, որքանով չեն հակասում վերջինիս Սահմանադրությանը և օրենքներին:
3. Լեռնային Ղարաբաղը կունենա իր դրոշը, զինանշանը և օրհներգը:
4. Լեռնային Ղարաբաղը՝ համաձայն իր Սահմանադրության, ինքնուրույն է կազմավորում իր օրենսդիր, գործադիր և դատական մարմինները:
5. Լեռնային Ղարաբաղի քաղաքացիները, որպես անձը հաստատող վկայական, կունենան Ադրբեջանի անձնագիր՝ «Լեռնային Ղարաբաղ» հատուկ նշումով: Միայն Լեռնային Ղարաբաղի կառավարությունն իրավունք կունենա նման անձնագրեր հանձնել: Լեռնային Ղարաբաղի հայկական ծագում ունեցող քաղաքացիները կարող են արտագաղթել Հայաստան և մշտական բնակություն հաստատելու համար այնտեղ տեղափոխվելու դեպքում հայկական քաղաքացիություն ստանալ այդ երկրի օրենքների համաձայն:
6. Լեռնային Ղարաբաղի բնակչությունն իրավունք ունի ընտրել իր ներկայացուցիչներին Ադրբեջանի խորհրդարանում և մասնակցել Ադրբեջանի Նախագահի ընտրություններին:
7. Լեռնային Ղարաբաղը կլինի ազատ տնտեսական գոտի, որն իրավունք կունենա թողարկել իր սեփական դրամանիշները, որոնք կշրջանառվեն ադրբեջանական դրամանիշների հետ համատեղ, ինչպես նաև իրավունք կունենա թողարկել սեփական դրոշմանիշներ:
8. Լեռնային Ղարաբաղը կունենա Հայաստանի և Ադրբեջանի հետ ազատ և անարգել տրանսպորտային հաղորդակցման և կապի իրավունք:
9. Լեռնային Ղարաբաղը կունենա Ազգային գվարդիա (անվտանգության ուժեր) և ոստիկանական ուժեր, որոնք կկազմավորվեն կամավորության սկզբունքով: Այդ ուժերը չեն կարող գործել Լեռնային Ղարաբաղից դուրս՝ առանց Ադրբեջանի կառավարության համաձայնության:
10. Ադրբեջանի բանակը, անվտանգության ուժերը և ոստիկանությունն իրավունք չեն ունենա մտնել Լեռնային Ղարաբաղի տարածք՝ առանց Լեռնային Ղարաբաղի իշխանությունների համաձայնության:
11. Լեռնային Ղարաբաղում հիմնական պաշտոնական լեզուն հանդիսանում է հայերենը, իսկ երկրորդ պաշտոնական լեզուն ադրբեջաներենն է: Նրա քաղաքացիները կարող են օգտագործել նաև այլ մայրենի լեզուներ բոլոր պաշտոնական և ոչ պաշտոնական դեպքերում:
12. Լեռնային Ղարաբաղի բյուջեն բաղկացած է լինելու սեփական աղբյուրներից ստացված միջոցներից: Լեռնային Ղարաբաղի կառավարությունը կխրախուսի և կերաշխավորի ադրբեջանական և արտասահմանյան ընկերությունների և անձանց կապիտալ ներդրումները:

## II. ԼԱՉԻՆԻ ՄԻՋԱՆՑՔԻ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի միջև անարգել հաղորդակցություն ապահովելու նպատակով Լեռնային Ղարաբաղի կողմից Լաչինի միջանցքն օգտագործելու հարցը հանդիսանում է առանձին պայմանավորվածության առարկա,

եթե Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի համաձայնությամբ չընդունվեն այլ որոշումներ Լաչինի շրջանի հատուկ ռեժիմի վերաբերյալ: Լաչինի շրջանը մշտապես պետք է մնա որպես լիովին ապառազմականացված գոտի:

## III. ՇՈՒՇԱ ԵՎ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կողմերը համաձայնվում են այն մասին, որ բոլոր ադրբեջանցի փախստականները կարող են վերադառնալ Շուշա քաղաքի իրենց բնակավայրերը:
Նրանց անվտանգությունը կերաշխավորվի Լեռնային Ղարաբաղի համապատասխան իշխանությունների կողմից: Նրանք կունենան Լեռնային Ղարաբաղի բոլոր քաղաքացիներին հավասար իրավունքներ, այդ թվում՝ քաղաքական կուսակցություններ ստեղծելու, բոլոր մակարդակի ընտրություններին մասնակցելու, պետական օրենսդիր և տեղական ինքնակառավարման մարմիններում ընտրվելու, պետական ծառայության, այդ թվում՝ իրավապահ մարմիններում ծառայության ընդունվելու իրավունք:
Նույնպիսի իրավունքներ կստանան նաև հայ փախստականները՝ Շահումյան քաղաք վերադառնալու դեպքում:
Շուշա և Շահումյան քաղաքների բնակիչները կունենան երաշխավորված իրավունք՝ օգտվելու ճանապարհներից, կապից և հարաբերություններ հաստատելու Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի մնացած տարածքների հետ:
Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի իշխանությունները կաջակցեն, համապատասխանաբար, Շուշա և Շահումյան քաղաքներում ԵԱՀԿ-ի ժողովրդավարական ինստիտուտների և մարդու իրավունքների գծով գրասենյակի ներկայացուցչությունների տեղակայմանն ու գործունեությանը:

---

Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի մասին Համաձայնագիրը կստորագրեն երեք կողմերը, և այն ուժի մեջ կմտնի Մինսկի կոնֆերանսի հավանությունը ստանալուց հետո:

## IV. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ԶԻՆՎԱԾ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Կողմերը համաձայնության են գալիս այն մասին, որ զինված հակամարտության դադարեցման մասին Համաձայնագիրը ներառելու է հետևյալ դրույթները.
I. Կողմերը հրաժարվում են իրենց միջև ծագած վեճերը կարգավորելու համար ուժի կիրառման սպառնալիքից կամ դրա գործադրումից: Նրանք խաղաղ միջոցներով և առաջին հերթին ուղիղ բանակցությունների ճանապարհով կամ ԵԱՀԿ Մինսկի գործընթացի շրջանակներում են լուծում բոլոր նման վեճերը, ներառյալ այն վեճերը, որոնք կարող են ծագել զինված հակամարտության դադարեցման մասին համաձայնագրի իրագործման կապակցությամբ:
II. Կողմերը դուրս են բերում իրենց զինված ուժերը համաձայն հետևյալ դրույթների և ինչպես մանրամասն շարադրված է առաջին Հավելվածում:
ա) Առաջին փուլում Լեռնային Ղարաբաղից հարավ և արևելք ընկած գծի երկայնքով տեղակայված ուժերը հեռացվում են դեպի այն գծերը, որոնք նշված են Հավելված 1-ում, համաձայն այնտեղ պարունակվող ժամանակացույցի, հավուր պատշաճի նկատի ունենալով Ծրագրավորման բարձր մակարդակի խմբի (ԾԲՄԽ) երաշխավորությունները, որոնք նպատակ ունեն ռազմական տեսակետից հիմնավորված ժամանակավոր Բուֆերային գոտում հնարավորություն ստեղծել ԵԱՀԿ բազմազգ ուժերի առաջավոր ջոկատի սկզբնական ծավալման համար, հեռացնել կողմերին այդ գծի երկայնքով և ապահովել անվտանգությունը դուրսբերման երկրորդ փուլում:
բ) Երկրորդ փուլում ուժերը դուրս են բերվում միաժամանակ, համաձայն Հավելված 1-ի ժամանակացույցի, հետևյալ կարգով.
(1) Հայաստանի բոլոր ուժերը, որոնք տեղակայված են Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, վերադարձվում են այդ սահմաններից ներս:
(2) Լեռնային Ղարաբաղի ուժերը բերվում են 1988 թվականի Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի (ԼՂԻՄ) սահմանագծից ներս, բացառությամբ Լաչինի շրջանի, մինչև Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի միջև անարգել հաղորդակցության մասին Համաձայնագրի ձեռքբերումը:
(3) Ադրբեջանի ուժերը դուրս են բերվում այն գծերից, որոնք նշված են Հավելված 1ում՝ համաձայն ԾԲՄԽ երաշխավորությունների և դուրս են հանվում Հայաստանի բոլոր տարածքներից:
(4) Ծանր սպառազինությունները տեղափոխվում են այն վայրերը, որոնք նշված են Հավելված 1-ում, ԾԲՄԽ-ի երաշխավորությունների հիման վրա, վերահսկվելով ԵԱՀԿ խաղաղարար առաքելության կողմից, պահպանելով թափանցիկության և հաշվետու լինելու պահանջները, որոնք շարադրված են Հավելված 1-ում:
III. Ուժերի այդ դուրսբերման արդյունքում ազատված տարածքում կազմավորվում են Բուֆերային և Տարանջատման գոտիներ, համաձայն հետևյալ դրույթների, ինչպես մանրամասն շարադրված է Հավելված 2-ում:
ա) Ուժերի դուրսբերման ավարտով Բուֆերային գոտին տեղադրվում է ԼՂԻՄ 1988 թվականի սահմանագծի երկայնքով: Լրացուցիչ պայմանավորվածության հասնելու դեպքում այն կարող է անցնել նաև Լաչինի շրջանի սահմանագծերով: Բուֆերային գոտին մնում է չբնակեցված և լիովին ապառազմականացված, բացառությամբ ԵԱՀԿ խաղաղարար ուժերի:
բ) Տարանջատման գոտին ապառազմականացվում է, բացառությամբ այն ուժերի, որոնք թույլատրված են ԽՊԳ գործողության համար, որն իրագործվում է Մշտական խառը հանձնախմբի համագործակցությամբ, ինչպես մանրամասն շարադրված է Հավելված 2-ում, ներառյալ՝
(1) խաղաղության պահպանման գործողության տարրերը,
(2) սահմանամերձ պահպանության և ականազերծման ադրբեջանական ստորաբաժանումները,
(3) Ադրբեջանի քաղաքացիական ոստիկանությունը, որի թվաքանակը և թույլատրված սպառազինումը սահմանվում են Հավելված 2-ում:
գ) Բուֆերային և Տարանջատման գոտիներում ԵԱՀԿ ԽՊԳ հսկողությամբ ստեղծվում է ոչ թռիչքային գոտի, որտեղ Կողմերը չեն թույլատրում մարտական թռիչքներ, ինչպես շարադրված է Հավելված 2-ում:
դ) Լեռնային Ղարաբաղի իշխանությունների կողմից վերահսկվող բոլոր շրջաններում, ուժերի դուրս բերումից հետո, անվտանգությունն ապահովվում է Լեռնային Ղարաբաղի անվտանգության գործող կառույցների կողմից:
IV. Համաձայն 1994 թվականի ԵԱՀԿ Բուդապեշտի գագաթաժողովի որոշման, Կողմերը հրավիրում են և աջակցում խաղաղության պահպանման գծով ԵԱՀԿ բազմազգ գործողության ծավալմանը (ԽՊԳ), որը կաշխատի Մշտական խառը հանձնախմբի (ՄԽՀ) և Հայ-ադրբեջանական միջկառավարական հանձնաժողովի (ՀԱՄԿՀ) համագործակցությամբ: ՄԽՀ-ն հետևում է ուժերի և ծանր սպառազինությունների դուրսբերմանը, մարտական թռիչքների արգելմանը, ապառազմականացման ռեժիմի պահպանմանը և հայ-ադրբեջանական սահմանային իրադրությանը, ինչպես շարադրված է Հավելված 2-ում:
Խաղաղության պահպանման գործողությունը սահմանվում է համաձայն ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի համապատասխան բանաձևի, սկզբնական ժամանակահատվածի համար ոչ ավելի, քան մեկ տարի ժամկետով, որը երկարաձգվում է, ըստ անհրաժեշտության՝ ԵԱՀԿ Գործող նախագահի երաշխավորությամբ: Կողմերը համաձայնության են գալիս այն մասին, որ խաղաղության պահպանման բազմազգ գործողության ընդհանուր տևողությունը նվազագույնն անհրաժեշտ կլինի՝ կախված տարածաշրջանի իրավիճակից և հակամարտության համապարփակ կարգավորման իրագործման տեմպերից: Կողմերը լիովին համագործակցում են ԽՊԳ հետ, որպեսզի ապահովեն սույն համաձայնագրի իրագործումը և կանխարգելեն խաղաղության պահպանման գործողության ցանկացած խզում կամ դադարեցում:
V. Կողմերն աջակցում են փախստականների և տեղահանված անձանց կամավոր վերադարձին նրանց մշտական բնակության վայրեր, որոնք տեղադրված են Տարանջատման գոտում, ինչպես շարադրված է Հավելված 2-ում: ԽՊԳ-ն, համագործակցելով ՄԽՀ հետ, հետևում է վերադարձող

բնակչության անվտանգությանը, որպեսզի նպաստի համոզելու բոլոր կողմերին, որ պահպանվում է ապառազմականացման ռեժիմը այդ գոտում: Կողմերը բանակցություններ են վարում՝ իրագործելու նաև անվտանգ և կամավոր վերադարձը բոլոր այլ անձանց, ովքեր բացի սույն համաձայնագրում ընդգրկվածներից, նույնպես հանդիսանում են փախստականներ, կամ էլ տեղահանվել են հակամարտության և Հայաստանի և Ադրբեջանի միջև 1987 թվականից հետո ստեղծված լարվածության հետևանքով:

VI. Ուժերի դուրսբերման հետ միաժամանակ Կողմերն անհապաղ միջոցառումներ են իրագործում ճանապարհները, երկաթուղին, էլեկտրամատակարարման և կապի գծերը բացելու, առևտրական և այլ հարաբերություններ հաստատելու ուղղությամբ, ներառյալ բոլոր գործողությունները, որոնք անհրաժեշտ են դրանց հնարավոր նվազագույն ժամկետներում հասնելու համար՝ համաձայն Հավելված 3-ում շարադրված ժամանակացույցի և կոնկրետ դրույթների: Կողմերն ապահովում են այդ կապերի օգտագործումը բոլորի համար, ներառյալ էթնիկ փոքրամասնությունները՝ վերջիններիս համար ապահովելով անարգել մուտք տարածաշրջանի այլ վայրերում գտնվող իրենց էթնիկական համայնքներ: Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է հանել բոլոր շրջափակումները և ապահովել բեռների և մարդկանց ժամանումը բոլոր մյուս Կողմերի համար՝ առանց խոչընդոտների: Կողմերն ապահովում են ազատ և անվտանգ երկաթուղային հաղորդակցություն միմյանց միջև:

VII. Կողմերը լիարժեք համագործակցում են Կարմիր խաչի միջազգային կոմիտեի, փախստականների հարցերով ՄԱԿ-ի Գերագույն կոմիսարի և այլ միջազգային կազմակերպությունների հետ՝ ապահովելու բոլոր այն անձանց շուտափույթ և անվտանգ վերադարձը, ովքեր ձերբակալվել են կապված հակամարտության հետ, ապահովելու անհետ կորածների ճակատագրի հետաքննությունը, բոլոր աճյունների վերաթաղումը և մարդասիրական օգնության, ինչպես նաև վերականգնման նպատակներով ցուցաբերվող օգնության անխտրական առաքումն իրենց կողմից վերահսկվող տարածքով դեպի այն շրջաններ, որոնք տուժել են հակամարտության ընթացքում: Կողմերը համագործակցում են ԵԱՀԿ ԽՊԳ-ի հետ՝ Մշտական խառը հանձնախմբի միջոցով՝ իրագործելու վստահության ամրապնդման միջոցառումներ:

VIII. Կողմերն անհապաղ ստեղծում են Մշտական խառը հանձնախումբ (ՄԽՀ)՝ վերահսկելու սույն համաձայնագրի այն դրույթների իրագործումը, որոնք շոշափում են Ադրբեջանին և Լեռնային Ղարաբաղին վերաբերող խնդիրներ: ՄԽՀ-ի նախագահ է հանդիսանում ԵԱՀԿ գործող նախագահի ներկայացուցիչը, որն ունենալու է մեկական փոխնախագահ ադրբեջանական և ղարաբաղյան կողմից: ՄԽՀ-ի հիմնական պարտականությունը կայանում է Համաձայնագրի իրագործման վերահսկողության մեջ. ԵԱՀԿ-ի կողմից նախագահի պարտականությունները ներառում են նաև միջնորդություն՝ տարաձայնությունների դեպքում և արտակարգ իրավիճակներում միջոցառումներ ի ձեռնարկման թույլտվություն, ինչպես, օրինակ՝ բնական աղետների ժամանակ: ՄԽՀ-ն ունի Ռազմական, Տնտեսական, Մարդասիրական և Մշակույթի և Կապի ենթահանձնաժողովներ, որոնց կառուցվածքը, գործողությունը և ՄԽՀ-ին վերաբերող այլ մանրամասները շարադրված են Հավելված 4-ում:

IX. Կողմերն անհապաղ ստեղծում են Հայ-ադրբեջանական միջկառավարական հանձնաժողով (ՀԱՄԿՀ)՝ նպաստելու Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանային միջադեպերի կանխարգելմանը, սահմանապահ զորքերի և երկու երկրների անվտանգության համապատասխան այլ ուժերի միջև կապի իրագործմանը, ճանապարհների, երկաթուղային գծերի, կապի, խողովակաշարերի, առևտրական և այլ հարաբերությունների բացման, վերահսկման և աջակցման միջոցառումներին: ՀԱՄԿՀ-ն ունի երկու համանախագահ՝ Հայաստանից և Ադրբեջանից: Հանձնաժողովի կազմում ընդգրկված է ԵԱՀԿ Գործող նախագահի կողմից նշանակված ներկայացուցիչը: ՀԱՄԿՀ կառուցվածքը, գործունեությունը և այլ մանրամասներ շարադրված են Հավելված 5-ում:

X. Ադրբեջանի Հանրապետությունը և Հայաստանի Հանրապետությունը երկկողմ և բազմակողմ բանակցությունների մեջ են մտնում համապատասխան միջազգային և տարածաշրջանային համաժողովներում՝ նպատակ ունենալով ապահովել տարածաշրջանում անվտանգության բարձրացումը, ներառյալ ռազմական դյուրաշարժությունը և ԵԱՀԿ պայմանագրի լիակատար պահպանումը:

XI. Կողմերից յուրաքանչյուրը լիովին հարգում է մյուս Կողմերի և նրանց ազգաբնակչության անվտանգությունը: Կողմերը պարտավորվում են զարգացնել բարիդրացիական հարաբերություններ իրենց ժողովուրդների միջև, նպաստելով նրանց առևտրական և բնականոն փոխգործակցությանը և զերծ մնալ այնպիսի հայտարարություններից կամ գործողություններից, որոնք կարող են տապալել սույն Համաձայնագիրը կամ բարիդրացիական հարաբերությունները:

XII. Ի լրումն խաղաղության պահպանմանը և ուժերի դուրսբերման վերահսկողությանը վերաբերող վերոշարադրյալ կոնկրետ դրույթների և հիշեցնելով ԵԱՀԿ համապատասխան սկզբունքների և պարտավորությունների մասին, ներառյալ նրանք, որ արտահայտված են Հելսինկիի 1992 թվականի և Բուդապեշտի 1994 թվականի փաստաթղթերում, ԵԱՀԿ-ն համապատասխան մեխանիզմների միջոցով հետևում է սույն Համաձայնագրի բոլոր տեսանկյունների լիակատար իրագործմանը և համապատասխան քայլեր է ձեռնարկում, ելնելով այդ սկզբունքներից և որոշումներից՝ կանխարգելելու սույն Համաձայնագրի պայմանների խախտումը և դրան հակազդումը:

XIII. Զինված հակամարտության դադարեցման մասին Համաձայնագիրը կստորագրեն երեք կողմերը, և այն ուժի մեջ կմտնի Մինսկի համաժողովի հավանությանն արժանանալուց և երեք կողմերի խորհրդարանների կողմից վավերացվելուց հետո:

XIV. Ադրբեջանի Հանրապետությունը և Հայաստանի Հանրապետությունը լիարժեք դիվանագիտական հարաբերություններ են հաստատում դիվանագիտական մշտական առաքելությունների հետ՝ դեսպանների մակարդակով, այն բանից հետո, երբ Համաձայնագրերը ստորագրվել են և հավանության արժանացել Մինսկի կոնֆերանսի կողմից:

## V. ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Կողմերը փոխադարձ պարտավորություններ են ստանձնում վերոհիշյալ Համաձայնագրերի կատարումն ապահովելու ուղղությամբ, ներառյալ Լեռնային Ղարաբաղի, նրա բնակչության և բնակության նախկին վայրերը վերադարձող փախստականների և տեղահանված անձանց անվտանգությունը:
2. ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը կհետևի Համապարփակ համաձայնագրի իրագործմանը:
3. Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի և զինված հակամարտության դադարեցման մասին Համաձայնագրերը կարող են ստորագրվել Մինսկի համաժողովի համանախագահների կողմից, որոնք հանդես են գալիս որպես վկաներ: Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի նախագահները հաստատում են երեք երկրների մտադրությունը՝ համատեղ գործելու, Համաձայնագրերի իրագործման ընթացքին մանրազնին հետևելու և դրանք իրագործելու ուղղությամբ համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու նպատակով: ԵԱՀԿ-ը կամ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը կարող են դիվանագիտական, տնտեսական կամ, ծայրահեղ դեպքում, ռազմական բնույթի քայլեր ձեռնարկել՝ համաձայն ՄԱԿ-ի կանոնադրության, եթե անհրաժեշտություն ծագի:

# Տեղեկագրական և կենսագրական համառոտ տվյալներ







## Ադրբեջան

### Հեյդար Ալիև

Երեք տասնամյակ շարունակ Հեյդար Ալիևը էական դեր է խաղացել Ադրբեջանի քաղաքական կյանքում՝ ցուցաբերելով փոփոխվող քաղաքական իրողություններին հարմարվելու զարմանալի ունակություններ: Նա ծնվել է 1923 թվականին Ադրբեջանի կազմում գտնվող Նախիջևանի ինքնավար հանրապետությունում: Նրա ընտանիքը արմատներով Հայաստանի Զանգեզուրի շրջանից էր, ինչի շնորհիվ նա յուրային էր ընկալվում Ադրբեջանի երկու ամենաազդեցիկ կլանային համայնքների՝ երազիների և նախիջևանցիների կողմից միաժամանակ: 1967 թվականին նա դարձավ Ադրբեջանի ՊԱԿ-ի առաջին ոչ ռուս ղեկավարը, իսկ 1969 թվականին՝ Ադրբեջանի կոմունիստական կուսակցության առաջին քարտուղարը: 1982 թվականին նա աշխատանքի անցավ ՍՄԿԿ Քաղբյուրոյում, որպես Նախարարների խորհրդի փոխնախագահ: Սակայն 1987 թվականին ԽՍՀՄ նոր առաջնորդի՝ Միխայիլ Գորբաչովի կողմից ազատվեց այդ պաշտոնից:

Շարունակելով բնակվել Մոսկվայում՝ Ալիևը մի պահ ընդհատեց իր ակտիվ քաղաքական գործունեությունը: Սակայն, 1990 թվականին Բաքվի հունվարյան հայտնի դեպքերից հետո, կոմունիստական կուսակցության շարքերից նրա հեռանալը միաժամանակ ազդարարեց նաև ադրբեջանական քաղաքականություն նրա վերադարձի մասին: 1991 թվականի սեպտեմբերին նա ընտրվեց Նախիջևանի խորհրդարանի նախագահ, իսկ 1993 թվականի հունիսին, հեղաշրջման արդյունքում նախագահ Աբուլֆազ Էլչիբեյի պաշտոնանկությունից հետո, Ազգային ճակատի ձևավորած կառավարության կողմից հրավիրվեց Բաքու: Հոկտեմբերին Ալիևը նախաձեռնեց նախագահի պաշտոնում իր ընտրությունները՝ ապահովելով քվեների 99%: Իր նախագահության օրոք, Ալիևը խորհրդային խորհրդանիշները հմտորեն փոխարինեց ազգայնականով, իր ձեռքն առավ ներքին քաղաքականության նկատմամբ վերահսկողությունը և, Ադրբեջանի նավթային պաշարների շահագործման պայմանագրեր բաժանելով, իր կողմը գրավեց Արևմուտքին: Նա երկրի կարևոր քաղաքական պաշտոններում նշանակեց իր ընտանիքի անդամներին ու հավատարիմ մարդկանց և հիմնադրեց մի նոր իշխանական կուսակցություն՝ «Ենի Ազերբայջան կուսակցություն» (Նոր Ադրբեջան կուսակցություն կամ ՆԱԿ), որը դարձավ Ալիևի շուրջ անհատի պաշտամունք ձևավորելու հիմնական գործիքը: 1998 թվականին նա վերընտրվեց նախագահի պաշտոնում, իսկ 1999 թվականից ի վեր չէին դադարում լուրերը նրա վատառողջության մասին:

Ասում են՝ Ալիևն անձնական լավ հարաբերություններ ուներ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ, այդ իսկ պատճառով դեմ առ դեմ հանդիպումների ժամանակ նրան հաջողվել է հակամարտության հիմնական հարցերի շուրջ համաձայնության բավականին լայն եզրեր ձեռք բերել: Սակայն, Ադրբեջանում կատարյալ վերահսկողություն իրականացնելու նրա քաղաքական գործելաոճը անհնարին էր դարձնում առավել լայն զանգվածների ներգրավումը և հասարակության համախմբումը խաղաղ կարգավորման գործընթացի շուրջ: Ալիևը մահացավ 2003 թվականին՝ հասցնելով իր որդուն՝ Իլհամին, փոխանցել նախագահական աթոռը:

### Իլհամ Ալիև

Հեյդարի միակ որդին՝ Իլհամը (ծնվել է 1961 թվականին) աշխատում էր ռուս-թուրքական ձեռնարկությունում, երբ 1993 թվականին նրա

մնաց ընդամենը մեկ խռովահույզ տարի՝ մինչև ռազմական հեղաշրջման արդյունքում պաշտոնանկ արվեց 1993 թվականի հունիսին: 1995 թվականին շարժումը վերակազմավորվեց որպես քաղաքական կուսակցություն՝ Ադրբեջանի ազգային ճակատի կուսակցություն (ԱԱՃԿ): 2000 թվականին, Էլչիբեյի մահից հետո, այն մասնատվեց: Կուսակցության գերակշռող մասի՝ ռեֆորմիստական թևի առաջնորդ դարձավ Ալի Քերիմլին, որը թե՛ ԱԱՃԿ-ի ներսում, թե՛ դրանից դուրս ընկալվում է որպես այդ կուսակցության առաջնորդ և որը հայտարարեց, որ այսուհետ ևս հետամուտ է լինելու Էլչիբեյի կողմից նախանշված կուսակցության տեսլականի իրագործմանը:

## «Մուսավաթ»

«Մուսավաթ» (Հավասարություն) կուսակցությունը հավակնում է հանդես գալ որպես  1911 թվականին Բաքվում հիմնադրված «Մուսավաթ» կուսակցության ժառանգորդը: Նախկին Մուսավաթը էական դեր է խաղացել 1918-1920 թվականներին Ադրբեջանի՝ որպես անկախ պետության կայացման գործում և, այդ իսկ պատճառով, օրենքից դուրս է հայտարարվել խորհրդային վարչակարգի կողմից: Ժամանակակից Մուսավաթի գաղափարախոսության հիմքում ընկած են շուկայական բարեփոխումները, սոցիալական բարեկեցությունը, աշխարհիկ պետության ձևավորումը և միաժամանակ արևմտամետ և թուրքամետ դիրքորոշումները: Կուսակցության առաջնորդ Իսա Գամբարը 1992-93 թվականներին եղել է խորհրդարանի նախագահ, իսկ Աբլուֆազ Էլչիբեյից առաջ, կարճ ժամանակահատվածի ընթացքում, պաշտոնավարել է որպես երկրի նախագահ: Կարծիք կա, որ 2000 թվականի խորհրդարանական ընտրությունների ընթացքում Մուսավաթը հավաքել էր շուրջ 30% ձայն, մինչդեռ ըստ պաշտոնական տվյալների՝ «հոգուս» քվեների թիվը չէր գերազանցում 6%-ը, որն անհրաժեշտ է Միլի մեջլիսում ներկայացուցչություն ապահովելու համար: Գամբարի թեկնածությունն առաջադրվեց նաև 2003 թվականի նախագահական ընտրություններին, որտեղ, ըստ վերջինիս պնդման, նա հաղթել էր, մինչդեռ պաշտոնական տեղեկատվության համաձայն նրա օգտին տված քվեները կազմել էին ընդամենը 14%:

## Ադրբեջանի ազգային անկախության կուսակցություն (ԱԱԱԿ)

Ադրբեջանի ազգային անկախության կուսակցությունն (ԱԱԱԿ) առաջնորդում է նախկին խորհրդային այլախոհ Էթիբար Մամեդովը: Այն դավանում է կենտրոնամետ-պահպանողական գաղափարախոսությանը: Մամեդովն ընդդիմադիր առաջնորդներից միակն էր, որ իր թեկնածությունն առաջադրեց ընդդեմ Հեյդար Ալիևի 1998 թվականի նախագահական ընտրություններում: Հայտնի են նրա և Իսա Գամբարի միջև ձևավորված թշնամական հարաբերությունները, ինչն էլ հաճախ համարվում է ընդդիմության կողմից մեկ թեկնածու առաջադրելու փորձի ձախողման հիմնական պատճառը:

## Ադրբեջանի ժողովրդավարական կուսակցությունն (ԱդԺԿ)

Ադրբեջանի ժողովրդավարական կուսակցությունն (ԱդԺԿ) առաջնորդում է Ռասուլ Գուլիևը: Նա 1993 թվականին նշանակվեց խորհրդարանի նախագահի պաշտոնում, իսկ 1996-ին, հրաժարական տալով, լքեց Ադրբեջանը և տեղափոխվեց Միացյալ Նահանգներ, որտեղից խիստ քննադատական արշավ ձեռնարկեց ընդդեմ Ալիևի վարչակարգի: Հնչած քննադատությունների նկատմամբ վարչակարգի արձագանքը եղավ այն, որ նրա բացակայության պայմաններում նրան մեղադրանք առաջադրվեց պետական ունեցվածքը յուրացնելու և հեղաշրջում կազմակերպելու փորձի մեջ: 2003 թվականին Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մերժեց նախագահական ընտրություններին մասնակցելու նրա հայտը, ինչի հետևանքով Բաքվում ընդհարումներ տեղի ունեցան անվտանգության ուժերի և ԱդԺԿ-ի կողմնակիցների միջև:

2005 թվականի խորհրդարանական ընտրությունների ընթացքում միասնական ճակատով հանդես գալու նպատակով, հաղթահարելով իրենց միջև առկա տարբերությունները, առաջին անգամ ԱԱՃԿ-ն, Մուսավաթը և ԱդԺԿ-ն համախմբվեցին՝ կազմավորելով «Ազադլիք» դաշինքը, իսկ ԱԱԱՃ-ն, միանալով նախագահի աշխատակազմի նախկին աշխատակից Էլդար Նամազովին, միասին ձևավորեցին «Ենի Սիյասեթ» (Նոր քաղաքականություն կամ ԵՍ) դաշինքը:

## Ղարաբաղի ազատագրման կազմակերպություն

Ղարաբաղի ազատագրման կազմակերպությունը (ՂԱԿ) հիմնադրվել է 2000 թվականին: ՂԱԿ-ը հանդես է գալիս ղարաբաղյան հակամարտության շրջանակներում միջազգային և քաղաքացիական ջանքերի քննադատողի դիրքերից, Հայաստանին  ագրեսոր ճանաչելու խնդրում վերջիններիս անվճռականության պատճառով: Չնայած որ հիմնադրվել է որպես հասարակական կազմակերպություն, այն իրենից ավելի շուտ քաղաքական շարժում է ներկայացնում: ՂԱԿ-ը պարբերաբար հանդես է գալիս Հայաստանի դեմ ռազմական գործողությունների վերսկսման կոչերով, իսկ նրա անունը բազմաթիվ անգամներ արծարծվել է հայ գործընկերների հետ շփումներ հաստատած Ադրբեջանի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների նկատմամբ իրականացված հալածանքների և այլ միջադեպերի առիթներով: Կազմակերպությունը ղեկավարում է Ակիֆ Նագին, իսկ անդամների թիվն ու կազմակերպության ինքնուրույնության աստիճանը անորոշ են: Թեև ժամանակ առ ժամանակ կազմակերպության գործողությունները բերում են բախումների իշխանությունների հետ,  այնուամենայնիվ կարելի է փաստել, որ ՂԱԿ-ին տրված է ներքին արմատականությունը աշխարհին ի ցույց դնելու դեր, որպեսզի հնարավոր լինի արդարացնել Ալիևի վարչակարգի անկարողությունը՝ խաղաղության շուրջ պաշտոնական բանակցությունների ժամանակ զիջումների գնալու հարցում: Միևնույն ժամանակ կազմակերպությունն անկասկած արտահայտում է հասարակությանը համակած նվաստացման և զայրույթի համատարած զգացումները՝ որպես խաղաղության հաստատման գործընթացում առաջընթացի բացակայության հետևանք:

## Ղարաբաղի ազերիները և ներքին տեղահանված անձինք (ՆՏԱ)

Ղարաբաղից և դրան հարող գրավյալ տարածքներից ներքին տեղահանված անձանց շահերը ներկայացնող բազմաթիվ ինստիտուտներ  են ստեղծվել, մինչդեռ դրանցից քչերն են առաջարկում քաղաքական ներկայացուցչության իրական հնարավորություններ: 1995 թվականից ի վեր ՆՏԱ-ներին տրվել է իրավունք՝ խորհրդարանում ունենալ իրենց ներկայացուցիչներին. յոթ ընտրատարածքներից ընտրված պատգամավորներ՝ որպես Ղարաբաղին հարող ամբողջովին կամ մասնակի գրավ-

ված յոթ շրջանների ընտրատարածքները ներկայացնողների և ևս երկու պատգամավորներ՝ որպես բուն Ղարաբաղը ներկայացնողների: Սակայն Ղարաբաղի ազերիներն, այնուամենայնիվ, չունեն իրենց համայնքը ներկայացնող ընտրովի մարմին. երկրի նախագահը նշանակում է Լեռնային Ղարաբաղից և դրան հարող յոթ շրջաններից «արտաքսված գործադիր հանձնաժողովների» ղեկավարներին, որոնք պատասխանատու են «արտաքսման մեջ գտնվող» Շուշայի գործադիր հանձնաժողովի ղեկավարին՝ Նիզամի Բահմանովին և որոնց դերը, որպես քաղաքական կառույցների, խիստ անորոշ է: Այսպիսով ՆՏԱ համայնքն, ընդհանուր առմամբ, շարունակում է գտնվել քաղաքական մեկուսացման մեջ, թեև Ղարաբաղի ազերիներին և ՆՏԱ-ին ներկայացնող ընտրովի մարմնի բացակայության հարցը մնում է ՆՏԱ-ի ակտիվիստների լոբբիստական գործունեության առարկան:

## Ադրբեջանի Հանրապետության պետական նավթային ընկերություն (ԱՀՊՆԸ)

ԱՀՊՆԸ-ն Ադրբեջանի կասպիական ավազանի նավթային պաշարների յուրացման առաջատար ազգային մասնակիցներից մեկն է: Նրան է պատկանում նաև Ադրբեջանական շահագործող միջազգային ընկերության (ԱՇՄԸ) բաժնետոմսերի 10%-ը: Մինչ վերջին ժամանակները, ԱՀՊՆԸ-ն գլխավորում էր ամենախոշոր հարկատուների ցուցակը և ապահովում էր պետական բյուջեի եկամուտների շուրջ մեկ երրորդը: Միևնույն ժամանակ, սակայն, այն կուտակել էր նաև մեծածավալ պարտքեր, այն պատճառով, որ զեղջված գներով նավթ մատակարարելու եղանակով մեծ սուբսիդիաներ էր տրամադրում փախստականներին, կոմունալ-կենցաղային տնտեսություններին և վնասով աշխատող պետական ձեռնարկություններին, ինչպես նաև սպասարկում էր հանրապետության պարտքը Իրանին՝ մատակարարված էլեկտրաէներգիայի դիմաց: Ավելին, մինչև 2003 թվականը ընկերության ողջ շահույթը փոխանցվում էր Ադրբեջանի հանրապետության պետական նավթային հիմնադրամ (ԱՀՊՆՀ): Ընկերության առանցքային ղեկավար պաշտոնները զբաղեցնում են Ալիևի ընտանիքի անդամները:

## Ադրբեջանի հանրապետության պետական նավթային հիմնադրամ (ԱՀՊՆՀ)

ԱՀՊՀՆ-ն հիմնադրվել է 1999 թվականի դեկտեմբերին՝ նախագահի որոշմամբ: Այն ձևավորվում է ածխաջրածնային հումքի մշակումից ստացվող եկամուտներից, արտասահմանյան ընկերությունների կողմից վճարվող վարձակալական գումարներից և հավելավճարներից: Այն ինքնուրույն (և արտաբյուջետային) իրավաբանական անձ է՝ իր սեփական կառավարման համակարգով: Հիմնադրամի տնօրենը նշանակվում և ազատվում է երկրի նախագահի կողմից: Հիմնադրամի նպատակն է ածխաջրածնային հումքի մշակումից ստացված շահույթներն ուղղել ազգային վերածննդին: ԱՀՊՆՀ-ի կողմից մինչ այժմ իրականացված երկու խոշորագույն ծրագրեր են՝ փախստականներին ու ՆՏԱ-ին կացարաններով և առաջին անհրաժեշտության պարագաներով ապահովումը և Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի կառուցման ծրագրում Ադրբեջանի մասնաբաժնի երաշխավորումը: Այդուհանդերձ, ԱՀՊՆՀ-ի ֆինանսական միջոցների բաշխման կանոնները խիստ անորոշ են, ընդ որում՝ երկրի նախագահը լիակատար վերահսկողություն է իրականացնում հիմնադրամի միջոցների կառավարման նկատմամբ, այն դեպքում, երբ սահմանված չի արտաքին վերահսկողության որևէ մեխանիզմ:

# Հայաստան

## Լևոն Տեր-Պետրոսյան

Անկախ Հայաստանի առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը ծնվել է 1945 թվականին Սիրիայում: Մեկ տարի անց նրա ընտանիքը ներգաղթում է Հայաստան: Նրա քաղաքական գործունեությունը սկսվում է 1960-ականներին, ժամանահատված, որը կապվում է Երևանում ազգայնական տրամադրությունների ծաղկման և 1965-1967 թվականներին անցկացված ցույցերի հետ: 1988 թվականին նա ընդգրկվում է 11 անդամներից բաղկացած «Ղարաբաղ կոմիտեի» կազմի մեջ, որը «պերեստրոյկի» ժամանակաշրջանում առաջնորդում էր Հայաստանի ընդվզումն ընդդեմ խորհրդային իշխանությունների: 1989 թվականին Տեր-Պերոսյանը դառնում է Հայոց համազգային շարժման (ՀՀՇ) առաջնորդը, իսկ 1990-ին՝ Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահը: 1991 թվականին նա ընտրվում է Հայաստանի նախագահի պաշտոնում:

Տեր-Պետրոսյանի պաշտոնավարմանը բնորոշ էին «գործնական» մոտեցումները, որոնցով նա փորձում էր համադրել Հայկական հարցի նկատմամբ պահանջատիրությունը և այն, ինչն իր կողմից ընկալվում էր որպես նորանկախ Հայաստանին շրջապատող քաղաքական իրողություն: Նա հրաժարվեց ցեղասպանության ճանաչումը որպես Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու նախապայման սահմանելուց, ինչը հայկական սփյուռքի և Հայ հեղափոխական դաշնակցության (ՀՅԴ) հետ կոնֆլիկտի առիթ հանդիսացավ: Սփյուռքի հետ լարված հարաբերություններն արտահայտվում են նաև Տեր-Պետրոսյանի այն համոզմունքներում, որ սփյուռքի դրամական միջոցները չեն կարող փոխարինել հայկական տնտեսության և պետության զարգացմանը: Նրա քաղաքական լեգիտիմության հարցը կասկածի տակ առնվեց 1995 թվականին, երբ նա մեղադրվեց սահմանադրության ընդունման հանրաքվեի և 1996 թվականի սեպտեմբերին նախագահական ընտրությունների արդյունքները (որոնց ժամանակ, ի դեպ, նա հավաքեց ձայների 51.7%-ը) կեղծելու մեջ: Մինչդեռ նրա քաղաքական անկման պատճառ հանդիսացան Ղարաբաղի հարցում նրա կողմից որդեգրված առավել «գործնական» մոտեցումները: Իր իսկ կողմից նշանակված առանցքային նախարարները, վարչապետ Ռոբերտ Քոչարյանի գլխավորությամբ, ընդվզեցին նրա դեմ՝ Մինսկի խմբի կողմից առաջարկված «փուլային» տարբերակին հավանություն տալու պատճառաբանությամբ՝ ստիպելով նրան հրաժարական տալ 1998 թվականի փետրվարին: Հրաժարականից հետո Տեր-Պետրոսյանը վերադարձավ իր գիտական աշխատանքին, թեև անընդհատ շրջանառվում են լուրեր նրա հավանական վերադարձի մասին:

## Ռոբերտ Քոչարյան

Ծնվել է 1954 թվականին Ստեփանակերտում: Բարձրանալով տեղական կուսակցական պաշտոնների աստիճանասանդղակով՝ 1988 թվականից Ռոբերտ Քոչարյանը դարձավ ղարաբաղյան շարժման ակտիվ գործիչներից մեկը: Պատերազմական տարիներին Քոչարյանը ստանձնեց Պետական պաշտպանության հանձնաժողովի նախագահի, այնուհետև՝ Լեռնային Ղարաբաղի վարչապետի պաշտոնը: 1994 թվականի դեկտեմբերի 24-ին տեղական խորհրդի կողմից ընտրվեց որպես Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահ, իսկ 1996 թվականի նոյեմբերին վերահաստատվեց այս պաշտոնում՝ արժանանալով քաղաքացիների վստահության քվեին:

1997 թվականի մարտին Քոչարյանը նշանակվեց Հայաստանի վարչապետ և դարձավ նախագահ Տեր-Պետրոսյանի՝ Ղարաբաղի հարցում զիջողական դիրքորոշմանն ընդդիմացող առանցքային գործիչներից մեկը: Քոչարյանը պնդում էր, որ Հայաստանի տնտեսության զարգացման գործում սփյուռքը կարող է փոխարինել օտարերկրյա ներդրումներին, ինչով էլ կվերանա նման զիջումների գնալու անհրաժեշտությունը: Քոչարյանն առանցքային դեր խաղաց Տեր-Պետրոսյանի հրաժարականի գործում և 1998 թվականի մարտին հաջորդեց նրան նախագահի պաշտոնում: Թեև Քոչարյանի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի լինելու ժամանակահատվածը չէր բավարարում ՀՀ Սահմանադրությամբ նախագահի թեկնածուին առաջադրվող քաղաքացիության պահանջին, այնուամենայնիվ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իր որոշմամբ արտոնեց նրան մասնակցել նախագահական ընտրություններին՝ հղում կատարելով անցյալում Հայաստանի հետ միավորվելու մասին Ղարաբաղի հռչակագրի վրա (չնայած, որ ոչ շատ վաղուց Ղարաբաղն ընդունել էր Անկախության մասին հռչակագիր): ՀՀ նախագահի պաշտոնում Քոչարյանի ընտրվելուց հետո Երևանի և Ստեփանակերտի դիրքորոշումները, որոնց մեջ Տեր-Պետրոսյանի պաշտոնավարման ընթացքում տարաձայնություններ էին առաջացել, մոտեցան: 2003 թվականի մարտին վիճահարույց ընտրությունների արդյունքում Քոչարյանը վերընտրվեց նախագահի պաշտոնում. տեղի ունեցած կեղծիքներն ընդդիմության կողմից ընտրությունների բողոքարկման պատճառ հանդիսացան, որի արդյունքում Սահմանադրական դատարանը որոշում կայացրեց՝ խորհուրդ տալով մեկ տարի հետո հանրաքվեի դնել նախագահի վստահության հարցը: 2004 թվականի ապրիլին, երբ դեռ հույս կար, որ վստահության հանրաքվեն այնուամենայնիվ կանցկացվի, ուժի կիրառմամբ ցրվեցին Երևանի կենտրոնում անցկացվող բողոքի ցույցերը: Քոչարյանն իրեն չի ծանրաբեռնել կուսակցական գաղափարախոսություններով, փոխարենը՝ հենվում է «պատերազմի հերոսի» իր անձնական հարիզմայի ու բանակի և «ուժային» նախարարությունների առանցքային պաշտոնյաների հետ ունեցած հարաբերությունների վրա, որոնցից շատերը նշանակվել են հենց իր կողմից և ղարաբաղցիներ են: Սերժ Սարգսյանը՝ Հայաստանի պաշտպանության նախարարը, որը նույնպես Ղարաբաղի հայ է, նրա ամենամտերիմ դաշնակիցն է:

## Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովը

1995 թվականին ընդունված Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ երկրում ձևավորվել է կիսանախագահական և կիսախորհրդարանական կառավարման համակարգ, որտեղ նախագահի իշխանությունը հիմնվում է խորհրդարանական մեծամասնության աջակցության վրա: Ազգային Ժողովի (ԱԺ) ընդդիմադիր մեծամասնությունը կարող է հարկադրել նախագահին ընդունել վարչապետի պաշտոնի համար իր կողմից առաջադրված թեկնածությունը (կամ հրաժարական տալ կամ էլ արձակել խորհրդարանը), ինչպես և տեղի ունեցավ 1999 թվականին, երբ Հայաստանի Հանրապետական և Ժողովրդական կուսակցությունների դաշինքն ստիպեց նախագահ Քոչարյանին վարչապետի պաշտոնում նշանակել Վազգեն Սարգսյանին: 1999 թվականի հոկտեմբերի 22-ին Ազգային Ժողովում իրականացված ահաբեկչության զոհ դարձան խորհրդարանի նախագահ Կարեն Դեմիրճյանը, վարչապետ Վազգեն Սարգսյանը և վեց այլ բարձրաստիճան պաշտոնյաներ: Հաշվի առնելով, որ 1999 թվականի ընտրությունների արդյունքում օրենսդրական գործունեության փորձ ունեցողների փոխարեն ԱԺ մտան բազմաթիվ տեխնոկրատներ, ԱԺ-ում կատարված սպանությունները հետագայում խիստ թուլացրեցին խորհրդարանը: 2003 թվականի խորհրդարանական ընտրությունները կրկին բիզնեսի ազդեցության արտահայտությունն էին Հայաստանի քաղաքականության վրա:

## Հայաստանի քաղաքական կուսակցությունները

Հայաստանի բազմակուսակցական համակարգին ներհատուկ են հետխորհրդային քաղաքական գունապնակի առանձնահատկությունները, այդ թվում՝ անհատի շուրջ ձևավորվող կուսակցությունները, մասնատվածությունը և ոչ երկարակեցությունը: Սակայն, ի տարբերություն Ադրբեջանի, անկախությունից ի վեր այստեղ որևէ կուսակցություն բացարձակ գերիշխող դիրք չի զբաղեցրել, իսկ Սփյուռքի աջակցությունն էլ, իր հերթին, որոշ կուսակցությունների համար գաղափարական և ֆինանսական զգալի կայունություն է ապահովում:

Հայոց համազգային շարժումը (ՀՀՇ) ձևավորվեց «Ղարաբաղ կոմիտեի» հիման վրա, ըստ էության, վերափոխելով Կոմիտեի մեկ խնդիր հետապնդող օրակարգը բազմակողմ մի ծրագրի՝ ուղղված քաղաքական և տնտեսական վերածննդին: 1990 թվականին Հայաստանի Գերագույն խորհրդի ընտրությունների ընթացքում ՀՀՇ-ն ձևավորեց կոալիցիա և մեծ ջանքերի գնով Հայաստանի Կոմունիստական կուսակցության ձեռքից առավ իշխանության լծակները: Որպես իշխանության կուսակցություն, ՀՀՇ-ն ուղղակիորեն կապվում էր Ղարաբաղի հարցում փոխզիջումների գնալու Տեր-Պետրոսյանի դիրքորոշման հետ: Թեև կուսակցության շարքերում դեռ բավականին մեծ թվով անդամներ  և փորձառու առաջնորդներ կան՝ Տեր-Պետրոսյանի հրաժարականից հետ ՀՀՇ-ն դեռ ուշքի չի եկել:

1999-ականների սկզբին ստեղծվեցին մի շարք այլ կուսակցություններ, որոնց թվում՝ Ազգային ժողովրդավարական միությունը (ԱԺՄ), Հայաստանի հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ), Հայաստանի ժողովրդական կուսակցությունը (ՀԺԿ) և Օրինաց երկիրը: Կազմված լինելով հիմնականում նախկին նոմենկլատուրային էլիտայի ներկայացուցիչներից՝ 1999 թվականի խորհրդարանական ընտրություններին մասնակցելու և հաղթելու նպատակով ՀՀԿ-ն և ՀԺԿ-ն դաշինք կազմեցին: 1999 թվականի հոկտեմբերին խորհրդարանում տեղի ունեցած սպանությունների արդյունքում իր առաջնորդին կորցնելուց հետո ՀԺԿ-ի շարքերը խիստ նոսրացան: 2003 թվականի ՀԺԿ-ն ինն այլ կուսակցությունների հետ, Դեմիրճյանի գլխավորած «Արդարություն» դաշինքի կազմում, մասնակցեց խորհրդարանական ընտրություններին, որոնց ընթացքում ձայների մեծամասնություն ստացավ ՀԺԿ նախկին գործընկեր ՀՀԿ-ն, որն էլ ՀՅԴ-ի և Օրինաց երկրի հետ միասին ձևավորեց կոալիցիոն կառավարության կազմը:

Հայկական քաղաքական կուսակցություններից շատերը, որոնք պատմականորեն ձևավորվել են տարբեր սփյուռքահայ օջախներում, իրենց շարքերում պահպանելով սփյուռքի իրենց հետևորդներին, ակտիվ գործունեություն են իրականացնում նաև հայաստանյան քաղաքական դաշտում: Դրանցից են Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը (կամ Հնչակներ) և Հայաստանի ռամկավար ազատական կուսակցությունը (Ռամկավարներ): Սփյուռքը ներկայացնող հիմնական կուսացկությունը Հայաստանի հեղափոխական դաշնակցությունն է (ՀՅԴ կամ Դաշնակցություն, դաշնակներ), որը պատմականորեն հիմնադրվել էր Օսմանյան կայսրության հայ բնակչության քաղաքական և տնտեսական իրավունքները պաշտպանելու նպատակով և հայաստանյան քաղաքական դաշտում կրկին հայտնվեց 1988 թվականին: ՀՅԴ-ի գաղափարախոսության առանցքային դրույթներից մեկը միջազգային հանրության կողմից 1915 թվականի կո-

տորածները որպես ցեղասպանություն ճանաչումն է: Այս դրույթը հակասության մեջ հայտնվեց Լևոն Տեր-Պետրոսյանի այն որոշման հետ, ըստ որի՝ Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման հարցում ցեղասպանության ճանաչումը չպետք է նախապայման հանդիսանա: 1994 թվականի դեկտեմբերին Տեր-Պետրոսյանն արգելեց ՀՅԴ կուսակցության գործունեությունը Հայաստանում՝ հիմնվելով օրենսդրության վրա, ըստ որի՝ արգելվում էր հայաստանյան կուսակցությունների նկատմամբ օտարերկրյա (այսինքն՝ սփյուռքի) վերահսկողության իրականացումը: Սույն մեղադրանքը պաշտպանվեց վճռաբեկ դատարանի կողմից, մինչդեռ երկրորդ մեղադրանքը՝ ահաբեկչական գործունեություն ծավալելու մասին, մերժվեց: Կուսակցության գործունեության նկատմամբ արգելքը վերացվեց Ռոբերտ Քոչարյանի կողմից, ում համար ՀՅԴ համացանցի ծավալն ու լրջությունն առավել կարևորություն էին ներկայացնում: 2003 թվականին ՀՅԴ-ն դարձավ կառավարող դաշինքի անդամ: Այն բավականին ակտիվ է նաև Լեռնային Ղարաբաղում:

## Հայկական սփյուռքը

Հայոց պատմության առանձնահատկություններից մեկը ժամանակների ընթացքում եղել է Հայաստանից դուրս աշխարհով մեկ սփռված հայաբնակ կենտրոնների գոյությունը: Այնուամենայնիվ, Սփյուռքը մեծապես ձևավորվել է 1915-17 թվականներին Օսմանյան կայսրությունում կոտորածներից մազապուրծ հայերից և նրանց ժառանգներից: Մասսայական սպանությունների որպես ցեղասպանություն միջազգային ճանաչման խնդիրը հետագայում դարձավ սփյուռքի ինքնության և գործունեության անկյունաքարերից մեկը: Հայկական սփյուռքն ազդեցիկ կենտրոններ ունի Միացյալ Նահանգներում, Արևմտյան Եվրոպայում, Մերձավոր Արևելքի արաբական երկրներում և այլուր: Լոբբիստական գործունեության լայն հնարավորությունները Միացյալ Նահանգներում ամերիկահայ խիստ մեծաթիվ համայնքին դարձրել են հուժկու մի զենք: Մասնավորապես, Վաշինգտոնում ծավալած լոբբիստական գործունեության շնորհիվ ԱՄՆ-ի հայերին հաջողվեց 1992 թվականին կրճատել ԱՄՆ օգնությունն Ադրբեջանին՝ դուրս թողնելով այդ երկիրը «Ազատությանն աջակցելու մասին» ակտի շրջանակներից, որով օժանդակություն էր սահմանվում հետխորհրդային պետություններին: Սակայն այս արգելքը, որը հայտնի է որպես «907-րդ բանաձև», 2002 թվականից ի վեր տարեցտարի ավելի ու ավելի է անտեսվում նախագահ Ջորջ Բուշի կողմից:

## Վետերանների կազմակերպություններ

Երկրապահ կազմակերպությունը («Երկրապահ կամավորականների միություն») հիմնադրվեց 1993 թվականին հետագայում վարչապետ նշանակված Վազգեն Սարգսյանի կողմից: Երկրապահը կազմակերպաիրավական ձևով հասարակական կազմակերպություն է, որի նպատակն է աջակցել պատերազմի վետերանների և զոհվածների ընտանիքներին: Դրա անդամները կոչվում են «ազատամարտիկներ»: Թեև պաշտոնապես այն չեզոք և ոչ քաղաքական կազմակերպություն է, նրա դիրքորոշումն Ադրբեջանի նկատմամբ զիջողական քաղաքականության քննադատության հարցում զգալի ազդեցություն ունեցավ: 1997 թվականին Ղարաբաղի հարցում փոխզիջման գնալու Տեր-Պետրոսյանի որդեգրած դիրքորոշումը պատճառ հանդիսացավ, որպեսզի Երկրապահը նախագահին դեմ քվեարկի, ինչի արդյունքում վերջինս կորցրեց խորհրդարանական մեծամասնության աջակցությունը: 1999 թվականին Սարգսյանը միացավ ՀՀԿ-ին, որի ձևավորած դաշինքը 1999 թվականին հաղթանակ տարավ խորհրդարանական ընտրություններում:

## Լեռնային Ղարաբաղ

### Արկադի Ղուկասյան

Ղուկասյանը ծնվել է 1957 թվականին Ստեփանակերտում: Ղարաբաղյան շարժմանը նա միացավ 1988 թվականին: 1990 թվականին նրան բանտարկեցին՝ Բաքվում հայերի ջարդերը կազմակերպողներին ուղղված քննադատական հոդվածներ գրելու համար: 1992 թվականին նա ընտրվեց Լեռնային Ղարաբաղի խորհրդարանի պատգամավոր և նշանակվեց Լեռնային Ղարաբաղի Պաշտպանության հանձնաժողովի նախագահի քաղաքական հարցերով խորհրդական: 1993 թվականի հուլիսին Ղուկասյանը դարձավ *դե ֆակտո* Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) արտաքին գործերի նախարարը, իսկ 1997 թվականի սեպտեմբերին կայացած նախագահական արտահերթ ընտրությունների արդյունքներով դարձավ ԼՂՀ Նախագահ: 2000 թվականին նրա դեմ մահափորձ կատարվեց, որը վերագրվեց զինվորական նախկին հրամանատար և պաշտպանության նախարար Սամվել Բաբայանին: Բաբայանը ձերբակալվեց և ազատազրկվեց՝ բանտում մնալով մինչ 2004 թվականը: 2002 թվականի օգոստոսին Ղուկասյանը 89% ձայներով վերընտրվեց նախագահի պաշտոնում:

## Լեռնային Ղարաբաղի *դե ֆակտո* իշխանության ինստիտուտները

Լեռնային Ղարաբաղը մինչ օրս չի ընդունել սահմանադրություն, սակայն որդեգրել է կառավարման նախագահական մոդել: Նախագահը նախարարներին նշանակում է առանց խորհրդարանի հաստատման՝ խորհրդակցելով վարչապետի հետ: Ղարաբաղի *դե ֆակտո* Ազգային Ժողովում, որը կազմված է 33 պատգամավորներից, գերակշռում են վարչակարգին համակիր կուսակցությունները, որոնք հաղթեցին 2005 թվականի խորհրդարանական ընտրություններում: Դրանք են՝ Արցախի ժողովրդավարական կուսակցությունը (ԱԺԿ) և Ազատ Հայրենիքը, որոնք կազմված են նախկին նոմենկլատուրային էլիտայի ներկայացուցիչներից և տեղական գործարար խմբերի շահերը ներկայացնող գործարարներից: ԱԺԿ-ն 2000 թվականից ի վեր հանդիսանում է իշխանության կուսակցությունը:

Վերը նշված կուսակցություններին պարբերաբար մարտահրավեր են նետել մի շարք փոքր ռեֆորմիստական կուսակցություններ, որոնք հիմնականում առաջնորդվում են քաղաքացիական հասարակության գործիչների կողմից, դրանցից են՝ Շարժում-88, Բարոյական վերածնունդ և Սոցիալական արդարություն կուսակցությունները: Շարժում-88-ը ցնցող հաջողության հասավ 2004 թվականին, երբ նրա առաջնորդ Էդուարդ Աղաբեկյանն ընտրվեց Ստեփանակերտի քաղաքապետ: Բացի նշվածներից, Ղարաբաղում ակտիվ կուսակցական գործունեություն են ծավալում նաև հայաստանյան կուսակցությունների մասնաճյուղերը, այդ թվում՝ ՀՅԴ-ն:

Լեռնային Ղարաբաղի պաշտպանության բանակն իրենից մեծ ուժ է ներկայացնում, սակայն նախկին գլխավոր հրամանատար Սամվել Բաբայանի ձերբակալությունից հետո նրա քաղաքական դերակատարությունը նվազել է: Երկրի *դե ֆակտո* իշխանությունների հավաստմամբ՝ բանակում ծառայում է 20 հազար զինվոր (անկախ վերլուծաբանները նշում են 18500 թիվը): Մեծ թիվ են կազմում, թերևս նույնիսկ մեծամասնություն, Հայաստանի քաղաքացիները: Թեև Հայաստանն ընդունում է, որ Ղարաբաղում զգալի ներդրումներ է անում ուսուցում կազմակերպելու, սարքավորումներ նվիրաբերելու և պայմա-

նագրային հիմունքներով մասնագիտական կադրեր տրամադրելու եղանակներով, այնուամենայնիվ ժխտում է Ղարաբաղում և գրավյալ տարածքներում իր ռազմական ներկայությունը:

# Միջազգային դերակատարներ

## Ռուսաստան

Հետխորհրդային Կովկասում Ռուսաստանը ստանձնել է չափազանց բարդ և հաճախ հակասական դերակատարում, քանզի այն ձգտում է, մի կողմից, պահպանել իր ազդեցությունն ու գերիշխանությունը այդ տարածաշրջանում, որ խորհրդային ժամանակներում գտնվում էր Մոսկվայի վերահսկողության ներքո, մյուս կողմից, փորձում է ապահովել իր հարավային սահմանների կայունությունը: Ռուսաստանը փորձում էր իր ազդեցության ներքո պահել միջնորդային գործընթացը՝ որպես տարածաշրջանային գերիշխան ուժի ներկայացուցիչ, մինչդեռ միևնույն ժամանակ դիվանագիտական ընդհանուր ջանքերից անջատ քայլեր ձեռնարկելով՝ նսեմացնում էր նույն այդ գործընթացի դերը: Պատերազմի ընթացքում Ռուսաստանը հիմնականում աջակցում էր Հայաստանին՝ զինամթերք և պահեստամասեր տրամադրելու, վառելիք մատակարարելու ձևով, մինչդեռ հայտնի են նաև Ադրբեջանին աջակցություն տրամադրելու դեպքեր: 1994 թվականին Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) հովանու ներքո Ռուսաստանի միջնորդությամբ զինադադարի մասին համաձայնություն ձեռք բերվեց, սակայն միջնորդության նրա հետագա փորձերն արգելափակվեցին Ադրբեջանի և ԵԱՀԽ-ի Մինսկի խմբի (որի անդամ էր նաև Ռուսաստանը) կողմից: 1995 թվականին Ռուսաստանը դարձավ ԵԱՀԽ-ի Մինսկի խմբի համանախագահ, իսկ 1997-ից ի վեր նախագահում է Ֆրանսիայի և ԱՄՆ-ի հետ:

Ռուսաստանի երկակի դիրքորոշումն իր տարածաշրջանային շահերի արտացոլումն է: 1991 թվականին ԱՊՀ հիմնադրումից ի վեր Ռուսաստանի քաղաքականությունը միտված է եղել ռազմական համաձայնագրերի, ԱՊՀ երկրների ընդհանուր սահմանները պաշտպանելու նպատակով սահմանապահ զորքերի տեղակայման և ԱՊՀ երկրների տնտեսությունների հիմնական ոլորտներում գերիշխող դիրք ձեռք բերելու միջոցով իր նախկին խորհրդային հարևաններին վերամիավորելու նպատակին: Թեև Ադրբեջանում և Վրաստանում անջատողական բնույթ կրող հակամարտությունները թուլացրել են Ռուսաստանին հակազդելու այդ պետությունների կարողությունները, Ռուսաստանն ինքը 1990-ականների կեսերից Չեչնիայում ծագած հակամարտության պատճառով հայտնվել է անվտանգության լուրջ խնդիրների առջև: Տարածաշրջանի *դե ֆակտո* պետությունների հանդեպ Ռուսաստանի կողմից ներկայում վարվող քաղաքականությունից անկախ՝ Ռուսաստանն, այնուամենայնիվ, հավատարիմ է մնում տարածքային ամբողջականության սկզբունքին:

Հայաստանի «հատուկ վերաբերմունքը» Ռուսաստանի հանդեպ՝ որպես տնտեսական գործընկերոջ, որպես Թուրքիայի հետ խրթին հարաբերություններում անվտանգության երաշխավորի, երկար տարիների պատմություն ունի: Ռուսաստանից Հայաստանի տնտեսական կախվածությունն իր դրսևորումն է ստանում սկսած Ռուսաստանի? Հայաստան հայերի կողմից կատարվող դրամական փոխանցումներով մինչև երկրի էներգետիկ պաշարների տրամադրումն ու վերահսկումը, թեև իրավիճակը փոխելու նպատակով վերջերս Հայաստանն էներգետիկ ոլորտում համագործակցության եզրեր է փնտրում Իրանի հետ: Հայաստանում տեղակայված են ռուսական երեք ռազմական բազաներ՝ 2.500 հոգանոց զորախմբով, որոնց համար 1995 թվականին կնքված համաձայնագրով երաշխավորվում է 25 տարվա ներկայություն երկրում, իսկ 1997 թվականին ստորագրված բարեկամության և փոխհամագործակցության մասին համաձայնագրով նախատեսվում է փոխադարձ ռազմական աջակցության տրամադրում, երկրներից որևէ մեկի հանդեպ ռազմական սպառնալիքների առկայության դեպքում: Վերջերս սակայն նոր խնդիրներ ծագեցին Ռուսաստանի և Հայաստանի հարաբերություններում՝ կապված Հայաստանի տնտեսական ենթակառուցվածքներում ռուսական մասնաբաժնի զգալի աճի հետ:

Ռուսաստանի և Ադրբեջանի հարաբերությունները լարվեցին 1992-93 թվականներին նախագահ Էլչիբեյի արևմտամետ և պանթուրքական նկրտումների հետևանքով: Իր պաշտոնավարման սկզբնաշրջանում Հեյդար Ալիևին հաջողվեց հարթել հարաբերությունները՝ Ադրբեջանը մտցնելով ԱՊՀ-ի կազմի մեջ, այնուամենայնիվ Ադրբեջանը երբեք աչքի չի ընկել ԱՊՀ-ին նվիրվելու խանդավառությամբ: Նպատակ ունենալով ավելի ջերմացնել հարաբերությունները ՆԱՏՕ-ի հետ՝ Ադրբբեջանը 1999 թվականին չնորացրեց իր մասնակցությունն ԱՊՀ Հավաքական անվտանգության համաձայնագրին: Ադրբեջանին հաջողվեց ապահովել արևմուտքի աջակցությունը Ռուսաստանը շրջանցող նավթամուղի շինարարության հարցում, չնայած որ ռուսական «ԼՈՒԿՕՅԼ» ընկերությունն Ադրբեջանական շահագործող միջազգային ընկերության անդամ է: 2002 թվականին Ռուսաստանը ստիպված էր հաշտվել մի բանի հետ, ինչն անխուսափելի էր՝ դադարեց առարկել Բաքու-Թբիլիսի-Ջեյհան (ԲԹՋ) նավթամուղի շինարարության առիթով և կարգավորեց Կասպից ծովի ավազանի բաժանման շուրջ Ադրբեջանի հետ ունեցած տարաձայնությունները: Բայց և այնպես, Ադրբեջանում շարունակում են կասկածամտությամբ վերաբերվել ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացի շուրջ Ռուսաստանի մտադրություններին:

# Միացյալ Նահանգներ

1997 թվականից ի վեր ԱՄՆ-ը համանախագահում է Մինսկի խմբում: Նույն այս ժամանակահատվածում հետզհետե աճում էին ԱՄՆ-ի հետաքրքրությունները Հարավային Կովկասում: Ամերիկյան դիրքորոշումները Ղարաբաղյան հակամարտության վերաբերյալ ձևավորվել են մի քանի գործոնների ազդեցության ներքո, որոնցից են ամերիկահայերի ազդեցիկ լոբբիստական ջանքերի առկայությունը, ողջ տարածքում ժողովրդավարության զարգացմանն օժանդակելու և ռազմավարական՝ կասպյան նավթից բխող և անվտանգության՝ «ահաբեկչության դեմ պայքարով» պայմանավորված շահերը քողարկելու ցանկությունները: Էներգետիկ պաշարների համալրման աղբյուրների տարաբաշխման և էներգակիրների մատակարարման խնդրում Մերձավոր Արևելքից կախվածության նվազեցման անհրաժեշտությունն այլ գործոն է, որ ընկած է ԱՄՆ-ի տարածաշրջանային քաղաքականության հիմքում:

Հայաստանի և Ադրբեջանի նկատմամբ ԱՄՆ-ի վարած քաղաքականությունը բնորոշվում է Սպիտակ տան և Կոնգրեսի միջև գոյություն ունեցող ակնհայտ տարաձայնությամբ: 1992 թվականին ամերիկահայ լոբբիստական ջանքերի շնորհիվ Կոնգրեսը 907-րդ բանաձևով լրացում կատարեց «Ազատությանն աջակցություն ցուցաբերելու մասին» ակտում, որով սահմանափակվում էր միջկառավարական օժանդակության տրամադրումը Ադրբեջանին: Սակայն, ելնելով կասպյան ավազանի նավթային պաշարներից օգտվելու համար տարածաշրջանում կայունություն ապահովելու անհրաժեշտությունից՝ այս մոտեցումը հետագայում վերանայվեց: ԲԹՋ նավթամուղը միանշանակորեն նախագծվեց ի

պարգևատրում Թուրքիային՝ 1991 թվականին Պարսից ծոցի պատերազմում ԱՄՆ-ին աջակցելու համար: 2002 թվականին նախագահ Ջորջ Բուշին հաջողվեց ժամանակավորապես կասեցնել 907-րդ բանաձևի գործողությունը (այդ ժամանակից ի վեր այդ կասեցումը յուրաքանչյուր տարի նորացվում է)՝ ի նշան երախտագիտության «ահաբեկչության դեմ պայքարում» Բաքվի ցուցաբերած աջակցության: Բուշին հաջողվում է նաև խոչընդոտել ԱՄՆ-ում ցեղասպանության ճանաչմանն ուղղված պարբերական փորձերին: Այդուհանդերձ, ԱՄՆ-Ադրբեջան հարաբերությունների վերընթաց զարգացումը դանդաղել է այն բանից հետո, երբ պարզ դարձավ, որ Ադրբեջանի նավթային պաշարներն այդքան էլ խոստումնալից չեն, որքան թվում էին 1990-ականների սկզբներին և երբ Ռուսաստանի և Իրանի հետ Ադրբեջանի հարաբերություններում ի հայտ եկան «մակընթացություններ և տեղատվություններ»: Ադրբեջանի կառավարությունը պարզորոշ հասկացնել տվեց, որ իր տարածքում որևէ ամերիկյան ռազմական բազայի առկայության մասին խոսք լինել չի կարող, մինչդեռ ընդդիմադիր որոշ խմբեր բաց չթողեցին հօգուտ ամերիկյան բազաների քարոզչություն սկսելու հնարավորությունը:

## Թուրքիա

Ղարաբաղյան հակամարտության շրջանակներում Թուրքիան հանդես է գալիս որպես Ադրբեջանի դաշնակից: Մշակութային ոլորտում, ինչպես նաև աշխարհիկ պետություն կերտելու ձգտումներում առկա բազմաթիվ նմանությունների շնորհիվ Թուրքիան ադրբեջանցիներից շատերի կողմից ընկալվում է որպես օրինակելի մոդել: Պատերազմի ժամանակ Թուրքիան ռազմական օգնություն էր ցուցաբերում Ադրբեջանին և այսօր էլ շարունակում է Հայաստանը պահել շրջափակման մեջ: Այդուհանդերձ, կանխատեսումներն այն մասին, թե Խորհրդային պետության փլուզումից հետո Ադրբեջանում և Կենտրոնական Ասիայի թուրքալեզու պետություններում կվերականգնվի թուրքական ազդեցությունը, չարդարացան: Թուրքիայի ազդեցությունը սահմանափակվում է Ռուսաստանից էներգետիկ կախվածության, արևմտյան կառույցների հետ ինտեգրվելու նրա ցանկության, ինչպես նաև Մինսկի խմբում նրա կողմից ստանձնած ոչ նշանակալի դերի պատճառներով:

Պատմականորեն Թուրքիայի և Հայաստանի հարաբերությունները չափազանց լարված են եղել 1915-17 թվականներին Օսմանյան կայսրությունում հայերի զանգվածային սպանությունների պատճառով, ինչը Հայաստանը փորձում է միջազգային հանրությանը ներկայացնել որպես ցեղասպանություն և ջանքեր է գործադրում հօգուտ դրա միջազգային ճանաչման: Տեր-Պետրոսյանի կառավարությունը ցեղասպանության ճանաչումը չդրեց Թուրքիայի հետ հարաբերությունների հաստատման հիմքում, իսկ Քոչարյանը (1998 թվականից մինչ այժմ) պնդում է, որպեսզի այդ խնդիրը դառնա Անկարայի հետ երկկողմ քննարկումների առարկա: 2001 թվականի հուլիսին հայ-թուրքական հարաբերությունները բարելավելու նպատակով ստեղծվեց Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողով, որը 2004 թվականի ապրիլին դադարեցրեց իր աշխատանքները: Մի շարք ոչ պաշտոնական հանդիպումներ տեղի ունեցան նաև երկու կողմերի դիվանագետների և գիտնականների միջև: Թեև Թուրքիայի կողմից առավել մեծ աջակցություն ստանալու Ադրբեջանի ակնկալիքները չարդարացան, այնուամենայնիվ Թուրքիան շարունակում է Հայաստանի շրջափակումը և ռազմավարական աջակցություն է ցուցաբերում Ադրբեջանին ԲԹՋ նավթամուղի շրջանակներում:

## Իրան

Իրանը պաշտոնապես ճանաչում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, սակայն աշխարհաքաղաքական գործոնները և Հայաստանի հետ պատմականորեն առկա բարիդրացիական հարաբերությունները ղարաբաղյան հակամարտության հարցում ձևավորել են առավել հայանպաստ դիրքորոշում: Սա պայմանավորված է Ադրբեջանին սահմանակից բնակավայրերում կենտրոնացած Իրանի ադրբեջանական բնակչության (որը կազմում է ողջ բնակչության մեկ քառորդ մասը) շրջանում առկա վերադարձականության (իրեդենտիզմ) տրամադրությունների նկատմամբ ցուցաբերվող զգուշավորությամբ: 1992 թվականին, գործելով ռուսական միջնորդական ջանքերին զուգահեռ, Իրանին հաջողվեց կարճատև հրադադար ապահովել հայ-ադրբեջանական հակամարտության գոտում, որից հետո Իրանը խաղաղ կարգավորման գործընթացում միջնորդական առաքելություն չի իրականացրել: Չհանդիսանալով ԵԱՀԿ անդամ՝ այն դուրս մնաց Մինսկի գործընթացից, թեև թե՛ Մինսկի համանախագահների, թե՛ ԱՄՆ պետդեպարտամենտի կողմից ճանաչվում է գործընթացի մասին Իրանի տեղեկացված լինելու օրինական շահը:

Իրանի հետ Հայաստանի առևտրային հարաբերությունները վճռական նշանակություն ունեցան պատերազմի ընթացքում վերջինիս գոյատևման համար: 2004 թվականին Իրանը և Հայաստանը Իրանից բնական գազ ներմուծելու նպատակով գազամուղի շինարարության վերաբերյալ համաձայնագիր ստորագրեցին, որով ծրագրի իրագործման փուլում Իրանի կողմից ֆինանսական զգալի օժանդակություն է նախատեսվում հայկական կողմին և որը թույլ է տալու Հայաստանին նվազեցնել կախվածությունը ռուսական էներգակիրներից, ինչպես նաև մոտեցնել Իրանը եվրոպական շուկային:

Ադրբեջանի հետ Իրանի լարվածության մյուս կողմը պայմանավորված է կասպիական էներգետիկ պաշարների շուրջ անհամաձայնություններով: ԱՄՆ-ի ճնշման ներքո Ադրբեջանը դեմ քվեարկեց կասպիական նավթամուղն ամենաէժան ճանապարհով՝ Իրանով, անցկացնելու դեմ և որոշեց այն կառուցել Բաքու, Թբիլիսի և Ջեյհան (Թուրքիա) քաղաքներով: 2001 թվականին ադրբեջանաիրանական լարվածությունը Կասպից ծովի վիճարկվող սահմանների շուրջ հասավ իր գագաթնակետին և կարող էր վերածվել ռազմական բախման: Վերջին տարիներին Իրանը բարեկամական քայլեր է անում Ադրբեջանի նկատմամբ, ներառյալ Թավրիզում Ադրբեջանի հյուպատոսարանի բացման թույլտվությունը, սակայն Իրանի հետ հարաբերությունների սերտացման ճանապարհին Ադրբեջանը չի կարող խուսափել ԱՄՆ-ի ճնշումներից:

## Ադրբեջանի շահագործող միջազգային ընկերություն / Բրիթիշ Փեթրոլեում

1994 թվականին Ադրբեջանը ստորագրեց «դարի պայմանագիրը». համաձայնագիր՝ 30 տարի ժամկետով Կասպից ծովի օֆշորային գոտում գտնվող 3 նավթահանքերի համատեղ հետազոտման և շահագործման մասին: Պայմանագրի իրագործման իրավունքը վերապահվեց Ադրբեջանի շահագործող միջազգային ընկերությանը (ԱՇՄԸ), որն իր կազմի մեջ միավորում է միջազգային խոշորագույն նավթային տասը ընկերությունների և Ադրբեջանի Հանրապետության պետական նավթային ընկերությանը (ԱՀՊՆԸ): 1999 թվականին ԱՇՄԸ-ի  կառավարումն ստանձնեց Բրիթիշ Փեթրոլեում Ամոկոն (ԲՓ Ամոկո), որին է պատկանում նաև Կասպից ծովը Միջերկրականին կապող ԲԹՋ նավթամուղը շահագործող միավոր-

ման բաժնետոմսերի վերահսկիչ փաթեթը: ԲԹՋ-ն տարածաշրջանի ամենավիճահարույց ծրագիրն է՝ ԱՄՆ-ի և Բրիտանիայի կողմից հովանավորվող խոշոր մի նախաձեռնություն, որն անցնում է Վրաստանի և Թուրքիայի տարածքով: ԲՓ-ն սկզբում վերապահումով էր մոտենում ԲԹՋ նավթուղու առևտրային արդյունավետությանը, սակայն Ամերիկյան նավթային ընկերությանը (Ամոկո) միանալուց հետո փոխեց իր դիրքորոշումը: 2002 թվականին հիմնադրվեց «ԲԹՋ նավթամուղի» ընկերությունը, որին հանձնվեցին նավթամուղը կառուցելու, տնօրինելու և շահագործելու լիազորությունները: Նավթամուղի շինարարությունը մեկնարկեց 2002 թվականին, իսկ 2005 թվականին տեղի ունեցավ նավթամուղի բացումը:

## Բազմանդամ դերակատարներ Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն

Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ), որը մինչև 1994 թվականի դեկտեմբերը հայտնի էր որպես Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհուրդ (ԵԱՀԽ), հիմնադրվել է 1975 թվականին Հելսինկիում: Խորհրդի անդամներն էին ՆԱՏՕ-ի և խորհրդային ճամբարի թվով 35 երկրներ: 1992 թվականի մարտին՝ կազմակերպությանը Հայաստանի և Ադրբեջանի անդամակցությունից անմիջապես հետո, ԵԱՀԽ-ն ղարաբաղյան հակամարտության գործընթացում միջնորդի լիազորություններ ստանձնեց: Ակնկալվում էր, որ հակամարտությունը հնարավոր կլիներ լուծել Բելառուսի մայրաքաղաք Մինսկում գումարվելիք համաժողովի շրջանակներում: Մինչդեռ, հակամարտության հետագա սրացումը խափանեց համաժողովի գումարումը, որը մինչ օրս չի հրավիրվել: Դրա փոխարեն ԵԱՀԿ-ն իրեն վերապահված միջնորդական առաքելությունն սկսեց ծավալել Մինսկի խմբի շրջանակներում, որն ի սկզբանե նախատեսված էր որպես համաժողովի նախապատրաստման համար ստեղծված մարմին, իսկ ներկայում ձևափոխվել է՝ դառնալով միջնորդության հիմնական ձևաչափը: Ժամանակի ընթացքում Մինսկի խմբի կազմը փոփոխվել է, սակայն դրանում մշտապես ընդգրկված են եղել Հայաստանը, Ադրբեջանը, Բելառուսը, Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան, Ռուսաստանը, Շվեդիան, Թուրքիան և ԱՄՆ-ն: Ղարաբաղի *դե ֆակտո* իշխանությունները ճանաչվում են որպես «շահագրգիռ կողմ»: Հակամարտության կողմերի միջև հաշտության եզրեր գտնելու խմբի ջանքերը հայտնի են «Մինսկի գործընթաց» անվանմամբ:

1994 թվականի դեկտեմբերին Վիեննայում ստեղծվեց Բարձր մակարդակի պլանավորման հանձնաժողովը (ԲՄՊՀ): Հանձնաժողովի նպատակն է խորհրդատվություն ապահովել ԵԱՀԿ խաղաղապահ բազմազգ ուժերի ձևավորման ծրագրի մշակման գործընթացի շրջանակներում: Նույն այդ ժամանակ Ռուսաստանը և Շվեդիան ստանձնեցին Մինսկի խմբի համանախագահությունը: 1995 թվականին Ֆինլանդիան փոխարինեց Շվեդիային, իսկ, երբ 1996 թվականին Ֆինլանդիան դուրս եկավ համանախագահությունից, ԱՄՆ-ն և Ֆրանսիան միացան Ռուսաստանին՝ կազմելով համանախագահների եռյակ՝ «տրոյկա»:

ԵԱՀԿ գործող նախագահին օգնում է անձնական ներկայացուցիչը, որի ենթակայության ներքո գործում է հինգ միջազգային փորձագետներից բաղկացած աշխատակազմ:

Որպես բանակցությունների հնարավոր շրջանակ՝ Մինսկի խումբը ներկայացրել է առնվազն չորս առաջարկ՝ «փաթեթային» կարգավորման առաջարկը (մայիս-հուլիս 1997), «փուլային» առաջարկը (սեպտեմբեր 1997), «ընդհանուր պետության» առաջարկը (նոյեմբեր 1998) և այսպես կոչված «տարածքների փոխանակման» առաջարկը (2001): Մինսկի խումբը բազմիցս քննադատվել է այս առաջարկներից որևէ մեկի շուրջ հաջողություն չհասնելու պատճառով:

## Եվրոպական միություն

Եվրոպական Միության (ԵՄ) համար Հարավային Կովկասն առավել գրավիչ դարձավ վերջին տարիներին: 2004 թվականին այն ընդլայնեց Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) ծրագիրը՝ ներառելով Հարավային Կովկասը: Սա մի ծրագիր է որը թույլ է տալու հասնել տնտեսական ինտեգրման զգալի աստիճանի և խորացնել քաղաքական համագործակցությունը ԵՄ-ի հետ: Հետևաբար, համապատասխանորեն աճել է խաղաղ կարգավորման գործընթացում առավել նշանակալի դեր ստանձնելու ԵՄ շահագրգռվածությունը: Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ռոմանո Պրոդին 2004 թվականի մայիսին հայտարարեց, որ եվրոպական պետությունների միավորումը պատրաստ է աջակցել գործընթացի «կարգավորումն արագացնելու» նպատակով՝ առանց միջամտելու ԵԱՀԿ-ի գործունեությանը: ԵՄ-ն հետամուտ է «եռագագաթ»[1] ռազմավարությանը, որը ներառում է Հայաստանը, Ադրբեջանը և Թուրքիան: Այն «աճողական» մոտեցում է, որը ենթադրում է Հայաստանի զորքերի դուրսբերում Լեռնային Ղարաբաղին հարող ադրբեջանական գրավյալ տարածքներից, որն էլ իր հերթին հեշտացնելու է հայ-թուրքական սահմանի բացման խնդրի կարգավորումը:

## Անկախ պետությունների համագործակցություն

Անկախ պետությունների համագործակցությունը (ԱՊՀ) Մոսկվայի նախաձեռնությամբ 1991 թվականին հիմնադրված հետխորհրդային հանրապետությունների կազմակերպություն է: Ե՛վ Հայաստանը, և՛ Ադրբեջանը անդամակցում են այս կազմակերպությանը: ԱՊՀ-ն իր դերակատարումն ունեցել է պատերազմող կողմերի միջև խաղաղության շուրջ բանակցություններ սկսելու գործում: 1993-94 թվականին այն մրցակցում էր ԵԱՀԽ-ի հետ՝ գործընթացն իր ազդեցության տակ ներառելու նպատակով. երկու կազմակերպություններն էլ փորձում էին հաստատել իրենց ինքնությունն ու նպատակները: 1994 թվականի մայիսին ԱՊՀ երկրների խորհրդարանական պատվիրակությունները հավաքվեցին Բիշքեկում (Ղրղզստան) և ստորագրեցին հրադադարի մասին արձանագրությունը, որը շարունակում է գործել մինչ օրս: Ռուսները մեղադրեցին Մինսկի խմբին իրենց նախաձեռնությունը նենգադուլի ենթարկելու մեջ, որին ի պատասխան արևմտյան ուժերը մեղադրեցին Ռուսաստանին խաղաղ կարգավորման առավել ընդգրկուն այլընտրանքային նախագծի մշակման աշխատանքները կազմալուծելու մեջ: Այս մրցակցությունը մեղմվեց, երբ Ռուսաստանը 1995 թվականին դարձավ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներից մեկը, որից հետո Մինսկի խումբը դարձավ խաղաղ կարգավորման գործընթացի հիմնական միջնորդն ու վարողը: ԱՊՀ հանդիպումները շարունակում են մնալ Հայաստանի և Ադրբեջանի նախագահների պարբերական հանդիպումների հիմնական միջավայրը: Մինչդեռ, ԱՊՀ-ն շարունակաբար կորցնում է իր դերը, որպես մի ինստիտուտ, որն ի վիճակի է առաջ մղել Ռուսաստանի քաղաքական և տնտեսական շահերը նախկին խորհրդային սահմանների շրջանակներում:

# Ժամանակագրություն

## Հին և միջին դարերի պատմություն

Ենթադրվում է, որ վաղ շրջանում Ղարաբաղի ներկայիս տարածքն Աղվանքի թագավորության մի մասն է կազմել: Աղվանները մեռած էթնիկ խումբ են, որոնք 4-րդ դարում քրիստոնեություն ընդունեցին և մասամբ հայկականացվեցին: Վաղ միջնադարում՝ 11-րդ դարում, սելջուկյան ներխուժումների հետևանքով տարածաշրջանի ցածրադիր բնակավայրերը մահմեդականացվեցին: Արդյունքում ձևավորվեց բավականին խայտաբղետ բնակչություն. մի մասը քոչվոր կյանք էր վարում, մյուս մասը՝ նստակյաց: Կառավարման համակարգը ևս տարաբնույթ էր. իշխում էին մի կողմից մուսուլման խաները, մյուս կողմից՝ հայ մելիքները (իշխանները): Վաղ միջնադարյան հայկական պետականության ժամանակահատվածում այս տարածքը հայերին հայտնի էր որպես Արցախ աշխարհ: Նոր ժամանակներում տարածքը գտնվում էր պարսկական (իրանական) շահի իշխանության ներքո:

## 19-րդ դար

1813 թվականին կնքված Գյուլիստանի պայմանագրով Ղարաբաղը պաշտոնապես միացվում է Ռուսական կայսրությանը: 1868թ. այն դառնում է Ռուսաստանի կայսրության Ելիզավետպոլ նահանգի մի մասը:

### 1905

Ղարաբաղի Շուշա քաղաքում հայ-ադրբեջանական բռնությունների ալիք է բարձրանում:

### 1915

Անատոլիայում տեղի են ունենում հայերի զանգվածային տեղահանումներ և կոտորածներ (այսօր մի շարք երկրներ այս իրադարձությունները ճանաչում են որպես հայերի ցեղասպանություն):

### 1918

Բոլշևիկների առաջնորդած հեղափոխության արդյունքում փլուզվում է Ռուսական կայսրությունը և Բաքվում սկսվում են ադրբեջանցիների (մարտին) և հայերի (սեպտեմբերին) կոտորածները: Մայիսի 28-ին Հայաստանը և Ադրբեջանը հռչակում են իրենց անկախությունը: Նոր վարչակարգերը սկսում են վիճել իրենց ընդհանուր սահմանների շուրջ, հատկապես՝ Նախիջևանի, Զանգեզուրի և Ղարաբաղի:

### 1920-1920

Ի պատասխան հայերի ապստամբությանը՝ 1920 թ. մարտին ադրբեջանական բանակը թալանում է Շուշան: Ապրիլի 28-ին բոլշևիկյան կարմիր բանակը գրավում է Բաքուն և պաշտոնանկ անում ադրբեջանական կառավարությանը: Այնուհետև մայիսին գրավում է Ղարաբաղը, իսկ նոյեմբերին՝ Հայաստանը: Դեկտեմբերի 1-ին Ադրբեջանի կոմունիստական կուսակցության առաջնորդ Նարիման Նարիմանովը Նախիջևանը, Զանգեզուրը և Ղարաբաղը հայտարարում է Խորհրդային Հայաստանի մաս: Նրա հայտարարությունը շուտով համարվում է անվավեր, և մինչ այժմ պարզ չէ, թե արդյոք դա դեպի Հայաստան Կարմիր բանակի առաջխաղացման նպատակով կազմակերպված դավադրություն էր, թե սպառնալիքի հետևանք:

Հաջորդ ամիսներին Նախիջևանն անցնում է Ադրբեջանի, իսկ Զանգեզուրը՝ Հայաստանի իշխանության տակ, որի արդյունքում

յուրաքանչյուր շրջանում սկսվում է համապատասխան ժողովրդագրական միատարրության ձևավորման գործընթաց: 1921թ. հուլիսին Ռուսաստանի կոմունիստական կուսակցության կովկասյան բյուրոն (Կավբյուրո) որոշում է Ղարաբաղը կցել Հայաստանին, այնուհետև գրեթե անմիջապես փոխում է իր որոշումը՝ միացնելով այն Ադրբեջանին և տալով «լայն տարածքային ինքնավարություն»:

## 1922
Կազմավորվում է Խորհրդային Միությունը: Հայաստանը և Ադրբեջանը, Վրաստանի հետ միասին, կազմում են Անդրկովկասյան Դաշնակցային Հանրապետությունը:

## 1923
Հուլիսի 7-ին հիմնադրվում է Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը՝ որպես Ադրբեջանի կազմում գտնվող ինքնավար շրջան: Մարզի սահմանները հստակեցվում են մեկ ամիս անց:

## 1936
Անդրկովկասյան Դաշնակցային Հանրապետությունը լուծարվում է, իսկ Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը դառնում են Միության հանրապետություններ:

## 1945
Նոյեմբերին Հայաստանի կոմունիստական կուսակցության առաջին քարտուղար Գրիգորի Արությունովը գրում է Ստալինին՝ խնդրելով Ղարաբաղը փոխանցել Հայաստանին:

## 1948-50
Հայաստանում շարունակվում է ժողովրդագրության առումով միատարր հասարակության ձևավորման գործընթացը, քանզի ադրբեջանցիները տեղահանվում են, իսկ սփյուռքահայերը՝ ներգաղթում Հայաստան:

## 1960-ականներ
1960-ականներին հայերի ազգային ինքնության հաստատումը սերտաճում է մի քանի թեմաների հետ՝ 1915 թ. ցեղասպանություն, գրականության և արվեստի մեջ ազգային թեմաներ և Ղարաբաղ: 1963 թ. խորհրդային իշխանության առաջնորդ Նիկիտա Խրուշչովը ստանում է 2.500 ստորագրությամբ մի խնդրագիր, որտեղ դատապարտվում էր Ղարաբաղում հայերի դեմ վարվող մշակութային և տնտեսական մեկուսացման քաղաքականությունը:

## 1977
Ղարաբաղի հայերը ցույցեր են կազմակերպում Ղարաբաղում՝ Հայաստանին միանալու նպատակով:

## 1987
Օգոստոսին Ղարաբաղից Մոսկվա է ուղարկվում Հայաստանի հետ միավորվելու վերաբերյալ մի դիմում, որտեղ ստորագրությունների թիվը հասնում էր տասնյակ հազարների:

Հոկտեմբերին Ադրբեջանի կոմունիստական կուսակցության նախկին առաջին քարտուղար Հեյդար Ալիևը հեռացվում է Պոլիտբյուրոյից, իսկ նոյեմբերին Փարիզում ելույթ է ունենում Աբել Աղանբեկյանը, Խորհրդային միության նախագահ Միխայիլ Գորբաչովի խորհրդականներից մեկը, առաջարկելով, որպեսզի Մոսկվան Ղարաբաղի՝ Հայաստանի հետ միավորվելու խնդրին առավել ըմբռնումով մոտենա: Հայաստանի մայրաքաղաք Երևանում կազմակերպվում են բողոքի ցույցեր ընդդեմ Ղարաբաղից հյուսիս ընկած տարածքներում հայերի նկատմամբ առկա վերաբերմունքի, իսկ նոյեմբերին Հայաստանի Կապան քաղաքում սկսվում են միջհամայնքային բռնություններ:

## 1988
## Հունվար
Երբ ադրբեջանցիները սկսում են փախչել Կապանից, գրանցվում են բռնկվող հակամարտության առաջին բռնի տեղահանման դեպքերը:

## Փետրվար
Փետրվարի կեսերին ցույցեր են սկսվում Ստեփանակերտում, որոնց արձագանքը Երևանում կազմակերպված զանգվածային ցույցերն էին: Այս իրադարձություններին հետևում է մարզի ժողովրդական պատգամավորների խորհրդի որոշումը, որով խնդրվում էր ԼՂԻՄ-ը փոխանցել Հայաստանին: Ղարաբաղի կոմունիստական կուսակցության առաջնորդ Բորիս Կևորկովը հեռացվում է պաշտոնից:

Փետրվարի 27-29-ին Ադրբեջանի Սումգայիթ քաղաքում տեղի ունեցած հակահայկական ջարդերի արդյունքում, ըստ պաշտոնական տվյալների, սպանվում է 32 մարդ:

## Մայիս-հուլիս
Մայիսին երկու հանրապետությունների առաջին քարտուղարներն էլ թողնում են իրենց պաշտոնները, իսկ հունիսին սկսվում է «օրենսդրական պատերազմ». մինչ Հայաստանի Գերագույն խորհուրդը հաստատում է Ղարաբաղը Հայաստանին միացնելու մասին որոշումը, Ադրբեջանի Գերագույն խորհուրդը ամրագրում է վերջինիս կարգավիճակն Ադրբեջանի կազմում: Այս վերջին դիրքորոշումը հուլիսին հաստատվում է նաև ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության կողմից: Կուսակցական պաշտոնյա Արկադի Վոլսկուն ուղարկում են մարզ՝ որպես Գերագույն խորհրդի կենտրոնական հանձնաժողովի ներկայացուցիչ:

## Սեպտեմբեր-նոյեմբեր
Ղարաբաղում հասարակական շարժումն ուժգնանում է, քանի որ հայերը տեղահանվում են Շուշայից, իսկ ադրբեջանցիները՝ Ստեփանակերտից: Սեպտեմբերին Ղարաբաղում սահմանվում է «հատուկ կառավարում» (Մոսկվայի ուղղակի վերահսկողություն): Նոյեմբերին Հայաստանում սկսվում է ադրբեջանցիների զանգվածային տեղահանում, ինչը կազմակերպված զանգվածային ցույցերի պատճառ է դառնում Բաքվում:

## Դեկտեմբեր
Դեկտեմբերի 7-ին Հայաստանում տեղի է ունենում երկրաշարժ, որը խլում է 25.000 մարդու կյանք:

Ձերբակալվում են «Ղարաբաղ» կոմիտեի 11 անդամները, ովքեր Հայաստանի ընդդիմադիր շարժման առաջնորդներն էին (վեց ամիս անց նրանք ազատ են արձակվում առանց որևէ մեղադրանքի):

## 1989

Այս տարին բնութագրվում է Ղարաբաղի կառավարումն իրենց հանձնել պահանջող մարմինների առանձնացմամբ: Հունվարի 12-ին Վոլսկին Ղարաբաղում հիմնում է Հատուկ կառավարման կոմիտեն: Օգոստոսին Ղարաբաղում ընտրվում է 79 հոգուց կազմված Ազգային խորհուրդ, որը հայտարարում է, թե Վոլսկու կոմիտեի հետ կհամագործակցի իր իսկ պայմաններով: Սեպտեմբերին Ադրբեջանի Գերագույն խորհուրդը հայտարարում է, որ Լեռնային Ղարաբաղը գտնվում է իր իշխանության ներքո, իսկ նոյեմբերին տարածաշրջանի ուղղակի ղեկավարումն անցնում է Բաքվին: Դեկտեմբերին Ղարաբաղի Ազգային խորհուրդը Հայաստանի Գերագույն խորհրդի հետ համատեղ որոշում է կայացնում Լեռնային Ղարաբաղը Հայաստանի խորհրդային հանրապետության հետ միավորվելու մասին:

## 1990

Ադրբեջանում «սև հունվարին», Բաքվում հունվարի 13-15-ին ջարդեր են իրականացվում հայերի նկատմամբ: Սպանվում է շուրջ 90 մարդ և գրեթե բոլոր հայերը ստիպված են լինում փախչել քաղաքից: Ղարաբաղում և սահմանակից շրջաններում արտակարգ իրավիճակ է հայտարարվում: Հունվարի 19-ի լույս 20-ի գիշերը արտակարգ իրավիճակ է հայտարարվում Բաքվում: Խորհրդային տանկերն ու զորքը մտնում են քաղաք և հանդիպում ազգայնականորեն տրամադրված ցուցարարների դիմադրությանը, որի արդյունքում արձանագրվում է մոտ 150 քաղաքացիական անձանց մահ: Այազ Մութալիբովը դառնում է Ադրբեջանի կոմկուսի ղեկավարը: Մինչ Վոլսկու թիմը թողնում է տարածաշրջանը, երկրորդ քարտուղար Վիկտոր Պոլյանիչկոն ժամանում է Ղարաբաղ՝ նոր Կազմակերպչական հանձնաժողով կազմելու նպատակով:

Մայիսին Գերագույն խորհրդի ընտրությունների արդյունքում Հայոց համազգային շարժումն անցնում է իշխանության գլուխ: Օգոստոսին «Ղարաբաղ» կոմիտեի անդամ Լևոն Տեր-Պետրոսյանը դառնում է Գերագույն խորհրդի նախագահ: 23-ին ընդունվում է հռչակագիր, որով հայտարարվում է, որ Հայաստանը ձգտում է անկախության:

## 1991
### Մարտ

Մարտի 17-ին Ադրբեջանը մասնակցում է Խորհրդային Միության պահպանման մասին հանրաքվեին: Հայաստանը այդ հանրաքվեին չի մասնակցում:

### Ապրիլ-հուլիս

Ապրիլին սկսվում է «Օղակ» գործողությունը, որը Բաքվում և Մոսկվայում պլանավորված ծրագրի մի մասն էր կազմում: Այդ ծրագրի նպատակն էր «զինաթափել Ղարաբաղի անօրինական զինված միավորումները»: Խորհրդային զորքերը, ադրբեջանական ոստիկանությունը և հատուկ նշանակության զորամիավորումները հարձակումներ են սկսում Ղարաբաղից հյուսիս ընկած հայկական գյուղերի վրա: «Օղակ» գործողությունը շարունակվում է մինչև հուլիս ամիսը:

### Օգոստոս-սեպտեմբեր

Մոսկվայում Գորբաչովի կառավարության դեմ հեղաշրջման փորձի տապալումից հետո, օգոստոսի 30-ին Ադրբեջանը հայտարարում է իր անկախության մասին: Սեպտեմբերի 8-ին Մութալիբովն ընտրվում է Ադրբեջանի նախագահի պաշտոնում: Սեպտեմբերի 3-ին Ալիևն ընտրվում է Նախիջևանի Ինքնավար Հանրապետության խորհրդարանի խոսնակի պաշտոնում: Սեպտեմբերի 2-ին Ղարաբաղը հայտարարում է Ադրբեջանի կազմից դուրս գալու մասին՝ հռչակելով իրեն որպես Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն: Սեպտեմբերի 23-ին Հայաստանը հռչակում է իր անկախությունը, մինչդեռ Ռուսաստանի Ժելեզնովոդսկ քաղաքում ստորագրվում է Ղարաբաղում խաղաղության հաստատման մասին ռուս-ղազախական համատեղ ծրագիր:

### Հոկտեմբեր-նոյեմբեր

Տեր-Պետրոսյանն ընտրվում է Հայաստանի Նախագահ: Ժելեզնովոդսկի ծրագրի իրագործումն ընդհատվում է այն դեպքից հետո, երբ Ղարաբաղում նոյեմբերի 20-ին ուղղաթիռը, որով ուղևորվում էին ադրբեջանցի, ռուս և ղազախ բարձրաստիճան զինվորականները, վթարի է ենթարկվում: Ադրբեջանի նոր Ազգային խորհուրդը քվեարկում է հօգուտ Լեռնային Ղարաբաղի ինքնավար կարգավիճակի վերացման և հայտարարում է այն որպես սովորական մի շրջան:

### Դեկտեմբեր

Դեկտեմբերի 10-ին հանրաքվեի արդյունքում Ղարաբաղի հայերը քվեարկում են հօգուտ անկախության: Դեկտեմբերի 31-ին փլուզվում է Խորհրդային Միությունը:

## 1992
### Հունվար

Հունվարի 6-ին Լեռնային Ղարաբաղը հայտարարում է իր անկախության մասին, սակայն չի ճանաչվում որպես անկախ պետություն ոչ մի այլ պետության կողմից, ներառյալ Հայաստանը: Արթուր Մկրտչյանը դառնում է նորանկախ պետության առաջին ղեկավարը, որպես Գերագույն խորհրդի նախագահ, սակայն ապրիլին սպանվում է խորհրդավոր հանգամանքներում: Հունվարի 30-ին Հայաստանն ու Ադրբեջանն անդամակցում են Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդաժողովին (ԵԱՀԽ), որը միջնորդի պարտականություններ է ստանձնում հակամարտության կարգավորման գործընթացում:

### Փետրվար

Փետրվարի 25-26-ին հարյուրավոր ադրբեջանցիներ են սպանվում Ղարաբաղի Խոջալու գյուղում, որի հետևանքով մարտի 6-ին նախագահ Մութալիբովը հրաժարական է տալիս:

### Մարտ

Մինսկում Ղարաբաղի խնդրի վերաբերյալ ԵԱՀԽ համաժողովում ձևավորվում է Մինսկի խումբը:

### Մայիս

Մինչ Տեր-Պետրոսյանը և Ադրբեջանի գործող նախագահ Յաքուբ Մամեդովը հանդիպում են Թեհրանում՝ ստորագրելով խաղաղության մասին համաձայնության ընդհանուր սկզբունքների մասին պաշտոնական հայտարարությունը, հայկական զորքերը մայիսի 8-9 գրավում են Շուշան:

Մայիսի 14-15-ը Ադրբեջանում նախկին կոմունիստական պատգամավորները Մութալիբովին ժամանակավորապես վերականգնում են պաշտոնում, որից հետո նա ստիպված է լինում նորից հեռանալ: Մայիսի 18-ին հայկական զորքերը գրավում են Լաչինը՝ ցամաքային կապ ստեղծելով Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի միջև:

## Հունիս-հուլիս

Հունիսի 7-ին ժողովրդական ճակատի առաջնորդ Աբուլֆազ Էլչիբեյը ընտրվում է Ադրբեջանի նախագահի պաշտոնում: Հունիսի 1-ին Հռոմում սկսվում են Մինսկի խմբի բանակցությունները, սակայն մասնակիցներին անակնկալի է բերում այն լուրը, թե հունիսի 12-ին ադրբեջանցիները հետ են գրավել է Շահումյանի շրջանը, իսկ հուլիսի 4-ին՝ հյուսիսային Ղարաբաղի Մարտակերտի շրջանը, որը վերանվանվում է Աղդեր:

## Օգոստոս

Որպես Լեռնային Ղարաբաղի գործադիր մարմին՝ հիմնադրվում է Պետական պաշտպանության հանձնաժողով, որը գլխավորում է Ռոբերտ Քոչարյանը:

## Հոկտեմբեր

Հոկտեմբերի 24-ին ԱՄՆ Կոնգրեսը ընդունում է «Ազատությանն աջակցություն ցուցաբերելու մասին» ակտի 907 լրացումը, որով արգելվում է ԱՄՆ կառավարությանը աջակցություն ցուցաբերել Ադրբեջանին:

## 1993
## Փետրվար-ապրիլ

Ռազմական գործողություններում որևէ դրական արդյունք չգրանցելու պատճառով պաշտոնից ազատվում է Ղարաբաղում Ադրբեջանի «հատուկ ներկայացուցիչ» Սուրեթ Հուսեյնովը: Մարտի 27-ից ապրիլի 5-ը ժամանակահատվածում հայկական զորքերը գրավում են Քելբաջարը (Ադրբեջանի տարածք, որը գտնվում է Ղարաբաղի և Հայաստանի միջև): Այս գործողությունը դառնում է ՄԱԿ-ի 822-րդ բանաձևի (ընդունված ապրիլի 30-ին) առարկան, որով հայերին կոչ է արվում այդ տարածքից դուրս հանել իրենց զորքերը:

## Հունիս-օգոստոս

Գյանջայում հունիսի 4-ին Հուսեյնովի նախաձեռնությամբ ընդվզումներ են սկսվում ընդդեմ նախագահ Էլչիբեյի: Հունիսի 15-ին Ալիևը դառնում է Ադրբեջանի խորհրդարանի խոսնակ, իսկ երեք օր անց Էլչիբեյը փախչում է մայրաքաղաքից: Հունիսի 24-ին Ալիևն ստանում է արտակարգ նախագահական լիազորություններ, որոնք նա օգտագործում է Հուսեյնովին վարչապետի պաշտոնում նշանակելու համար: Քաղաքական իրավիճակի անկայունությունն Ադրբեջանում բերում է մի շարք ճակատագրական ռազմական պարտությունների. հունիսին ընկնում է Մարտակերտը, հուլիսին՝ Աղդամը, օգոստոսին՝ Ֆիզուլին, Ջեբրայիլը և Կուբաթլուն: Սա դարձավ ՄԱԿ-ի 853-րդ բանաձևի առարկան (ընդունված հուլիսի 29-ին), որով հայերին կոչ է արվում այդ տարածքներից դուրս հանել զորքերը:

## Սեպտեմբեր-դեկտեմբեր

Անկախ պետությունների համագործակցությանը (ԱՊՀ) Ադրբեջանի միանալու համար Մոսկվա ժամանած Ալիևը գաղտնի հանդիպում է Ղարաբաղի հայ ղեկավար Քոչարյանին: Հոկտեմբերի 3-ին Ալիևն ընտրվում է Ադրբեջանի Նախագահ, իսկ ամսվա վերջին հայկական զորքերը կրկին նոր տարածքներ են գրավում՝ Հորադիս քաղաքը և Զանգելանի շրջանը: ՄԱԿ-ի հոկտեմբերի 14-ին ընդունված 874-րդ բանաձևն ուրվագծում է գրավյալ տարածքներից հայկական զորքերի դուրս բերման ժամանակացույցը: Նոյեմբերի 12-ին ընդունված ՄԱԿ-ի 884-րդ բանաձևը դատապարտում է Հորադիսի և Զանգելանի գրավումը: Տարին եզրափակվում է Ադրբեջանի նոր հարձակումներով:

## 1994
## Հունվար-փետրվար

Թե՛ ադրբեջանական, թե՛ հայկական զորքերը ծանր կորուստներ են կրում հունվարի վերջից փետրվարի կեսերը տևող կատաղի մարտերում:

## Մայիս

Հայաստանի, Ադրբեջանի, Լեռնային Ղարաբաղի, ԱՊՀ և Ռուսաստանի (որն, ի դեպ, հյուրընկալում էր բանակցությունները) ներկայացուցիչների մասնակցությամբ բանակցային գործընթացի արդյունքում կնքվում է Բիշքեկի արձանագրությունը, իսկ մայիսի 12-ին զինադադար է հաստատվում:

## Սեպտեմբեր-հոկտեմբեր

Սեպտեմբերի 20-ին Ադրբեջանն օտարերկյա ընկերությունների հետ պայմանագիր է ստորագրում իր Ազերի-Չիրագ-Գյունաշլի ափամերձ նավթահանքերը շահագործելու մասին: Հուսեյնովը փախչում է Ադրբեջանից այն բանից հետո, երբ կասկածներ են հնչում, թե նա է կազմակերպել հոկտեմբերի 3-4-ի ձախողված հեղաշրջումը:

## Նոյեմբեր-դեկտեմբեր

Հրադադարից հետո՝ բանակցությունների երրորդ փուլում Ադրբեջանը նոր պահանջ է ներկայացնում՝ գործընթացում ներառել Ղարաբաղի ադրբեջանցիներին և պնդում է, որպեսզի խաղաղ կարգավորման գործընթացում միջնորդության առավելությունն ստանձնի ԵԱՀԽ-ն: Բուդապեշտում կայացած ԵԱՀԽ գագաթնաժողովում, որտեղ ԵԱՀԽ-ն դառնում է ԵԱՀԿ, Ռուսաստանը և Շվեդիան դառնում են Մինսկի խմբի համանախագահներ: Դեկտեմբերի 20-ին ձևավորվում է ԵԱՀԿ Բարձր մակարդակի պլանավորման խումբը: Դեկտեմբերի 22-ին Լեռնային Ղարաբաղի խորհրդարանը Ռոբերտ Քոչարյանին ընտրում է նախագահի պաշտոնում:

## 1995
## Մարտ

Մարտի 13-17 Բաքվում ձախողվում է Ներքին գործերի փոխնախարար գնդապետ Ռովշան Ջավադովի կազմակերպած հեղաշրջման փորձը:

## Ապրիլ

Ֆինլանդիան փոխարինում է Շվեդիային՝ որպես Մինսկի խմբի համանախագահ:

## Մայիս-հունիս

Մայիսի կեսերին Մոսկվայում ձախողվում է բանակցությունների նոր փուլը, քանզի Ադրբեջանը պնդում է, որպեսզի Լեռնային Ղարա-

բաղի թե՛ հայկական և թե՛ ադրբեջանական համայնքների ներկայացուցիչները մասնակցեն բանակցություններին որպես հակամարտության զինված կողմեր, և ոչ թե որպես քաղաքական դերակատարներ:

## 1996
## Հունվար-մարտ

Մոսկվայում կայացած բանակցություններին չի հաջողվում որևէ էական առաջընթաց արձանագրել, քանի որ կողմերը մերժում են ԵԱՀԿ-ի, Ռուսաստանի և ԱՄՆ-ի նոր առաջարկները:

## Սեպտեմբեր

Սեպտեմբերի 23-ին Տեր-Պետրոսյանը հաղթում է վիճահարույց նախագահական ընտրություններում՝ ձայների 51% -ով: Ընտրությունների արդյունքների դեմ բողոքի ցույցերի պատճառով հայտարարվում է արտակարգ իրավիճակ:

## Նոյեմբեր

24-ին կայացած ընտրություններում ձայների մեծամասնությամբ Քոչարյանն ընտրվում է Լեռնային Ղարաբաղի *դե ֆակտո* նախագահ:

## Դեկտեմբեր

ԵԱՀԿ լիսաբոնյան գագաթաժողովում ԵԱՀԿ պաշտոնավարող նախագահը հայտարարում է հակամարտության կարգավորման սկզբունքների մասին, որոնք պաշտպանում են Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: Հայաստանը կանխում է դրանք վերջնական հայտարարության մեջ ներառելու փորձը: Փոխարենն այդ սկզբունքները ներառվում են հավելվածում, իսկ Հայաստանի դիրքորոշումը կցվում է որպես երկրորդ հավելված:

## 1997
## Հունվար-փետրվար

Հունվարի 1-ին Ֆրանսիան հաջորդում է Ֆինլանդիային որպես Մինսկի խմբի համանախագահ: Ի պատասխան Ադրբեջանի դժգոհության՝ համանախագահության կազմը ընդլայնվում է, և փետրվարի 14-ին ԱՄՆ-ի ներկայացուցիչը դառնում է երրորդ համանախագահը:

## Մարտ

Քոչարյանը դառնում է Հայաստանի վարչապետ:

## Մայիս

Մինսկի խումբը նոր առաջարկ է ներկայացնում:

## Հունիս-հուլիս

Մինսկի խմբի համանախագահները Հայաստանի և Ադրբեջանի ղեկավարների քննարկմանն են ներկայացնում վերջին առաջարկը: Նախագահները, ի վերջո, որոշում են սկզբունքորեն ընդունել առաջարկը՝ որպես խաղաղության հաստատման հիմք: Հայաստանն այն ընդունում է «լուրջ վերապահումներով»: Հուլիսին Բաքվում հանդիպումներ են տեղի ունենում Ալիևի հետ, որից հետո Մինսկի խմբի համանախագահներն առաջարկում են ձևափոխված «փաթեթային» տարբերակը: Հուլիսի վերջին Ալիևն այցելում է ԱՄՆ և նախագահ Բիլ Քլինթոնի հետ կնքում համաձայնագրեր ներդրումների մասին: Հրապարակայնացնելով մինչ այդ գաղտնի առաջարկները՝ Ալիևը հայտարարում է, որ Ադրբեջանը կարող է համաձայնվել գրավյալ տարածքներից հայկական զորքերի աստիճանական դուրս բերմանը՝ առաջին փուլում Լաչինը թողնելով Լեռնային Ղարաբաղի վերահսկողության տակ:

## Օգոստոս

Օգոստոսի 25-ին Լեռնային Ղարաբաղը մերժում է մայիսի վերջերին ներկայացված  խաղաղ կարգավորման առաջարկը:

## Սեպտեմբեր

Լեռնային Ղարաբաղի Նախագահի ընտրություններում հաղթում է Արկադի Ղուկասյանը, իսկ ընտրությունները դատապարտվում են Ադրբեջանի և Ռուսաստանի կողմից: Վերջին փորձերի ձախողման արդյունքում Մինսկի խումբը ներկայացնում է ձևափոխված «փուլային» տարբերակը: Տեր-Պետրոսյանը հավանություն է տալիս այս նոր մոտեցմանը և հրապարակայնորեն խոսում փոխզիջման անհրաժեշտության մասին: Նրա այս քայլը տարաձայնություններ է առաջացնում իր իսկ կառավարության ներսում, և սկսվում են բողոքի ակցիաներ:

## Հոկտեմբեր-նոյեմբեր

Հայաստանը և Ադրբեջանը, որոշ վերապահումներով, որպես բանակցությունների հիմք են ընդունում ԵԱՀԿ վերջին առաջարկները: Լեռնային Ղարաբաղը մերժում է դրանք՝ պահանջելով փաթեթային մոտեցում և նշելով փուլային տարբերակում առկա անվտանգության ռիսկերի մասին: Ղուկասյանն ասում է, որ կարելի է քննարկել Ադրբեջանի հետ համադաշնության տարբերակը, սակայն ոչ որևէ այլ տարբերակ, որը Լեռնային Ղարաբաղը դնում է Բաքվի ենթակայության տակ:

## Դեկտեմբեր

Կոպենհագենում կայացած ԵԱՀԿ հանդիպմանը ոչ մի փոփոխություն չի արձանագրվում, իսկ Լեռնային Ղարաբաղի խնդրանքը՝ գործընթացում որպես երրորդ կողմ ներգրավվելու մասին, մերժվում է: Քննարկվում և մերժվում է փուլային տարբերակը: ԵԱՀԿ ոչ մի նոր փաստաթուղթ չի մշակում, քանի որ Հայաստանն արգելափակում է 1996 թ-ի լիսաբոնյան սկզբունքների վերահաստատումը:

## 1998
## Հունվար-փետրվար

Հայաստանի Ազգային անվտանգության խորհրդի հերթական նիստի ընթացքում, որոշ ազդեցիկ դեմքեր, այդ թվում՝ Քոչարյանը, Վազգեն Սարգսյանը և Սերժ Սարգսյանը (որն, ի դեպ, առաջինի հետ ոչ մի բարեկամական կապ չունի) դեմ են կանգնում Տեր-Պետրոսյանին և մերժում Մինսկի խմբի առաջարկը: Փետրվարի 3-ին Տեր-Պետրոսյանը հրաժարական է տալիս:

## Մարտ

Քոչարյանը հաղթում է Հայաստանի նախագահական ընտրությունների երկրորդ փուլում: Այս ընտրությունները դատապարտվում են միջազգային դիտորդների կողմից:

## Հոկտեմբեր

Ալիևը վերընտրվում է Ադրբեջանի նախագահի պաշտոնում:

## Նոյեմբեր

Ադրբեջանը մերժում է Մինսկի խմբի «ընդհանուր պետության» առաջարկը:

## 1999
### Ապրիլ
Ալիևը և Քոչարյանը Վաշինգտոնում մասնակցում են ՆԱՏՕ-ի 50-րդ տարեդարձին նվիրված գագաթաժողովին: 1993 թվականից ի վեր դա նրանց առաջին հանդիպումն էր, որը դառնում է հաջորդ երկու տարիների ընթացքում կայանալիք բազմաթիվ հանդիպումների սկիզբը:

### Մայիս-հունիս
Մայիսին խորհրդարանական ընտրություններում հաղթում է «Միասնություն» դաշինքը, որի կազմում էին Վազգեն Սարգսյանի Հանրապետական կուսակցությունը և Կարեն Դեմիրճյանի Ժողովրդական կուսակցությունը: Հունիսի 11-ին Սարգսյանը նշանակվում է ՀՀ վարչապետ:

### Հոկտեմբեր
Ալիևը և Քոչարյանը հանդիպում են Նախիջևան-Հայաստան սահմանին: Քննարկվում է տարածքների փոխանակման վերաբերյալ այսպես կոչված «Գոբլի պլանը», որի արդյունքում Ալիևի մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ հրաժարական են տալիս: Այն բավականին հակասական արձագանք է ստանում նաև Հայաստանում:

Հոկտեմբերի 27-ին զինված անձինք ներխուժում են ՀՀ Ազգային Ժողովի նիստերի դահլիճ և սպանում ութ բարձրաստիճան պաշտոնյաների, որոնք քաղաքական էլիտայի կորիզն էին կազմում, ներառյալ ՀՀ վարչապետ Վազգեն Սարգսյանը և ԱԺ նախագահ Կարեն Դեմիրճյանը:

### Դեկտեմբեր
Լեռնային Ղարաբաղի զինված ուժերի հրամանատարի պաշտոնից ազատվում է պատերազմական ժամանակաշրջանի հայտնի հրամանատար Սամվել Բաբայանը: Դեկտեմբերի 29-ին նախագահ Ալիևը որոշում է ընդունում Ադրբեջանի պետական նավթային հիմնադրամի ձևավորման մասին:

## 2000
### Մարտ
Ստեփանակերտում մահափորձի արդյունքում լրջորեն վիրավորվում է Ղուկասյանը, ինչից անմիջապես հետո ձերբակալվում է Բաբայանը:

ՀՀ Արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանն ընդունում է, որ հոկտեմբերյան սպանություններին հետևած ներքին խռովությունների պատճառով Լեռնային Ղարաբաղի շուրջ բանակցությունները գրեթե դադարել են:

### Հունիս
Լեռնային Ղարաբաղում անցկացվում են խորհրդարանական ընտրություններ, որոնք չեն ճանաչվում միջազգային հանրության կողմից:

### Սեպտեմբեր
Քոչարյանը և Ալիևը հանդիպում են ՄԱԿ-ի Հազարամյակի գագաթաժողովի ընթացքում Նյու Յորքում և վերահաստատում 1999 թ. սկսված երկխոսության կարևորությունը:

## 2001
### Հունվար-մարտ
Ադրբեջանը և Հայաստանը դառնում են Եվրոպայի խորհրդի լիիրավ անդամներ: Հունվարին Ալիևը և Քոչարյանը հանդիպում են Փարիզում: Երկրորդ հանդիպումը կայանում է մարտի 4-5-ը: Փետրվարին հայ և ադրբեջանական լրատվամիջոցներին հասու են դառնում խաղաղության հաստատման վերաբերյալ ԵԱՀԿ-ի նախկին առաջարկները:

### Ապրիլ-հուլիս
Խաղաղության հաստատման շուրջ բանակցություններ են տեղի ունենում Քի Վեսթում (Ֆլորիդա): Շատերի կարծիքով այս բանակցությունների հիմքում ընկած էին մարտին Փարիզում հաստատված սկզբունքները: Չնայած երկու նախագահներն էլ իրավիճակը բնութագրում են որպես «լավատեսական»՝ հաջորդ շաբաթների ընթացքում դեռևս գաղտնի առաջարկները լուրջ ընդդիմության են հանդիպում Ադրբեջանի քաղաքական էլիտայի շրջանում: Հայաստանում ևս խանդավառությամբ չեն ընդունվում դրանք:

### Սեպտեմբեր-նոյեմբեր
ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը հանում է «Ազատությանն աջակցություն ցուցաբերելու մասին» ակտի 907 բանաձևով նախատեսվող արգելքը, որը սահմանափակում էր Ադրբեջանին տրվող ամերիկյան օգնությունը: Սա պարգևատրում էր Ադրբեջանին «ահաբեկչության դեմ պայքարում» համագործակցության համար: Մինսկի խմբի համանախագահներն այցելում են Բաքու և Երևան՝ «խաղաղության հաստատման գործընթացը վերակենդանացնելու և աշխուժացնելու նպատակով նոր գաղափարներ» քննարկելու համար:

### Մայիս-օգոստոս
Հայաստանի և Ադրբեջանի արտաքին գործերի փոխնախարարները հանդիպում են Պրահայում՝ մասնակցելով քննարկումների, որոնց միջնորդում է Մինսկի խումբը: Օգոստոսի 12-ին Ղուկասյանը վերընտրվում է Լեռնային Ղարաբաղի *դե ֆակտո* Նախագահ: Օգոստոսի 24-ին Ադրբեջանում կազմակերպված ազգային հանրաքվեի արդյունքում, ձայների 97%-ի հավանությամբ, էական փոփոխություններ են կատարվում Սահմանադրության մեջ, ներառյալ դրույթն առ այն, որ եթե նախագահն անկարող է կատարել իր լիազորությունները, երկրի նախագահի լիազորություններն անցնում են վարչապետին և ոչ թե խորհրդարանի նախագահին:

### Սեպտեմբեր
Ադրբեջանի Արտաքին գործերի նախարար Վիլայաթ Գուլիևը քննադատում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին այն պատճառով, որ վերջինիս չի հաջողվում ապահովել Հայաստանի կողմից 1993 թ-ին ընդունած ՄԱԿ-ի որոշումների իրագործումը:

Սկսվում է Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի շինարարությունը:

## 2003
### Հունվար
Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Վալթեր Շվիմերը քննադատում է նախագահ Քոչարյանին իր ելույթի համար, որտեղ վերջինս առաջ է քաշում միտքն այն մասին, թե հայերն ու ադրբեջանցիներն «էթնիկապես անհամատեղելի» են և չեն կարող ապրել նույն պետության կազմում:

## Մարտ
Հայաստանում նախագահական ընտրությունների երկրորդ փուլում ձայների 60 տոկոսով Քոչարյանը վերընտրվում է նախագահի պաշտոնում:

## Ապրիլ
ՀՀ Սահմանադրական դատարանը հաստատում է նախագահական ընտրությունների արդյունքների վավերականությունը, միևնույն ժամանակ առաջարկում է կառավարությանը մեկ տարի անց Քոչարյանի հանդեպ վստահության հանրաքվե անցկացնել: Քոչարյանը մերժում է այս որոշումը:

Ապրիլի 21-ին հեռուստատեսությամբ ուղիղ եթեր հեռարձակվող պաշտոնական արարողության ժամանակ Ալիևը երկու անգամ ուշաթափվում է:

## Մայիս
Հայաստանում խորհրդարանական ընտրությունների արդյունքներով առավելագույն ձայներ ստացած կուսակցությունները՝ Հանրապետական կուսակցությունը, Հայ հեղափոխական դաշնակցությունը և Օրինաց երկիրը միավորվում են՝ կազմելով նախագահամետ դաշինք:

## Հուլիս-օգոստոս
Հունիսի 8-ին, հայ-ադրբեջանական սահմանին հանդիպելուց հետո, Պաշտպանության նախարարներ Սերժ Սարգսյանը և Սաֆար Աբիևը համաձայնում են թուլացնել լարվածությունը երկու երկրների զինված ուժերի միջև: Հուլիսի 9-ին Ալիևին տեղափոխում են Թուրքիայի հիվանդանոցներից մեկը, իսկ օգոստոսին՝ Քլիվլենդ՝ ԱՄՆ: Օգոստոսի 4-ին Ադրբեջանի խորհրդարանը վավերացնում է Ալիևի որդուն՝ Իլհամին, վարչապետի պաշտոնում նշանակելու մասին որոշումը:

## Հոկտեմբեր
Իլհամ Ալիևը հաղթում է Ադրբեջանի նախագահական ընտրությունների առաջին փուլում: Սկսվում են հասարակական անկարգություններ, որոնք վերաճում են ցուցարարների և անվտանգության ուժերի միջև բախումների: Միջազգային հանրությունը հիմնականում չեզոք դիրք է բռնում իրավիճակի նկատմամբ, բացառությամբ Նորվեգիայի, չնայած ԵԱՀԿ դիտորդական առաքելության անդամները ևս չեն միանում ընտրությունների վերաբերյալ ԵԱՀԿ նախնական հայտարարությանը՝ պնդելով, թե այն չափազանց մեղմ է շարադրված:

## Դեկտեմբեր
Երեք տարի տևած դատական գործընթացն ի վերջո ավարտվում է՝ կայացնելով 1999 թվականի հոկտեմբերին ՀՀ խորհրդարանում կազմակերպված սպանությունների համար մեղադրվող խմբի դատավճիռը:

Դեկտեմբերի 12-ին հայտարարվում է Ալիևի մահվան մասին:

## 2004
## Հունվար
Փարիզում Իլհամ Ալիևը հայտարարում է, որ Ադրբեջանը երբեք չի ընդունի Ղարաբաղի անկախությունը կամ միավորումը Հայաստանի հետ: Օսկանյանը մերժում է Ադրբեջանի առաջարկը՝ վերացնել Հայաստանի շրջափակումը Լեռնային Ղարաբաղին հարակից հայկական վերահսկողության տակ գտնվող ադրբեջանական տարածքների վերադարձի դիմաց:

## Փետրվար
ՀՀ զինված ուժերի սպա Գուրգեն Մարգարյանը, որը Հունգարիայում մասնակցում էր ՆԱՏՕ-ի դասընթացներին, կացնահարվում է ադրբեջանցի սպայի կողմից:

Եվրոպական խորհրդարանը հրաժարվում է ընդառաջել Հարավային Կովկասի հարցերով գլխավոր զեկուցող Պեր Գարտոնի կոչին, թե Լեռնային Ղարաբաղին հարող տարածքները, որոնք գտնվում են Հայաստանի վերահսկողության ներքո պետք է վերադարձվեն, որպեսզի Ադրբեջանը վերացնի Հայաստանի տնտեսական շրջափակումը:

## Մարտ
Ընդդիմադիր ալիքի աճի ներքո մոտենում և լրանում է Քոչարյանի հանդեպ վստահության հանրաքվե անցկացնելու ժամկետը:

## Ապրիլ
Ընդդիմությունը Երևանում բողոքի է ելնում է ընդդեմ Քոչարյանի և հանրաքվեն ձախողելուն: Ապրիլի 13-ի գիշերը բռնի ուժով ցրվում են ընդդիմության բողոքի ցույցերը, իսկ Հանրապետական, Ազգային միաբանության և Ժողովրդական կուսակցությունների գրասենյակների վրա տեղի են ունենում հարձակումներ:

Ապրիլի 16-ին Ադրբեջանի նորանշանակ արտգործնախարար Էլմար Մամեդյարովը և նրա հայ գործընկեր Օսկանյանը հանդիպում են Պրահայում, և սկսվում է հանդիպումների կանոնավոր մի շրջան, որը հայտնի է որպես «Պրահայի գործընթաց»:

## Մայիս
Եվրոպական Միությունը հայտարարում է Հարավային Կովկասում իր դերը բարձրացնելու մտադրության մասին և Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը ներառում է իր «Եվրոպական հարևանության քաղաքականության» ծրագրում:

## Հուլիս
Երևանում կայացած մամուլի ասուլիսում Մինսկի խմբի միջնորդները հայտարարում են, որ այլևս նոր առաջարկներ չեն արվի հակամարտության կողմերին և նշում են, որ Հայաստանը և Ադրբեջանն այսուհետ կրում են համաձայնության հասնելու և հակամարտության կարգավորման ողջ պատասխանատվությունը:

## Օգոստոս
Լեռնային Ղարաբաղում անցկացված տեղական ինքնակառավարման մարմինների միջազգային հանրության կողմից չճանաչված ընտրություններում ընդդիմադիր Շարժում-88 կուսակցությունը մեծ հաջողություն է արձանագրում՝ ձեռք բերելով Ստեփանակերտի քաղաքապետի պաշտոնը:

## Սեպտեմբեր
Զինադադարի 11-րդ տարեդարձը նշանավորվում է շփման գծի երկայնքով իրավիճակի վատթարացմամբ. կողմերից յուրաքանչյուրը հակառակ կողմին մեղադրում է զինադադարի պայմանների խախտման մեջ: Սեպտեմբերի 15-ին նախագահներ Ալիևը, Քոչարյանը և Պուտինը հանդիպում են Աստանայում՝ Ղազախստան: Ըստ հաղորդագրությունների՝ նրանք քննարկման են դնում մի նոր միտք.

գրավյալ տարածքներից հայկական զորքերի դուրսբերում երկու հանրաքվեների դիմաց. մեկը՝ Ղարաբաղում, մյուսը՝ Ադրբեջանում:

ՆԱՏՕ-ն չեղյալ է հայտարարում Ադրբեջանում նախատեսված զինավարժությունների անցկացումն այն բանից հետո, երբ Ադրբեջանը հրաժարվում է մուտքի արտոնագիր տրամադրել հայկական զինվորական անձնակազմին:

Բաբայանը ազատվում է բանտից և մասնակի ներում ստանում:

## Հոկտեմբեր-Նոյեմբեր

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովն ընդունում է որոշում, որտեղ քննադատության են արժանանում Հայաստանի ժողովրդավարական գործընթացները: Ադրբեջանը ՄԱԿ-ի Գլխավոր համաժողովին կոչ է անում արձանագրել գրավյալ տարածքներում հայերի վերաբնակեցման փաստ:

## Դեկտեմբեր

Հայ հեղափոխական դաշնակցությունը մերժում է իր աջակցությունը նախագահ Ղուկասյանին՝ ի նշան բողոքի ընդդեմ իր կառավարության միակ դաշնակցական նախարար Արմեն Սարգսյանի պաշտոնանկության:

## 2005
## Հունվար

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը որոշում է ընդունում, որով դատապարտում է Հայաստանի կողմից ադրբեջանական տարածքների զավթումը, որում ներառվում են նաև էթնիկ բնաջնջման հարցեր:

## Փետրվար

ԵԱՀԿ պաշտոնյաներն իրենց առաջին ստուգայցն են անցկացնում հայկական վերահսկողության տակ գտնվող ադրբեջանական տարածքներում և հանգում եզրակացության, որ գրավյալ տարածքների բնակեցման չդադարող գործընթացներում Հայաստանը չունի էական մասնակցություն, փոխարենը Լեռնային Ղարաբաղի իշխանություններն են ուղղակիորեն ներգրավված դրանում, առավելապես՝ Լաչինի և Մարտակերտի արևելքում ընկած սահմանափակ տարածքների բնակեցման գործում:

## Ապրիլ

Լոնդոնում Օսկանյանն ու Մամեդյարովն առանձին-առանձին հանդիպում են Մինսկի խմբի համանախագահների հետ:

Շփման գծի երկայնքով աճում է հրադադարի խախտման դեպքերի հաճախականությունը:

## Մայիս

Նախագահներ Ալիևն ու Քոչարյանը հանդիպում են Վարշավայում կայացած Եվրոպայի խորհրդի գագաթաժողովում: Ըստ տեղեկությունների՝ հանդիպման ընթացքում քննարկվում է գրավյալ տարածքներից հայկական զորքերի դուրսբերման հարցը և համաձայնություն է կայացվում երկու արտգործնախարարների միջև հետագա հանդիպումները շարունակելու մասին:

Բաքվում բացվում է Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը:

## Հունիս

Օսկանյանը և Մեմադյարովը հանդիպում են Փարիզում: Օսկանյանը լրատվամիջոցներին հայտնում է, թե «ընդհանուր հիմք է նշմարվում»: Հունիսի 14-ին Ադրբեջանի Արտաքին գործերի նախարարության հայտարարության մեջ նշվում է, որ Ադրբեջանը պաշտպանում է Ղարաբաղի հայերի և ազերիների միջև միջհամայնքային հաղորդակցություն ծավալելու մասին կոչերը:

Նախագահ Ղուկասյանին հավատարիմ քաղաքական կուսակցություններն անսպասելիորեն մեծ հաղթանակ են տանում Լեռնային Ղարաբաղի խորհրդարանական ընտրություններում՝ ստանալով ձայների մոտ երկու երրորդը:

## Հուլիս

Անանուն հայկական աղբյուրները հայտնում են, որ Ղարաբաղի ապագա կարգավիճակը որոշելու նպատակով հանրաքվեի հնարավորության վերաբերյալ համաձայնությունն Ադրբեջանի հետ մոտ է: Ադրբեջանի Արտաքին գործերի նախարարությունն անմիջապես ժխտում է այս լուրը:

## Օգոստոս

Ադրբեջանի զինվորական դատախազը հայտարարում է 1992 թվականին Խոջալուի սպանությունների շուրջ քրեական գործի շրջանակներում հետաքննությունը վերսկսելու մասին:

Մոտեցող խորհրդարանական ընտրությունների շուրջ լարվածության աճի ֆոնի վրա Ադրբեջանի գլխավոր դատախազի որոշմամբ ձերբակալվում է երիտասարդական շարժման առաջնորդներից մեկը, որը մեղադրվում է հեղաշրջման փորձի և այն կազմակերպելու նպատակով հայկական անվտանգության ուժերից որոշակի գումար ստանալու մեջ:

Քոչարյանը և Ալիևը օգոստոսի 27-ին հանդիպում են Կազանում, սակայն, չնայած հանդիպումն, ընդհանուր առմամբ, որակվում է որպես «դրական», հետագա մանրամասները չեն պարզաբանվում: Օսկանյանի և Մամեդյարովի կողմից քննարկված ենթադրյալ նոր մոտեցումների մասին տեղեկությունները պարուրված են մշուշով: Հնչում է կարծիք, թե դրանք միավորում են փաթեթային և փուլային մոտեցումները, որպես գրավյալ տարածքներից հայկական ուժերի դուրսբերման և Ղարաբաղի կարգավիճակը հստակեցնելու շուրջ համաձայնություն ձեռք բերելու համար ապագայում հանրաքվե անցկացնելու մեխանիզմներ:

## Նոյեմբեր

Չնայած նախագահ Ալիևի բազմաթիվ խոստումներին, թե ընտրական գործընթացը երկրում կբարելավվի՝ Ադրբեջանի խորհրդարանական ընտրություններն արժանանում են լայն քննադատության: Նոր ձևավորվող Միլի Մեջլիսի պատգամավորական տեղերի գերակշիռ մասը բաժին է ընկնում ԵԱԿ-ին և վարչակարգին համակիր «Անկախություն» կուսակցությանը: Թեև բարձրացած բողոքի ալիքն անմիջական որևէ վտանգ չի ներկայացնում վարչակարգի համար, այնուամենայնիվ Ալիևի հանդեպ վստահությունը երկարաժամկետ հեռանկարում վտանգված է:

# conciliation resources



*Նկարում՝ աբխազ և վրացի լրագրողները «Խաղաղության հույս ունենալով» ֆիլմի նկարահանումների ընթացքում: Ֆիլմը նվիրված է Գալիի շրջանի բնակիչների կյանքին ու առօրեային:*

**«Հաշտության պաշարներ»** կազմակերպությունը (Conciliation Resources, ՀՊ) աջակցում է նրանց, ովքեր ջանքեր են գործադրում բռնությունը կանխելու, արդարության հաստատմանը նպաստելու և հակամարտությունների վերափոխման ուղղությամբ:

ՀՊ-ի նպատակներն են՝

- աջակցել մարդկանց, ովքեր, աշխատելով տեղական, ազգային և միջազգային մակարդակներում, փորձում են նորարարական լուծումներ առաջարկել այն սոցիալական, տնտեսական և քաղաքական խնդիրների շուրջ, որոնք առնչվում են զինված հակամարտություններին,
- ընդգրկուն երկխոսության և հարաբերությունների բարելավման հնարավորություններ ստեղծել համայնքների ներսում և հակամարտությունների կողմերի համար՝ ներառելով սոցիալական և քաղաքական բոլոր հարթությունները,
- ազդել կառավարությունների և որոշում կայացնող մյուս ինստիտուտների և անհատների վրա, որպեսզի վերջիններս, կիրառելով հակամարտության վերափոխման քաղաքականություն, բռնությանը փոխարինող տարբերակներ փնտրեն,
- բարելավել խաղաղարար գործունեությունը և քաղաքականությունը՝ դասեր քաղելով աշխարհի տարբեր անկյուններում մինչ այժմ իրականացվող խաղաղ կարգավորման գործընթացներից,
- ամրապնդել լրատվամիջոցների կարողությունները մասնավոր հասարակություններում, որպեսզի դրանք մարտահրավեր նետեն կարծրատիպերին և բարձրացնեն հասարակության տեղեկացվածության մակարդակը մարդու իրավունքների, հակամարտության և խաղաղության հարցերի վերաբերյալ:

ՀՊ-ի Կովկասյան ծրագրի ուսումնասիրության առանցքում են Աբխազիայի և Լեռնային Ղարաբաղի հակամարտությունները: Ծրագրի նպատակն է՝ բարելավել հասարակության կարողությունները, որպեսզի այն ի վիճակի լինի ընկալել հակամարտությունների հիմքում ընկած պատճառները, առավել ներկայացուցչական դարձնի խաղաղության հաստատման գործընթացը, աջակցի լրատվամիջոցներին իրենց նախաձեռնություններում և երկխոսության կայացման գործում: Արդեն բավական երկար ժամանակ է, որ ՀՊ-ն իր ուշադրության կենտրոնում է պահում վրաց-աբխազական հակամարտությունը և խաղաղության հաստատման գործընթացը: 2003 թվականից «Կոնսորցիումի նախաձեռնության» կազմում ՀՊ-ն զբաղվում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցերով՝ գործունեության հիմքում դնելով աշխատանքը լրատվամիջոցների հետ և հասարակության տեղեկացվածության խնդիրները:

**Ծրագրի համաղեկավարներ՝ Ջոնաթան Կոեն և Ռեյչել Քլոգ**
**Կայք՝ www.c-r.org/progs/caucasus.shtml**

«Ակորդ» հանդեսը միջազգային անդրադարձ է խաղաղության հաստատման նախաձեռնություններին, որտեղ մանրամասնորեն և հանրամատչելի ձևով ներկայացվում և վերլուծվում են համաշխարհային հանրության ուշադրության կենտրոնում հայտնված պատերազմական և խաղաղ կարգավորման գործընթացները: Հանդեսը նպատակ ունի խորհրդածության համար գործնական նյութ տրամադրել նրանց, ովքեր ընդգրկված են խաղաղարար գործողություններում:

Սույն թողարկումից բացի, ՀՊ-ի կայքում կարելի է ծանոթանալ հանդեսի երեք այլ համարների հետ՝ ռուսերեն լեզվով.

- Փոխզիջումների քաղաքականություն. խաղաղության հաստատման գործընթացը Տաջիկստանում (2001)
- Ինքնիշխանության խնդիրը. վրաց-աբխազական խաղաղության հաստատման գործընթացը (1999)
- Հավասարակշռության հաստատում. Հյուսիսային Իռլանդիայի խաղաղ կարգավորման գործընթացը (1999)

ՀՊ-ի վերաբերյալ այլ տեղեկություններ ստանալու համար դիմել՝

**173 Upper Street**
**London N1 1RG**
**United Kingdom**

Հեռախոս՝ +44 (0)20 7359 7728
Ֆաքս՝ +44 (0)20 7359 4081
Էլ. փոստի հասցե՝ cr@c-r.org
Կայք՝ www.c-r.org

# Լրացուցիչ ընթերցանության համար


### Հակամարտության պատմությունը, ակունքները և տարբեր վերլուծություններ

- Chorbajian, Levon (ed.) *The making of Nagorno-Karabagh: from secession to Republic* (Basingstoke/New York: Palgrave, 2001)
- Croissant, Michael. *The Armenia-Azerbaijan conflict: causes and implications* (London: Praeger, 1998)
- De Waal, Thomas. *Black garden: Armenia and Azerbaijan through peace and war* (New York: New York University Press, 2003)
- Libaridian, Gerard. *Modern Armenia. People, Nation, State* (New Brunswick/London: Transaction Publishers, 2004)
- Lynch, Dov. *Engaging Eurasia's separatist states: unresolved conflicts and de facto states* (Washington, DC: United States Institute of Peace Press, 2004)
- Rasizade, Alec. ´Azerbaijan after Heidar Aliev´ *Nationalities Papers,* vol. 32, no. 1 (March 2004): 137-164
- Абасов, Али и Хачатрян, Арутюн. *Карабахский конфликт. Варианты решения: идеи и реальность* (Москва: Международные отношения, 2004)
- Золян, Сурен. *Нагорный Карабах: проблема и конфликт* (Ереван: Лингва, 2001)
- Юнусов, Ариф. *Ислам в Азербайджане* (Баку: Фонд Фридриха Эберта, Институт мира и демократии, 2004)
- *Черный январь. Баку – 1990. Документы и материалы* (Баку: Азернеш, 1990)

### Խաղաղության հաստատման գործընթացներ

- Betts, Wendy. ´Third party mediation: an obstacle to peace in Nagorno Karabakh´ *SAIS Review,* vol. 19, no. 2 (1999): 161-183
- Caspian Studies Programme. ´Negotiations on Nagorno-Karabagh: where do we go from here?´ (Harvard University, John F. Kennedy School of Government, 23 April 2001)
- Dehdashti, Rexane. ´Nagorno-Karabakh: A Case Study of OSCE Conflict Settlement´ in Michael Bothe, Natalino Ronzitti and Allan Rosas (eds.) *The OSCE in the maintenance of peace and security* (The Hague, London, Boston: Kluwer Law International, 1997)
- Druckman, Daniel & Terrence Lyons. ´Negotiation processes and postsettlement relationships: comparing Nagorno-Karabakh with Mozambique´ in William Zartman & Victor Kremenyuk, *Peace versus justice: negotiating forward-and backward-looking outcomes* (Lanham, MD: Rowman & Littlefield, 2005)
- Faber, Mient-Jan & Andrzej Kasprzyk. ´How should the OSCE deal with the Nagorno Karabakh conflict?´ *Helsinki Monitor,* vol. 14, no. 1 (2003): 1-6
- Gamaghelyan, Philip. ´Intractability of the Nagorno-Karabakh conflict: a myth or reality?´ *Peace & Conflict Monitor,* Special Report, July 2005.
- International Crisis Group. ´Nagorno-Karabakh: viewing the conflict from the ground´ (Tbilisi/Brussels: Europe Report, no. 166, 14 September 2005)
- International Crisis Group. ´Nagorno-Karabakh: a plan for peace´ (Tbilisi/Brussels: Europe Report, no. 167, 11 October 2005)
- Laitin, David & Ronald Suny. ´Armenia and Azerbaijan: thinking a way out of Karabakh´ *Middle East Policy,* vol. 7, no. 1 (October 1999): 145-76
- Гусейнов, Табиб, Нагорный Карабах: Федерализм и интеграция как способ мирного разрешения конфликта. Эхо, No.247 (985), 25 декабрь 2004; www.echo-az.com
- Казимиров, Владимир. О карабахском кризисе. *Международная Жизнь* 6 (2000): 79-87
- Новикова Ю., Палестинский Г., Нагорно-карабахский конфликт – в поисках выхода. *Проблемы национального самоопределения на современном этапе.* Сборник статей (Москва: Институт востоковедения РАН, 2000), с. 45-66
- Титов, В.П. Конфликтный потенциал постсоветского Закавказья: цели сторон, проблемы урегулирования и перспективы для России в Нагорном Карабахе. *В региональные конфликты в Азии и Северной Африке* (Москва: Институт востоковедения РАН, 1997) с. 300-310
- Шахназарян, Д. Нагорно-карабахский конфликт: 10 лет урегулирования. *Центральная Азия и Кавказ* 3, 21 (2002): 71-77
- Шушеци, А. Процесс урегулирования карабахско-азербайджанского конфликта под эгидой ОБСЕ. Армянский вестник 1 (1998): 16-19.

### Այլ թեմաներ

- Faber, Mient Jan & Mary Kaldor. ´Study Group on Europe's Security Capabilities: South Caucasus Paper´ (London School of Economics, Centre for the Study of Global Governance, draft paper, 2004), http://lse.ac.uk/Depts/global/StudyGroup/SouthCaucasusPaper.htm
- Human Rights Watch/Helsinki. *Azerbaijan. Seven Years of Conflict in Nagorno-Karabakh* (New York: Human Rights Watch, 1994)
- Human Rights Watch. *Crushing Dissent. Repression, Violence and Azerbaijan's Elections* (New York: Human Rights Watch, January 2004)
- Human Rights Watch. *Cycle of Repression: Human Rights Violations in Armenia* (New York, Human Rights Watch Briefing Paper, 4 May 2004)
- Kaufman, Stuart. ´Peace-Building and Conflict Resolution in Nagorno Karabakh´, (PONARS Policy Memo 164, University of Kentucky, 2000)
- Matveeva, Anna. 2002 ´Nagorno Karabakh: A Straightforward Territorial Conflict´ in Paul van Tongeren, Hans van de Veen & Juliette Verhoeven (eds.) *Searching for peace in Europe and Eurasia: overview of conflict prevention and peacebuilding activities* (Boulder, CO: Lynne Rienner Publishers, 2002)
- Article 19. *Under lock and key: freedom of information and the media in Armenia, Azerbaijan and Georgia* (London: Article 19, 2005)
- Panossian, Razmik. ´The irony of Nagorno-Karabakh: formal institutions versus informal politics´ *Regional & Federal Studies,* vol. 11, no. 3 (2001): 143-164
- Tsalik, Svetlana. *Caspian Oil Windfalls: Who Will Benefit?* (New York: Open Society Institute, 2003)
- Tchilingirian, Hratch. ´Nagorno-Karabakh: transition and the elite´ *Central Asian Survey,* vol. 18, no. 4 (1999): 441-445
- Алиев, Намиг. Нагорный Карабах: сепаратизм и легитимность выборов. *Центральная Азия и Кавказ* 3, 21 (2002): 128-134
- Бабаян, Давид. Парламентские выборы в Нагорном Карабахе: правовые и политические аспекты. *Центральная Азия и Кавказ* 5, 41 (2005): 119-127
- Искандарян, Александр. Армения: "карабахизация" национальной истории. В *Национальные истории в советских и постсоветских государствах* (Москва, 1999), с. 147-160
- Четерян, Виген. *Малые войны и большая игра* (Ереван: Кавказский институт СМИ, 2003)
- Центр экстремальной журналистики. *Журналисты на войне в Карабахе* (Москва: Права человека, 2002)
- Юнусов, Ариф. Армяно-Азербайджанский конфликт: миграционные аспекты. В: Ж.Зайончовская (ред.), *Миграционная ситуация в странах СНГ* (Москва, 1999)

### Հանրային կարծիքի ուսումնասիրություններ

- Azerbaijanian Sociological Association. *Armenian-Azeri Mutual Perception Project. Country Report on the ˝Potential of Azerbaijanian and Armenian Peoples in Peacebuilding and Post-Conflict Cooperation˝ Survey in Azerbaijan* (Baku: Azerbaijanian Sociological Association/American University, 2003)
- Baku Press Club, Yerevan Press Club. *The Karabakh Conflict and Prospects for Settling it. The results of sociological research and media coverage of the Karabakh settlement problem* (Baku: Yeni Nesil, 2004)
- Исследовательский центр "Регион" журналистов-расследователей. *Армения и Азербайджан на перепутье "ни мира, ни войны"* (Ереван: Ван Арьян, 2005)
- Степанакертский пресс-клуб, Фонд Фридриха Эберта (Берлин). Центр социальных технологий (Ереван). *Нагорный Карабах, в зеркале общественного мнения* (Степанакерт. Степанакертский пресс-клуб, 2004)

### Տեղեկատվական կայքեր

- ANS: http://www.ans-dx.com
- Armenia Liberty: http://www.armenialiberty.org
- ArmeniaNow.com: http://www.armenianow.com
- BBC Karabakh page [ռուսերեն]: http://news8.thdo.bbc.co.uk/hi/russian/in–depth/2004/karabakh/
- BakuToday.net: http://www.bakutoday.net
- EurasiaNet: http://www.eurasianet.org
- Institute for War and Peace Reporting: http://www.iwpr.net
- Radio Free Europe / Radio Liberty: http://www.rferl.org

### Խաղաղության կառուցմանն ուղղված կայքեր

- Կոնսորցիումի նախաձեռնություն. http://www.consortium-initiative.org
- Հարավկովկասյան խորհրդարանական նախաձեռնություն. http://www.scpi.org.ge